



ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՒՅԱՆ

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ





INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

GAYANE HAKOBYAN

SOCIO-CULTURAL ADAPTATION
OF SYRIAN ARMENIANS IN ARMENIA

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА

ГАЯНЕ АКОПЯН

СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНАЯ АДАПТАЦИЯ
СИРИЙСКИХ АРМЯН В АРМЕНИИ

PUBLISHING HOUSE IAE
YEREVAN 2024

ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
ЕРЕВАН 2024

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՐՅԱՆ

ՍԻՐԻԱ ՀԱՅԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱԴԱՊՏԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր Միհրան Գալստյան

Գրախոսներ՝ պ. գ. դ. Ռուբեն Կարապետյան
պ. գ. թ. Լուսինե Տանաջյան

ՀՏԴ 316.7:94:39
ԳՄԴ 60.523+63.3+63.5
Հ 177

Հակոբյան Գ. Լ.

Հ 177 Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիան Հայաստանում /
Գ. Լ. Հակոբյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատարակչություն, 2024, 232 էջ:

Մենագրությունը նվիրված է 2011 թ. Սիրիայում սկսված պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Գրքում անդրադարձ է կատարվում Սիրիայում հայ համայնքի ձևավորման և զարգացման, ապա նրանց՝ Խորհրդային Հայաստան հայրենադարձության պատմությանը: Հեղինակի կողմից 2012–2018 թթ. անցկացրած քանակական և որակական հետազոտությունների հիման վրա վերլուծվում են Հայաստանում սիրիահայերի սոցիալ-կենցաղային, նյութական, զբաղվածության խնդիրները, բացահայտվում միգրացիոն վարքագծի վրա ազդող գործոնները, հասարակական-քաղաքական մասնակցության և կրթական ինտեգրման առանձնահատկությունները: Գրքում վերլուծության են ենթարկվում նրանց մշակութային ադապտացիայի խնդիրները, ամուսնա-հարսանեկան ծեսերի, կրոնական և տոնական վարքագծի առանձնահատկությունները, լեզվական վարքի փոխակերպումները, հաղորդակցության մշակույթը, առօրյայի և ժամանցի կազմակերպումը: Գիրքը կարող է հետաքրքրել հումանիտար և հայագիտական ոլորտի մասնագետներին, ներգաղթի և հայրենադարձության հարցերով պետական քաղաքականություն մշակողներին և ընթերցողների լայն շրջանակին:

ՀՏԴ 316.7:94:39
ԳՄԴ 60.523+63.3+63.5

ISBN 978-9939-886-61-9

© Գ. Հակոբյան, 2024

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

7

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՎ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

- 1.1. Սիրիայի հայկական համայնքի ձևավորումը և զարգացման սոցիալ-մշակութային առանձնահատկությունները 20
- 1.2. «Մեծ հայրենադարձությունը» և սիրիահայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան 33
- 1.3. Սիրիահայերը հետխորհրդային Հայաստանում. խնդիրներ և դրանց հաղթահարման ուղիներ 42
- 1.4. Հայրենիք, թե՛ բնակության վայր. սիրիահայերի՝ Հայաստան տեղափոխվելու պատճառները 57

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ.

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԴՎՊՏԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- 2.1. Կեցության ինչ դժվարությունների են բախվում սիրիահայերը 67
- 2.2. «Սիրիայում աշխատանք ունեի, Հայաստանում գործազուրկ դարձա». զբաղվածության խնդիրը 73
- 2.3. Ներփակվածություն, թե՛ մասնակցություն ՀՀ-ի հասարակական և քաղաքական կյանքին 84
- 2.4. Կրթության դերը սիրիահայերի ինտեգրման գործընթացում 92
- 2.5. Սիրիահայերի միգրացիոն վարքագիծը. մնալ, թե՛ գնալ 103

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ.

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 3.1. Հայ ընտանիքը սիրիահայերի արժեհամակարգում 114
- 3.2. Ամուսնանալ սիրիահայի, թե՛ հայաստանցի հայի հետ 123
- 3.3. Ամուսնա-հարսանեկան ծեսեր. համեմատություններ հայաստանցի հայերի հետ 130
- 3.4. Կրոնական և տոնական վարքագիծ. նմանություններ և տարբերություններ 141

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ.

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

4.1. Ի՞նչ է նշանակում «просто», «конечно». սիրիահայերի լեզվական վարքագիծը Հայաստանում	151
4.2. Սիրիահայերի շփումները. համայնքից մինչև նոր հարևաններ	161
4.3. Ինչպե՞ս են սիրիահայերը կազմակերպում ժամանցը Հայաստանում	170
4.4. Սիրիահայերը և ՋԼՄ-ների նախընտրությունը	179
ԱՄՓՈՓՈՒՄ	188
РЕЗЮМЕ	198
SUMMARY	207
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	214
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	216

ՆԱԽԱԲԱՆ

XX դ. վերջին և XXI դ. առաջին տասնամյակներում աշխարհում ընթացող միգրացիոն գործընթացները, որոնք ունեն կամավոր, բռնի կամ հարկադրված բնույթ, հասել են մեծ մասշտաբների՝ ներառելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներ ու բազմաթիվ էթնիկ հանրույթներ: Հայաստանը ևս անմասն չի մնացել այս գործընթացից: Հայ ժողովրդի համար արտագաղթը նոր երևույթ չէ, սակայն այսօր այն մեծ չափերի է հասել՝ դառնալով երկրի առջև ծառայած կարևոր հիմնախնդիրներից: Այս պայմաններում ներգաղթը լուրջ դերակատարում կարող է ունենալ իր ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական և մշակութային հետևանքներով: Մասնավորապես, Հայաստանի համար չափազանց կարևոր է դառնում էթնիկ միգրանտների ներհոսքի կարգավորումը, նրանց տեղավորման և ինտեգրման խնդիրների լուծումը:

Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություն անընդհատ տեղի է ունեցել էթնիկ հայերի ինչպես աստիճանական, այնպես էլ միաժամանակյա ներհոսք՝ 1914–1920 թթ. Արևմտյան Հայաստանից և Կարսի նահանգից, 1921–1936 թթ., 1946–1949 թթ. և 1962–1980 թթ. աշխարհի շուրջ երկու տասնյակ երկրներից, 1989–1990 թթ.՝ Ադրբեջանից: Հայաստանի երրորդ հանրապետության օրոք ևս սփյուռքահայերի մոտ ակտիվացել է թե՛ կամավոր, թե՛ ծագման երկրների տնտեսական ու պատերազմական իրավիճակի հետևանքով դեպի հայրենիք միգրացիան՝ 1990–2000 թթ. Իրաքից, Լիբանանից, Իրանից: Դրանից անմասն չմնաց նաև սիրիահայ համայնքը, որի մի ստվար զանգված Հայաստան տեղափոխվեց 2011 թ. Սիրիայում ընթացող պատերազմի պատճառով:

Սիրիահայ համայնքը Մերձավոր Արևելքի ամենահին ու ավանդական համայնքներից էր, արևմտահայ մշակույթի պահպանման ու

զարգացման կարևոր և բացառիկ օջախ: Սակայն պատերազմը ճակատագրական եղավ այդ համայնքի և հազարավոր սիրիահայերի համար: Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ միայն 2013 թ. Հայաստան է եկել 6000–7000 մարդ: Ըստ ՀՀ Սփյուռքի նախարարության տրամադրած տվյալների՝ 2014 թ. փետրվարի դրությամբ Հայաստանում բնակվել են շուրջ 11000 սիրիահայեր՝ մոտ 2800 ընտանիք: 2017 թ. արդեն շրջանառվում էր այն տեղեկատվությունը, որ սիրիական պատերազմի բռնկվելուց ի վեր մոտ 22000 սիրիահայեր են եկել Հայաստան¹, որոնք անընդհատ գտնվում են շարժման մեջ: Ըստ ոչ պաշտոնական տեղեկատվության՝ 2018 թ. Հայաստանում բնակվել են մինչև 8000 սիրիահայեր²:

Ազգային պատկանելիության գիտակցումն ու հայրենիքի հիշողությունը միասնականացնում են հայերին՝ որպես ազգ, բայց և այնպես, հաղորդակցության ժամանակ վեր հանում միմյանց ճանաչելու և հարմարվելու դժվարությունները: Սիրիահայերը, որոնք ապրում էին այլ քաղաքական ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգում, այլ կրոնական ու մշակութային միջավայրում, տեղափոխվեցին բոլորովին նոր, իրենց անձանոթ սոցիալ-մշակութային միջավայր՝ կանգնելով վերջինիս հարմարվելու խնդրի և անհրաժեշտության առջև: Նոր հասարակությունում նրանց հարմարվելու գործընթացը դժվարացնող գործոնները բազմաթիվ են՝ փաստաթղթային, կեցության, սոցիալ-կենցաղային և նյութական խնդիրներ, լեզվական, կրթական և աշխատանքային դժվարություններ, տեղի մշակութային նորմերի և ավանդույթների չիմացություն, արժեհամակարգի տարբերություններ, հայաստանցի հայերի հետ հաղորդակցության բարդություններ և այլն, որոնցից յուրաքանչյուրն իր ազդեցությունն ունի նրանց՝ Հայաստանում ինտեգրվելու և հետագա կենսագործունեությունը շարունակելու

¹ «Սիրիական պատերազմի սկզբից Հայաստանն ընդունել է 22 հազար սիրիահայի»: Հասանելի է՝ <https://armenpress.am/arm/news/895509/22000-syrian-armenians-re-locate-to-> 23.06.2017:

² «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» (այսուհետև՝ ԱՀՀԿ) հասարակական կազմակերպության նախագահ, փորձագիտական հարցազրույց, 25.10.2018:

որոշման վրա: Այս հիմնահարցը շատ արդիական է մեր օրերում և խորը ու համակողմանի ուսումնասիրության կարիք ունի:

Սիրիահայերի հոսքը կարևոր իրողություն էր նաև Հայաստանի և հայաստանցիների համար՝ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և մշակութային հետևանքներով: Ներգաղթյալներին ընդունելու հետ կապված հարցերը սկզբից չունեին կարգավորման հստակ մեխանիզմ, որը կապահովեր նրանց սոցիալ-տնտեսական աջակցության և քաղաքացիության շնորհման հարցերը: Ժամանակի ընթացքում այս հարցերը կարգավորվում են, սակայն հետագա սոցիալ-տնտեսական ինտեգրման հարցը դառնում է օրակարգային: Սրա հետ մեկտեղ, պակաս առաջնային չէ նաև սիրիահայերի ներհոսքի մշակութային հետևանքների կարգավորումը, քանզի նրանք, ապրելով այլ մշակութային միջավայրում, կրել և իրենց հետ ներմուծել են որոշակի մշակութային տարրեր, որոնք տարբեր են հայաստանյան մշակութային տարրերից:

Աշխատության նպատակն է ուսումնասիրել սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի առանձնահատկությունները Հայաստանում և դուրս բերել առկա հիմնախնդիրները: Ուսումնասիրության օբյեկտը սիրիահայերն են, որոնք 2011 թ. հետո ժամանակավոր կամ մշտական բնակություն են հաստատել ՀՀ-ում:

Մենագրությունում առաջադրվել և քննարկվել են հետևյալ խնդիրները՝

- Ադապտացիա հասկացությանն առնչվող գիտական մոտեցումները,
- Սիրիահայ համայնքի ձևավորման պատմությունը, սփյուռքում ծավալված սոցիալ-տնտեսական և մշակութային գործունեությունը,
- Սիրիահայերի հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան,
- 2012–2014 թթ. Հայաստան տեղափոխված սիրիահայերի ժողովրդագրական կազմը,
- Նրանց՝ Հայաստան տեղափոխվելու դրդապատճառները,

- Սիրիահայ ընտանիքների սոցիալ-կենցաղային և նյութական խնդիրները,
- Սիրիահայերի զբաղվածության հիմնահարցը, դրանով պայմանավորված գործոնների ազդեցությունն ադապտացիայի գործընթացի վրա,
- Սիրիահայերի հասարակական և քաղաքական ակտիվության մակարդակն ու մասնակցության առանձնահատկությունները,
- Կրթական ինտեգրման մակարդակը, դրան խոչընդոտող գործոնները,
- Սիրիահայերի միգրացիոն վարքագիծը, դրա փոփոխման միտումները, պատճառներն ու գործոնները,
- Սիրիահայերի ընտանեկան և կրոնական արժեհամակարգի ընդհանրություններն ու տարբերությունները հայաստանաբնակ հայերի համեմատությամբ,
- Սիրիահայերի լեզվական վարքագծի փոխակերպումները,
- Ներէթնիկ շփումների, փոխադարձ հանդուրժողականության մակարդակը,
- Սիրիահայերի առօրյայի և ժամանցի կազմակերպումը:

Ադապտացիայի սոցիոլոգիական տեսանկյան ձևավորման համար մեծ նշանակություն են ունեցել Ու.Թոմասի և Ֆ.Ջնանեցկու³ հայացքները, Է. Դյուրքհեյմի⁴ աշխատանքները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է ադապտացիայի գործընթացում տեղի ունենում անհատի սոցիալական նորմերի յուրացում, Մ. Վեբերի⁵ աշխատանքները՝ հիմնված ադապտացիայի նպատակառացիոնալության վրա, Թ. Պարսոնսի⁶ հայացքները, որտեղ ադապտացիան դիտարկվում է որպես փոխհամաձայնեցում անձի և հասարակության միջև: Սոցիալական ադապ-

³ Знаниецкий 1996, 73.

⁴ Дюркгейм 1995, 352; Дюркгейм 1991, 106–112.

⁵ Вебер 1990, 808.

⁶ Парсонс 1997, 270.

տացիայի տեսական դրույթների մշակման վրա կարևոր ազդեցություն են թողել նաև Ռ. Մերտոնի⁷ աշխատանքները, Հ. Սպենսերի⁸ հավասարակշռության տեսությունը, Է. Գիդդենսի⁹ և Ջ. Միդի¹⁰ դերային հայեցակարգը, Ա. Շյուցի¹¹ ֆենոմենոլոգիական հայացքները, Ի. Գոֆմանի¹² աշխատությունը, Օ. Զոտովայի և Ի. Կոյաժևայի¹³ նպատակաուղղված վարքի հայեցակարգը: Սոցիոլոգիական մոտեցման ձևավորման համար էական նշանակություն ունի Լ. Կորելի¹⁴ ադապտացիայի սոցիոլոգիայի տեսա-մեթոդաբանական հիմքերի մշակման փորձը:

Սոցիալական ադապտացիայի բովանդակության վերլուծությունը լրացվում է նրա՝ մարդու և սոցիալական միջավայրի կենսագործունեության մեջ ունեցած դերի սահմանմամբ: Մասնավորապես, ադապտացիայի մոբիլիզացնող, մոտիվացնող, հավասարակշռող, զարգացնող գործառույթներն իրենց աշխատանքներում նկարագրում են Տ. Շիրուտանին¹⁵, Լ. Շաֆֆերը և Է. Շոբենը¹⁶, Մ. Շաբանովան¹⁷, Պ. Կուզնեցովը¹⁸, Ի. Դիսկինը, Է. Ավրահամովը¹⁹:

Ադապտացիան անձի զարգացման տեսանկյունից են դիտարկում հումանիտար հոգեբանության ներկայացուցիչներ Կ. Ռոջերսը²⁰ և Ա. Մասլոուն²¹: Ադապտացիայի կառուցվածքի, նրա մեխանիզմների, ազ-

⁷ Мертон 1966, 299–313; Мертон 1992, 91–96.

⁸ Спенсер 1998, 265–307.

⁹ Гидденс 2005, 632.

¹⁰ The Timeliness of George Herbert Mead, Edited by Hans Joas and Daniel R. Huebner, Chicago and London, 2016, 328.

¹¹ Мещерякова 2002, 116–127.

¹² Гофман 2000, 304.

¹³ Зотова, Кряжева 1979, 219–232.

¹⁴ Корель 2005, 424; Корель 1996, 43.

¹⁵ Акименко 2011, 110.

¹⁶ Самара 2004, 205.

¹⁷ Шабанова 1995, 81–88.

¹⁸ Кузнецов 1991, 86.

¹⁹ Дискин, Аврамова 1997, 24–33.

²⁰ Хьелл, Зиглер 2014, 607.

²¹ Maslow 1954, 411.

դող գործոնների ուսումնասիրությանն են նվիրված սոցիալ-հոգեբանական ուղղվածության այլ աշխատանքներ²²:

Սոցիալական ադապտացիայի տարատեսակ է համարվում սոցիալ-մշակութային ադապտացիան կամ ակուլտուրացիան. այն ձևակերպվում է որպես գործընթաց և դրա արդյունք, ինչի շնորհիվ մարդ հասնում է համատեղելիության նոր մշակութային միջավայրի հետ: Սակայն մարդկանց մուտքն այլ մշակույթ, որպես կանոն, ուղեկցվում է «մշակութային շոկ» երևույթով: Նշված հասկացությունների մեկնաբանության համար օգտվել ենք Լ. Շպակի²³, Ռ. Ռեդֆիլդի, Ռ. Լինտոնի, Մ. Հերսկովիցի²⁴, Կ. Օբերգի²⁵, Պ. Ադլերի²⁶, Մ. Վինկելմանի²⁷, Ջ. Բերրիի²⁸, Հ. Էսսերի և Ֆ. Հեկմանի²⁹ տեսություններից:

Սիրիահայերի ադապտացիայի արդի վիճակի ուսումնասիրության համատեքստում նախ կարևոր է անդրադառնալ սիրիահայ համայնքի ձևավորման և պատմական զարգացման առանձնահատկություններին: Ընդհանրապես, հայերի գաղթի և սփյուռքի ձևավորման պատմությանն են անդրադարձել Ա. Աբրահամյանը³⁰, Ս. Գասպարյանը³¹, Հ. Թոփուզյանը³², Խ. Թոլոլյանը³³, Կ. Դալլաքյանը³⁴, Է. Մելքոնյանը³⁵ և այլք: Հա-

²² Ageev 1983, 144; Ageev 1990, 240; Жмыриков 1989, 249; Гриценко 2002, 189; Безносиков 1986, 189; Георгиева 1985, 22; Вершинина 1986, 145; Ходаков 1976, 24; Чимбеленге 1996, 31.

²³ Шпак 1992, 398.

²⁴ Redfield 1936, 149–152.

²⁵ Oberg 1960, 177–182.

²⁶ Adler 1975, 13–23.

²⁷ Winkelman 1994, 121–126.

²⁸ Berry 1997, 34.

²⁹ Esser 2004, 1126–1159; Heckmann, Bosswick 2005, 277.

³⁰ Աբրահամյան 1964, 487; Աբրահամյան 1967, 423:

³¹ Գասպարյան 1962, 248:

³² Թոփուզյան 1986, 369:

³³ Tölölyan 2000, 107–136.

³⁴ Դալլաքյան 2004, 287:

³⁵ Дятлов, Мелкоян 2009, Մելքոնյան 2005, 583:

յագիտության մեջ բարձր են գնահատվում Վ.Սվազյանի³⁶, Հ.Մարությանի³⁷ գիտական աշխատությունները, որոնք վերաբերում են ինքնության և հայկական սփյուռքի ձևավորման հիմնախնդիրներին: Սիրիահայ համայնքի, մասնավորապես, Քեսաբի տեղագրության, բնակչության, պատմության, տնտեսության, ազգագրության, բանահյուսության վերաբերյալ արժեքավոր է Հ. Չոլաքյանի³⁸ սովորածավալ ուսումնասիրությունը:

XX դ. հայրենադարձության և դրան վերաբերող հարցերի ամբողջական, գիտական ուսումնասիրության առաջին փորձը պատկանում է Հ. Մելիքսեթյանին³⁹: Սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի խորհրդային շրջանի հայրենադարձության ուսումնասիրությանը նվիրված աշխատություններ են հրատարակել նաև Տ. Ղանալանյանը⁴⁰, Գ. Սվազյանը⁴¹, Մ. Թիթիզյանը⁴², Հ. Սարգսյանը⁴³ և այլք⁴⁴: Հիշյալ աշխատանքներում լուսաբանվում են գաղթի պատճառները, ընթացքը, ծավալները, դերակատար կազմակերպությունները, հետևանքները ինչպես ելքի, այնպես էլ նոր երկրներում և այլն:

Հայագիտության մեջ չափազանց մեծ է Ա. Ստեփանյանի⁴⁵ վաստակը. ազգաբանական տեսանկյունից ուսումնասիրելով հայրենադարձությունը՝ հեղինակն իր աշխատություններում քննարկել է ներգաղթի ընթացքը և դրա փուլային առանձնահատկությունները, ներգաղթածների և տեղաբնակների փոխընկալումներն ու փոխառնչությունները, կենցաղամշակութային փոխներթափանցումները, նորեկների ադապ-

³⁶ Սվազյան 2011, 880:

³⁷ Մարության 2009, 432:

³⁸ Չոլաքեան 1995, 570; Չոլաքեան 1998, 568; Չոլաքեան 2004, 672:

³⁹ Մելիքսեթյան 1975, 296; Մելիքսեթյան 1985, 476:

⁴⁰ Ղանալանյան 2016, 164:

⁴¹ Սվազյան 1965, 208:

⁴² Թիթիզյան 2009, 107–119:

⁴³ Սարգսյան 2001, 128–167; Սարգսյան 2009, 48–59:

⁴⁴ Եղիազարյան, Անանյան և այլք 2017, 244:

⁴⁵ Ստեփանյան 2010, 46–55; Ստեփանյան 2001, 97–99; Ստեփանյան 2014, 317–323 և այլն:

տացման և ինտեգրման խնդիրները, ներգաղթածների ինքնության և վարկանիշի փոփոխությունները նոր միջավայրում:

Հետխորհրդային շրջանում հայրենադարձների ինտեգրման խնդիրներին անդրադարձել է Ա. Մկրտչյանը⁴⁶: «Վերադարձ Հայաստան» հիմնադրամն իր ուսումնասիրություններում անդրադարձել է հայրենադարձների (նաև սիրիահայերի) փորձառությանը մինչև Հայաստան տեղափոխվելը, տեղափոխման պատճառներին և ակնկալիքներին, նրանց զբաղվածությանը, հասարակական շփումներին, վերաբերմունքին և այլն⁴⁷: Ադրբեջանահայ փախստականների ինտեգրման առանձնահատկությունների վերաբերյալ աշխատանքներ են հրատարակել Գ. Պողոսյանը և Գ. Ավագյանը⁴⁸, Է. Հովհաննիսյանը⁴⁹ և այլք:

Հայաստանի բնակչության արդի միգրացիոն գործընթացների, մասնավորապես, աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային հետևանքների, վերադարձած միգրանտների ադապտացիայի ուսումնասիրության համատեքստում արժեքավոր են Մ. Գալստյանի աշխատությունները⁵⁰:

Սիրիայի հայ համայնքի զարգացման որոշ առանձնահատկություններին և մինչև պատերազմն առկա հիմնախնդիրներին են անդրադարձել Ա. Փաշայանը և Լ. Հարությունյանը⁵¹: Աշխատությունում քննարկվել են կրոնական և աշխարհիկ կառույցների, հայկական միությունների, հայապահպանության, ինքնության, խառնամուսնությունների, հայ համայնքների միջև փոխադարձ ընկալումների, հայկական կրթության և դպրոցների, համայնքի ներուժի, ներքաղաքական անկայունության համատեքստում համայնքի հեռանկարի հետ կապ-

⁴⁶ Մկրտչյան 2008, 53–73; Մկրտչյան 2009, 290–305:

⁴⁷ Մարաշլյան և այլք 2014, 134:

⁴⁸ Պողոսյան, Ավագյան 1998, 52:

⁴⁹ Оганнисян 2017, 45–54.

⁵⁰ Գալստյան 2013, 184–193; Գալստյան 2017, 355–365; Գալստյան, 2019, 52–65 և այլն:

⁵¹ Փաշայան, Հարությունյան 2011, 154:

ված և այլ հիմնահարցեր: Ն. Հարությունյանի⁵² աշխատությունն արժեքավոր է Լիբանանի և Սիրիայի հայկական ամենօրյա դպրոցների պատմության, զարգացման, կրթադաստիարակչական և հայապահպան գործունեության վերլուծության տեսանկյունից:

Հայաստանում սիրիահայերի ադապտացիայի արդի վիճակի ուսումնասիրության համատեքստում արժեքավոր է Ռ. Կարապետյանի հեղինակությամբ և ղեկավարությամբ իրականացված նախագիծը: Հրատարակված աշխատությունում⁵³ ներկայացված են Սիրիայից գաղթած հայ փախստականների ինտեգրման խնդիրների էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները, վերլուծվել են սիրիահայերի արդի վիճակը և հետագա կենսագործունեության հեռանկարները: Ա. Հակոբյանը⁵⁴ անդրադառնում է սիրիահայերի՝ Հայաստանում ունեցած իրավական, սոցիալական, տնտեսական հիմնախնդիրներին, հանդես գալիս նրանց ինտեգրմանը նպաստող առաջարկություններով: Լ. Տանաջյանը⁵⁵, ուսումնասիրելով տարբեր ոլորտներում սիրիահայերի ունեցած հիմնախնդիրները, նախանշում է ինտեգրման քաղաքականության հիմնական մարտահրավերները և մշակում առաջարկություններ:

ՀՌԿԿ-Հայաստանի կողմից (Ֆինանսավորող՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակ) իրականացվել է «Հայաստանում սիրիահայերի կարիքների գնահատում և տվյալադարանի ստեղծում» ծրագիրը⁵⁶՝ նպատակ ունե-

⁵² Հարությունյան 2002, 304:

⁵³ Կարապետյան և այլք 2015, 174:

⁵⁴ Հակոբյան 2014, 29;

⁵⁵ Տանաջյան 2018:

⁵⁶ Ծրագիրը նպատակ ունի ստեղծել նաև հետևյալը՝ 1) սիրիահայերի տվյալադարան, որը կպարունակի Հայաստանում բնակվող սիրիահայերի սոցիալ-ժողովրդագրական և աշխատանքային կարողությունների բնութագրիչներ, ինչպես նաև կբացահայտի ձեռնարկատիրությամբ զբաղվելու նրանց ներուժը: 2) Տվյալադարան, որը կպարունակի տվյալներ այն ձեռնարկությունների մասին, որոնք սիրիահայերին աշխատանքի ընդունելու պատրաստակամություն կհայտնեն: Ծրագրի և արդյունքների մասին տե՛ս Economic integration of Syrian Armenians in Armenia, Published by: Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH, Yerevan, 2017. Հասանելի է՝

նալով բացահայտել սիրիահայերի ձեռնարկատիրական կարողությունները, ինչպես նաև տնտեսական ինտեգրման կարիքները: Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից 2013 թ. իրականացրած հետազոտության⁵⁷ նպատակն էր ի հայտ բերել հակամարտության ընթացքում սիրիահայ համայնքի կանանց շրջանում բռնության ձևերը, տարածվածությունը, պատճառները, բացահայտել բռնության ենթարկվածների առջև ծառայած մարտահրավերները և այլն:

Սիրիահայերի ադապտացիայի ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը ազգագրությունում և սոցիոլոգիայում ընդունված միջառարկայական համալիր մոտեցումներն են: Էմպիրիկ նյութը հավաքվել է 2012–2018 թթ. հեղինակի անցկացրած հետազոտությունների արդյունքում՝ որակական և քանակական մեթոդների համադրությամբ:

1. Քանակական հետազոտություն (2014 թ.)՝ 184 կիսաձևայնացված հարցազրույցներ սիրիահայերի հետ Երևանում, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի մարզերում: Ելնելով հետազոտական օբյեկտի յուրահատկությունից՝ սիրիահայերի ոչ հստակ թիվ ՀՀ-ում, շարժունություն, բնակության վայրի վերաբերյալ սուղ տեղեկատվություն, Հայաստան տեղափոխվելուց հետո տարածական ցրված ձևով ապրել և այլ հանգամանքներ՝ սիրիահայ ընտանիքների հետ կապ հաստատելու համար օգտագործվել է «ձևակույտի» մեթոդը, իսկ հարցվողի ընտրությունը կատարվել է պատահականության սկզբունքով՝ կիրառելով վերջին ծնունդի մեթոդը⁵⁸: Հաշվի

https://www.researchgate.net/profile/Sona_Balasanyan/publication/321061407_2017_ECONOMIC_INTEGRATION_OF_SYRIAN_ARMENIANS_IN_ARMENIA_Needs_Assessment_Report/links/5a0b3439458515e4827484ac/2017-ECONOMIC-INTEGRATION-OF-SYRIAN-ARMENIANS-IN-ARMENIA-Needs-Assessment-Report.pdf (02.03.2019)

⁵⁷ Հետազոտությունը հանձնարարվել է ՄԱԿՓԳՀ Հայաստանի կողմից (տես «Սիրիայից տեղահանված կանայք փնտրում են անվտանգ ապաստան Հայաստանում», հետազոտական արդյունքների հաշվետվություն, Եր., 2013: Հասանելի է՝ <https://iichd.org/?laid=2&com=module&module=static&id=945>) (15.10.2015)

⁵⁸ Օգտագործվում է սոցիոլոգիական հետազոտություններում՝ հարցվողի ընտրության պատահականությունն ապահովելու համար:

առնելով վերը նշված հանգամանքները՝ նշենք, որ ստացված քանակական ցուցանիշները կիրառելի են միայն հետազոտական խնդիրների շուրջ առկա միտումները բացահայտելու համար, քանի որ ընտրանքը ներկայացուցչական չէ սիրիահայերի ողջ համախմբության համար:

Քանակական հետազոտություն (2016–2017 թթ.) տեղացի և սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևան քաղաքում, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերի վեց քաղաքային և քսաներկու գյուղական բնակավայրերում: Ընտրանքային համախմբության ծավալը կազմել է 384 (արդյունքների 95% վստահելիության, +–5% սխալի մեծության դեպքում), որից 7%-ը՝ երևանաբնակ սիրիահայ ընտանիքներ: Քանակական հետազոտության արդյունքները հարուստ նյութ են ապահովել սիրիահայ և տեղացի ընտանիքների համեմատության, ինչպես նաև ժամանակային որոշակի կտրվածքով սիրիահայերի ադապտացիայի հիմնախնդիրներն ուսումնասիրելու համար:

2. Որակական հետազոտություն (2014 թ.)՝ խորին հարցազրույցներ սիրիահայերի հետ՝ ադապտացիայի խնդիրները խորությամբ և ամբողջությամբ հասկանալու, մեկնաբանելու համար: Հարցվողի ընտրության չափանիշներ են հանդիսացել սեռը, տարիքը և զբաղվածությունը (հարցազրույցների թիվը՝ 36):
3. Փորձագիտական հարցազրույց (2018 թ.), որը հնարավորություն է տվել փորձագետների գնահատականների և գիտելիքների միջոցով դուրս բերել տեղեկատվություն սիրիահայերի ադապտացիայի մասին՝ լրացնելով և բազմակողմանի դարձնելով արդեն ստացված տեղեկատվությունը: Որպես փորձագետներ՝ հանդես են եկել պետական հաստատությունների, հասարակական և կրոնական կառույցների ներկայացուցիչները (հարցազրույցների թիվը՝ 15):
4. Փաստաթղթերի որակական վերլուծություն, մասնավորապես, առցանց պարբերականների ուսումնասիրություն: Պարբերա-

կաններն ընտրվել են պատահականության սկզբունքով (aravot.am, tert.am, a1plus.am), որոնք ունեն նյութերի բազմազանություն, կապված են սոցիալական ցանցերին և հասանելի են Հայաստանում ու Սփյուռքում: Էլեկտրոնային պարբերականների՝ սիրիահայերին առնչվող հրապարակումները դիտարկվել են 2012–2014 թթ. ժամանակահատվածում⁵⁹:

Ընդհանուր առմամբ, դաշտային հետազոտական աշխատանքների ընթացքում անցկացվել է 568 կիսաձևայնացված, 36 խորին և 15 փորձագիտական հարցազրույց: Նյութերը հավաքվել են տասը քաղաքային և քսանհինգ գյուղական բնակավայրերում իրականացրած գիտարշավների և անհատական գործուղումների միջոցով: Հավաքվել են նաև վիճակագրական տվյալներ 2018 թ. դրությամբ Արցախի Հանրապետությունում բնակվող 24 սիրիահայ ընտանիքների բնակության վայրի, նրանց սոցիալ-ժողովրդագրական կազմի վերաբերյալ⁶⁰:

Ինչպես նշեցինք վերևում, սույն գիտական աշխատության մշակման ժամանակ օգտագործվել են 2012–2018 թթ. ընթացքում անցկացված քանակական և որակական հետազոտության նյութերը: Իհարկե, սիրիահայերի ինտեգրման խնդիրների ուսումնասիրությունը շարունակվում է, սակայն վերլուծական նյութերը հրատարակվում են հոդվածների տեսքով և ներառված չեն սույն աշխատության մեջ:

Աշխատանքի գիտական նորույթն ու առանձնահատկությունը նրանում է, որ ա) սիրիահայերի ադապտացիայի վերլուծությունը կատարվել է քանակական և որակական մեթոդների համադրությամբ, իսկ ուսումնասիրության ժամանակահատվածն ընդգրկում է նրանց՝ ՀՀ տեղափոխվելու սկզբնական շրջանից մինչև 2018 թ.: բ) Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի համալիր վերլուծությունը կատարվում է առաջին անգամ: Հայաստանում մինչև այժմ կատարված

⁵⁹ Ելնելով հետազոտական մեթոդի առանձնահատկությունից՝ աշխատությունում հղումներ կատարելիս ներկայացրել ենք պարբերականի անվանումը և տարեթիվը, օրինակ, աղբյուրը՝ aravot.am, 2012:

⁶⁰ Այս հարցում մեզ օժանդակել է ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախկին նախարար Լ. Հովհաննիսյանը:

ուսումնասիրությունները վերհանել են սիրիահայերի, մի դեպքում, տնտեսական, մեկ այլ դեպքում, սոցիալական ինտեգրման հարցերը: գ) Աշխատությունում համեմատական հարուստ նյութ է ներկայացվում սիրիահայերի և տեղացի հայերի էթնոմշակութային առանձնահատկությունների վերաբերյալ: դ) Համեմատական վերլուծություն է կատարվում Խորհրդային Հայաստան ներգաղթած սիրիահայերի և նրանց սերունդների հայրենադարձման փորձի հետ՝ բացահայտելու համար տարբեր ժամանակաշրջաններում նրանց հարմարման գործընթացի ընդհանուր և առանձնահատուկ միտումները:

Ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական նշանակություն: Այն հնարավորություն է տալիս սիրիահայերի օրինակը համարել մոդել Հայաստան ներգաղթի համար՝ վերհանելով այդ երևույթի բացթողումները և ձեռքբերումները: Աշխատությունում տեղ գտած մի շարք հիմնահարցեր կարող են ունենալ տեսական, ճանաչողական և գործնական նշանակություն այդ խնդիրներով զբաղվող մասնագետների համար:

Երախտագիտությունս եմ հայտնում ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի աշխատակիցներին՝ մեծագրության քննարկման և աջակցության համար: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում ատենախոսությանս գիտական ղեկավար և աշխատության պատասխանատու խմբագիր պ. գ. դ. Միհրան Գալստյանին՝ մասնագիտական խորհուրդների և ցուցաբերած օժանդակության համար: Երախտագիտությունս եմ հայտնում նաև գրախոսներ պ. գ. դ. Ռուբեն Կարապետյանին և պ. գ. թ. Լուսինե Տանաջյանին՝ աշխատանքը բարձր գնահատելու և արված առաջարկների համար:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՎ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Սիրիայի հայկական համայնքի ձևավորումը և զարգացման սոցիալ-մշակութային առանձնահատկությունները

Հայերը Սիրիայում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից⁶¹, սակայն համայնքը մեծապես համալրվել է Հայոց ցեղասպանությունից հետո, երբ մեծ թվով հայեր բռնի տեղահանության հետևանքով հաստատվեցին Սիրիայում: Հայ համայնքը XVI–XVIII դդ. համալրվել է Ջուղայից, Երևանից, Ղարաբաղից, Սեբաստիայից, Ալենից, Մալաթիայից, Սասունից, Արաբկիրից, Տիգրանակերտից, Ուրֆայից և այլ վայրերից⁶², իսկ ժամանակակից սիրիահայ համայնքը՝ ինչպես Արևմտյան Հայաստանից, այնպես էլ Կիլիկիայից գաղթած հայերով (1920-ական թթ. սկզբին)⁶³: Ըստ Սիրիայի պետական վիճակագրության 1954 թ. տվյալների՝ հայերի թիվը կազմել է 135036 մարդ: Նրանցից 75000-ը ապրել է Հալեպում, 15000-ը՝ Գամիշլիում (Ղամիշլի, այժմ՝ Էլ-Կամըշլի), 10000-ը՝ Դամասկոսում, իսկ մնացածը՝ Արաբ-Բունարում, Ճարապլուսում, Տըրպեսայում, Հոմսում, Տեր-Ջորում (այժմ՝ Դեյր Էզ-Ջոր), Քեսապում և մյուս վայրերում: Կարող ենք ասել, որ Հալեպն արտասահմանի ամենահայաշատ քաղաքն է եղել⁶⁴: Մինչև

⁶¹ Աբրահամյան 1964, 428; Գասպարյան 1962, 166; «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 508:

⁶² «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 509:

⁶³ Նույն տեղում, 512:

⁶⁴ Գասպարյան 1962, 170:

2011 թ.՝ սիրիահայ համայնքը պաշտոնապես հաշվվում էր 100000, այդ թվում, Հալեպում՝ մոտ 60000–70000, Դամասկոսում՝ մոտ 5000–6000 կամ 1200 ընտանիք⁶⁵: Համայնքի թվաքանակի վերաբերյալ շրջանառվում են նաև ավելի նվազ տվյալներ՝ 60000–70000-ի սահմաններում⁶⁶:

Ցեղասպանությունից հետո Սիրիայում հայ գաղթականներն ապրել են ծանրագույն պայմաններում՝ հիմնականում վրանային ճամբարներում: «Ցրվելով երկրի քաղաքներում ու գյուղերում և օրհասական պայքար մղելով սովի ու մասսայական հիվանդությունների դեմ, հաղթահարելով այլևայլ դժվարություններ, հայ աշխատավորական մասսաները սկսում են կառուցել իրենց նոր օջախները, հայթայթել ապրուստի միջոցներ, հիմք դնել դպրոցների ու մշակութային հաստատությունների»⁶⁷: Բնական է, որ սկզբնական փուլում հայերը մտադրություն չէին ունենա վերջնականորեն հաստատվել Սիրիայում, որտեղ նրանք հայտնվել էին միանգամայն նոր, ինչ-որ իմաստով խորթ միջավայրում, որն ուներ տարբերակիչ մի շարք գործոններ՝ էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային: Սակայն հետագայում նրանք հաշտվեցին Սիրիայում հաստատվելու իրականության հետ, իսկ նշված գործոնները պարզապես նպաստեցին հայ տարագիրների էթնիկ և մշակութային ինքնության պահպանմանը⁶⁸:

Հայերը ժամանակի ընթացքում սկսեցին ինքնակազմակերպվել՝ որպես համայնք, ցուցաբերեցին քաղաքական կազմակերպվածություն՝ ինտեգրվելով նաև Սիրիայի հասարակական կյանքում: Աստիճանաբար տարագիրների զանգվածը վերաճեց կազմակերպված ու կենսունակ համայնքի, որը ձգտում էր ամեն կերպ պահպանել ազգային ինքնությունը: Այս գործընթացում զգալի ներդրում ունեցավ Հայ Առաքելական եկեղեցին, որն իր բուն գործառույթներին զուգահեռ՝ բացառիկ դեր խաղաց տարագիրների, այդ թվում՝ հայ որբերի և կանանց հա-

⁶⁵ Փաշայան, Հարությունյան 2011, 49:

⁶⁶ Դալլաքյան 2004, 182:

⁶⁷ Գասպարյան 1962, 168:

⁶⁸ Гриншилдс 1982, 10.

վաքագրման, նրանց օգնություն տրամադրելու գործում: Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո էր գործում Աղքատախնամ հանձնախումբը, որը համակարգում էր տարագիրներին տրամադրվող օժանդակությունը: Հայերի շրջանում ակտիվ գործունեություն էին ծավալում նաև հայկական հայրենակցական, մշակութային ու բարեգործական միություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև ազգային քաղաքական կուսակցությունները՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Ռամկավար ազատական և Հայ հեղափոխական դաշնակցություն, որոնք համայնքային խնդիրների լուծման նպատակով համագործակցում էին եկեղեցու հետ⁶⁹:

Սիրիահայ համայնքի հիմնական մասը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ են, կան նաև կաթոլիկներ և ավետարանականներ: Հայ կաթոլիկներն ունեն առաջնորդարաններ Դամասկոսում և Հալեպում, իսկ հայ ավետարանականները՝ համայնքապետություն Հալեպում: Պետության կողմից սիրիահայ առաքելական համայնքը դիտվում է որպես կրոնական փոքրամասնություն: «Համայնքը ղեկավարվում է հոգևոր-կրոնական իշխանության կողմից, որն ունի դատական և իրավական գործառույթներ, ինչն ամրագրված է Սիրիայի արդարադատության նախարարության կողմից: Եկեղեցին պետության մոտ իր համայնքի ներկայացուցիչն է, իսկ համայնքի մոտ՝ պետության»⁷⁰:

Սիրիահայ համայնքներում գործում են տեղական ազգային իշխանություններ⁷¹: Համայնքի ներքին գործերը վարում է ընտրություններով ձևավորվող օրենսդիր մարմինը՝ Գավառական ժողովը: Իսկ համայնքի գործադիր մարմինը՝ Քաղաքական ժողովը, ընտրվում է Գավառական ժողովի կողմից:

Սիրիայում հայկական բոլոր միություններն ու կրոնադավանական ուղղություններն իրենց ենթակառուցվածքներն ունեն գրեթե բոլոր հաշատ շրջաններում՝ Հալեպում, Դամասկոսում, Քեսաբում, Ղամիշ-

⁶⁹ Дятлов, Мелкоян 2009, 112.

⁷⁰ Փաշայան, Հարությունյան 2011, 13:

⁷¹ Թոփուզյան 1986, 83:

լիում, Լաթաքիայում, Հոմսում, և այդ ճանապարհով յուրաքանչյուր շրջանակ սերտորեն կապված է իր մասնաճյուղերի հետ: Ակումբներում կազմակերպվում են մշակութային և մարզական տարբեր միջոցառումներ: Շատ հաճախ Հայաստանից, ինչպես նաև Սփյուռքի տարբեր շրջաններից և արտերկրից հրավիրվում են մշակութային և հասարակական-քաղաքական գործիչներ: Սիրիայում գործող միությունները պաշտոնապես արտոնված են գործում, գրանցված են Սիրիայի Սոցիալական և աշխատանքի նախարարությունում, ունեն իրենց ներքին կանոնադրությունը⁷²:

Սիրիայի հայ համայնքի ազգային կյանքը ձևավորում են բազմաթիվ բարեգործական, մշակութային, հայրենակցական, մարզական և այլ միություններ ու կազմակերպություններ, որոնք գլխավորապես կենտրոնացած են Հալեպում: 1846 թ. Հալեպում հիմնվել է Ռուբինյան միությունը, 1880 թ.¹ Ուսումնասիրաց ընկերությունը, 1890-ական թթ. Դամասկոսում՝ Ս. Սարգիս եկեղեցու աղքատախնամ հանձնախումբը, 1909 թ.¹ Հալեպում Հայ կաթողիկե աղքատախնամ միությունը, 1910 թ.¹ ՀԲԸՄ-ը՝ 40 մասնաճյուղերով: Այսպես, Սիրիայում գործում են ՀԲԸՄ-ի, Թեքեյան մշակութային միության, Համազգային հայ կրթական և մշակութային միության, Հայ երիտասարդաց ընկերակցության, «Նոր սերունդ» մշակութային միության Սիրիայի մասնաճյուղերը, Ազգային մշակութային և Կիլիկյան մշակութային միությունները և այլն.

1. ՀԲԸՄ-ի մասնաճյուղը հիմնադրվել է 1910 թ.¹ Հալեպում: Գտնվում է ռամկավարների ազդեցության տակ⁷³:
2. ԹՄՄ-ը Բեյրութի համանուն միության մասնաճյուղն է, գտնվում է ռամկավարների վերահսկողության տակ⁷⁴:

⁷² Փաշայան, Հարությունյան 2011, 14:

⁷³ ՀԲԸՄ-ի գործունեության հիմնական նպատակն է կրթական, մշակութային և բարեսիրական ծրագրերի միջոցով պահպանել և տարածել հայ լեզուն, ինքնությունն ու ժառանգությունը: ՀԲԸՄ-ի մասին տես «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 527, 705-707:

⁷⁴ Մշակութային-կրթական կազմակերպություն է, հիմնվել է 1947թ.¹ Բեյրութում, մասնաճյուղը՝ Հալեպում՝ 1958թ.: ԹՄՄ-ի մասին տես «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 529, 663-664:

3. ՀՀԿՄՄ-ը մշակութային-կրթական կազմակերպություն է, գործում է ՀՅԴ կուսակցության հովանու ներքո: Մասնաճյուղը հիմնվել է 1930 թ.⁷⁵:
4. ՀԵԸ, որին անդամակցում են մի խումբ ռամկավար երիտասարդներ: Միության աշխատանքները ղեկավարում է ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղը⁷⁶:
5. ՆՍՄՄ-ը հայկական մշակութային կազմակերպություն է, հիմնվել է 1955 թ. Բեյրութում, իսկ մասնաճյուղը 1958 թ.⁷⁷ Հալեպում: Գործում է ՍԴՀԿ-ի հովանու ներքո⁷⁷:
6. «Ազգային մշակութային միություն» կազմակերպության շուրջ համախմբված է քաղաքի առաջադեմ մտավորականության զգալի մասը: Միությանը կից գործող «Գրական շրջանակը» կազմակերպում է գրական երեկոներ:
7. «Կիլիկյան» մշակութային միություն՝ հնչակյան կազմակերպություն է, որի հետ է կապված նաև «Հայ մարմնամարզական միություն»⁷⁸ սպորտային կազմակերպությունը:
8. Հալեպում գործում են նաև մի շարք հայրենակցական միություններ՝ «Մարաշ», «Ուրֆա», «Զեյթուն», «Այնթափ», «Քիլիս» և այլն⁷⁹:

Սիրիահայ համայնքի բարեսիրական շրջանակներում գործում են «Հովարդ Կարագյոզյան» հաստատությունը, Ջինիշյան հիշատակի ծրագրի տեղական մարմինները, «Ալթունյան», «Մազլումյան», «Աստուրյան» հիվանդանոցները, «Ջերեջյան» ակնաբուժարանը, «Կյուլպենկյան» ծննդատունը և այլն: Համայնքում գործում են նաև մի շարք

⁷⁵ «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 528, 665–666:

⁷⁶ «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 669–670:

⁷⁷ «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 721:

⁷⁸ Մարզական-երիտասարդական, սկաուտական կազմակերպություն է, հիմնվել է 1921 թ.⁷⁸ Հալեպում: ՀՄՄ-ի մասին տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 682:

⁷⁹ «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 710–718; Գասպարյան 1962, 172–173:

այլ կազմակերպություններ ու միություններ, որոնցից են Հայ մարմնամարզական միությունը (հիմնադրված 1921 թ.), Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, Սիրիահայ օգնության խաչը (հիմնված 1929 թ.), «Տխրունի» ուսանողական-երիտասարդական միության Սիրիայի մասնաճյուղը (հիմնված 1969 թ.), Հայ կաթողիկե միությունը⁸⁰, Կրթասիրաց մշակութային միությունը, Գերմանիկ-Վասպուրական մարզական միությունը, Արեգ մշակութային միությունը և այլն⁸¹:

Սիրիայում գործող հայկական դպրոցների (թե՛ ամենօրյա, թե՛ կիրակնօրյա) թիվն անցնում է 30-ը⁸²: Ամենահին դպրոցների՝ Ազգային Հայկազյան վարժարանի և Հայ ավետարանական Նահատակաց միացյալ վարժարանի հիմնադրումները թվագրվում են 1850-ական թթ.: Բոլոր դպրոցները Սիրիայի կրթական համակարգի կազմի մեջ են և պարտադիր իրականացնում են պետական կրթական ծրագիրը: Հայկական դպրոցները Սիրիայում վճարովի են, սակայն սոցիալապես անապահով և ոչ վճարունակ ընտանիքների երեխաներին ուսման հարցում աջակցում են եկեղեցիները և հայկական միությունները:

Մինչև 1950–1960-ական թթ. Սիրիայի հայկական դպրոցներն ազատ էին իրենց գործունեության մեջ, չկային որոշակի սահմանափակումներ հայագիտական առարկաների՝ հայոց լեզվի, հայ գրականության, հայ ժողովրդի պատմության և կրոնի ուսուցման հարցում: Ավելին, հայկական դպրոցների տարրական դասարաններում (նախակրթարաններում) բոլոր առարկաների ուսուցումը տարվում էր հայերենով: Սակայն, հատկապես 1963 թ. Սիրիայում Արաբական Սոցիալիստական Բաաս կուսակցության իշխանության գալուց հետո, արգելքներ և սահմանափակումներ մտցվեցին նաև կրթության ոլորտում, որոնք ուղղակիորեն ազդեցին ազգային փոքրամասնություններին պատկա-

⁸⁰ Հայ կաթողիկե միությունը գործում է Հայ Կաթողիկե համայնքի պատրիարքարանի հովանու ներքո: Միությունն ունի պատանեկան, երիտասարդական և կանանց վարչություն: ՀԿՄ-ի մշակութային կառույցներից է «Քնար» երգչախումբը, որն իր ուրույն տեղն ունի սիրիահայ մշակութային կյանքում: Այն հիմնվել է 1960-ականների սկզբներին, Փաշայան, Հարությունյան 2011, 16–17:

⁸¹ «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 526–529:

⁸² Հարությունյան 2002, 205:

նող դպրոցների կրթական ծրագրերի վրա: Վտանգի էր ենթարկված հայկական դպրոցների գոյությունը: 1965 թ. երկրի արաբականացման քաղաքականության համապատկերում կրկին մի շարք սահմանափակումներ մտցվեցին կրթության ոլորտում: Արդյունքում բոլոր դպրոցներն անցան պետության ենթակայության ներքո՝ արաբերեն անվանումներով⁸³: 1967 թ. սեպտեմբերի 9-ին հրապարակվեց օրենք⁸⁴, ըստ որի՝ հայկական դպրոցներում արգելվեցին հայագիտական բոլոր առարկաների դասավանդումը, բացի կրոնից, արգելվեց տարրական դասարաններում հայերենով ուսուցման կազմակերպումը, պարտադրվեց 1–12-րդ դասարանների ուսուցումը կազմակերպել արաբերեն, ընդհուպ մինչև կրոնի պատմության ուսուցումը:

Հայկական շատ դպրոցների տնօրինություններ պարզապես չցանկացան ենթարկվել վերոնշյալ սահմանափակումներին և նախընտրեցին փակել դպրոցները որոշ ժամանակով: Տվյալ ժամանակաշրջանում անհրաժեշտ էր վարել ճկուն քաղաքականություն՝ իրավիճակից նվազագույն կորուստներով դուրս գալու համար: Իշխանությունների հետ երկարատև բանակցությունների արդյունքում հնարավոր եղավ ձեռք բերել հայկական դպրոցներում մայրենի լեզվով ուսուցման թույլտվություն: Այս անգամ կրթության բովանդակության մեջ այն ընդգրկվեց որպես ծիսական լեզու, այսինքն՝ լեզու, որով կատարվում են կրոնական ծիսակատարությունները, աղոթքներն ու երգերը: Ծիսական լեզվի ուսուցմանը տրամադրվեց 4 ժամ, ևս 2 ժամ՝ կրոնի համար⁸⁵: Որոշ դադարից հետո հայկական փակված դպրոցները վերաբացվում են՝ հնարավորության սահմաններում իրականացնելով իրենց գործունեությունը:

Նշենք, որ սիրիահայերը հիմնականում ներգրավված էին արհեստների և գործարարության ոլորտում: Հալեպի հայ բնակչությունը

⁸³ Հարությունյան 2002, 208:

⁸⁴ Chronology, Middle East Journal 1968, 69, հասանելի է՝ <http://web.stanford.edu/group/tomzgroup/pmwiki/uploads/3446-1968-Winter-MiddleEastJournal-a-LPP.pdf>, 15.10.2015.

⁸⁵ Հարությունյան 2002, 213; Չոլաքեան 2011, 127:

մասնակցել է քաղաքի տնտեսական կյանքի բոլոր ասպարեզներին: Այստեղ կային մեծ թվով գործարանային բանվորներ, որոնք զբաղված էին տեքստիլ արդյունաբերության մեջ, արհեստավորներ՝ ոսկերիչներ, դերձակներ, կոշկակարներ և այլն: Զգալի էր նաև առևտրականների թիվը: Հայերից մի քանիսը հասել են տնտեսական բարձր դիրքի և ունեին իրենց խոշոր խանութները, գործարաններն ու այլ տիպի արդյունաբերական ձեռնարկություններ⁸⁶: «Գյուղատնտեսության մեջ զբաղվողների տեսակարար կշիռը ընդհանուր քանորդում խիստ նվազ է: Կիլիկիայի հարավարևելյան որոշ լանջերին հայ գյուղացին վարում է տնտեսություն մի քանի գյուղերում»⁸⁷: Զինվորականության մեջ և պետական ապարատում հայեր գրեթե չկան: Մտավորականները միայն մի փոքր մաս են կազմում: Տարբեր մասնագիտություններ ունեցողների մեջ քիչ չեն Հայաստանում կամ արտերկրում ուսանածները: Ակադեմիական գիտությամբ զբաղվողները եզակի անհատներ են: Հատկանշական է, որ Սիրիայում վերջին տարիներին հայերը կրթության նկատմամբ ավելի մեծ հակում ունեն, և շատերն են բարձրագույն կրթություն ստանում, քան 1970–80-ականներին: Պատճառը թերևս այն է, որ նախկինում հայերն ավելի էին հակված դեպի արհեստները, քանի որ համայնքի հաստատման սկզբնական և հետագա շրջանում առկա նյութական խնդիրների լուծումը, բնակա-նաբար, ավելի էր կարևորվում, քան ուսումը:

Ի տարբերություն 1950-ականների, երբ համայնքը գտնվում էր գաղափարախոսական տարբեր վեճերի ու հակասությունների մեջ, վերջին տարիներին այն ավելի միասնական կառույց է դարձել, որի տարբեր շերտերի ու շրջանակների մեջ կա երկխոսություն և համագործակցություն: Սակայն սիրիահայ համայնքում կան նաև այնպիսի խնդիրներ, որոնք կարգավորման կարիք ունեն: «Այդ խնդիրներից է թեմական հարցը, որ գոյություն ունի Դամասկոսի հայ համայնքում: Այն պառակտել է դամասկոսահայ համայնքը, որը գործնականում բա-

⁸⁶ Գասպարյան 1962, 170:

⁸⁷ Դավլաթյան 2004, 177:

Ժամված է երկու թևի: Առաջինի մեջ մտնում են էջմիածնական կողմնորոշում ունեցողները՝ հնչակյան, ռամկավար, բարեգործական և կոմունիստ շրջանակները, մյուս թևում՝ դաշնակցական, որոնք անթիվիասական կողմնորոշում ունեն»⁸⁸: Թեմական հարցը վերածվել է չհանգուցալուծվող խնդրի, որը ջլատում է համայնքի ուժերը: Այն առավել ակնհայտ է դառնում տեղական ազգային իշխանության ընտրությունների ժամանակ: Երկու թևերը պարբերաբար հակադարձում են միմյանց, մեծ ռեսուրսներ ներդնում՝ հաղթելու տեղական ազգային ընտրություններում: Այս իրողությունը դարձել է յուրատեսակ մի պայքար և պայմանավորված է որոշակի քաղաքական և տնտեսական շահերով: Անգամ համահայկական նշանակություն ունեցող միջոցառումները, օրինակ, Եղեռնի զոհերի հիշատակի օրը, Դամասկոսում նշվում է տարանջատ⁸⁹: Ամեն դեպքում, պետք է նշել, որ, չնայած թեմական հարցը հանդես է գալիս որպես տարանջատող գործոն, դամասկոսահայ համայնքն ապրում է ազգային աշխույժ կյանքով: Դամասկոսում գործում են հայկական ավանդական կուսակցությունների մասնաճյուղերը, մի շարք ազգային դպրոցներ, բարեգործական հաստատություններ:

Սիրիահայերն օժտված են ազգային բարձր գիտակցությամբ: Նրանց համար Հայաստանի գաղափարը ազգապահպանության կենտրոնական տարրն է և դրա կենսունակության կարևոր խթանը: Բոլոր դեպքերում, սիրիահայերը լուրջ ջանքեր են ներդնում հայ ինքնությունը պահպանելու հարցում: Միությունների ներսում մշակվում են ազգային ծրագրերը և միության ենթակառուցվածքների միջոցով իրականացվում դրանք: Համայնքն ապրում է ազգային հոգևոր-մշակութային և հասարակական բավական աշխույժ կյանքով: Ազգային դաստիարակությունը շարունակվում է ոչ միայն մշակութային և մարզական

⁸⁸ Փաշայան, Հարությունյան 2011, 34–35:

⁸⁹ Ապրիլի 24-ի միջոցառումը Դամասկոսում նշվում է երկու շրջանակում: Դաշնակցական շրջանակները չեն մասնակցում Դամասկոսի թեմի առաջնորդի հովանավորությամբ կազմակերպած միջոցառմանը, այլ նրանք են կազմակերպում սեփական միջոցառումը, որին հրավիրվում է Բերիո թեմի առաջնորդը, Փաշայան, Հարությունյան 2011, 35:

միություններում, այլ նաև՝ ընտանիքներում: Սիրիահայ համայնքը մեծ մասամբ հայախոս է, արաբախոս են հիմնականում կաթոլիկ հայերը, ինչպես նաև հին հայերը՝ «արման աղիմ»⁹⁰, որոնց շրջանում ազգային գիտակցությունը գրեթե մթազնած է:

Հալեպում և Դամասկոսում գործում է հայկական 8 տպարան: Սիրիայում XIXդ. 2-րդ կեսից լույս է տեսել շուրջ 150 անուն հայերեն պարբերական, մեծ մասը՝ Հալեպում: Հալեպի «Գանձասար» շաբաթաթերթի հետ զաղթավայրում տարածում ունեն նաև լիբանանահայ հիմնական պարբերականները («Ազդակը», «Զարթոնքը», «Արարատը» և այլն)⁹¹: Սիրիահայերի մեծ մասը պարբերաբար հետևում է հայաստանյան իրադարձություններին: Արբանյակային հեռուստահեռարձակման շնորհիվ վերջիններս դիտում են «Հ1-ը» և հայաստանյան այլ հեռուստաալիքներ:

Սիրիահայերի նկատմամբ թե՛ իշխանությունները, թե՛ հասարակությունը բարյացակամորեն են տրամադրված եղել՝ պայմանավորված նրանց ունեցած վաստակով, վստահելի և օրինապահ վարքագծով, նաև էթնիկ և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողական քաղաքականությամբ: Մինչև պատերազմը՝ Սիրիայում խաղաղ ապրել են էթնոդավանական և կրոնադավանական բազմաթիվ ուղղությունների ներկայացուցիչներ: Հայ հոգևորականները ժամանակ առ ժամանակ հանդիպել են Սիրիայի այլ կրոնադավանական համայնքների ներկայացուցիչների հետ, քննարկել համագործակցության, միջկրոնական ու միջդավանական երկխոսության, ինչպես նաև կրոնական և էթնիկ հանդուրժողականությանն առնչվող հարցեր: Հայերն առօրյա և գործնական կյանքում տեղացիների հետ հարաբերություններում խնդիրներ չեն ունեցել, սակայն գերադասել են շփվել հիմնականում հայրենակիցների հետ:

⁹⁰ Հայերին, ովքեր դեռևս Ցեղասպանությունից առաջ են բնակվել Սիրիայում, անվանում են արման աղիմ (հին հայեր): Նրանց մի մասը կաթոլիկ, արաբախոս հայեր են, Չոլաքեան 2017, 133:

⁹¹ «Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 516, 533–534; Թոփուլյան 1986, 286–289:

XX դարի հայրենադարձության տարիներին սիրիահայերը ևս անմասն չեն մնացել այդ գործընթացից, և Սովետական Հայաստան են ներգաղթել հազարավոր հայեր: Հ. Չոլաքյանը գրում է. «Հայրենադարձութիւնը ծանր հետեւանքներ ձգեց առհասարակ Սուրիա մնացած ամբողջ հայութեան վրայ: Բազմաթիւ բնակավայրեր հայաթափ եղան ու անցան պատմութեան գիրկը: Դժուար եղաւ այն բնակավայրերու պարագան, ուր ոմանք շարունակեցին մնալ: Բնակչութեան թուփ նուազումին հետեւանքով համայնքները կազմալուծուեցան, հոգեւոր եւ կրթական հաստատութիւնները չկրցան ոտքի մնալ: Օտար տարր մը հաստատուեցաւ մեկնողներու տուներուն մէջ. շատ բնակավայրեր կորսնցուցին իրենց զուտ հայաբնակ ըլլալու հանգամանքը: Ասոնք ալ պատճառ հանդիսացան, որ մնացողները իրենց ընտանիքներուն համար նոր ու ապահով կայք մը փնտռեն, կամաց-կամաց լուծարեն երեք տասնամեակներէ ի վեր իրենց շինած ու ձեռք բերած ինչքերը, լքեն դպրոցները, եկեղեցիներն ու գերեզմանները, արտագաղթեն կամ նոր կայք փնտռեն գլխաւորաբար հայաշատ կեդրոններու մէջ: Բազմաթիւ հայաբնակ գիւղեր հանգեցան Ճեզիրէի շրջանին մէջ, Թուրքիոյ սահմանամերձ տարածքներուն մէջ, ինչպէս Թէլ Պրաք, Ճարապլուս, Արաք Փունար, Այն Արուս, Աֆրին, Թինան եւ այլն, կամաց-կամաց լքուեցան Հալէպի հայաշէն արուարձանները... Հայրենադարձութենէ ետք ազգային իշխանութիւնները բնականաբար կը լծուին համայնքներու վերակազմութեան աշխատանքին: Բազմաթիւ հարցեր կը ծանրաբեռնեն օրակարգը՝ ամէն բան ծախած, բայց ներգաղթէ զրկուած ընտանիքներու տնտեսական ու կեցութեան խնդիրները, մեծ թիւ կորսնցուցած դպրոցներու պաշտօնէութեան եւ աշակերտութեան մէջ օտարներու թիւի աճը, թափուր մնացած եկեղեցիները, բազմաթիւ ընտանիքներու ներքին տեղաշարժի եւ արտագաղթի բերած խնդիրները, լքուած բնակավայրերու ազգային կալուածներու ճակատագիրը եւ այլն»⁹²:

Հայրենադարձութիւնից հետո, փաստորեն, երկար ժամանակ պահանջվեց՝ համայնքի նախկին կենսունակութիւնը վերականգնելու

⁹² Չոլաքեան 2018, 59–60:

համար: Տարիներ անց արդեն այս համայնքին սպառնացող վտանգներն այլ բովանդակություն ստացան, էթնիկ ինքնության պահպանման գործընթացը բազմաթիվ խոչընդոտների առջև կանգնեց.

- Միջէթնիկ ամուսնություններն արաբների, արաբ քրիստոնյաների հետ:
- Արաբական մշակույթի ազդեցությունն երիտասարդների վրա, դրա ակտիվ ներմուծումը հայ համայնք:
- Արաբախոս շատ ընտանիքների՝ հայկական շրջանակում չմնալու ցանկությունը, ազգային կյանքից հեռանալը:
- Սիրիայում տնտեսական իրադրության վատթարացումը, ինչն էապես նպաստել է արտագաղթի աշխուժացմանը⁹³: Հայերն արտագաղթել են հիմնականում Լիբանան, ԱՄԷ, ԱՄՆ, Կանադա, քիչ չափով նաև՝ եվրոպական երկրներ: Արտագաղթողների մեծ մասը երիտասարդներ են, որոնք ուսանելու են գնացել և չեն վերադարձել, կամ մեկնել են արտագնա աշխատանքի:
- Անկանխատեսելի զարգացումները, տարածաշրջանում միջէթնիկ և միջկրոնական լարվածությունը որոշակի մտավախություն և ազգային անվտանգությանն առնչվող ներքին տագնապ էին առաջացրել հայերի մեջ դեռևս մինչև 2011թ., իսկ սկսված պատերազմն արդեն ճակատագրական եղավ սիրիահայ համայնքի և հազարավոր սիրիահայերի համար՝ ցրելով նրանց աշխարհով մեկ: 2011թ. չդադարող ռազմական գործողությունների պատճառով սիրիահայերի տարերային ներհոսք սկսվեց դեպի ՀՀ: Նրանք աստիճանաբար սկսեցին հեռանալ նաև այլ ապահով վայրեր. Լիբանան՝ մոտ 15000, եվրոպական երկրներ, Կանադա՝ մոտ 8000, Հորդանան՝ 2000, իսկ մոտ 15000՝ մնացել են Սիրիայում⁹⁴:

⁹³ Սիրիահայերի արտագաղթի մասին տե՛ս Ղանալանյան 2016, 118–134:

⁹⁴ Zolyan, Refugees or repatriates? Syrian Armenians return to Armenia, 2015, հասանելի է՝ <https://www.opendemocracy.net/en/odr/refugees-or-repatriates-syrian-armenians-return-to-armenia/>, 01.07.2017.

Փաստորեն, հնարավոր չեղավ կանխել հայության մեծաթիվ արտագաղթը Սիրիայից՝ չնայած ազգային կառույցների գործադրած մեծ ջանքերին: Գրեթե հայաթափվեցին Դեյր Ջորի և Ռաքքայի նահանգները: Դեյր Ջորում փակվեց ՀՀ պատվավոր հյուպատոսությունը, մասնակի կամ հիմնովին թալանվեցին, ավերվեցին կամ ոչնչացվեցին հայկական մի շարք հասարակական շինություններ, գործարաններ, խանութներ, մշակութային կենտրոններ, վարժարաններ, գերեզմանատներ, եկեղեցիներ, բազմաթիվ և տարաբնույթ հուշարձաններ, մասնավորապես՝ Հալեպում, Քեսաբում և այլուր, այդ թվում՝ 2014 թ. սեպտեմբերի 21-ին ավերվեց Հայոց ցեղասպանության նահատակների մասունքներն ամփոփող Սրբոց Նահատակաց եկեղեցին Դեյր Ջորում: Սակայն սիրիահայ համայնքի՝ պատերազմում կրած թե՛ նյութական, և թե՛ մարդկային կորուստները ամբողջովին և վերջնականորեն դեռևս ամփոփված չեն:

Այսօր որոշ չափով կայունացած խաղաղությունը և երկրի կարևորագույն ենթակառուցվածքների մասնակի վերականգնումը հայերին Սիրիա վերադառնալու հնարավորություն են տվել: Իրենց հերթին սիրիական իշխանությունները, ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հանձն են առել սիրիահայ համայնքի շուտափույթ վերականգնման անհետաձգելի առաքելությունը⁹⁵:

Ըստ Սիրիայում ՀՀ դեսպանության նախնական տվյալների՝ այսօր Սիրիայում բնակվում է 25–28 հազար հայ. հիմնական մասը շարունակում է կենտրոնացած մնալ Հալեպում⁹⁶:

Այսպիսով, մինչև պատերազմը Սիրիայի հայ համայնքը Մերձավոր Արևելքի ամենահին ու ավանդական համայնքներից մեկն էր, որին շատ հաճախ անվանել են նաև Սփյուռքի մայր համայնք: Այն վերակազմավորվել է Հայոց ցեղասպանությունից և Կիլիկիայի հայաթափումից հետո: Չնայած սկզբնական շրջանի դժվարություններին՝ հա-

⁹⁵ Սիրիա, հասանելի է՝ <http://diaspora.gov.am/hy/pages/51/syria> , 19.04.2022.

⁹⁶ Սիրիայում մոտ 25–28 հազար հայ է մնացել, առաջնահերթ են սոցիալական խնդիրները. դեսպան, հասանելի է՝ <https://www.azatutyun.am/a/30130087.html> 19.04.2022:

յերը հարմարվեցին իրենց ընդունող երկրի քաղաքակրթությանը: Սիրիայի քաղաքացիություն ստանալը կարևոր նշանակություն ունեցավ սիրիական հասարակության մեջ հայերի ինտեգրման համար: Նրանք աստիճանաբար սկսեցին մասնակից դառնալ երկրի տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային զարգացումներին: Միևնույն ժամանակ, արաբական աշխարհը դարձավ այն նպաստավոր միջավայրը, որտեղ հնարավոր եղավ պահպանել հայկական ինքնությունն ու ինստիտուցիոնալացնել համայնքային կառույցները: Սիրիայի, հատկապես Հալեպի հայ համայնքը դարձավ արևմտահայերենի և արևմտահայ մշակույթի պահպանման ու զարգացման ամենակարևոր ու բացառիկ օջախներից մեկը ողջ Սփյուռքում: Սրա հետ մեկտեղ, արաբական միջավայրն իր ուրույն ազդեցությունը թողեց նաև հայերի կրթության, լեզվամտածողության, մշակույթի ու կենցաղի վրա:

1.2. «Մեծ հայրենադարձությունը» և սիրիահայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան

«Մեծ հայրենադարձության» տարիներին սիրիահայերը ևս մեծ խմբերով գաղթեցին Խորհրդային Հայաստան: Այս փորձի ուսումնասիրությունը և համեմատությունը շատ կարևոր է՝ հաշվի առնելով տարբեր ժամանակաշրջանների համակարգային, գաղափարախոսական տարբերությունները, ինչպես նաև ներգաղթի պատճառները, ինստիտուցիոնալ կառույցների գործունեությունը, ներգաղթողների սոցիալ-տնտեսական վիճակը և այլն:

Խորհրդային շրջանում սփյուռքահայերի հայրենադարձությունը կազմակերպվել է մի քանի շրջափուլերով, որոնք մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են երեք մեծ փուլերով: Այս ամբողջ ժամանակաշրջանում (1920–1980 թթ.) Սփյուռքից Հայաստան է վերադարձել շուրջ 170 հազար հայ: Գրականության մեջ սիրիահայերի հայրենադարձությանն առնչվող մանրամասները շատ չեն ինչպես վիճակագրության, այնպես էլ բովանդակային առումներով, սակայն մենք փորձել ենք հնարավորինս վերլուծել առկա տեղեկատվությունը:

Հայրենադարձության առաջին փուլն ընդգրկում է 1921–1936 թթ., որի ընթացքում հայրենադարձվել է 42,2 հազար հայ, հիմնականում՝ Իրաքից, Իրանից, Հունաստանից, Թուրքիայից, Ֆրանսիայից ու Բուլղարիայից: Այս փուլում ներգաղթած սիրիահայերի հստակ թիվ առկա չէ մասնագիտական գրականության մեջ: Ըստ Հ.Մելիքսեթյանի՝ 1924 թ. Հունաստանից, Սիրիայից, Կոստանդնուպոլսից, Ֆրանսիայից ներգաղթել է 4167 մարդ⁹⁷:

Խորհրդային կառավարությունը 1921 թ. վերջերից, ձեռնամուխ լինելով աշխարհով մեկ սփռված հայերի ընդունման գործին, ընդունում է առաջին քարավանը, որը Բաթումի նավահանգիստ է հասնում 1921 թ. դեկտեմբերի վերջերին: Հայաստանում կուտակված գաղթականության հետ տարվող աշխատանքները կենտրոնացնելու և ընդլայնելու նպատակով դեռևս 1921 թ. հուլիսի կեսին ստեղծվում է Ժողկոմխորհին առընթեր գաղթականության գործերի գլխավոր վարչությունը, որը մեծ դեր է կատարում ներգաղթի կազմակերպման և տնտեսական դրության բարելավման գործում: Հայրենադարձության կազմակերպման հարցում մեծ գործ են կատարել նաև սիյուռքի կազմակերպությունները և խորհրդային իշխանությունների հասարակական կազմակերպությունները: Սիյուռքյան կազմակերպություններից էր ՀԲԸՄ-ը, որին խորհրդային իշխանությունը թույլատրել էր գործել Հայաստանում⁹⁸: Այն նյութապես աջակցել է ներգաղթյալների համար Հայաստանում առանձին ավաններ կառուցելուն:

Ներգաղթի կազմակերպման աշխատանքները կենտրոնացնելու նպատակով 1921 թ. Հայաստանում ստեղծվում է նաև «Հայաստանի օգնության կոմիտեն»⁹⁹: Այս փուլում ներգաղթած հայերի մի մասը տեղավորվում է նրանց համար կառուցված ավաններում, հատկապես Երևանում ու նրա շրջակայքում, Լենինականում, Կիրովականում, ԱնիՊեմզայում, Իջևանում, Ստեփանավանում և այլն, սակայն գյուղական վայրերում տեղավորված գաղթականները, չհարմարվելով տեղի

⁹⁷ Մելիքսեթյան 1975, 155:

⁹⁸ Մելքոնյան 2005, 168–170:

⁹⁹ Մելիքսեթյան 1985, 75–77:

պայմաններին, մեկնում և բնակություն են հաստատում Երևան և Լե- նինական քաղաքներում¹⁰⁰:

Երկրորդ փուլն ընդգրկում է 1946–1948/49 թթ., որի ժամանակ հայրենադարձվեց 89,7 հազար հայ 12 երկրներից (Իրան, Հունաստան, Սիրիա, Լիբանան, Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա, Եգիպտոս, Պաղեստին, Իրաք, ԱՄՆ և այլն): 1950-ական թթ. հայրենադարձվեց ընդ- հանուր 4000 հայ: Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված ներգաղթը և ծավալով, և ներգրաված երկրների թվով ամենամեծն էր, այդ պատ- ճառով ստացավ «Մեծ հայրենադարձություն» անվանումը: Խորհրդային Միության ղեկավարության անմիջական թույլտվությամբ տեղի ունեցած հայրենադարձության կարևոր հիմնավորումներից մեկը Հայաստանի հետագա տնտեսական զարգացման և հզորացման, ժողովրդագրական վատթար իրավիճակը բարելավելու խնդիրն էր: Պատերազմից հետո մի շարք երկրներում առաջացած տնտեսական ճգնաժամը ևս ծանր կացության մեջ էր դրել սփյուռքահայությանը, դժվարացել էին ապրուստի պայմանները, աճել գործազրկությունն ու թշվառությունը: Բացի այդ, երբ Խորհրդային Միությունը հաղթանակած դուրս եկավ պատերազմում, նրա միջազգային վարկանիշը հասավ իր բարձրակետին¹⁰¹:

Մեծ հայրենադարձության տարիներին ներգաղթածների մեծ մա- սը Սիրիայից և Լիբանանից էին. այս երկրներից ընդհանուր թվով ներ- գաղթել են 32238 մարդ՝ 6319 ընտանիք¹⁰²: Նրանք կազմում էին 1946– 1948 թթ. շուրջ 12 երկրներից ներգաղթած հայերի 36 տոկոսը¹⁰³: Ի թիվս քաղաքական և սոցիալ-տնտեսական անկայուն վիճակի, Սիրիա- յում և Լիբանանում հայերը չէին ինտեգրվել նաև մշակութային տար- բերությունների հետևանքով, ինչը պատճառ հանդիսացավ նրանց մեծ հոսքերի դեպի Խորհրդային Հայաստան:

Ինչպես բոլոր հայաշատ քաղաքներում, այնպես էլ Դամասկոսում և Հալեպում ստեղծվեցին ներգաղթի տեղական կոմիտեներ՝ իրենց

¹⁰⁰ Սարգսյան 2001, 161–163:

¹⁰¹ Ստեփանյան 2010, 82–83:

¹⁰² Մելիքսեթյան 1985, 241:

¹⁰³ Սարգսյան 2001, 165:

անդամներով: Դամասկոսի կոմիտեն կազմվել էր 1946 թ. փետրվարի 10-ին: «Դամասկոսում ներգաղթի նախապատրաստական աշխատանքներին զգալի չափով նպաստում էին նաև կոմիտեին կից ստեղծված պրոպագանդայի, հպատակության փոփոխության, հանգանակիչ, արդյունաբերական, կալվածական, առողջապահական, փոխադրական, գեղարվեստական և այլ հանձնախմբերը, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարվում էր կոմիտեի մեկ անդամի կողմից»: Նույն օրը կազմվում է նաև Հալեպի և շրջակայքի հայերի ներգաղթի կոմիտեն: Ներգաղթի ենթակոմիտեներ են ստեղծվում նաև Ջեզիրեում և Հոմսում¹⁰⁴:

Սիրիայի հայաշատ բնակավայրերում բացվում էին նաև ցուցակագրման բազմաթիվ գրասենյակներ, որոնք ամբողջ օրը լեցուն էին արձանագրվելու եկած հոծ բազմությամբ: Միայն Հալեպում բացվել է ցուցակագրման 21 գրասենյակ: Ներգաղթել ցանկացողների ցուցակագրումը սկսելու առաջին երկու օրվա ընթացքում Դամասկոսում ապրող 1800 հայ ընտանիքներից շուրջ 1000-ը արձանագրվեցին: Հալեպում և նրա շրջակայքում բնակվող հայերից կարճ ժամանակամիջոցում արձանագրվեցին 15500 ընտանիք կամ 75000 մարդ, որը կազմում է այդ շրջանի հայության գրեթե 92 տոկոսը: Սիրիայում (նաև Լիբանանում) ներգաղթի նախապատրաստական աշխատանքներն ավելի շատ գործնական բնույթ են ստանում և կազմակերպված հունի մեջ դրվում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հատուկ ներկայացուցիչ, ՀՍՍՀ արդարադատության մինիստրի այնտեղ ժամանելուց հետո, որը գաղթօջախներում առաջ է բերում մեծ ոգևորություն¹⁰⁵:

Ընդհանուր առմամբ, այս ժամանակաշրջանում Սիրիայում ստեղծվում է 84 ցուցակագրող գրասենյակ, և այնտեղ գտնվող հայության 80%-ը ցուցակագրվում է: Գ. Սվազլյանը գրում է, որ «Սիրիա-Լիբանանի 200 հազար հայությունից 165 հազարը արձանագրվել է երկու ամսվա կարճ շրջանի մեջ»: Նրանց մեջ էին Սիրիայի հեռավոր գյուղերից արաբական, թուրքական կամ քրդական անուններով մարդիկ,

¹⁰⁴ Մելիքսեթյան 1985, 192-193:

¹⁰⁵ Նույն տեղում, 203-204:

որոնք հայերեն չէին խոսում, բայց ասում էին, որ հայ էին: Սրանք արաբական անապատներից հավաքված հայերի զավակներն էին, որոնք այլէթնիկ միջավայրում մոռացել էին հայերենը, բայց պահպանել էին հայկական ինքնագիտակցությունը: Նրանք ևս ձգտում էին Հայաստան՝ վերստին հայանալու համար¹⁰⁶: Ա. Ստեփանյանը բազմաթիվ պատմություններ է գրառել 1946 թ. սիրիահայերի ներգաղթից. «Անշուշտ, տեղեկություն չունեինք իրական վիճակի մասին, բայց մեզ բերողը իսկապես որ հայրենասիրությունն էր: Հայրենիքի մեջ ապրենք, հայրենիքը շենացնենք, մնացածը շտկվելիք է: Այդպես էին մրաժուժված շարերը, և այդ մրաժուժում էլ եկանք»¹⁰⁷: «Ախպարիկս Հայաստանին վրա կխենթանար: Ամենդ ալ պիտի գաղթեք, կըսեր, կուզեմ, չեմ ուզեր, չեմ գիտեր կըսեր: Հայաստանին վրա հակառակ բան մը ըսեինք նե, դանակը կառներ վրանիս կվազեր: Ամենս ալ խենթ եղած էինք, ըրածներիս չէինք հասկնար...»¹⁰⁸:

Այս տարիներին հայրենադարձների ընդունման և տեղավորման համար մշակվեցին ծրագրեր, հիմնադրվեցին նոր ավաններ, կառուցվեցին բնակարաններ, տրամադրվեցին հարմար պայմաններով վարկեր, սահմանվեցին արտոնություններ: 1945 թ. նոյեմբերին ընդունվեց «Արտասահմանյան հայերի՝ Խորհրդային Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին» որոշումը: ՀԽՍՀ կառավարությանն առընթեր ստեղծվեց Հայրենադարձության կոմիտե, որը սերտ կապեր հաստատեց սփյուռքի հայաշատ համայնքների հետ¹⁰⁹:

Այս փուլում հայրենադարձության գործընթացում առկա էին նաև բազմաթիվ խնդիրներ: Քանի որ պատերազմի հետևանքով Հայաստանը գտնվում էր սոցիալ-տնտեսական վատ վիճակում, սփյուռքահայերի ներգաղթը խորացրեց ճգնաժամը և ավելացրեց աղքատությունը: Խորհրդային կառավարության ինտեգրման քաղաքականության

¹⁰⁶ Սվազլյան 1965, 49–62; Մելիքսեթյան 1985, 206:

¹⁰⁷ Ստեփանյան 2010, 109:

¹⁰⁸ Նույն տեղում, 114:

¹⁰⁹ Նույն տեղում, 111–112:

մեջ ևս լուրջ բացթողումներ թույլ տրվեցին. հայրենադարձներին բնակարանով և աշխատանքով ապահովելը երբեմն կատարվում էր տեղացիների հաշվին՝ լարվածություն առաջացնելով նրանց միջև: Տեղաբաշխման գործընթացում ևս հաշվի չէին առնում հայրենադարձների կարիքները, քաղաքաբնակ և գյուղաբնակ լինելու հանգամանքը, մասնագիտությունները և աշխատանքային գործունեության բնագավառը: Արդյունքում, նրանց մոտ առաջացան դժգոհություններ վատ կենսապայմաններից, աշխատատեղերի բացակայությունից, պարտադրանքներից և արգելքներից, սոցիալական անարդարությունից: Սկսվեցին նաև քաղաքական ճնշումներ:

Նոր սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրվելու համար բազմաթիվ խոչընդոտող գործոններ էին առկա՝ Խորհրդային Հայաստանի և ելքի երկրների քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական տարբերությունները (օրինակ, ներգաղթյալների հոգևոր արժեքներում կարևոր տեղ ունեւ Ցեղասպանության հիշողությունը, որի մասին արգելված էր խոսել ՀԽՍՀ-ում), կրոնի և եկեղեցու տարբեր դերերը տեղացիների և հայրենադարձների համար, շփումների ժամանակ ի հայտ եկող տարբերությունները խոհանոցում, լեզվական և մշակութային հարցերում¹¹⁰: Որոշ մասնագետների կարծիքով՝ ինտեգրման առումով ճիշտ չէր նաև ներգաղթյալների հավաք բնակեցման քաղաքականության իրականացումը, որի հիման վրա ստեղծվեցին Նոր Արեշ, Բութանիա, Նոր Զեյթուն, Ախպարաշեն, Նոր Արաբկիր թաղամասերը: Բնակության հաստատման այդ մոտեցումը խանգարեց ինտեգրմանը և դժվարացրեց շփումները տեղացիների հետ¹¹¹: Տեղացիների և հայրենադարձների միջև ձևավորվեց նաև «մենք» և «նրանք» բաժանումը կրթական, մասնագիտական, սոցիալական և այլ հարցերում:

Հայրենադարձության **երրորդ փուլը** սկսվեց 1962թ., և երկու տասնամյակի ընթացքում Հայաստանում հաստատվեցին 32.5 հազար հայ աշխարհի գրեթե 30 երկրներից (Իրան, Սիրիա, Թուրքիա, Կիպ-

¹¹⁰ Նույն տեղում, 202-233:

¹¹¹ Կիրակոսյան 2002, 287:

րոս, Իրաք, Հունաստան, ԱՄՆ, Արգենտինա, Ֆրանսիա, Բուլղարիա, Հորդանան, Ուրուգվայ, Իտալիա, Լիբանան և այլն)¹¹²: 1964թ. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ ստեղծվում է Սփյուռքահայերի հետ մշակութային կապի կոմիտե ՀԿ-ն, որը գործում էր պետության հսկողությամբ և ֆինանսավորմամբ, և որի նպատակն էր զարգացնել կապերը սփյուռքահայ գաղթօջախների հետ, քարոզել հայրենասիրություն, ծանոթացնել Հայաստանի ձեռքբերումներին, գիտությանը և մշակույթին: Դրա համար կապեր հաստատվեցին արտասահմանում գործող հայկական բարեգործական, մշակութային միությունների հետ, կազմակերպվեցին համատեղ միջոցառումներ: Կոմիտեն հիմնականում կենտրոնացած էր մշակութային բնույթի աշխատանքի և անհատների հետ կապերի վրա¹¹³:

ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը նախատեսում է 1962–1965 թթ. հայրենիք վերադարձնել ավելի քան 40 հազար սփյուռքահայերի, այդ թվում միայն Սիրիայից՝ 10 հազար հոգի¹¹⁴: Սակայն 1962թ. պլանավորումը չի իրականանում, քանի որ մի շարք երկրներում ստեղծված քաղաքական իրադրությունն ուղղակի աննպաստ եղավ զանգվածային հայրենադարձության համար: Այդ պատճառով Սիրիայում, Լիբանանում և Իրաքում ՍՍՀՄ դեսպանությունները նպատակահարմար չգտան այդ երկրների կառավարությունների առաջ տվյալ պահին դնել զանգվածային հայրենադարձության հարցը¹¹⁵: 1963 թ. և սիրիահայերի զանգվածային ներգաղթ տեղի չունեցավ. մի քանի ընտանիքներ հայրենիք եկան անհատական վիզաներով: Արդեն 1964թ. Սիրիայից հայրենադարձվեց 187 ընտանիք՝ 836 մարդ, 1965 թ.՝ 463 ընտանիք՝ 2468 մարդ, 1966 թ.՝ 191 ընտանիք՝ 1311 մարդ¹¹⁶:

Ըստ Ա. Ստեփանյանի՝ այս տարիներին հայրենադարձվածները բոլորը ծագումով Կիլիկիայից էին: Շատերը մոռացել էին մայրենին՝

¹¹² Армянский вопрос, Энциклопедия, 1991, 274.

¹¹³ Եղիազարյան և այլք 2017, 115–117:

¹¹⁴ Մելիքսեթյան 1985, 255:

¹¹⁵ Նույն տեղում, 264:

¹¹⁶ Նույն տեղում, 270, 271, 277:

դառնալով արաբախոս, քրդախոս¹¹⁷: Սիրիայից ներգաղթածների մեջ ճնշող մեծամասնությունը գյուղի բնակիչներ էին՝ Հյուսիսային Սիրիայի Ջեզիրիե նահանգի Գամըշլը, Դեր Ջոր ավաններից և Արամո, Յակուբիե, Ղնիե և այլ արաբախոս հայաբնակ գյուղերից, Քեսաբի գյուղերից և Լաթաքիայի շրջանի ավաններից¹¹⁸:

1967 թվականից գնալով նվազում է ոչ միայն հայրենադարձվողների թիվը, այլև այն երկրների թիվը, որոնցից կատարվում էր ներգաղթը: Այդ հանգամանքը բացատրվում էր նրանով, որ մի շարք երկրների կառավարություններ, որի մեջ էր մտնում նաև Սիրիան, հայերի հայրենադարձությանը վերաբերվում էին կամ խիստ անբարյացակամորեն կամ թույլ չէին տալիս այն: Առկա էին նաև այլ գործոններ, ինչպիսիք են՝ հայրենադարձության հետ կապված հարցերի լուծման գործում դիվանագիտական ներկայացուցիչների կողմից ցուցաբերած հետևողականության թուլացումը, հայկական մի շարք գաղթօջախներում առաջադիմական, դեմոկրատական կազմակերպությունների գործունեության թուլացումը և այլն¹¹⁹: Այնուամենայնիվ, նախորդ փուլերի հետ համեմատած, 1962 թ. սկսված հայրենադարձությունն ավելի կազմակերպված և հաջող է իրականացվել: Առանց բացառության բոլոր հայրենադարձները պետության կողմից ստացել են բնակարաններ, ըստ իրենց մասնագիտության ժամանակին տեղավորվել են աշխատանքի, ստացել բազմաթիվ օգնություններ և այլ առավելություններ¹²⁰:

Այսպիսով, ուսումնասիրելով խորհրդային շրջանում սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի ներգաղթի պատմությունը՝ կարող ենք անել մեր հիմնական հետևությունները.

- 1920–1980-ական թթ. պետականորեն կազմակերպված ներգաղթը, որը պետք է լիներ ծրագրված, կառավարելի և վերահսկելի, սկսվեց առանց նախնական ծրագրի: Այս ընթացքում

¹¹⁷ Ստեփանյան 2014, 318:

¹¹⁸ Ստեփանյան 2010, 122:

¹¹⁹ Մելիքսեյան 1985, 279–280:

¹²⁰ Նոյն տեղում, 304:

չմշակվեց հայրենադարձության մասին միասնական օրենք, այլ գործընթացը կարգավորելու համար պարբերաբար ընդունվեցին իրավիճակից բխող իրավական ակտեր:

- Հայաստանը չունի նորեկների ինտեգրման ծրագիր, որը կօգնի նրանց կողմնորոշվել նոր միջավայրում և հարմարվել հասարակական հարաբերություններին և քաղաքական համակարգին:
- Խորհրդային տարիներին ներգաղթածների տեղաբաշխման, տեղավորման հարցերից բացի, խնդիրներ առաջացան նաև նրանց աշխատանքի տեղավորման հարցում. չկային մասնագիտական որակավորման ծրագրեր, հաշվի չէին առնում մարդկանց կրթությունը և մասնագիտական ունակությունները:
- Խորհրդային տարիներին պատշաճ չկազմակերպվեց նաև երեխաների ուսումնական գործընթացը: Արևմտահայերենին տիրապետող երեխաների համար դժվար էր արևելահայերենով ուսուցումը, սրա հետ մեկտեղ՝ նաև ռուսաց լեզվի հաղթարահարումը:
- Սկիզբ դրվեց արտագաղթի, որի հետևանքով նոր շերտ ավելացավ ավանդական Սփյուռքին:
- Ըստ էության, ներգաղթի յուրաքանչյուր հոսք պետք է ենթադրի քաղաքականության մշակում կամ դրա թարմացում, քանի որ այն այս կամ այն կերպ անդրադառնալու է ինչպես ներգաղթող նոր խմբի, այնպես էլ արդեն ինտեգրման որոշակի փուլում գտնվող խմբի վրա: Սակայն վերջին տարիներին դեպի ՀՀ սիրիահայերի ներհոսքի ուսումնասիրությունը փաստում է այդ քաղաքականության բացակայության մասին (տարբեր ոլորտներում առկա խնդիրների մասին կգտնեք աշխատության հաջորդ էջերում): 2012թ. սկսված հարկադրված ներգաղթը սկիզբ դրեց բազում խնդիրների, որոնց հաղթահարմանը գործնականորեն պատրաստ չէր Հայաստանը: Ինչի հետևանքը եղավ այն, որ ՀՀ տեղափոխված 22000 սիրիահայերից

միայն մոտ քառորդ մասը մնաց հայրենիքում: Ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ վերջին տասը տարիներին, սիրիահայերը հեռացան Հայաստանից՝ համարելով հայկական Սփյուռքի շերտերը:

Սիրիահայերի ներհուքի առաջին տարիներին նրանց՝ հայ հասարակությանն ինտեգրելու նպատակով բազմաթիվ ծրագրեր նախաձեռնվեցին և իրականացվեցին՝ ներառելով տարբեր ուղղություններ՝ առաջին անհրաժեշտության կարիքների բավարարում, բնակարանային ապահովում, ֆինանսական, սոցիալական, բժշկական, հոգեբանական աջակցություն, կրթության և զբաղվածության հարցերում օժանդակություն, իրավաբանական օգնություն, մշակութային միջոցառումների կազմակերպում և այլն (այս մասին տես հաջորդ ենթագլխում): Այդ ծրագրերն իրականացվեցին ոչ միայն պետական գերատեսչությունների, այլ նաև և ավելի շատ միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների միջոցով: Սակայն պետք է արձանագրենք, որ այս փուլում ևս Հայաստանը չունեւ ներգաղթյալների ինտեգրման ընդհանրական մոտեցում՝ որպես պետական քաղաքականության մաս: Առկա քաղաքականությունը կրում էր իրադարձային բնույթ՝ առաջացած հարցերին տալով միայն տեղային արձագանք:

1.3. Սիրիահայերը հետխորհրդային Հայաստանում. Խնդիրներ և դրանց հաղթահարման ուղիներ

Ինչպես նշվեց վերևում, 2011 թ. ի վեր Սիրիայում ընթացող պատերազմի¹²¹ պատճառով շատ սիրիահայեր են տեղափոխվել Հայաստան:

¹²¹ 2011 թ. ռազմական հակամարտություն է սկսվում Սիրիայի օրինական իշխանությունների, նրանց սատարող Սիրիայի Զինված ուժերի, դաշնակիցների (Հզբոլահ և այլն) և իրենց Սիրիայի ընդդիմություն հռչակած Սիրիայի ազատ բանակի, Ալ Քաիդայի Սիրիական խմբավորումների, Քաթարի, Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի, ԱՄՆ-ի ու Եվրոպական մի շարք երկրների կողմից ռազմական ու ֆինանսական աջակցություն ստացող ահաբեկչական կազմակերպությունների (Ալ Նուսրա և այլն) միջև: Ստեղծված իրավիճակում սիրիական պետական և սոցիալ-տնտեսական համակարգը հետևողականորեն կազմալուծվում է: Երկրի գրեթե բոլոր շրջաններում խախտվում է կյանքի բնականոն

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ միայն 2013 թ. ՀՀ է եկել 6000–7000 մարդ: Այս միջակայքային տատանումը վկայում է այն մասին, որ ստույգ հաշվառում չի եղել: Առհասարակ, նրանց միգրացիոն հոսքի փաստագրման կամ տվյալների հավաքագրման որևէ մեխանիզմ ու համակարգ չի գործել՝ բացի ՀՀ պետական սահմանը հատելու ու վիզա ստանալու ֆորմալ ընթացակարգերից: Նրանք իրենց հայեցողությամբ տարբեր խնդիրների պատճառով դիմել են կամ ՍՆ, կամ Միգրացիոն ծառայություն, կամ ՀՀ Ոստիկանության անձնագրերի ու վիզաների վարչություն¹²²: Ըստ ՀՀ ՍՆ տվյալների՝ 2014 թ. փետրվարի դրությամբ ՀՀ-ում բնակվել են շուրջ 11000 սիրիահայեր՝ մոտ 2800 ընտանիք: 2017 թ. արդեն շրջանառվում է այն տեղեկատվությունը, որ պատերազմի բռնկվելուց ի վեր մոտ 22000 սիրիահայեր են եկել Հայաստան¹²³: Նրանց զանգվածը շատ հոսուն էր, շարժը դժվար էր վերահսկել: Հայաստանը ոմանց համար դառնում է նաև տարանցիկ երկիր: ՀՀ ՍՆ-ը ևս տեղեկացնում է, որ նրանց մի մասն անընդհատ գտնվում է շարժման մեջ¹²⁴: Պաշտոնական տեղեկատվությունը բացակայում է, սակայն ըստ ոչ պաշտոնական տեղեկատվության՝ 2018 թ. Հայաստանում բնակվել են մինչև 8000 սիրիահայեր¹²⁵:

Բացի այն, որ Հայաստան տեղափոխված սիրիահայերի վերաբերյալ բացակայում է հստակ վիճակագրությունը, նաև տարբերվում են պաշտոնական և միջազգային տվյալները: Օրինակ, ՄԱԿ-ի փախստականների գործերով հանձնակատարի ներկայացուցչի հաղորդման համաձայն՝ 2011 թվականից սկսած Հայաստան է ներգաղթել 15000 սիրիահայ, որից 12000-ը հաստատվել է հայրենիքում, իսկ մոտ 3000-ը տեղաշարժի մեջ է:

ընթացքը, զոհվում են հազարավոր մարդիկ: Հարությունյան, Սիրիական պատերազմ. հնարավոր սցենարներ: Հասանելի է՝ http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=6762, 10.02.2015:

¹²² Հակոբյան 2014, 4–5:

¹²³ «Սիրիական պատերազմի սկզբից Հայաստանն ընդունել է 22 հազար սիրիահայի»: Հասանելի է՝ <https://armenpress.am/arm/news/895509/22000-syrian-armenians-re-locate-to->, 23.06.2017:

¹²⁴ Աղբյուրը՝ <http://www.mindiaspora.am/am/petakan-qaxaqakanutyun> 07.10.2018:

¹²⁵ Հակոբյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), 2018, փորձագիտական հարցազրույց ՍՀՀԿ ՀԿ-ի նախագահի հետ, 25.10.2018:

Սիրիահայերի համար Հայաստանից հեռանալու պատճառները բազմաթիվ էին, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նրանցից ոմանք ի սկզբանե Հայաստանը համարել են տարանցիկ երկիր՝ օգտագործելով այն հիմնականում Արևմտյան Եվրոպայի երկրներ, Կանադա և ԱՄՆ տեղափոխվելու նպատակով: Այս ամենին նպաստել են այդ երկրների վարած քաղաքականությունը, հայտարարություններն այն մասին, որ պատրաստ են ընդունելու սիրիացի փախստականների: Բացի այդ երկրների պետական աջակցության ծրագրերից, սիրիահայերին դիմավորելու, նրանց օժանդակելու նախաձեռնությամբ հանդես եկել և բազմաթիվ ծրագրեր իրականացրել են նաև տեղի հայկական համայնքային կառույցները և անհատ բարերարներ:

Բացի այս զանգվածից, իհարկե, կան սիրիահայեր, ովքեր Հայաստանից հեռացել են երկրում առկա վանող գործոնների պատճառով, որոնք հիմնականում սոցիալ-տնտեսական բնույթ ունեն՝ գործազրկություն, ցածր աշխատավարձ, սեփական բիզնես ստեղծելու դժվարություններ, բարձր հարկեր, բնակարանի բացակայություն, կենցաղային խնդիրներ և այլն: Նրանց միգրացիոն վարքագծի վրա որոշակի ազդեցություն են թողել նաև մշակութային, հոգեբանական գործոնները:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են ադապտացիայի հաջողության վրա ազդող բազմաթիվ գործոններ՝ և՛ ներքին, և՛ արտաքին: Արտաքին գործոնների թվում են նաև էկոլոգիական գործոնները (ընդհանուր առմամբ, արտաքին գործոնները ներառում են երեք հիմնական խումբ՝ էկոլոգիական, սոցիալական և մարդաբանական), որոնք կապված են բնակության միջավայրի հետ (եղանակ, լանդշաֆտ, տնտեսական հարմարություններով և անհրաժեշտ բնական ռեսուրսներով ապահովվածություն): Հետևաբար, բնակության վայրի փոփոխությունը կարող է առաջացնել էկոլոգիական անհամատեղելիություն¹²⁶, և բացասական ազդել ադապտացիայի վրա: Չնայած լայն իմաստով սիրիահայերի ներգաղթի հետևանքով նրանց բնակու-

¹²⁶ Якобсон 1999, 60.

թյան միջավայրի էական փոփոխություն է եղել, այնուամենայնիվ, նրանք փորձել են Հայաստանի ներսում որոշակի հարմարավետություն ապահովել այս իմաստով և ընտրել իրենց համար համեմատաբար հարմար բնակավայրեր: Այսպես, ըստ հետազոտության արդյունքների, սիրիահայ համայնքի մեծամասնությունը բնակվում է Երևանում, մի որոշ գանգված՝ ՀՀ տարբեր մարզերում: Երևանում ապրող սիրիահայերը հիմնականում կենտրոնացած են Կենտրոն և Արաբկիր համայնքներում: Այնուհետև, համեմատաբար մեծ խումբ են կազմում Էրեբունի, Շենգավիթ, Աջափնյակ համայնքներում բնակվողները: Մեր ուսումնասիրությունը հետաքրքիր օրինաչափություն է բացահայտել մարզերի պարագայում՝ նրանք կամ նախընտրում են մարզկենտրոնները (օրինակ, Գյումրի), կամ Երևանին մոտ գտնվող քաղաքային և գյուղական բնակավայրերը (օրինակ, Վաղարշապատ, Աբովյան, Ադինջ, Ջրվեժ և այլն):

Քիչ թվով սիրիահայեր բնակություն էին հաստատել նաև Արցախի Հանրապետությունում: 2017 թ. հունվարի դրությամբ ԱՀ Քաշաթաղի շրջանում բնակվել է 24 ընտանիք՝ թվով 76 մարդ (41 տղամարդ, 35 կին): Այդ տարիների ընթացքում սիրիահայերի շրջանում գրանցվել է երեք ամուսնություն և ութ երեխաների ծնունդ¹²⁷: 2020 թ. արցախյան պատերազմից հետո բազմաթիվ արցախահայերի հետ տեղահանվեցին նաև Արցախում բնակվող սիրիահայերը՝ բնակություն հաստատելով Հայաստանում:

Հայաստանում սիրիահայերի հաստատման ուղիները տարբեր են եղել՝ Հալեպ-Երևան, Բեյրութ-Երևան չվերթներ, Հալեպ-Երևան ավտոբուսային երթուղի, անհատական մեքենաներով տեղափոխություն: Պատերազմական իրավիճակում նույնիսկ խոչընդոտներ են ծագել «Արմավիայի» կողմից տոմսերի գնի բարձրացման և միայն մեկ ուղիությամբ տոմսերի վաճառքի հետ կապված¹²⁸:

¹²⁷ Տեղեկության փոխանցման համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ԱՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և վերաբնակեցման բաժնի նախկին աշխատակիցներին:

¹²⁸ Հակոբյան 2014, 4:

Հետազոտության արդյունքներով՝ նրանց մեծ մասը (53%-ը) Հայաստան է եկել 2012 թ. ընթացքում, մյուսները՝ 2013–2014 թթ.: Հիմնական մեծ զանգվածը կազմում են հալեպահայերը՝ 82.6%, ապա դամասկոսահայերը՝ 5.4%, և նույնքան զանգված էլ (5.5%)՝ Սիրիայի հայաշատ այլ բնակավայրերի՝ Քեսաբի, Ղամիշլիի, Ռաքքայի, Դեր Ջորի հայերը: Հարցման մասնակիցների 6.5%-ն էլ ՀՀ տեղափոխվել է երրորդ երկրից՝ Քուվեյթ, Լիբանան, Շվեդիա և այլն, որոնք, լինելով Հալեպ քաղաքի հիմնական բնակիչներ, թողել են Սիրիան պատերազմի պատճառով, և մինչև տեղափոխվելը՝ եղել այլ երկրներում, սակայն վերջնական ընտրությունը կանգնել է Հայաստանի վրա: Ինչպես տեսնում ենք, այս շրջանում ներգաղթած սիրիահայերի մեծ մասը քաղաքաբնակ է՝ ի տարբերություն XX դարի ներգաղթածների, որոնք առավելապես գյուղաբնակ էին և ավելի հեշտ էին բնակություն հաստատում Երևանից դուրս այլ վայրերում¹²⁹:

Հայաստան տեղափոխված սիրիահայերի մեջ անչափահասները (0–17 տարեկան) կազմում են ընդհանուրի մոտ 1/4 մասը՝ 26.2%, որի գրեթե կեսը 0–7 տարեկան երեխաներն են: Կարող ենք ասել, որ ՀՀ-ի ծնելիության ցուցանիշի վրա փոքր, բայց դրական ազդեցություն են ունեցել սիրիահայերը, քանի որ այդ խմբում կան նաև երեխաներ, որոնք ծնվել են Հայաստանում:

Այստեղ հատկանշական է երիտասարդների կշիռն ընդհանուր կազմում (28.6%), որոնք իրենց ներուժով կարող են նպաստել երկրի զարգացմանը, եթե որոշեն իրենց ապագան կապել ՀՀ-ի հետ: Երիտասարդական ներուժի կարևորությունը հաստատվում է նաև մեկ այլ ցուցանիշով, որը դուրս է բերվել ամուսնական կարգավիճակի վերլուծության արդյունքում. չափահաս բնակչության 25%-ը ամուրի է: Միջին սերնդի ներկայացվածությունը սիրիահայերի ընդհանուր խմբում ևս բավական մեծ է՝ 27.4% (աղյուսակ 1), ընդ որում, այս խմբում ևս կան ամուրիներ: Սիրիահայերի շրջանում չամուսնացած տղամարդիկ ավելի շատ են կանանցից (54 և 46 տոկոսային հարաբերակցությամբ):

¹²⁹ Ստեփանյան 2014, 319:

Աղյուսակ 1.
Սիրիահայ բնակչությունը՝ ըստ սեռապարիքային խմբերի (%)

Սեռ \ Տարիք	0–7 տ.	8–12 տ.	13–17 տ.	18–35 տ.	36–55 տ.	56 և ավել	Ընդամենը
Արական	6.8	2.5	3.0	12.5	13.4	7.4	45.6
Իգական	6.0	4.6	3.3	16.1	14.0	10.4	54.4
Ընդամենը	12.8	7.1	6.3	28.6	27.4	17.8	100.0

Սիրիայում հայերը կրթության նկատմամբ հակում չեն ունեցել և ավելի շատ կողմնորոշված են եղել դեպի արհեստներ: Թերևս սրանով է պայմանավորված այն ցուցանիշը, որ Հայաստան տեղափոխված սիրիահայերի 40%-ն ունի թերի միջնակարգ, 24%-ը՝ միջնակարգ կրթություն: Բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են ընդհանուրի 31%-ը (նրանց մի մասը հետազոտության ընթացքում դեռ ուսանող էր), միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 5%-ը:

Սիրիահայերը, չսովորելով որևէ կրթական հաստատությունում, ձեռք են բերել տարբեր արհեստներ, մասնագիտացել դրանց մեջ: Այդ մասին են վկայում մասնագիտության վերաբերյալ ստորև բերված ցուցանիշները, ըստ որի՝ նրանց միայն 31%-ը չունի մասնագիտություն (աղյուսակ 2), իսկ 69%-ի մասնագիտական նկարագիրը շատ բազմազան է՝ ընդգրկելով և՛ արհեստով զբաղվող մարդկանց (երկաթագործներ, ոսկերիչներ, դերձակներ, ավտովերանորոգողներ և այլն), և՛ հասարակական կյանքի տարբեր ոլորտների մասնագետներին (առողջապահություն, կրթություն, մշակույթ և այլն):

Սիրիահայերը ՀՀ եկել են ընտանեկան տարբեր կազմով, սակայն այստեղ ապրելու տարիներին տեղի են ունեցել որոշ փոփոխություններ՝ նվազել է մենակ ապրողների, երկսերունդ և եռասերունդ ընտանիքների թիվը, փոխարենը, գրեթե կրկնակի ավելացել է խառը կազմով ապրող ընտանիքների թիվը: Աղյուսակ 3-ի տվյալներից նկատելի է, որ ընտանիքների մեծ մասը երկսերունդ է: Նրանց մեջ կան նաև այնպիսիք, որում բացակայում է ծնողներից մեկը՝ հիմնականում հայրը, ով աշխատելու նպատակով գտնվում է երկրից դուրս: Սիրիահայ ընտանիքներում հաջորդ մեծ զանգվածը կազմում է եռասերունդ ըն-

Աղյուսակ 2.
Սիրիահայերի մասնագիտական նկարագիրը (%)

Մասնագիտությունները	Հաճախականություն
Մասնագիտություն չունեն	31.0
Ավտոմեքանիկական մասնագետ	10.0
Տնտեսագետ/մաթեմատիկոս	9.5
Առողջապահության ոլորտի մասնագետ	9.0
Երկաթագործ/ատաղձագործ	4.8
Ոսկերիչ	4.4
Օտար լեզուների մասնագետ	3.3
Ոճաբան	3.3
Դիմահարդար/վարսահարդար	2.6
Մանկավարժ	2.2
Դերձակ	2.2
Խոհարար	2.0
Երաժիշտ/երգիչ	2.0
Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ	1.5
Նկարիչ	1.4
Իրավաբան	1.1
Գյուղատնտես	1.1
Վարորդ	1.1
Այլ (ֆիզիկոս, էլեկտրիկ, լրագրող, զբոսաշրջության մասնագետ, կոշկակար և այլն)	7.5
Ընդամենը	100.0

Աղյուսակ 3.
Սիրիահայ ընտանիքների կազմը (%)

Ընտանիքների կազմը	Հետազոտության ընթացքում	Սիրիայից տեղափոխվելիս
Միայնակներ	4.3	5.4
Երկներունդ ընտանիքներ	63.3	66.7
Եռասերունդ ընտանիքներ	18.5	22.1
Խառը կազմով ընտանիքներ	13.9	5.8
Ընդամենը	100.0	100.0

տանիքը, որտեղ ավագ սերնդի ներկայացուցիչներն ապրում են գավակների և թոռների հետ միասին: Հաշվի առնելով ստեղծված կենցաղային պայմանները՝ սիրիահայ ընտանիքների 13.9%-ը Հայաստանում բնակվում է այնպիսի կազմով, որով չի բնակվել Սիրիայում՝ խաղաղ պայմաններում: Այդ ընտանիքներում ապրում են և՛ ամուսնացած, և՛ չամուսնացած քույր-եղբայրներ, ազգականներ, որոնք բնակվում են մեկ հարկի տակ: Փաստորեն, ՀՀ-ում առկա կենցաղային և բնակարանային խնդիրներն իրենց ազդեցությունն են ունեցել նաև այս հարցում՝ էական փոփոխությունների ենթարկելով նրանց ընտանիքի կառուցվածքը:

Սիրիահայերի մեկ երրորդ մասն առաջին անգամ էր գալիս Հայաստան, սակայն նրանց մեծ մասը (65%-ը) մինչև այս տեղափոխությունը տարբեր նպատակներով և պատճառներով եղել է Հայաստանում: Հայաստան այցելության նպատակների մեջ մեծ մաս կազմում է շրջագայությունը, ընդ որում, տղամարդկանց պարագայում այն ավելի մեծ հաճախականություն է գրանցել, քան կանանց: Հետաքրքիր պատկեր է նաև մյուս պատասխանների դեպքում, քանզի միայն տղամարդիկ են, որ Հայաստան այցելել են սովորելու, աշխատելու և ամուսնանալու նպատակով:

Չնայած նախկինում Հայաստան այցելելու փաստին՝ սկզբնական շրջանում բոլորն էլ կանգնել են բազմաթիվ խնդիրների առաջ՝ ինչից սկսել, ինչպես գործ գտնել, ինչպես պաշտպանել սեփական իրավունքները և այլն: Ըստ Միգրացիոն ծառայության՝ ընդհանրական խնդիրները կապված են եղել վիզաների, անձնագրերի, մաքսատանն ունեցած հարցերի, իսկ անհատական խնդիրները՝ հիմնականում աշխատանք և կացարան գտնելու հետ: Ոչ միայն այս խնդիրների լուծման ուղիներ, այլև, ընդհանուր առմամբ, Հայաստանում նրանց հարմարվելու համար բազմաթիվ գործոններ էին անհրաժեշտ: Պ. Կուզնեցովն առանձնացրել է ադապտացիայի հաջողության վրա ազդող յոթ համալիր գործոններ՝ տնտեսական (նյութական), ինքնապահպանման, կարգավորող, վերարտադրողական, հաղորդակցական, կոգնիտիվ, ինքնաիրացման: 1) Տնտեսականը ներառում է գործոններ, որոնք կապված են գոյության միջոցների հետ՝ աշխատավարձ, այլ եկամուտ-

ներ, նյութական բարիքներ: 2) Ինքնապահպանումը ներառում է գործոններ, որոնք կապված են ֆիզիկական և տնտեսական անվտանգության պահպանման հետ (կյանքին և առողջությանը վտանգ, գոյության միջոցները կորցնելու հավանականություն): 3) Կարգավորողն արտացոլում է այն գործոնները, որոնք թույլ են տալիս նպատակներ և խնդիրներ սահմանել, խթաններ գտնել, պլանավորել, որոշումներ կայացնել և նպատակին հասնելու վարք որդեգրել: 4) Վերարտադրողականը ներառում է գործոններ, որոնք արտացոլում են սեռական պահանջմունքների բավարարումը: 5) Հաղորդակցականը ներառում է գործոններ, որոնք կապված են շփման պահանջմունքի իրացման հետ (շփման խորություն, շրջանակ, դիրքը խմբում և այլն): 6) Կոգնիտիվը պարունակում է այն գործոնները, որոնք արտացոլում են կոգնիտիվ պահանջմունքների իրացումը (կրթություն, որակավորում, աշխարհայացք և այլն): 7) Ինքնաիրացումը ամենաբարդ կոմպլեքսային գործոնն է, որը կարող է ներառել վերը թվարկածներից յուրաքանչյուրը, այն պայմանով, որ արտացոլված պահանջմունքների իրացումն անհատի համար որոշակի նշանակություն ունի¹³⁰: Այս գործոնների միաժամանակյա առկայության համար, որը կնպաստեր սիրիահայերի՝ հայաստանյան միջավայրում հարմարվելու հաջողությանը, մեծ ջանքեր ու ժամանակ էին պահանջվում: Հայաստանը, քանի որ չունի ներգաղթյալների ինտեգրման ընդհանրական մոտեցում՝ որպես պետական քաղաքականության մաս, սկսեց աշխատել մի քաղաքականությամբ, որն իրադարձային բնույթ ուներ:

2012 թ., երբ սիրիահայերի մեծ հոսք սկսվեց, ՀՀ ՄՆ աջակցությամբ հիմնվեց «ՍՀՀԿ» ՀԿ-ն, որի աշխատանքի շրջանակներում բացահայտվում և գնահատվում էին սիրիահայերի կարիքներն ու առաջնային հիմնախնդիրները, ապա՝ ներկայացվում տարբեր ԲԿ-ների: Ընթացքում կենտրոնն ընդլայնում է իր ծառայությունների շրջանակը՝ ներառելով 1) առաջին անհրաժեշտության կարիքների բավարարում (հագուստեղենի, հիգիենիկ պարագաների բաշխում), 2) ինտեգրացիա

¹³⁰ Кузнецов 2000, 3–56.

(լեզվի ուսուցում), 3) մշակութային միջոցառումների կազմակերպում, 4) զբաղվածություն (աշխատանք փնտրողների և գործատուների միջև կապի հաստատում): ՄՆ-ում ստեղծված աշխատանքային խումբը¹³¹ ևս ուսումնասիրել է նրանց կողմից բարձրացված հիմնախնդիրները, դասակարգել դրանք և վերահասցեագրել պետական կառավարման այն մարմիններին, որոնց գործունեության ոլորտին դրանք առնչվում են: 2012 թ. ՀՀ կառավարության կողմից սիրիահայերի պահանջներին համապատասխան երկու կարևոր որոշումներ են ընդունվել¹³². 1) ՀՀ անձնագիր կարող են ստանալ Սիրիայում գործող դիվանագիտական ներկայացուցչություններում՝ ՀՀ դեսպանատանը՝ Դամասկոսում, և ՀՀ գլխավոր հյուպատոսությունում՝ Հալեպում, 2) վիզա կարող են ստանալ ոչ միայն դիվանագիտական ներկայացուցչություններում, այլև սահմանի վրա¹³³ (մինչ այդ Սիրիան մտնում էր այն երկրների ցանկի մեջ, որտեղ վիզա էր տրամադրվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում):

ՀՀ կառավարությունը որոշում¹³⁴ է ընդունում նաև սիրիահայերին ազատել ՀՀ անձնագիր տալու համար գանձվող 65000 դրամի չափով պետական տուրքից¹³⁵: 2013 թ. հունվարի դրությամբ քաղաքացիություն են ստացել մոտ 5000 սիրիահայեր, ովքեր իրավունք են ունեցել մասնակցել ՀՀ նախագահական ընտրություններին: 2012–2017 թթ. ընթացքում շուրջ 19500 սիրիահայ ստացել է ՀՀ քաղաքացիություն, իսկ 2000-ից ավելին՝ կացության կարգավիճակ: ՀՀ ՏԿԶՆ ՄԾ տվյալներով՝ սիրիական հակամարտության սկզբից ի վեր մոտ 1000 հոգի դիմել է ապաստան ստանալու հայցով, 747 հոգու շնորհվել է փա-

¹³¹ 2012 թ. ՀՀ ՄՆ-ում գործում է սիրիահայերի հիմնահարցերով զբաղվող աշխատանքային խումբը, արագ արձագանքման խումբը, թեժ գիծը, տե՛ս ՀՀ ՄՆ, պետական քաղաքականություն, հասանելի է՝ http://www.mindiaspora.am/am/petakan_qaxaqakanutyun , 26.12.2018:

¹³² Աղբյուրը՝ aravot.am, 2012:

¹³³ ՀՀ կառավարության որոշում թիվ 941-Ն, հասանելի է՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/21682/> , 20.02.2024:

¹³⁴ ՀՀ կառավարության որոշում թիվ 1469-Ն, հասանելի է՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/22182/> , 20.02.2024:

¹³⁵ Աղբյուրը՝ tert.am, 2012:

խստականի կարգավիճակ: Սակայն, հաշվի առնելով, որ նրանց մի մասը հետագայում ստացել է քաղաքացիություն կամ հրաժարվել այդ կարգավիճակից, 2016 թ. դեկտեմբերի դրությամբ Սիրիայից փախստականների թիվը ՀՀ-ում կազմել է 626 հոգի¹³⁶:

Ըստ հետազոտության արդյունքների՝ 2014 թ. դրությամբ սիրիահայերի 31.6%-ը չի ունեցել, իսկ 68.4%-ն ունեցել է ՀՀ քաղաքացիություն: Վերջիններիս մեջ կանայք գրեթե կրկնակի շատ են տղամարդկանցից: Երիտասարդների մեջ ևս ավելի շատ են ՀՀ քաղաքացիություն ստացած, քան չստացած սիրիահայերը: Քաղաքացիություն ձեռք բերելու հարցում ավելի շատ պասիվ եղել են 56 տարեկանից բարձր մարդիկ:

Խորին հարցազրույցների վերլուծության արդյունքում պարզել ենք սիրիահայերի համար ՀՀ քաղաքացիություն ստանալու դրական կողմերը՝ 1) տարիների երազանքի իրականացում, 2) հոգևոր ուժ, հայրենիքն ավելի մոտ զգալու գրավական, 3) սփյուռքում ավելի մեծ վստահություն՝ որպես հայ, 4) արտերկիր տեղափոխվելու հեշտ միջոց: Ստորև բերված մեջբերումները վկայում են այդ դրական տրամադրվածության մասին. «...*Ես եւ որեւէ մէկ տեղացի, որ արդէն հարիւր տարի է՝ հոս է, ինձմէ չեմ զատեր, անկեղծ: Ես ալ նոյն ուժը ունիմ, նոյն իրատունքները: Ես ինքզինքս աւելի զօրաւոր կը զգամ: Տարիներու մեր երազանքն էր, երբ որ սփիւռքի մեջ կ'ապրէինք, երբ պիտի կարենանք ունենալ քաղաքացիութիւն, որ կարենանք զգալ՝ մենք ալ հայրենիքի անդամ ենք, մենք հայ ենք եւ հայրենիք ունինք եւ պէտք է քաղաքացիութիւն ունենանք: Փառք Աստուծո, եղաւ, իրականացաւ էդ երազանքը» (58 տ. կին, ք. Երևան)¹³⁷¹³⁸: «*Երբ Հայաստանի քաղաքացի ըլլալով որեւէ տեղ կ'երթաս, կը զգաս, որ այլեւս դուն արտասահմանի հայերէն**

¹³⁶ «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018–2022 թվականների ռազմավարություն»: հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/679/about>, 20.11.2018:

¹³⁷ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

¹³⁸ Սիրիահայերի հետ հարցազրույցների մեջբերումներն արված են այնպես, ինչպես հնչել է նրանց խոսքում: Գրված է ավանդական ուղղագրությամբ:

առաւելութիւն մը ունիս: Ես Հայաստանի քաղաքացի եմ ու այսպէտի վայելքները կը վայելեմ՝ բնութիւնը, կանաչութիւնը, ջուրը...» (71 տ. տղամարդ, ք. Երևան)¹³⁹:

Դրականին զուգահեռ բացահայտվել են նաև բացասական կողմերը՝ 1) առավելություն չունի այլ երկիր մեկնելու հարցում: 2) Ծննդավայրը՝ ՍԱՀ-ը, գրված է ավելի մեծ տառերով, քան ՀՀ քաղաքացին, ինչն էլ պատճառ է հանդիսանում տվյալ անձին՝ որպէս սիրիացի դիտարկել, հետևաբար՝ որևէ երկիր մուտք գործելու արգելք հանդիսանալ: 3) Փաստ, որը որոշ ժամանակ անց պատճառ կհանդիսանա պետական կամ հասարակական մակարդակով օժանդակություն չստանալու համար. «Որքան պէտք է սուրիահայուն խղճա, կ'ըսե՛ մեզի նման եք, ապրեցե՛ք հոս, հարմարվե՛ք: Քանի մենք հյուր ենք, հոգ կը փարվի մեզի, քան թե Հայաստանի քաղաքացիի» (56 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁴⁰:

Հետազոտության արդյունքում նաև հետաքրքիր մեկնաբանություն է ստացվել, որը տարբեր է վերը նշված մեկնաբանություններից, այն է՝ սիրիահայերին քաղաքացիություն շնորհելու միջոցով ՀՀ բնակչության թվի արհեստական աճ: «Մենք, երբ որ այս «փաստորթը» ուզեցինք ունենալ, մեր առաւելութեան մասին չմտածեցինք. այլ Հայաստանի առաւելութեան համար, որովհետեւ երկիրը պէտք ունէր, որ այդ քաղաքացիութիւնը ստանանք, որովհետեւ ժողովուրդը կը պակսի: Իրենք այդ «փաստորթները» մեզի չտուին մեր սեւ աչքերուն համար: Իրենք այդ «փաստորթները» տուին, որպէսզի իրենք մարդ ունենան այսպէտ, թիւ ունենան, որովհետեւ փարբեր բաներ կան՝ երոպական շուկայ մտնել եւ այլն, եւ այլն: Մենք չենք մտածեր, որ այդ «փաստորթն» պիտի օգտուինք, եւ ոչ մեկ քայլ չենք ըրած այդ առումով» (55 տ. կին, ք. Երևան)¹⁴¹:

Արդյունքում, սիրիահայերը տարբեր իրավական կարգավիճակ են ստացել (ՀՀ քաղաքացի, փախստական և ապաստան հայցող, ժա-

¹³⁹ Նույն տեղում:

¹⁴⁰ Նույն տեղում:

¹⁴¹ Նույն տեղում:

մանակավոր կամ մշտական կացություն ունեցող), որի տրամադրման ընթացակարգերն ու գործընթացը հեշտությամբ ապահովվել է ՀՀ կառավարության կողմից: Քաղաքացիության շնորհման հարցերից զատ՝ նրանք սկզբնական շրջանում նաև իրավաբանական խորհրդատվության կարիք ունեին տարբեր ոլորտներում՝ սկսած հայկական բիզնես միջավայրից մինչև ՀՀ սահմանադրություն, աշխատանքային, հարկային, մաքսային օրենսգիրք, սեփականության ձեռքբերում և այլն: Այս առումով նրանց կողքին են եղել մի շարք պետական, միջազգային և հասարակական կազմակերպություններ¹⁴²:

2012 թ. ի վեր ստեղծվել և իրենց նախաձեռնություններով հանդես են եկել նաև բազմաթիվ այլ կազմակերպություններ և միություններ¹⁴³: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գործող Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական հիմնադրամը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և «Եկեղեցիների համատեղ գործողություն» ալյանսի ֆինանսավորմամբ նախաձեռնել է արագ արձագանքման ծրագիր՝ Հայաստանում ապաստան գտած սիրիահայերին օգնելու նպատակով¹⁴⁴: Կաթողիկոսը նաև շրջաբերական է ուղղել Հայ Եկեղեցու բոլոր թեմերին՝ կազմակերպելու դրամահավաք սիրիահայ համայնքին սատարելու համար¹⁴⁵: Առավելապես կանոնավոր և մեծամասշտաբ ծառայություններ¹⁴⁶ են մատու-

¹⁴² Այդ կազմակերպություններն են՝ ՀՀ Փաստաբանների պալատ, ՀՀ ՄԻՊ գրասենյակ, ՀՀ Առևտրաարդյունաբերական Պալատ, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիա, ԵՊՀ-ի իրավաբանական կլինիկա, Գյումրու «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկա, ՄԱԿ ՓԳՀ, ՀՕՄ, «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ, Հայաստանի Հելփինկյան կոմիտե և այլն: Աղբյուրը՝ tert.am, 2012:

¹⁴³ Այդ կազմակերպություններն են՝ «Սիրիահայերի աջակցման գրասենյակ», «Հայազն» միություն, «Հայրենադարձության և սիրիահայության աջակցության» խումբ, «Հայրենադարձ ընտանիքներին աջակցության» ֆեյսբուքյան խումբ, որի նպատակն է եղել սիրիահայերին ժամանակավոր կացարանի, աշխատանքի, կենցաղային, ինչպես նաև բարոյական աջակցության և շփման հարցերում օգնություն տրամադրելը: Աղբյուրը՝ aravot.am, 2012:

¹⁴⁴ Աղբյուրը՝ aravot.am, 2012:

¹⁴⁵ Աղբյուրը՝ tert.am, 2012:

¹⁴⁶ Բնակարանային ապահովման և կրթական աջակցության ծառայությունների

ցում «Հալէպ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ «Հալէպ» ՀԲՀԿ), «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ ԱՀ ԲՀԿ), Հայկական Կարմիր խաչ ընկերությունը (այսուհետև՝ ՀԿԽԸ) և այլն¹⁴⁷:

1. «Հալէպ» ՀԲՀԿ-ն իրականացնում է հետևյալ ծառայությունները՝ առաջին անհրաժեշտության կարիքների բավարարում, մարդասիրական և հրատապ օգնության տրամադրում, սպորտային, ժամանցային և միջմշակութային միջոցառումներ, ինչպես նաև վարսա/մատնահարդարման, խոհարարության, հագուստի մոդելավորման, ասեղնագործության, գորգագործության դասընթացներ:
2. ԱՀ ԲՀԿ-ի կողմից սիրիահայերին մատուցվող ծառայությունների շրջանակը ևս բավական լայն է և ներառում է հետևյալ ոլորտները՝ առաջին անհրաժեշտության կարիքների բավարարում, հրատապ ֆինանսական աջակցություն նոր տեղահանվածներին, կենսաթոշակների, սոցիալական նպաստների տրամադրում, իրավաբանական խորհրդատվություն, մշակութային միջոցառումներ երեխաների համար:

Նկարագրությունը տրված է համապատասխան ենթագլուխներում:

¹⁴⁷ Սիրիահայերին ծառայություններ մատուցող կազմակերպությունների ցանկում են գտնվում Հայկական Կարիտաս ՀԿ-ն (սննդի, կենցաղային և հիգիենիկ պարագաների, հագուստի և կոշիկեղենի տրամադրում), Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան կլոր սեղան հիմնադրամը (մարդասիրական աջակցություն, մասնագիտական որակավորման դասընթացներ, ձեռներեցության զարգացման ծրագիր), «Արմենիան Լայթհաուս» հայ-ամերիկյան ԲՀ-ն (իր ծառայությունները մատուցում է՝ շեշտը դնելով կանանց և երեխաների վրա), «ՍՕՍ» մանկական գյուղեր ՀԲՀ-ն, ՀՕՄ-ը, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերությունը, «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, «Սելվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչությունը, ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա ՀԿ-ն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, Կանանց ռեսուրսային և աջակցման կենտրոնները, «Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ-ն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ն, Միացյալ մեթոդիստական օգնության կոմիտեն, «Դինամո» մարզական ՀԿ-ն, ՓՄՁ ԶԱԿ-ը (տե՛ս ՄԱԿ ՓԳՀ մտահոգության առարկա հանդիսացող անձանց աջակցություն տրամադրող կազմակերպությունների ուղեցույց 2015, 5):

3. ՀԿԽԸ-ն իրականացնում է հետևյալ ծառայությունները՝ առաջին անհրաժեշտության կարիքների բավարարում, փաստաթղթերի թարգմանություն, զբաղվածության վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, մշակութային միջոցառումների և ամառային ճամբարների կազմակերպում երեխաների համար, ուսուցում, բիզնես գործունեության դիտարկում, գնահատում և այլն:

Առաջին տարիներին սիրիահայերին աշխատանքով ապահովելու պատրաստակամություն են հայտնել և ՄՆ դիմել բազմաթիվ կազմակերպություններ¹⁴⁸: Միևնույն ժամանակ, Սփյուռքի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից պարբերաբար կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ՝ զբաղվածության հարցում աջակցելու նպատակով:

Բոլոր այս կազմակերպություններն ու նախաձեռնություններն ինչ-որ չափով նպաստում են սիրիահայերի ադապտացիային, քանզի, եթե դիտարկենք Լ. Կորելի ադապտացիայի տեսության շրջանակներում, ապա նրանում, որպես հաջողված ադապտացիայի ցուցանիշ, դիտարկվում է սոցիալական ինքնազգացողությունը (հարմարվողի ներքին վիճակը)¹⁴⁹ և տարբեր հիմնախնդիրների լուծման ուղիների առկայությունը (արտաքին վարքային ռեակցիան): Այս տեսության հիմքում ընկած են հարմարվող-ադապտացնող միջավայր հասկացությունները, որտեղ հարմարվողի դերում հանդես է գալիս նորեկների խումբը, այս դեպքում՝ սիրիահայ համայնքը, իսկ ադապտացնող մի-

¹⁴⁸ Այդ կազմակերպություններն են՝ «Հայկական ծրագրեր» հաշվապահական կազմակերպությունը, «Վիվասել» և «Օրանտ» բջջային կապի օպերատորները, «Ամերիա», «Կոնվերս», «Պրոմեթեյ» բանկերը, «Հայ նախագիծ», «Ալֆաֆարմ», «Ադամիում», «Էլբատ», «Գունապակի», «Աշտարակի ծոր», «Հավաննա քլաբ» ընկերությունները, Սյունիքի մարզի «Շամբ բիզնես» ՍՊԸ-ն, «R&V» խանութների ցանցը և շատ այլ ընկերություններ: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը դիմել է ՀՀ ՄՆ և ԱԳՆ՝ խնդրելով ՀՀ դեսպանատան, եկեղեցական կառույցների և սիրիահայ համայնքի համապատասխան մարմինների միջոցով տեղեկացնել սիրիահայերի շրջանում ՏՀՏ և ԲՏ ոլորտի մասնագետներին աշխատելու առաջարկի մասին: Աղբյուրը՝ a1plus.am, 2012:

¹⁴⁹ Кореель 2005, 326.

ջավայրի դերում՝ գերիշխող կառուցվածքները, այս դեպքում՝ ՀՀ պետական և ոչ պետական կառույցները:

Այսպիսով, սիրիահայերը, որոնց մեջ մեծ թիվ են կազմում հալեպահայերը, պատերազմի պատճառով հարկադրված տեղափոխվում են ՀՀ: Առաջնային օգնության և նոր հասարակությանն ինտեգրվելու հեռանկարով բազմաթիվ ծրագրեր նախաձեռնելու և իրականացնելու խնդիրը դառնում է օրվա հրամայականը: Ինչպես տեսանք, նրանց աջակցմանն ուղղված ծրագրերը ներառել են տարբեր ուղղություններ՝ առաջին անհրաժեշտության կարիքների բավարարում, բնակարանային ապահովում, ֆինանսական, սոցիալական և զբաղվածության հարցերում օժանդակություն, իրավաբանական օգնություն և այլն, որոնք իրականացվել են պետական հաստատությունների, տեղական մասնավոր ընկերությունների, միջազգային, հասարակական և բարեգործական կազմակերպությունների կողմից: Նրանց ինտեգրման հաջողությունը կարևոր է նաև ՀՀ-ի համար, քանզի Հայաստանի խորացող ժողովրդագրական խնդիրների ֆոնին այս ներհոսքը մեծ ազդեցություն կարող է թողնել իրավիճակի բարելավման վրա: Սոցիալ-տնտեսական առումով ևս սիրիահայերը կարող են իրենց ներդրումն ունենալ Հայաստանի զարգացման վրա. նրանց կեսից ավելի երիտասարդ և միջին սերնդի մարդիկ են, որոնք տիրապետում են այս կամ այն մասնագիտությանը, իսկ այդ բազմազանությունը, բնականաբար, կնպաստի հայաստանյան աշխատաշուկայի աշխուժացմանն ու նորացմանը:

1.4. Հայրենիք, թե՛ բնակության վայր. սիրիահայերի՝ Հայաստան տեղափոխվելու պատճառները

Ստեղծված պատերազմական իրավիճակում Սիրիայից հեռանալու պատճառը մեկն էր, Հայաստանն ընտրելու դրդապատճառները՝ բազմաթիվ և տարբեր: Սույն ենթազվխում նպատակ ունենք ցույց տալ, թե սիրիահայերի համար ինչ դերակատարություն ունի հայրենիքի գործոնը Հայաստան տեղափոխվելու և մշտապես բնակվելու որոշման կայացման հարցում: Կփորձենք պարզել, թե ինչ է ամփոփում հայրենիք եզրույթը նրանց պատկերացումներում, և որ խմբերի, որքան զանգվածի համար էր Հայաստանը համարվում հայրենիք:

Մեր ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ տեղափոխվելու որոշման կայացման հարցում նրանց համար հայրենիքի գաղափարն առաջնային է մյուս դրդապատճառների նկատմամբ: Գրեթե ամեն երրորդ սիրիահայ (38.3%-ը, տես աղյուսակ 4) պատերազմական օրերին տեղափոխվել է Հայաստան, որովհետև ինքը հայ է, իսկ Հայաստանը՝ իր հայրենիքը:

Աղյուսակ 4.
Սիրիահայերի՝ Հայաստան գալու դրդապատճառները (%)

Պատճառները	Հաճախականություն
Հայրենիքի գաղափար, հայ լինելու հանգամանք	38.3
Այլ ելք չկար, մյուս երկրները վիզա չէին տալիս	18.5
Սոցիալական ցանցի առկայություն (բարեկամներ/ծանոթներ ունեն)	7.8
Ընտանիքի անդամները նախօրոք են տեղափոխվել / վաղուց ապրում են Հայաստանում	7.8
Հայաստանում ապահով, անվտանգ է	7.0
Լեզվի իմացություն	6.4
Հայաստան շրջագայությունից հետո չեն կարողացել վերադառնալ Սիրիա	6.0
Աշխատանքի հեռանկար	2.0
Այլ (մեկնել երրորդ երկիր, Հայաստանը մոտ է, կյանքը էժան է և այլն)	6.2
Ընդամենը	100.0

Պատճառների մեջ հաջորդ մեծ պատասխանն ունի հարկադրական երանգ, երբ այլ ելքերի բացակայության պայմաններում սիրիահայը ստիպված լքում է պատերազմի մեջ գտնվող երկիրը և գալիս Հայաստան. «Վերջին գալս վեց ամիս առաջ եղաւ՝ որպէս գաղթական: Մենք բաւական երկար սպասեր ենք Հալէպ՝ յոյսով, որ անպայման կը բարելաւուի, բայց յոյսներնիս կորեցաւ, ու եկանք: Անցած փարի՛ ամառը, Հալէպ քաղաքը՝ իր արուարձաններով շրջափակուեցաւ, չորս ամիս շար խայրատակ վիճակ մը ունեցաւ, շար խղճալի էր վիճակը: Բանակը միայն մինակ մէկ միջոց ապահովեց մեզի. մենք մութ գիշերով զնդանով փախանք, յետոյ զինուորական օդանավով եկանք Լաթա-

քիա, Լաթաքիայէն՝ Լիբանան, Լիբանանէն՝ Հայաստան» (56 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁵⁰:

Մի կողմից՝ պատահական, մյուս կողմից՝ հարկադրական հարթության մեջ պետք է դիտարկել այն փաստը, որ 2012 թ. ամռանը շրջագայության նպատակով Հայաստանում գտնվող սիրիահայերը չկարողացան վերադառնալ Սիրիա (6%): Պատասխանների մեծ մասը, սակայն, վկայում է ստեղծված իրավիճակը նրանց կողմից ռացիոնալ գնահատելու մասին՝ սոցիալական ցանցի առկայություն, ընտանիքի անդամների՝ ՀՀ-ում գտնվելու փաստ, լեզվի իմացություն, աշխատանքի հեռանկար, Հայաստանի՝ ապահով, անվտանգ լինելու փաստ, որպես տարանցիկ երկիր (տե՛ս աղյուսակ 4) և այլն: Հարցը համադրելով ՀՀ տեղափոխվելու տարեթվի հետ՝ պարզ է դառնում, որ Հայաստանը՝ որպես ապահով, անվտանգ երկիր, մեծամասամբ կարևորվել է 2013–2014 թթ. եկաճների համար: Հակառակ պատկերն է սոցիալական ցանցի և ընտանիքի անդամների՝ արդեն ՀՀ-ում գտնվելու փաստը կարևորելու պարագայում. նրանց գերակշիռ մասը 2012 թ. Հայաստան եկաճներն են:

Ինչպես նշեցինք վերևում, ՀՀ տեղափոխվելիս հայրենիքի գաղափարը կարևոր էր սիրիահայերի մեծ մասի համար: Նշենք, որ Հայաստանը՝ որպես հայրենիք ընդունող սիրիահայերը մեծամասնություն են կազմում այս զանգվածում: Սակայն ուսումնասիրության արդյունքները հետաքրքիր են այն առումով, որ բացահայտվել է այն հակասական զանգվածը՝ 13%, որը, չնայած Սիրիան է համարում հայրենիք, բայց դժվար պահին, խորացնելով ինքնության զգացողությունները, Հայաստանն ընտրելու դրդապատճառների մեջ, միևնույնն է, խոսում է հայրենիքի գաղափարի մասին:

Ընդհանրապես, հայրենիքն այն տարածքն է, որտեղ որևէ էթնիկ խումբ ապրում է՝ կերտելով իր պատմությունը, կենցաղը, վարքն ու բարքը: Էթնիկ խմբի անդամները կարող են ծնվել ու ապրել նաև իրենց հայրենիքից դուրս, լինել այլ պետության քաղաքացի, սակայն, միևնույն ժամանակ, հայրենիք համարել իրենց նախահայրերի բնօրրանը:

¹⁵⁰ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

«Հայրենիք» հասկացությունը կարող ենք սահմանել երկու իմաստով՝ աշխարհագրական և հոգևոր: *Աշխարհագրական* իմաստով հայրենիքն այն տարածքն է, որը կամ պատմականորեն պատկանում է տվյալ ազգին, կամ որտեղ ծնվել է անհատը, կամ որտեղ ապրում է, կամ որի քաղաքացին համարվում է: *Հոգևոր* իմաստով հայրենիքն այն բնատարածքն է, որը տվյալ էթնիկ հանրույթի անհատներն ընկալում են՝ որպես իրենց էթնիկ ինքնության անբաժանելի մաս: Վերջինս իր մեջ ներառում է այն բնութագրերը, որոնցով անհատը նման է տվյալ էթնիկ խմբին և տարբերվում է այլ խմբերից¹⁵¹: Այս սահմանումը փոքր-ինչ տարբեր է սփյուռքի դեպքում: Որոշ հեղինակներ սփյուռք համարվող համայնքի ինքնությունը համարում են անդրազգային ինքնություն¹⁵², որն առաջանում է պատմական ծագման տարածքից դուրս մեկ այլ միջավայրում՝ ներառելով և՛ նոր միջավայրի գործոնները, և՛ ընդհանուր պատմական հիշողությունը: Ս. Հոլը համարում է, որ սփյուռքը ձևավորում է այնպիսի ինքնություն, որը մշտապես ստեղծում և վերստեղծում է նորը՝ վերափոխման կամ հակադրման միջոցով¹⁵³: Նրա կարծիքով, ինքնության վերաձևավորման գործընթացում էթնիկ խմբերն օգտագործում են պատմական հիմքերն ու լեզվամշակութային առանձնահատկությունները: Այս պարագայում կարևորվում է ոչ միայն «ո՞վ ենք մենք» հարցադրումը, այլև «որտեղի՞ց ենք եկել, ի՞նչ կարող ենք դառնալ և ինչպե՞ս կարող ենք ներկայացնել ինքներս մեզ»¹⁵⁴: Ինքնությունը, որպես սփյուռքահայի ինքնագիտակցության և ինքնանույնացման ամբողջական, հավաքական դրսևորում, կազմված է ազգային և քաղաքակրթական բաղադրիչներից: Ազգային դիմագծի պահպանման տեսակետից առանցքային է ինքնության ազգային բաղադրիչի պահպանումը և փոխանցումը հաջորդ սերունդներին, ինչում էլ դրսևորվում է սփյուռքի էությունը՝ հայրենիքի հետ կապերի, ազգի և հայրենիքի կերպարի վերաբերյալ հավաքական հիշողության առկայությամբ:

¹⁵¹ Аклаев 2008, 58.

¹⁵² Ahmed etc, 2003, 1–19.

¹⁵³ Hall 1990, 222–237.

¹⁵⁴ Hall 1996, 441–449.

Սիրիահայերի տարբեր սերունդներ այժմ, ապրելով Հայաստանում, անցյալի և ներկայի պատկերացումները միախառնելով, նկարագրում են «հայրենիքի» կերպարը: Նրանց այդ պատկերացումները մենք պայմանականորեն խմբավորել ենք հետևյալ ձևերի մեջ.

1. Սիրիահայերն առաջին հերթին փորձել են *համեմատությունների* միջոցով նկարագրել հայրենիք հասկացությունը՝ համեմատելով կյանքում կարևոր նշանակություն ունեցող անձանց հետ: Այսպես, Սիրիան հայրենիք համարողներն այն համեմատում են *մոր* հետ՝ նրան ներկայացնելով որպես «*անփոխարինելի անձ*»: Հայաստանի պարագայում համեմատության սուբյեկտ է դառնում *կինը*՝ «*կյանքի ինչ-որ շրջանում մեզ ընդունող անձ*», ում հնարավոր է և կարելի է փոխարինել. «*Սուրիա ինձի համար մայր է, իսկ Հայաստան հայրենիք է, բայց կինս է: Կինը ուրիշ անձ է, կրնայ մէկ հայր էլ փոխուի, բայց մայրը ինչ որ ըլլայ՝ վախ կամ գեշ, մայրը չի փոխուիր: Կինս կը մնայ իմ կեանքս եւ գործը շարունակողը, բայց մայրս ինձի աշխարհ բերողն է: Այս ժամանակի համար մայրս վախ օրեր կ'անցընէ, բայց կինս ինձի ընդունած է, ես ալ իրեն ընդունած եմ: Կարծեմ՝ այս կեանքս կ'նջս հետ պիտի անցընեմ: Հայաստանը հայրենիքս է, բայց նորեն ալ ես չեմ մոռնար առաջին հայրենիքս՝ Սուրիա, որ այդքան փարի ինձի գրկեց, լաւ օրիս, գէշ օրիս ինձի տեղ մը հասցուց: Մանաւանդ որ, իբր հայ, ինձի շատ լաւ առիթներ ստեղծած էր, եւ ես հայրենիքիս պակասութիւն չզգացի՝ ըլլայ հայկական դպրոցներ, խանութներու վրայ հայկական գիրերով... Չեմ կրնար մոռնար եւ միշտ կը կարօտնամ» (39 տ. տղամարդ, ք. Աբովյան)¹⁵⁵:*

Հայրենիքի կերպարի նկարագրման համար սիրիահայերը, որպես համեմատության օբյեկտ, դիտարկել են նաև իրենց ապրած կյանքը, կենցաղը՝ ներկայացնելով այն *հորը և մորը* բնորոշ հատկանիշների հետ. Սիրիային վերագրում են «*հեշտ ու փափուկ կյանք*»՝ անվանելով «*մայրենիք*», իսկ Հայաստանին՝ «*դժվար ու խիստ կյանք*», համարելով հայրենիք: «*Հայրենիքը Հայաստանն է, «մայրենիքը»*

¹⁵⁵ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

Սուրիա, չեմ կրնար փոխել. ինձի համար այդպես է: Հայրենիքը կարելի է, անշուշտ: Հայրենիքն իր տեղը ունի, «մայրենիքն» ալ իր տեղն ունի, այսինք՝ հայրը իր տեղը ունի, մայրը իր տեղը ունի, չէ՛: Ապոր համար ես այսպէս կը մտածեմ՝ հայրենիքը խիստն է, «մայրենիքն» ալ ատելի փափուկն է: Սուրիա ատելի հեշտ էր ամեն ինչ, բայց այստեղ խիստ-խիստ օրէնքներ են» (27 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁵⁶:

2. Այնուհետև նրանք «օբյեկտիվ» պատկերացումների միջոցով առանձնացնում և անվանակոչում են այն՝ հայրենիքը Սփյուռքն է, հայրենիքն Արևմտյան Հայաստանն է, հայրենիքը սիրիահայերին՝ որպես յուրային ընդունող որևէ երկիր է: Այս առումով ներկայացնենք սիրիահայերի հետ խորին հարցազրույցներից մի քանի մեջբերումներ. «էստեղ է հայրենիքը, ուրիշ տեղ ո՛նց կը համարես հայրենիք: Ինչքան էլ էստեղ մեզի համար ապրեր ենք, բայց շատ մանրամասնություններ կան, եթէ կը նայես, կը տեսնես, որ այնտեղ մեզի օտար եղեր է: Օրինակ, մեզի՝ խանութ ունեցողներուս, կամ, թէկուզ, աշխատող բանուորներուն արաբները միշտ էլ խփում էին, քիչ մըն ալ կոխ լինում էր: Արաբները առաջին խոսքն ըսեր են՝ դուք գացե՛ք ձեր երկիրը: Տենց բաներ շատ ա լինում: Բայց որովհետեւ մենք ապրել ենք դիկտատուրայի երկրում, էստեղ չէիր կարայ ո՛չ նախագահին հայիոյէիր, ո՛չ վատ բան ըսէիր: Դրա համար, որ տենց սխալներ էին լինում, մենք վախում էինք, ասում էինք՝ չէ՛, արաբները լաւն են: Ո՛վ ըսաւ...» (49 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁵⁷:

«Սփիւռքահայի հայրենիքը Սփիւռքն է, ես սա կ'ըսեմ դժբախտաբար: Երբ մենք գաղթականութեան ժամանակ եկանք Սուրիա, ըսինք՝ աս է մեր հայրենիքը: Փաստօրէն արիկա չեղաւ: Մենք թողեցինք այն վրանգի մէջ ու եկանք: Եկանք Հայաստան ու հասկցանք, որ Հայաստանն ալ մեր հայրենիքը չէ: Մեր հայրենիքը Սփիւռքն է: ...Մի գուցէ մեր հայրենիքը մի օր դառնայ Ֆրանսիան, Գերմանիան, Շվեդիան, կամ, չեմ գիտեր, ուրիշ մի երկիր»: «Շատերը կըսեն՝ մեր հայրենիքը

¹⁵⁶ Նույն տեղում:

¹⁵⁷ Նույն տեղում:

Արեւմտահայաստանն է. եթէ այն անկախանայ, կը լինի քո հայրենիքը, եթէ չէ՛ դու չունիս հայրենիք, փաստօրէն» (56 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁵⁸:

«Ասի ամենէն դժվար եւ բարդ հարցն է: Եթէ ես հայրենիք պիտի համարեմ, ուրեմն պիտի հասնեմ Եդեսիա, Ուրֆա. հայրերուս երկիրը ստրկա էր» (55 տ. կին, ք. Երևան)¹⁵⁹:

Շարունակելով նրանց՝ հայրենիքի մասին պատկերացումների վերլուծությունը՝ այն ներկայացնենք «վերացական արտահայտություններ» խմբավորման մեջ: Սիրիահայերը հայրենիք հասկացության փնտրտուքների մեջ, բացառելով որևէ իրական երկրի հետ նույնականացում, համարում են, որ հայրենիքն անշոշափելի և անհասանելի է. «Երկինքն է իմ հայրենիքը: Մինչեւ հիմա համարում էինք, որ Հայաստանն է, բայց հիմա տեսանք, որ՝ չէ...» (50 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁶⁰:

Այս տրամաբանության մեջ, սակայն որոշակի բացատրություններով, նրանցից ոմանք գտնում են, որ *հայրենիքը զգացողություն է. «Հայրենիքը, եթէ հողը պիտի համարենք, ես հայրենիք ուրեմն կը համարեմ էդ հողը, որտեղ ես իմ սիրած մարդկանց հետ եմ: Էդ զգացումը, որ ես էս հողի վրայ հանգիստ եմ, ինձի համար կարեւոր է: Եթէ ապրելու պիտի գաս, էդ զգացումը պիտի զգաս՝ իբր հայրենիքի: Էդ մարդիկ են, որ քեզ էդ զգացումը տալիս են, եւ ոչ թէ հողն ա: Հիմա ուզում եմ ծնողներուս էստեղ բերեմ, որ հարյուր տոկոս զգամ՝ թե՛ հողով, թե՛ զգացական, իմ հայրենիքը Հայաստանն եղաւ արդէն: Իրանք որ հոս են, ես որտեղ ալ գնամ, Հայաստանն ա իմ հայրենիքը»* (32 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁶¹:

Այսպիսով, սիրիահայերի բազմաթիվ մեկնաբանությունները դասակարգելով՝ տեսնում ենք, որ հայրենիքը նրանց կողմից նկարագրվում է և՛ աշխարհագրական ու հոգևոր իմաստով, և՛ սփյուռքահայի ինքնության ազգային բաղադրիչի շեշտադրումներով: Այստեղ կարևոր

¹⁵⁸ Նույն տեղում:

¹⁵⁹ Նույն տեղում:

¹⁶⁰ Նույն տեղում:

¹⁶¹ Նույն տեղում:

է նշել նաև, որ նրանք այդ եզրույթը սահմանում են այնպիսի հասկացություններով, որոնք տանում են հայրենիք չունենալու կամ դեռևս չունենալու գաղափարին: Քանակական ցուցանիշները ևս վկայում են այս մասին, քանզի հայաստանաբնակ սիրիահայերի 6.5%-ը դժվարացել է նշել, թե որն է իր հայրենիքը: Իսկ, ընդհանուր առմամբ, նրանց մեծ մասը՝ 70.7%-ը, Հայաստանն է համարում իր հայրենիքը, իսկ փոքր մասը՝ 22.8%-ը՝ Սիրիան:

Սի քանի չափանիշների հետ փոխկապվածության վերլուծության միջոցով ցույց տանք, թե սիրիահայերի որ զանգվածի համար է հայրենիք համարվում Հայաստանը, որ զանգվածի համար՝ Սիրիան:

- Հայաստանը՝ որպես հայրենիք, ավելի շատ ընդունում են *սիրիահայ կանայք* (52.3%), քան տղամարդիկ (47.7%): Ի դեպ, այս հարցում ընտրություն կատարելիս հավասարաչափ դժվարացել են և՛ կանայք, և՛ տղամարդիկ:
- Հայաստանը՝ որպես հայրենիք ընկալողների մեջ մեծամասնություն են կազմում *միջին տարիքի սիրիահայերը* (36–55 տարեկանները՝ 52.3%), Սիրիան՝ որպես հայրենիք ընդունողներն ավելի շատ երիտասարդներն են (18–35 տարեկանները՝ 42.9%), իսկ ընտրության հարցում ավելի շատ դժվարացել են ավագ սերնդի մարդիկ (56-ից բարձր տարեկանները՝ 50%):
- Հետաքրքիր ցուցիչ է համարվում նաև *ընտանիքում գործածվող լեզուն*: Սիրիան հայրենիք համարող սիրիահայերը ընդհանրապես չեն գործածում արևելահայերեն լեզուն, այլ մեծամասամբ խոսում են արևմտահայերենով (95.2%), նաև՝ արաբերենով (4.8%):
- Հայ Ավետարանական *եկեղեցու հետևորդներն* ավելի շատ հակված են Սիրիան ընդունել՝ որպես հայրենիք (14.3%), քան՝ Հայաստանը (3.1%): Հայ Առաքելական և Հայ Կաթոլիկ եկեղեցու հետևորդները, ընդհակառակը, ավելի շատ Հայաստանն են ընկալում՝ որպես հայրենիք (համապատասխանաբար, 90.8% և 6.2%՝ ի համեմատ 81.0%-ի և 4.8%-ի):

- Կարևոր գործոններից է նաև *սիրիահայերի ծննդավայրը*: Հալեպում ծնվածներն ավելի շատ Հայաստանն են համարում իրենց հայրենիքը (76.9% 71.4%-ի համեմատ), դամասկոսահայերը՝ Սիրիան (4.8% 1.5%-ի համեմատ): Վերջինս՝ որպես հայրենիք, ընկալում են նաև այլ երկրներում, օրինակ, Լիբանանում, Քուվեյթում, Եմենում, Լիբիայում ծնված սիրիահայերը (23.8% 9.4%-ի համեմատ): Իսկ Հալեպից և Դամասկոսից բացի, Սիրիայի այլ քաղաքներում և գյուղերում (Քեսաբում, Ղամիշլիում, Դեր Ջորում, Արաբունարում) ծնվածները միանշանակ Հայաստանն են ընդունում՝ որպես հայրենիք (12.2% 0%-ի համեմատ):
- Հայրենիքի ընկալման գաղափարը կարևոր ցուցիչ է համարվում նաև *Հայաստանից մեկնելու* տրամադրվածության չափման հարցում: Սիրիան հայրենիք համարողների գերակշիռ մեծամասնությունը (85.7%), Հայաստանում ապագա չտեսնելով, մտադիր է մեկնել երկրից: Այս ցուցանիշն ակնհայտ է նաև համեմատության մեջ, երբ տեսնում ենք, որ Հայաստանը՝ որպես հայրենիք ընդունողները երկու անգամ քիչ են մեկնելու մտադրություն ունեցողների զանգվածում (43.1%, տես աղյուսակ 5):

Աղյուսակ 5.

Հայրենիքի ընկալումը և Հայաստանից մեկնելու տրամադրվածությունը (%)

Որպես հայրենի երկիր ընկալվում է	Կհեռանան Հայաստանից		Ընդամենը
	Այո	Ոչ	
Սիրիան	85.7	14.3	100.0
Հայաստանը	43.1	56.9	100.0
Դժվ. է պատ.	33.3	66.7	100.0

Այսպիսով, սիրիահայերի զգալի մասը Հայաստան տեղափոխվելու որոշումը կայացրեց հուզական մակարդակում՝ առաջնային համարելով հայրենիքի գաղափարը: Հայաստանում բնակվող սիրիահայերի մեծ մասը հայրենիքն ընկալում է հոգևոր իմաստով՝ որպես էթնիկ ինք-

նույնպիսի անբաժանելի մաս կազմող Հայաստան երկիրը համարելով իր հայրենիքը: Նրանց մի մասը նաև, վերացական հասկացություններով սահմանելով այդ եզրույթը, ապրում է հայրենիք չունենալու կամ դեռևս չունենալու գաղափարով:

Հայաստանը՝ որպես հայրենիք ընդունող և Հայաստան տեղափոխվելու որոշման հարցում այդ գաղափարը կարևորող սիրիահայերի մեջ մեծ թիվ են կազմում կանայք և միջին տարիքի մարդիկ: Սիրիան՝ որպես հայրենիք, ընդհակառակը, ավելի շատ ընդունում են տղամարդիկ և երիտասարդները: Այս զանգվածի մեջ են մտնում նաև նրանք, ովքեր ավելի շատ են հակված լքել Հայաստանը:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՍԻՐԻԱ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2.1. Կեցության ինչ դժվարությունների են բախվում սիրիահայերը

2011 թ. սկսված պատերազմի հետևանքով Սիրիայում վնասվել են բազմաթիվ բնակելի, հասարակական և մասնավոր շինություններ, շատ սիրիահայեր կորցրել են իրենց բնակարանները և ունեցվածքը: Նրանցից ոմանք ոչ միայն չեն հասցրել վաճառել այն, այլև չեն մտածել այդ ուղղությամբ՝ հետ վերադառնալու մտադրություն ունենալով: Սակայն, հաստատվելով Հայաստանում, առաջին հերթին բախվել են այս խնդրին. բնակարանի հարցը ՀՀ-ում ապրող սիրիահայերի համար դառնում է կարևոր հիմնախնդիրներից, որի լուծումը կարող էր ապահովել նրանց մշտական բնակության հեռանկարը մեր երկրում: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2014 թ. մայիսի դրությամբ ՀՀ ՄՆ և ՍՀՀԿ ՀԿ-ին դիմել է 911 ընտանիք՝ ժամանակավոր կացարանով կամ վարձի փոխհատուցմամբ ապահովելու խնդրանքով¹⁶²: Ըստ 2014 թ. քանակական հետազոտության տվյալների՝ սիրիահայ ընտանիքների 74%-ը բնակվել է վարձով, նրանց միայն քառորդ մասն է բնակվել առանց վարձավճար տալու՝ կամ սեփական բնակարաններում, կամ հարազատների/բարեկամների տանը, կամ հանրակացարաններում:

Սիրիահայերի բնակեցման խնդիրների լուծման նպատակով 2013 թ. ՀՀ կառավարությունը ձեռնարկում է «Նոր Հալեպ» թաղամասի կառուցման ծրագրիրը¹⁶³, որը նախատեսվում էր իրականացնել հե-

¹⁶² Համառոտ տեղեկանք սիրիահայերի հիմնախնդիրների մասին, ՀՀ ՄՆ, 2014, մայիս:

¹⁶³ ՀՀ կառավարության որոշում, 6 հունիսի 2013, N656-Ն, հասանելի է՝ <https://>

տւյալ միջոցներով՝ ֆինանսավորման 1/3-րդը տրամադրվելու էր սիրիահայերի կողմից, 1/3-րդը՝ դոնոր կազմակերպությունների և հովանավորների, իսկ 1/3-րդը՝ հայաստանյան իշխանությունների¹⁶⁴: «Նոր Հայեալ» բնակարանային համալիրը լուծելու էր 488 սիրիահայ ընտանիքի կացարանի խնդիրը: Այն կառուցվելու էր Աշտարակ քաղաքում՝ Վաղարշապատ տանող մայրուղուն մոտ¹⁶⁵: Չնայած շատ սիրիահայեր ցուցակագրվել էին ծրագրին (էլեկտրոնային մամուլում շրջանառվում էր 300–600 թիվը), սակայն այն չի իրականացել: Նախագիծը մշակելու առումով կարևոր էր հաշվի առնել մի շարք հանգամանքներ. 1) սիրիահայերը պատերազմի հետևանքով հարկադրաբար տեղափոխվածներ էին՝ սուղ ֆինանսական միջոցներով, և ի վիճակի չէին համապատասխան ներդրումներ կատարել: 2) Նրանց դրամական խնայողություններն օրի օրի ծախսվում էին տան վարձավճարների, կեցության և սննդի վրա: 3) Նրանք դեռևս չէին կողմնորոշվել ՀՀ-ում հաստատվելու հարցում: Եվ այս հանգամանքների պարագայում ակնկալել, որ նրանք ֆինանսական ներդրումներ կկատարեն, հեռանկարային չէր ծրագրի արդյունավետության տեսանկյունից: Նույնիսկ այն սիրիահայերը, որոնք կարող էին համապատասխան ներդրումներ անել և կողմնորոշված էին ապագայի հարցում, նպատակահարմար չեն գտնում ծրագրին մասնակցել՝ փաստարկելով կառուցվող թաղամասի հեռավորությունը, ենթակառուցվածքների բացակայությունը և այլն: *«Սկզբում ըսին՝ օգնությոն է, յեփոյ թէ՛ կէսը պէտք է վճարես: Կէսն էլ 10–15 հազար դոլար է: Եթէ ես 10–15 հազար դոլար ունենամ, Աշտարակ չեմ էրթար, էստեղ կ'առնեմ, մնացածն էլ հիպոթեքային վարկ կը վերցնեմ: Եթէ տան վարձք պէտք է տամ, դրա փոխարէն վարկը կը փակեմ, իմ ուզած տունը կ'առնեմ, ոչ թէ՛ Աշտարակ կ'երթամ: Դրա համար մարդիկ*

www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84044 , 15.10.2013: Տե՛ս նաև փոփոխությունը՝ ՀՀ կառավարության որոշում, 26 դեկտեմբերի 2013, N1520-Ն, հասանելի է՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/23968/> , 04.05.2018:

¹⁶⁴ Աղբյուրը՝ a1plus.am, 2013:

¹⁶⁵ «Նոր Հայեալ» թաղամասի կառուցման ծրագիրը կախված է սիրիահայերի որոշումից ու հանգանակություններից. Հ. Հակոբյան: Հասանելի է՝ <https://armenpress.am/arm/news/769852/nor-haleptaxamasikarucman-tsragiry-kakhvats-e-siriahayeri.html> , 15.01.2018:

հիասթափուեցան...» (49 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁶⁶: Այնուամենայնիվ, այս ծրագիրը սիրիահայերի ազգային նկարագիրը, լեզվի, կենցաղի յուրահատկությունները պահպանելու և համայնքային կուռ ձևով ապրելու լավագույն հնարավորություններից մեկը կարող էր լինել: Սակայն, ինչպես նշեցինք վերևում, նախագիծը չիրականացավ, որն ավելի մեծ էր իր ծավալներով, քան այն, ինչն իրականություն դարձավ մասնավոր նախաձեռնության և բարեգործական մեկ այլ ծրագրի միջոցով: Առաջին դեպքում մի սիրիահայ գործարար, ով Հայաստան էր տեղափոխվել 2012 թ. և եղել «Նոր Հալեպ» թաղամասի կառուցման համար ստեղծված հանձնաժողովի կազմում, հասկանալով, որ վերը նշված նախագիծը չի իրականանում, որոշում է սիրիահայերի համար մատչելի գնով բնակարաններ կառուցելու առաջարկով դիմել տարբեր շինարարական կազմակերպությունների և հովանավորների: Երկարատև աշխատանքի արդյունքում, ի վերջո, Դավթաշեն 4-րդ թաղամասի վերջնամասում կառուցվում են 16 հարկանի 3 շենքեր (շենքերի կառուցման աշխատանքները սկսվել են 2014 թ.), որտեղ բնակարանի մեկ քմ-ը սիրիահայերին վաճառվել է 550–650 ԱՄՆ դոլարով¹⁶⁷: Ծրագիրը ստացել է «Իմ բնակարանը՝ հայրենիքիս մեջ» անվանումը:

Այուս նախաձեռնությունն իրականություն է դառնում «Օգնիր եղբորդ» բարեգործական հիմնադրամի միջոցով¹⁶⁸, որը, Հայաստանում հաստատված սիրիահայ անապահով ընտանիքներին նյութապես աջակցելուց զատ, որոշակի քայլեր է նախաձեռնում է նաև սիրիահայերի բնակարանային խնդիրների լուծման համար: Արդյունքում, Երևանի Դավթաշեն համայնքի Ա. Միկոյան փողոցում կառուցվում է 14 հարկանի մեկ շենք 78 սիրիահայ ընտանիքների համար, որի հողատարածքը տրամադրում է Երևանի քաղաքապետարանը, իսկ ՀՀ Կառավարությունն այն ճանաչում է՝ որպես բարեգործական ծրագիր:

¹⁶⁶ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

¹⁶⁷ Երևանի Դավթաշեն համայնքի 4-րդ թաղամասում սիրիահայերի համար շենք է կառուցվել, հասանելի է՝ <https://mediamax.am/am/news/society/15811/>, 19.03.2024:

¹⁶⁸ Դավթաշենում սիրիահայերի համար բնակելի շենք կկառուցվի, հասանելի է՝ <https://armlur.am/48573/>, 10.09.2024:

Մինչև այս ծրագիրը, 2012 թ. «Օգնիր եղբորդ» նախաձեռնությունը հինգ միլիոն դրամի փոխանցում է կատարում «Քաշաթաղ» հիմնադրամին՝ ԱՀ Քաշաթաղի շրջանում հաստատված քսան սիրիահայ ընտանիքների բնակարանաշինական խնդիրը հոգալու նպատակով: Աշխատանքներն ամբողջացնելու համար 2013 թ. ևս չորս միլիոն դրամի փոխանցում է կատարում¹⁶⁹: Արդյունքում, 2017 թ. դրությամբ 24 սիրիահայ ընտանիքներ արդեն սեփական բնակարաններն ունենին Քաշաթաղի շրջանի Բերձոր, Կովսական, Իշխանաձոր, Աղալնո, Գետամեջ համայնքներում (համապատասխանաբար, 2, 14, 5, 2, 1 ընտանիք), որտեղ ապրել են մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմը: Պատերազմից հետո շատ արցախցիների նման նրանք էլ տեղահանվում և տեղափոխվում են Հայաստան:

ՀՀ-ում սիրիահայերի մեծամասնությունը բնակվում է Երևանում. ըստ քանակական հետազոտության արդյունքների՝ նրանք կազմում են սիրիահայ ընտանիքների 89%-ը (11%-ը՝ մարզերում), որոնց մեջ մեծ թիվ են կազմում Կենտրոն և Արաբկիր համայնքներում ապրող ընտանիքները (համապատասխանաբար, 44% և 26%): Այս ցուցանիշը կարելի է բացատրել հետևյալ պատճառներով. 1) Սիրիահայերը սովոր են քաղաքային կյանքին, իսկ այն Երևանի կենտրոնից դուրս՝ այլ վայրերում, չեն պատկերացնում: 2) Երևանի Կենտրոն և Արաբկիր համայնքներում են կենտրոնացած բուհերի և աշխատավայրերի մեծ մասը, ինչն էլ պատճառ է հանդիսացել այս համայնքները՝ որպես բնակության վայր ընտրելու հարցում՝ համարելով, որ տան վարձավճարների բարձր լինելը փոխհատուցվում է ճանապարհի վրա չծախսված գումարներով (շատ սիրիահայեր, սկզբնական շրջանում ծանոթ չլինելով Երևանի տարածքին, մեկ տեղից մյուսը տեղափոխվելու համար հաճախ դիմել են տաքսի ծառայություններին): *«Մաշտոց փողոցի վրայ վարձով կը մնանք: Դժուար է մեզի համար, մանաւանդ որ մենք Սուրիա մեր սեփական տները ունեցած ենք: Ճիշդ է, մեզի կըսեն՝ ինչո՞ւ կենտրոնում նստած էք, բայց տղաս համալսարան ոտով կ'երթայ-կու*

¹⁶⁹ Աղբյուրը՝ a1plus.am, 2013:

գայ, մենք ամեն տեղ ուրով կ'երթանք-կուգանք: Եթէ որեւէ մեկ տեղ
տուն վարձեմ, աւրոյի փողը այդքան կը լինի» (58 տ. կին, ք. Երևան)¹⁷⁰:

Մարզերում և Երևանի այլ համայնքներում բնակվելն էլ ունի իր
պատճառները՝

- Հարազատներին, ազգականներին մոտ ապրելու հանգամանք,
- Ժամանակի ընթացքում սեփական փորձի և սոցիալական
ցանցի ընդլայնում, ինչն էլ հնարավորություն է տալիս բնակ-
վելու ավելի արդյունավետ տարբերակ գտնել. «Երեք պարա-
զաներով ես ընտրեցի Աբովեանը. մէկ՝ կնոջս հարազատները
կային, երկու՝ մի քիչ այդտեղի վարձքերը ատյի էժան են, երեք՝
ես, որ այստեղ մեղրամիսի էկած էի 2002-ին, շատ էի սիրած
Աբովեանի մթնոլորտը, կեանքը, օդը: Ատոր համար ընտրեցի.
հարազատ է» (39 տ. տղամարդ, ք. Աբովյան)¹⁷¹:
- Այլընտրանքի բացակայություն, քանզի անվճար կացարան-
ները/հանրակացարանները կենտրոնացած են Երևանի ծայ-
րամասային համայնքներում և Արարատի մարզում:

Պետք է նշել, որ ՀՀ ՄԾ ենթակայության տակ գտնվող հանրա-
կացարաններն ամբողջովին բնակեցված են ադրբեջանահայերով,
իրաքահայերով և սիրիահայերով: ՄԾ տվյալներով՝ 2013թ. փախստա-
կան է ճանաչվել ու ապաստան հայցել Սիրիայից ժամանած 236
քաղաքացի, որից կացարանով ապահովվել է 136-ը, իսկ 36 սիրիահա-
յերի կացարանի ապահովվածության հարցը լուծել են առանձին ան-
հատներ¹⁷²: Քանակական տվյալները փոփոխական են՝ պայմանավոր-
ված այն հանգամանքով, որ ընթացքում նրանք դիմում և ստանում են
նաև ՀՀ քաղաքացիություն, որով և դադարեցվում է նրանց կարգավի-
ճակը: Ըստ ՀՀ օրենսդրության՝ փախստականի կարգավիճակի տրա-

¹⁷⁰ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

¹⁷¹ Նույն տեղում:

¹⁷² «2013թ. ՀՀ-ում ապաստան է ստացել 236 մարդ. խորհրդակցություն ՏԿՆ միգ-
րացիոն պետական ծառայությունում», հասանելի է՝ [https://www.tert.am/am/
news/2014/01/14/gevorgyan3/973984](https://www.tert.am/am/news/2014/01/14/gevorgyan3/973984) , 15.06.2014:

մադրումը ենթադրում է անհատական ընթացակարգ, հետևաբար, այն ժամանակատար գործընթաց է, սակայն սիրիահայերի պարագայում իրականացվել է հեշտացված ընթացակարգով: Կարգավիճակ ձեռք բերելուց հետո անձը ձեռք է բերում նույն իրավունքները, ինչ ՀՀ-ում հաստատված օտարերկրյա քաղաքացիները, իսկ սոցիալական բնագավառում՝ նույնը, ինչ ՀՀ քաղաքացիները: Միևնույն ժամանակ, այս կարգավիճակը ենթադրում է նաև պետության կողմից ժամանակավոր կացարանի տրամադրում¹⁷³:

Բացի ՄԾ «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ից՝ սիրիահայերին հատուկ կացարանների տրամադրման, ինչպես նաև բնակարանների և կոմունալ վարձավճարների փոխհատուցման հարցերում օժանդակություն են ցուցաբերել Հայաստանում գործող ազգային ոչ կառավարական կազմակերպությունները՝ «Արմենիան Լայթհաուս» հայ-ամերիկյան ԲՀ, ԿԱԿ, ԱՀ ԲՀԿ, «ՍՕՍ» մանկական գյուղեր ՀԲՀ, «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ, «Հայկական Կարիտաս» ՀԿ, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերություն և այլն:

Բնակարանի/կացարանի առկայությունը և բնակվարձերի փոխհատուցման փաստը կարևոր գործոններ են, սակայն պակաս կարևոր չեն նաև կոմունալ-կենցաղային այն պայմանները, որոնք առկա են նրանց բնակարաններում: Սիրիայում հայերն ապրել են ընդարձակ բնակարաններում, ոմանք՝ սեփական տներում, որոնք ապահովված են եղել անհրաժեշտ կենցաղային և կոմունալ հարմարություններով, կահույքով, տեխնիկայով և այլն: Իսկ նրանց վարձակալական բնակարանները բավականին փոքր են, ներքին հարդարված վիճակը և կոմունալ-կենցաղային պայմանները՝ ոչ լիարժեք, կահույքի և տեխնիկայի տեսակները՝ ոչ բոլորին հասանելի: Քանակական տվյալները ևս վկայում են, որ սիրիահայերի 42%-ը բավարարված չէ բնակարանային պայմաններից: Մյուս կողմից նկատում ենք, որ նրանց մեջ կեսից ավելին (58%), հարմարվողականություն ցուցաբերելով, դրական է գնահատում կեցության պայմանները՝ համարելով դրանք ժա-

¹⁷³ Հակոբյան 2014, 8:

մանակավոր: Ըստ ամերիկացի սոցիոլոգ Տ. Շիբուտանիի՝ ադապտացիան հենց հարմարվողական ռեակցիա է, իսկ այդ ռեակցիաները տեղի են ունենում բոլոր մակարդակներում՝ անհատական-խմբայինից մինչև միջամբային, ինչն էլ թույլ է տալիս մարդուն ակտիվ մասնակցություն ունենալ շրջապատող միջավայրի անցուդարձին¹⁷⁴: Փաստացի, կենցաղային պայմաններից ավելի շատ բավարարված են նրանք, որոնք բնակվում են ոչ իրենց բնակարաններում: Փոխարենը, Երևանում սեփական բնակարան ձեռք բերած սիրիահայերը, մտովի համեմատություն անցկացնելով իրենց սեփականության հետ, ավելի շատ են դժգոհում անշարժ գույքի վիճակից և կոմունալ-կենցաղային պայմաններից: Մարզային քաղաքներում (Արարատի, Արմավիրի, Կոտայքի) բնակվող այն սիրիահայերը, որոնք արդեն սեփական բնակարան են գնել, ընդհանրապես չեն հարմարվում առկա պայմաններին, իսկ վարձակալությամբ բնակվողների տեսակետները բաժանվում են հավասարաչափ: Սիրիահայերը գյուղերում բնակվում են կան վարձակալական տներում, կան հանրակացարաններում, ընդ որում, նրանք ավելի լավ են գնահատում վարձակալական բնակարանների, քան հանրակացարանների կենցաղային պայմանները:

Այսպիսով, սիրիահայերին բնակարանով ու պատճաշ կոմունալ-կենցաղային պայմաններով ապահովելու հարցը եղել է հրատապ լուծում պահանջող խնդիրներից: Սա նաև այն կարևոր գործոններից էր, որն ուղղակի ազդեցություն ունեցավ նրանց՝ Հայաստանում կյանքը շարունակելու որոշման կայացման վրա:

2.2. «Սիրիայում աշխատանք ունեի, Հայաստանում գործազուրկ դարձա». զբաղվածության խնդիրը

Սիրիահայերի ադապտացիայի ուսումնասիրության համատեքստում անհրաժեշտություն կա պարզելու, թե նրանք ինչպես են իրացնում սեփական ներուժը նոր աշխատաշուկայում, ինչ քայլեր են կատարում աշխատանք գտնելու համար, ինչպես են հարմարվում նոր պայման-

¹⁷⁴ Акименко 2011, 7–8.

ներին, ինչ խնդիրների առաջ են կանգնում և այս ամենն ինչ հետևանքներ է ունենում նրանց առօրյայի և ապագային ուղղված քայլերի վրա: Սոցիոլոգ Մ. Վեբերը մարդու վարքը հիմնավորում է ռացիոնալության հայեցակարգի շրջանակներում: Անհատի գործունեության հիմքում ընկած է սուբյեկտիվ մոտիվացիան. նրա կոնկրետ գործողությունները տանում են դեպի նպատակի իրականացում, որին հասնելու միջոցները բազմաթիվ են: Մարդու նորմատիվ վարքը Վեբերը բացատրում է նրա ռացիոնալության բարձր մակարդակով¹⁷⁵: Ըստ հեղինակի՝ ադապտացված մարդը «ռացիոնալ» է, ինչն էլ կարող ենք ստուգել սույն ուսումնասիրության շրջանակում՝ սիրիահայերի գործողությունների միջոցով բացահայտելով նրանց ադապտացվածության մակարդակը զբաղվածության ոլորտում:

Սիրիահայերի զբաղվածության վիճակը ցույց տալու համար ներկայացնենք նրանց կարգավիճակի համեմատական նկարագիրը Հայաստանում և Սիրիայում: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 6-ի տվյալներից, նրանց դերերի և կարգավիճակի որոշակի փոփոխություն է տեղի ունեցել, որին պետք է հարմարվեն նոր միջավայրում: Սոցիոլոգ Է. Գիդդենսը կարծում էր, որ ադապտացիան սոցիալականացման կամ որոշակի դերեր կատարելուն հարմարվելու գործընթացն է¹⁷⁶: Ջ. Միդը նույնպես, ադապտացիան ուսումնասիրելով անձի դերային հայեցակարգի տեսանկյունից, գրում է, որ անհատի դերային մոդելների և դրույթների ձևավորումը կախված է իր խմբում ներառված մյուս անդամների դերային մոդելներից և դրույթներից¹⁷⁷, իսկ մարդու՝ սոցիալական դերերի մեջ ներգրավման գործընթացը սոցիալական ադապտացիան է:

¹⁷⁵ Вебер 1990, 12–25; Дискин, Авраимова 1997, 24, այստեղ հեղինակները, նկարագրելով ադապտացիայի մոտիվացնող գործառույթը, գրում են, որ այն արտահայտվում է ոչ միայն մարդկանց՝ գոյություն ունեցող իրավիճակում գիտակցաբար կողմնորոշվելու ունակությամբ, այլ նաև սոցիալական վարքի համապատասխան մոդելներ մշակելու և տարբեր ռեսուրսներ ռացիոնալ օգտագործելու ունակությամբ՝ սեփական պահանջմունքներն ու շահերն իրացնելու նպատակով:

¹⁷⁶ Гидденс 2005, 37–40.

¹⁷⁷ The Timeliness of Mead 2016, 328.

Աղյուսակ 6.
Սիրիահայերի կարգավիճակը՝ Սիրիայում և ՀՀ-ում (%)

Սոցիալական կարգավիճակը	Սիրիայում	ՀՀ-ում
Գործազուրկ	0.0	39.0
Ինքնազբաղված, բիզնեսի սեփականատեր	36.0	13.0
Վարձու աշխատող	30.5	13.0
Տնային տնտեսուհի	27.0	20.0
Ուսանող/ուսանողուհի	4.0	3.0
Թոշակառու (տարիքային, հաշմանդամության)	2.5 ¹⁷⁸	12.0
Ընդամենը	100.0	100.0

Ինչպես տեսնում ենք, գործազուրկ կարգավիճակի կտրուկ փոփոխություն է տեղի ունեցել: Հայերը Սիրիայում, եթե ունեցել են ցանկություն և ընտանեկան կամ ֆիզիկական հանգամանքները չեն խանգարել, ապա աշխատել են, իսկ Հայաստանում պատկերն այլ է. նրանց 39%-ը չի կարողանում աշխատանք գտնել, և այս հարցում բազմաթիվ գործոններ ունեն իրենց դերակատարությունը: Գործազուրկների մեջ մեծ մասը (56%-ը) կազմում են արական սեռի ներկայացուցիչները, իսկ տարիքային առումով նկատվում է հետևյալ օրինաչափությունը. նրանց գերակշիռ մասը՝ մոտ 81%-ը, գտնվում է 26–55 տարիքային խմբում: Գործազուրկների մոտ 14%-ն էլ 56–65 տարիքային խմբի ներկայացուցիչներն են: Հարցը դիտարկելով կրթության չափանիշի հետ կապի մեջ՝ պարզ է դառնում, որ գործազուրկների կեսից ավելին՝ 56%-ը, ունի թերի միջնակարգ կրթություն: Սակայն քիչ չեն նաև բարձրագույն կրթություն ունեցող սիրիահայերը (մոտ 17%-ը), որոնք չեն կարողանում Հայաստանում աշխատանք գտնել:

Գործազուրկների մոտ 61%-ն է աշխատանք փնտրել հայաստանյան աշխատաշուկայում, 39%-ը գտնվել է պասիվ վիճակում: Աշխատանք

¹⁷⁸ Մեծ տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ սիրիահայերը հարցման ժամանակ նշել են իրենց հիմնական կարգավիճակը՝ ունենալով մեկից ավել կարգավիճակներ: Իսկ Սիրիայում շատ սիրիահայեր, լինելով տարիքային թոշակառու, աշխատել են և զբաղվել սեփական ձեռնարկատիրությամբ՝ իրենց համարելով ինքնազբաղված կամ վարձու աշխատող: Իսկ Հայաստանում պատկերն այլ է՝ սիրիահայ թոշակառուները չեն աշխատում:

փնտրելու միջոցների մեջ 33%-ը բաժին է ընկնում ոչ պաշտոնական ուղիներին, այսինքն՝ սիրիահայերը փորձում են իրենց հարազատների, ընկերների, ծանոթների միջոցով աշխատանք գտնել: Նրանց մի որոշ զանգված էլ՝ մոտ 19%-ը, աշխատանք ստանալու ակնկալիքով դիմել է ՍՆ: Նույնքանն էլ աշխատանք գտնելու պատասխանատվությունն ամբողջությամբ վերցրել են իրենց վրա՝ անձամբ դիմելով գործատուներին: Նրանք կիրառել են նաև այլ միջոցներ՝ աշխատանքի տեղավորման պետական/մասնավոր գործակալություններ, համացանցում հայտարարություններ, աշխատանքի տոնավաճառներ և այլն:

Աշխատանք չփնտրող գործազուրկ սիրիահայերի 1/3 մասը (մոտ 35%-ը) կարծում է, որ ՀՀ-ում աշխատանք գտնելու հնարավորություն չունի: Այլ պատճառաբանությունների մեջ նշանակալի տեղ ունեն հետևյալ ձևակերպումները՝ «հիվանդ եմ», «չեմ ուզում աշխատել», «գնալու եմ Հայաստանից», «չեմ տիրապետում արևելահայերենին»: Խորին հարցազրույցների միջոցով ևս բացահայտվել են այն թաքնված գործոնները, որոնք կարևոր հիմք են համարվում աշխատանք փնտրելու նկատմամբ նրանց դիրքորոշման համար՝ ցածր վարձատրություն և աշխատանքային ծանր գրաֆիկ. «Հնարատրություն եղաւ ինձի մարկետի մեջ աշխատելու, բայց երկար էր աշխատանքի ժամերը, եւ աշխատավարձը քիչ էր: Այնպէս որ՝ կ'ուզեմ աշխատանք մը ունենալ, որ մեկ օր գոնէ արձակուրդ ունենամ, որ էրեխքուս հետ անցընեմ» (38 տ. կին, գործազուրկ, ք. Երևան)¹⁷⁹:

Տնային տնտեսուհի կարգավիճակը ևս հետաքրքիր փոփոխություն է կրել (27%-ից դառնալով 20%, տես աղյուսակ 6), քանզի Սիրիայում երբեմնի տնային տնտեսուհիներն այժմ աշխատանք են փնտրում, ոմանք նաև աշխատում են: Սակայն երկու դեպքում էլ այս կարգավիճակը մեծ կշիռ է կազմում, քանզի, ըստ այս համայնքում ընդունված սովորության, կանայք չեն աշխատում, և ընտանիքը ֆինանսապես ապահովելու գործառույթն իրականացնում է տղամարդը: Այդ մասին է վկայում նաև այն ցուցանիշը, որը ստացվել է հետազոտության ար-

¹⁷⁹ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

դյունքում՝ հարցվողների մոտ 65%-ը նշել է, որ ընտանիքում հիմնական գումար վաստակողը համարվում է տղամարդը, իսկ կնոջը նման դեր վերագրել է միայն 2.2%-ը:

Աղյուսակ 6-ի տվյալներից նկատում ենք, որ փոխվել է նաև ինքնագրադվածների և վարձու աշխատողների հարաբերակցությունը. Սիրիայում հայերն ավելի մեծ ծավալներով են իրականացրել ձեռնարկատիրական գործունեություն, քան ՀՀ-ում: Այսօր սեփական բիզնես ստեղծելու խոչընդոտները և սիրիահայերին անհանգստացնող պատճառները տարբեր են.

- Շատերի համար Հայաստանը համարվում է ժամանակավոր ապաստան, այդ իսկ պատճառով չեն ցանկանում ներդրումներ կատարել այս ոլորտում:
- ՀՀ-ի հարկային համակարգը Սիրիայի հարկային համակարգի հետ համեմատելու արդյունքում, նաև շուկայի փոքր լինելը հաշվի առնելով՝ նրանց մի մասը շահութաբեր չի համարում սեփական բիզնես ստեղծել:
- Ֆինանսական ռեսուրսներ չկան կամ բավարար չեն բիզնես հիմնելու համար:

Չնայած Սիրիայում ձեռնարկատերերի և ինքնագրադվածների 24%-ն այժմ էլ շարունակում է գրադվել ձեռնարկատիրական գործունեությամբ (նրանց մեջ են գտնվում նաև այն սիրիահայերը, որոնք օգտվել են ՓԽԶ ԶԱԿ-ի «Սիրիահայերին աջակցություն» ծրագրից. նրանց տրամադրվել է արտոնյալ պայմաններով վարկ՝ ժամկետը մինչև 5 տարի, տարեկան տոկոսադրույքը՝ 4%), և 18.5%-ն էլ աշխատում է մասնավոր հատվածում՝ տարբեր մասնագիտություններով՝ դեղատանը վաճառող, բուժքույր ու երգիչ, գանձապահ ու վարորդ, սակայն երբեմնի ձեռնարկատերերի մեծ մասը՝ 42.5%-ը, գործազուրկ է Հայաստանում, իսկ 15%-ը հայտնվել է թոշակառու (9%) և տնային տնտես/տնտեսուհի (6%) կարգավիճակներում: Ստորև բերված են հայերի ինքնագրադվածության ոլորտները Սիրիայում և Հայաստանում:

Աղյուսակ 7.

Սիրիահայերի հնքնազբաղվածության ոլորտները Սիրիայում և ՀՀ-ում

7.1. Սիրիայում
<u>Ավերամեքենաների վերանորոգում, վաճառք</u>
Ոսկյա, արծաթյա, այլ զարդերի մշակում/վաճառք
Հագուստի, կոշիկի արտադրություն Արվեստ Գովազդ Դեղատնային գործունեություն Երկաթագործություն Էլեկտրական, կենցաղային տեխնիկայի վերանորոգում/վաճառք Անշարժ գույքի առք ու վաճառք

7.2. Հայաստանում
<u>Ավերամեքենաների վերանորոգում</u>
Արծաթյա զարդերի մշակում/վաճառք
Թխվածքների արտադրություն/վաճառք Ճաշարաններ, արագ սննդի կետեր Սիրիական համեմունքների վաճառք Ասեղնագործ սփռոցների, սրբիչների վաճառք

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում սեփական ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողների համար ոլորտները հիմնականում տարբեր են՝ համեմատած Սիրիայի: Միայն առաջին երկուսի դեպքում որոշակի համընկնում է նկատվում, ընդ որում, Հայաստանում ծառայությունների մատուցման շրջանակը նեղանում է: Օրինակ, եթե Սիրիայում հայ տղամարդիկ զբաղվել են ավտոմեքենաների ներկրմամբ, վերանորոգմամբ և վաճառքով, ապա Հայաստանում՝ միայն վերանորոգմամբ: Նույնը վերաբերում է նաև զարդերի մշակմանը՝ եթե Սիրիայում հայերը զբաղվել են ոսկյա և արծաթյա զարդերի մշակմամբ և վաճառքով, ապա Հայաստանում՝ միայն արծաթյա զարդերի: Փաստորեն, գործունեության շատ ոլորտներ բաց են մնում, և հայերը հնարավորություն չունեն շարունակել Սիրիայում ծավալած ձեռնարկատիրական գործունեությունը: Արդյունքում, այլ տարբերակ չգտնելով, նրանք ի ցույց են դնում իրենց ձեռքի աշխատանքները, խոհարարական ձիրքերը՝ միաժամանակ ապրուստի համար գումար վաստակելով: Ժամանակի ընթացքում, օգտվելով իրենց ընձեռած վարկային արտոնություններից, ընդլայնում են մատուցվող ծառայությունների շրջանակը՝ հաջողությունների հասնելով այս ոլորտում: Նրանց հիմնած

«Հալեպ», «Քեսաբ», «Չաթար» «Թաուկ», «Դերիան» և այլ անվանումներով սրճարան-ռեստորանները դառնում են յուրօրինակ ժամանցի վայր ինչպես սիրիահայերի, այնպես էլ հայաստանցիների համար: Նրանք ոչ միայն կարողանում են հայկական խոհանոցը հարստացնել նոր սիրիական կերակրատեսակներով, այլև նոր շունչ ու մշակույթ հաղորդել սպասարկման ոլորտին: Ժամանակին առկա էր նաև ինտերնետային հարթակ¹⁸⁰, որը թույլ էր տալիս տեղեկատվություն գտնել սիրիահայերի կողմից հիմնած խանութների, ռեստորանների, սրճարանների և այլ բիզնեսների մասին՝ հնարավորություն տալով գործարարներին ընդլայնել ու կայունացնել իրենց հաճախորդների շրջանակը:

Զբաղվածության հարցը համադրելով հարցվողների սեռի հետ՝ պարզում ենք, որ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տղամարդիկ երկու անգամ շատ են կանանցից, իսկ վարձու աշխատողների պարագայում՝ երեք անգամ:

Աղյուսակ 6-ի տվյալներից տեսնում ենք նաև, որ սիրիահայերի 13%-ը հանդես է գալիս որպես վարձու աշխատող տարբեր ոլորտներում: Նրանց մեծ մասը զբաղվում է արծաթի մշակմամբ/առևտրով՝ 21%, մշակույթի և արվեստի ոլորտում՝ 12.5%: Հավասարաչափ (8.3%) հանդիպել են դեղատներում, ռեստորաններում, արագ սննդի կետերում աշխատող սիրիահայեր: Նրանք իրենց փոքր դերակատարումն ունեն նաև ՀՀ առողջապահության, առևտրի, սպասարկման, ՏՀՏ ոլորտներում, զբաղվում են տպագրական գործով և գյուղատնտեսությամբ: Վերջիններս սեզոնային աշխատողներ են, որոնք գյուղատնտեսական տարվա սկսվելուն պես աշխատում են ֆերմերների մոտ:

Սիրիահայ ընտանիքների 40%-ը եկամուտ չի ստանում ո՛չ ինքնազբաղվածությունից, ո՛չ վարձու աշխատանքից: Նման ընտանիքների 73%-ն ապրում է խնայողությունների հաշվին (սիրիահայ ընտանիքների եկամտի աղբյուրները մանրամասն կներկայացնենք ստորև): 2017թ. հետազոտության տվյալներով՝ նշանակալի բարելավում է նկատվում զբաղվածության առումով. 56%-ն աշխատում է, ընդ որում,

¹⁸⁰ Հասանելի է՝ <http://www.siramark.am/en/explore> , 23.06.2018:

նրանց կեսը ինքնազբաղված է: Գործազուրկ կարգավիճակը շարունակվում է 16% սիրիահայերի համար՝ գրեթե 2.5 անգամ պակաս 2014թ. համեմատ:

Չանտեսելով ՀՀ-ի սոցիալ-տնտեսական վիճակը՝ սիրիահայերի գործազրկության նման մակարդակն ինչ-որ չափով բացատրվում է նաև նրանց ունեցած մասնագիտությամբ և կրթությամբ (սիրիահայերի մասնագիտական նկարագիրը և կրթական մակարդակը տրված են 1.2 ենթագլխում): Ինչպես նշել էինք վերևում, նրանց 31%-ը մասնագիտություն չունի և միայն 23%-ն ունի բարձրագույն կրթություն, և եթե դիտարկենք հայկական աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի տեսանկյունից՝ կարող ենք ասել, որ նրանց կրթական ու մասնագիտական առաջարկը համապատասխան չէ աշխատաշուկայի պահանջարկին, քանի որ ՀՀ-ի այսօրվա աշխատաշուկան մեծամասամբ պահանջում է բարձրագույն որակավորմամբ մասնագետներ:

Սիրիահայերի համար աշխատանքի առկայությունը դեռևս բավարար պայման չէ՝ սոցիալական խնդիրները լուծելու համար, քանզի, հայտնվելով այլ միջավայրում, նրանք աշխատավարձից բավարարվելու և դրան հարմարվելու խնդիրների առջև են կանգնած: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ աշխատող սիրիահայերի մեծ մասը՝ 58.5%-ը, բավարարված չէ եկամտի չափից, ընդ որում, տղամարդիկ համեմատաբար ավելի դժգոհ են աշխատավարձից, քան՝ կանայք: Նրանց հետ անցկացված խորին հարցազրույցները ևս վկայում են այդ մասին. «Օգնությունների միջոցով ընտանիքիս յաւելեալ ծախսերը կը հոգամ: Ասենք, անցած ամիս ես չէի սպասում, որ իմ հոսանքս 51000 կ'ըլլար, միայն հոսանքս: Բոլոր օգնությունները ինձի քիչ մը առաջ կը տանին: Ամսեկան առած փողս հազիւ տուն, ծախս, կոմունալ ծախսեր, երթեւեկ» (39 տ. տղամարդ, աշխատող, ք. Աբովյան)¹⁸¹: «Չեմ կրնար ըսել՝ իմ աշխատանքով ընտանիք կը պահեմ, բայց կանացի ծախսերը կը հոգամ: Որ ամուսինս չաշխատէր, մենք չէինք կրնար ապրիլ» (27 տ. կին, ինքնազբաղված, Երևան)¹⁸²:

¹⁸¹ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

¹⁸² Նույն տեղում:

Բացի վարձատրությունից՝ սիրիահայերի համար կարևոր են նաև աշխատանքային այլ պայմաններ, ինչպիսիք են գրաֆիկը, գործընկերների հետ հարաբերությունները, աշխատանքային իրավունքների պաշտպանվածությունը և այլն: Հետազոտության արդյունքները վկայում են, որ աշխատողների 3/4 մասն իր սիրած աշխատանքն է կատարում: Չնայած սրան, մեկ երրորդից ավելին (37.5%) կարծում է, որ աշխատանքային գրաֆիկը ծանրաբեռնված է: Նրանք ավելի շատ իգական սեռի ներկայացուցիչներն են, քան՝ արական, և ավելի շատ ինքնագրադավածները, քան վարձու աշխատողները: Մյուս ցուցիչների դեպքում սիրիահայերի տրամադրվածությունը դրական է, քանզի միայն 16.6%-ն է հաստատել լարված հարաբերությունների առկայությունը գործընկերների հետ և գործատուի կողմից աշխատանքային իրավունքների ոտնահարումը: Նշված բոլոր գործոններն ազդում են սիրիահայերի ադապտացիայի վրա, քանզի սոցիալ-հոգեբանական տեսանկյունից ադապտացիան հենց անձի ներգրավումն է փոքր խումբ, այդ խմբի անդամների հետ փոխհարաբերություններում որոշակի տեղի զբաղեցումը, այդտեղ ընդունված նորմերի յուրացումը: Օ. Չոտովայի և Ի. Կոյաժևայի կարծիքով՝ ադապտացիայի վրա ազդող կարևոր գործոններից են կենսապայմաններն ու գործունեությունը, որոնց ընկալումն ու գնահատումը պայմանավորված են աշխատանքի նկատմամբ վերաբերմունքով: Սակայն ադապտացիայի բնույթի, արագության և արդյունքի վրա ոչ միայն աշխատանքային պայմանները կարող են ազդեցություն ունենալ, այլև դրանք պայմանավորված են անհատական ունակություններով և անձի մոտիվացիոն հատկություններով: Փոքր խմբերում ադապտացիան հանդես է գալիս արդյունավետ սոցիալական ակտիվության անհրաժեշտ պայման, իսկ սոցիալական ակտիվությունն էլ իր հերթին չի կարող իրականանալ՝ առանց տվյալ սոցիալական միջավայրում անձի ադապտացիայի: Նոր աշխատանքային միջավայրում սեփական տեղն արագ գտնելու ունակությունը, սեփական ունակությունների և հետաքրքրությունների դրսևորումը համարվում է մարդու ադապտացիայի հիմնական պայման: Ընդ որում, ինչքան մեծ է այդ ունակությունը, այնքան բարձր է ադապտացիայի արագությունը¹⁸³:

¹⁸³ Зотова, Кряжева 1979, 219–233.

Աշխատավարձից և ինքնազբաղվածությունից ստացված եկամտից բացի՝ սիրիահայ ընտանիքները սկզբնական շրջանում նաև այլ աղբյուրներից են եկամուտ ստացել (տե՛ս աղյուսակ 8):

Աղյուսակ 8.
Եկամտի աղբյուրները սիրիահայ ընտանիքների համար, %

Եկամտի աղբյուրները	«Այո» պատասխանները
Աշխատավարձ	36.0
Եկամուտ բիզնեսից	27.0
Եկամուտ Սիրիայում անձնական կամ ընկերների հետ համատեղ բիզնեսից	5.0
Օգնություն Սիրիայի հարազատներից, ընտանիքի անդամներից	5.0
Օգնություն այլ երկրներում ապրող հարազատներից, ընտանիքի անդամներից	13.0
Օգնություն ՀՀ-ում ապրող հարազատներից, ընկերներից	7.0
Եկամուտ բանկում ներդրված ավանդից	8.0
Եկամուտ ինչ-որ գույքի վարձակալությունից	1.0
Թոշակ/նպաստ	9.0
Պետական, հասարակական օգնություն	74.0
Խնայողություններ	46.0
Եկամտի այլ աղբյուր (թանկարժեք իրերի վաճառք և այլն)	3.0

Ըստ հետազոտության արդյունքների՝ ընտանիքների մեծ մասը (74%-ը), 2014 թ. օգտվել է պետական, հասարակական օգնություններից. տեղական և միջազգային բազմաթիվ ԲԿ-ներ իրենց նյութական և ֆինանսական օժանդակություն են ցուցաբերել Հայաստանում բնակվող սիրիահայերին՝ ընդհուպ մինչև բնակավայրերի փոխհատուցում: Սիրիահայ ընտանիքների 46%-ն ապրել է նաև Սիրիայում կուտակած սեփական խնայողությունների հաշվին: «Ընդհանրապես քիչ է եկամուտը Հայաստանին մեջ՝ համեմատ միտ երկրներու: Մենք մի ամիս ալ Լիբանան մնացինք՝ մինչեւ հոս գալը: Հոն ալ սղութիւնն այստեղից աւելի բարդ էր, թանկ էր ամեն ինչ, սուղ էր՝ ուրեստեղէնը, հագուստը,

վճարումները, բայց աշխատավարձքն էր բարձր: Իսկ Սուրիա մենք հանգիստ ապրում էինք: Կրնայ աշխատավարձքը շատ չէր, բայց ծախսը բան մը չէր: Այսպեղ ֆինանսական խնդիրները լուծում ենք մեր խնայողություններով, բայց արիկա մաշում է: Ամեն ամիս մի քիչ, մի քիչ, էհ՝ վերջը» (56 տ. տղամարդ, ք. Երևան)¹⁸⁴:

Ինչպես վկայում են հետազոտության արդյունքները, այդ օրերին սիրիահայերին ֆինանսապես օգնելու պատասխանատվություն են վերցրել նաև այլ երկրներում ապրող բազմաթիվ հայեր, քանզի ընտանիքների 13%-ն ապրում էր այդ երկրներում բնակվող իրենց հարազատների և ընտանիքի անդամների փոխանցած գումարների շնորհիվ: Այս հարցում իրենց փոքր (6%) ներդրումն ունեին նաև Հայաստանում ապրող հայերը: Չնայած լարված և անկայուն իրավիճակին՝ 2014թ. ընթացքում Սիրիան ևս ֆինանսական աղբյուր է համարվել Հայաստան տեղափոխված հայերի համար. հետազոտությանը մասնակցած ամեն քսաներորդ ընտանիք (5%-ը) ապրում էր Սիրիայում գործող իրենց կամ ընտանեկան բիզնեսից ստացված եկամուտներով և դեռևս այնտեղ ապրող ընտանիքի անդամների փոխանցած գումարներով (տե՛ս աղյուսակ 8):

Ըստ 2017թ. հետազոտության արդյունքների՝ եկամտի աղբյուրների տոկոսային բաշխվածությունը ոչ միայն փոխվում է (աշխատավարձ 64%, թոշակ/նպաստ՝ 32%, բիզնեսից եկամուտ՝ 20%, պետական/հասարակական օգնություն՝ 28%, օգնություն արտերկրից՝ 16%, օգնություն Սիրիայից՝ 8%, խնայողություններ՝ 4%, օգնություն ՀՀ-ի բարեկամներից՝ 4%), այլև հետաքրքիր վերլուծության հիմք է դառնում: Համեմատության արդյունքում տեսնում ենք, որ արդեն երեք տարի անց նրանց համար համեմատաբար կայուն եկամտի աղբյուրներ են հանդիսանում աշխատավարձն ու թոշակ/նպաստը: Կտրուկ կրճատվում է այն ընտանիքների թիվը, որոնք ապրում են խնայողությունների և պետական/հասարակական օգնությունների հաշվին: Թեպետ շարունակվում են արտերկրից, Սիրիայից, ՀՀ-ից օգնությունները, սակայն այստեղ ևս նկատվում է դրանց չափաբաժնի փոփոխություն:

¹⁸⁴ Նույն տեղում:

Չնայած նրանց եկամտի աղբյուրները բազմազան են, սակայն բավարար չեն ծառայած բազմաթիվ սոցիալական խնդիրները լուծելու համար: Եվ պատահական չէ, որ շատ սիրիահայեր ապագային առնչվող հարցը ուղղակիորեն կապում են դրա հետ: «Ի՞նչ պայմանների փոփոխության դեպքում չեք մեկնի Հայաստանից» հարցադրմանը նրանց մեծ մասը աշխատանք/լավ աշխատանք ունենալն ու բարձր վարձատրությունն են համարել պարտադիր գործոններ՝ ՀՀ-ում մնալու համար (համապատասխանաբար, 46.1%, 17.1%):

Այսպիսով, հայաստանյան սոցիալ-տնտեսական կյանքին հարմարվելու հարցում աշխատանքը կարևոր դեր ունի սիրիահայերի համար, սակայն այն ձեռք բերելու գործընթացը բավականին բարդ է, դրան խոչընդոտող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները՝ բազմաթիվ որոնցից ամենակարևորներն են՝

- Կրթության անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին,
- Լեզուների, մասնավորապես, արևելահայերենի և ռուսերենի չիմացությունը,
- Աշխատանքի դիմաց ցածր վարձատրությունը,
- Սիրիահայերի համար անսովոր աշխատանքային գրաֆիկը,
- Բարձր հարկերը,
- ՀՀ-ում մշտական բնակություն հաստատելու ցանկության բացակայությունը:

2.3. Ներփակվածություն¹⁸⁵, թե՛ մասնակցություն ՀՀ-ի հասարակական և քաղաքական կյանքին

Սոցիալ-մշակութային ադապտացիայի կարևոր բաղկացուցիչ է համարվում քաղաքական ադապտացիան, քանզի, դասակարգելով ըստ բովանդակության, առանձնացվում են ադապտացիայի հետևյալ տեսակները՝ ժողովրդագրական, մշակութային, քաղաքական, հոգեբանական, կրոնական, էկոլոգիական, տնտեսական, էթնիկ և այլն¹⁸⁵:

¹⁸⁵ Брылева 2017, 56.

Աշխատության սույն ենթաբաժնում կներկայացնենք սիրիահայերի հասարակական և քաղաքական ադապտացիայի առանձնահատկությունները:

Ընդհանրապես, սփյուռքահայ համայնքներն իրականացնում են հետևյալ հիմնական գործառույթները՝ էթնիկ մշակույթի պահպանում, զարգացում, ամրապնդում, էթնիկ խմբի սոցիալական իրավունքների պաշտպանություն, տնտեսական և քաղաքական գործառույթ: Սիրիայում ակտիվ գործունեություն են ծավալել ազգային քաղաքական կուսակցությունները՝ ՍԴՀԿ, ՌԱԿ և ՀՅԴԿ, որոնք համայնքային խնդիրների լուծման նպատակով համագործակցել են եկեղեցու հետ: Հիմնական գործող ուժերը քանակով մեծ դաշնակցականներն են և հնչակյանները, իսկ ռամկավարներն իրենց ակտիվությամբ երրորդ տեղում են: Սիրիայի քաղաքացիություն ստանալը¹⁸⁶ հասարակությանն ինտեգրվելու հարցում կարևոր նշանակություն ունեցավ հայերի համար. նրանք աստիճանաբար մասնակցեցին քաղաքական, ռազմական, տնտեսական, հասարակական, մշակութային զարգացումներին: Սիրիահայ համայնքի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների¹⁸⁷ վերլուծության միջոցով դուրս ենք բերել սիրիահայերի՝ մինչև պատերազմն առկա հասարակական-քաղաքական կյանքի ընդհանուր պատկերը.

1. Սիրիայում հայերն ապրել են որպես հավասար իրավունքներ ունեցող քաղաքացիներ, սակայն պետական մարմիններում և կառույցներում նրանց մասնակցությունը սահմանափակ է եղել: Նախընտրել են չգրադվել քաղաքականությամբ՝ հայապահպանության, գաղութի ներքին հարցերի կազմակերպմամբ զբաղված լինելու պատճառով¹⁸⁸:
2. Սիրիական պետությունը հայերին մեկ կամ երկու տեղ է հատ-

¹⁸⁶ 1924թ. հունիսի 12-ին Ազգերի լիգան սիրիահայերին տրամադրում է ինքնության վկայագրեր, նույն թվականի ամռանը՝ նաև Սիրիայի քաղաքացիություն, Փաշայան, Հարությունյան 2011, 11):

¹⁸⁷ Նույն տեղում, 39–126:

¹⁸⁸ Նույն տեղում, 47–48:

կացնում խորհրդարանում: Այդ քանակն ավելին է եղել, սակայն վերջին շրջանում նվազել է՝ պայմանավորված ժողովրդագրական գործոնով: Հայ պատգամավորն ընտրվել է մեծամասնական ցուցակով և համարվել Հայոց Բերիո թեմի առաջնորդարանի թեկնածու:

3. Սիրիահայերը զգալի ազատություններ են ունեցել Հայոց ցեղասպանության հարցերին անդրադառնալու առումով, սակայն զգուշավորություն են ցուցաբերել՝ գիտակցելով թուրք-սիրիական հարաբերությունների կարևորությունն այս հարցում: 1990-ականներին Սիրիայի և Թուրքիայի լարված հարաբերությունների պատճառով հնարավոր է եղել Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի մասին հրատարակել գիտագործնական արաբալեզու գրականություն: Սակայն, երբ երկկողմ հարաբերությունները կարգավորվել են, արաբերենով հակաթուրքական գրականության լույսընծայումը դարձել է անհնար: Դրանից հետո այս հարցերի շուրջ քարոզչական աշխատանքներն իրականացվել են բացառապես հայերենով և միայն հայ համայնքի համեմատաբար նեղ շրջանակներում¹⁸⁹:

Մեծ հաշվով, սիրիահայերը ապաքաղաքականացված են եղել, սակայն ստեղծված իրավիճակում՝ սիրիական իշխանության-ընդդիմության առճակատման համատեքստում, նրանք արդեն չեզոք չէին, ունեին իրենց դիրքորոշումը՝ աջակցել իշխող վարչակարգին՝ նրա մեջ տեսնելով ազգային գոյության և անվտանգության երաշխիքները:

Փաստորեն, Սիրիայում հայերը որդեգրել են իրենց՝ որպես սփյուռքի գործառնության առաջնահերթությունները՝ էթնիկ մշակույթի պահպանում ու զարգացում, սեփական սոցիալ-մշակութային միջավայրի ձևավորում, ընդունող երկրի տնտեսության զարգացման ոլորտում առավելագույն ներդրում, և հետո, անհրաժեշտության դեպքում, քաղաքական դիրքորոշումների հիմնավորված ձևակերպում: Հայտնվելով ՀՀ-ում՝ նրանք բախվում են այլ իրականության, հետևաբար, այլ

¹⁸⁹ Փաշայան, Հարությունյան 2011, 117:

առաջնահերթությունների ձևակերպման անհրաժեշտության հետ: Սիրիահայերի համար փոխվում է ոչ միայն մշակութային կյանքը, սոցիալական կենցաղն ու տնտեսական համակարգը, որում նրանք որոշակի դիրք էին զբաղեցնում և որոշակի կարգավիճակի կրողներ էին, այլև քաղաքական համակարգը: Արդյունքում, անխուսափելի է դառնում քաղաքական կյանքի վերաբերյալ որոշակի դիրքորոշումների ձևավորումը, վարքային մակարդակում դրանց արտահայտումը, մի խոսքով, նոր հասարակական-քաղաքական միջավայրին հարմարվելու գործընթացի մեջ մտնելը, որի ժամանակ նրանք կարող են կամ ինտեգրվել, կամ արտամղվել: Բիհևորիստներ Լ. Շաֆֆերը և Է. Շոբենը, ադապտացիան դիտարկելով խթան-ռեակցիա սխեմայի միջոցով, այն մեկնաբանում են որպես անհատական վարքային գործողություն, որի ժամանակ միջավայրի ազդեցությունը հանդես է գալիս որպես պատենշ՝ խանգարելով անհատին իրականացնել իր նպատակները: Մարդը հաջողությամբ ադապտացվում է, եթե հաղթահարում է բոլոր պատենշները՝ իր ուզածին հասնելու համար: Հակառակ դեպքում, նա համարվում է ապաստացված¹⁹⁰: Մեր կողմից մշակվել է սիրիահայերի՝ քաղաքական և հասարակական կյանքին հարմարվելու գործընթացի ուսումնասիրության ցուցիչներ, որոնք չափվել են նրանց հետ ձևայնացված հարցազրույցների ժամանակ:

Ըստ քանակական ցուցանիշների՝ սիրիահայերի կեսից ավելին չի հետաքրքրվում ՀՀ քաղաքական կյանքով, որում գրեթե հավասարաչափ ներգրավվածություն ունեն և՛ արական, և՛ իգական սեռի ներկայացուցիչները (տե՛ս աղյուսակ 9): Հարցը համադրելով տարիքի հետ՝ պարզ է դառնում, որ առկա է որոշակի միտվածություն. տարիքի աճին զուգահեռ փոքրանում է չհետաքրքրվողների թիվը. եթե 18–35 տարեկան սիրիահայերի շրջանում քաղաքականությամբ չհետաքրքրվողները 1.7 անգամ ավելին են հետաքրքրվողներից, ապա ավագ սերնդի ներկայացուցիչների մեջ՝ մոտ 1.5 անգամ (տե՛ս աղյուսակ 9):

¹⁹⁰ Самара 2004, 84–85.

Աղյուսակ 9.
**Սիրիահայերի հետաքրքրվածությունը ՀՀ քաղաքականությամբ՝
ըստ սեռի և տարիքի, %**

Հետաքրքրվածություն ՀՀ քաղաքականությամբ	Ընդհանուր	Ըստ սեռի		Ըստ տարիքի		
		Արական	Իգական	18-35	36-55	56 և բարձր
Այո	38.0	17.0	21.0	10.9	17.3	9.8
Ոչ	62.0	32.0	30.0	18.5	28.3	15.2
Ընդամենը	100.0	49.0	51.0	29.4	45.6	25.0

Հետաքրքիր ցուցանիշ է արձանագրել հարցի համադրությունը՝ Հայաստանում ապրելու ժամանակահատվածով պայմանավորված: Հայաստանի քաղաքական կյանքն առավելագույնս ակտիվ վիճակում է պահում առաջին տարում ժամանողներին, այսինքն՝ նորեկների կեսին՝ 50%: Այնուհետև կիսով չափ (24%) նվազում է նրանց հետաքրքրվածության մակարդակը՝ պայմանավորված նոր միջավայրում իրենց կենսագործունեության համար այլ առաջնահերթությունների ձևակերպմամբ՝ աշխատանքի, կենցաղային խնդիրների, ինչպես նաև կրթական և առողջապահական հարցերի կարգավորում: Ավելի վաղ եկողներն արդեն, փոքրիշատե հաղթահարելով նշված պատենշները, սկսում են հետաքրքրություն ցուցաբերել ընդունող երկրի քաղաքական համակարգի նկատմամբ՝ փորձելով դրա դրական և բացասական արտահայտումները գտնել իրենց առօրյա կյանքի վրա¹⁹¹:

Հետագայում սիրիահայերը, հնարավորություն ունենալով վարքային մակարդակում արտահայտելու իրենց վերաբերմունքը քաղաքական գործընթացների նկատմամբ, պասիվություն են դրսևորում: Օրինակ, 2013թ. նախագահական ընտրությունների ժամանակ, չնայած որ նրանց մոտ 2/3-ը (68%-ը) հնարավորություն չի ունեցել մասնակցել ընտրություններին՝ քաղաքացիություն չունենալու կամ այլ պատճառներով, այնուամենայնիվ, իրական ընտրողների կեսից ավել-

¹⁹¹ Հակոբյան 2016թ, 52:

լին չի մասնակցել ընտրություններին: Այս զանգվածի մեջ գերակշիռ մաս կազմում են կանայք: Հարցը համադրելով զբաղվածության գործոնի հետ՝ տեսնում ենք, որ այն ևս նշանակալի ազդեցություն ունի սիրիահայերի քաղաքական ակտիվության վրա: Տնտեսապես ոչ ակտիվ զանգվածը, որի մեջ մտնում են գործազուրկները, տնային տնտեսուհիներն ու թոշակառուները, հանդես է գալիս նաև քաղաքականապես ոչ ակտիվ դերում: Ընտրություններին չմասնակցողների մեջ նրանք գրեթե երկու անգամ ավելին են, քան տնտեսապես ակտիվ զանգվածը, որի մեջ ներառված են տարբեր ոլորտներում աշխատող սիրիահայերը, ինքնազբաղվածներն ու ուսանողները:

Սիրիահայ համայնքում գործող բազմաթիվ միություններին անդամակցությունը դադարեցնելով՝ հայաստանյան միջավայրում նրանց կենսագործունեությունը ենթարկվում է որոշակի փոփոխությունների՝ կարևոր դարձնելով քաղաքական և հասարակական կառույցներում ներգրավվելու հարցը: Հարցվողների 14%-ը կուսակցական պատկանելիություն ունի (տես աղյուսակ 10), ընդ որում, պատկանելիությունը ենթադրում է ինչպես Սիրիայում, այնպես էլ Հայաստանում ֆորմալ անդամակցություն այս կամ այն կուսակցությանը:

Աղյուսակ 10.

Սիրիահայերի կուսակցական, հասարակական, քաղաքացիական ակտիվությունը՝ ըստ սեռի (%)

Ակտիվության ձևերը	Պատկանելիություն		Ընդամենը	Սեռը		Ընդամենը
	Այր	Ոչ		Արական	Իգական	
Կուսակցական պատկանելիություն	14.0	86.0	100.0	69.2	30.8	100.0
Հասարակական կառույցին պատկանելիություն	8.0	92.0	100.0	85.7	14.3	100.0
Քաղաքացիական ակտիվություն (ցույցեր, նախաձեռնություններ)	5.0	95.0	100.0	80.0	20.0	100.0

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 10-ի տվյալներից, սիրիահայերի շրջանում որևէ կուսակցության անդամակցելու հարցը սերտորեն կապ-

ված է սեռի հետ. կուսակցական պատկանելիություն ունեցողների մեջ երկու երրորդից ավելին տղամարդիկ են: Փաստորեն, սիրիահայ համայնքում ևս քաղաքական դաշտում կանանց ներգրավվածությունը եթե չի արգելվում, ապա չի էլ խրախուսվում: Սակայն գործող ավանդական կուսակցություններում կանանց անդամակցությունը չի սահմանափակվում միայն քաղաքական գործունեությամբ, նրանք նաև մեծածավալ բարեգործական աշխատանքներ են կատարում համայնքի համար:

Քաղաքացիական ակտիվության, ցույցերի, հասարակական նախաձեռնությունների դեպքում ակտիվություն ցուցաբերողները հարյուրի մեջ ընդամենը հինգն են, իսկ նրանց մեջ տղամարդիկ չորս անգամ ավելի շատ են կանանց համեմատ: Հասարակական կառույցներին անդամակցելու հարցում ևս տեսնում ենք սիրիահայ տղամարդկանց գերակայությունը կանանց նկատմամբ: Այս տվյալները թույլ են տալիս խոսել այն իրականության մասին, որ կանայք արտամղված են հասարակական և քաղաքական կյանքից: Թեպետ տվյալները Հայաստանում անցկացված հետազոտությունից են, սակայն դրա նախապատմությունը գալիս է Սիրիայից, որտեղ հայ համայնքում ընդունված չէ կնոջ՝ տնից դուրս աշխատելը¹⁹², հասարակական-քաղաքական գործունեությամբ զբաղվելը՝ մեծամասամբ պայմանավորված այլ կրոնական և էթնիկ միջավայրում ապրելու հանգամանքով:

Սակայն հարկ է նշել նաև, որ իրավիճակը որոշակի փոփոխության ենթարկվեց 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած համազգային շարժման օրերին՝ ոչ միայն մեծացնելով սիրիահայերի ակտիվության մակարդակը, այլև տղամարդկանց հետ միասին կանանց մասնակցության ցուցանիշը: Բացի այդ, նոր կառավարության ձևավորումից հետո նաև սիրիահայերը ներգրավվեցին, օրինակ, ՄՆ և այլ գերատեսչությունների մեջ, ինչը մեծ ոգևորություն առաջացրեց համայնքում:

Սիրիահայերի կուսակցական պատկանելիության հարցը քննարկել ենք մի քանի ցուցիչների հետ կապի մեջ՝ փորձելով պարզել՝ ար-

¹⁹² Акопян 2015, 175.

դյո՞ք այն որևէ դերակատարություն ունի նրանց հետագա գործողությունների մեջ հասարակական և քաղաքական ակտիվության համատեքստում (տե՛ս աղյուսակ 11):

*Աղյուսակ 11.
Քաղաքական կուսակցություններին պատկանող սիրիահայերի ակտիվությունը (%)*

Ակտիվության ձևերը	Այո	Ոչ	Ընդամենը
Հետաքրքրվածությունը ՀՀ քաղաքականությամբ	54.0	46.0	100.0
Մասնակցությունը 2013 թ. ընտրություններին	50.0	50.0	100.0
Քաղաքացիական ակտիվությունը	31.0	69.0	100.0
Անդամակցությունը հասարակական կառույցին	23.0	77.0	100.0

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ կուսակցական պատկանելիություն ունեցող սիրիահայերի մեջ ավելի շատ են ՀՀ քաղաքականությամբ հետաքրքրվողները՝ 54%: Միևնույն ժամանակ, բավականին մեծ թիվ է կազմում կուսակցական, բայց ՀՀ քաղաքականության նկատմամբ անտարբեր զանգվածը: Հիմնական պատճառն այն է, որ Սիրիայում կուսակցությունները մեծամասամբ ազգապահպան գործառույթներ են իրականացրել՝ իրենց շուրջ ձևավորված ներհամայնքային կառույցներով, ի տարբերություն Հայաստանի, որտեղ դրանք կարևոր դերակատարում ունեն քաղաքական գործընթացներում՝ երկրի իշխանության համար պայքարելու, այն իրականացնելու և վերահսկելու գործառույթներ իրականացնելով: Այդ փաստն էլ հենց շատերի համար քաղաքական անտարբերության պատճառ է դառնում:

Ընտրություններին մասնակցության հարցում ստացել ենք հավասար զանգվածներ՝ կուսակցական պատկանելիություն ունեցող սիրիահայերի ուղիղ կեսն է մասնակցել ՀՀ 2013 թ. նախագահական ընտրություններին: Սակայն այս առումով ևս կարող ենք արձանագրել նրանց կողմից քաղաքական գործընթացների նկատմամբ անտարբերության փաստը, քանզի, ըստ ՀՀ-ում ձևավորված քաղաքական մշակույթի, կուսակցություններին անդամակցությունը ենթադրում է

առավելագույն մասնակցություն երկրում տեղի ունեցող ցանկացած մակարդակի ընտրություններին: Քաղաքացիական ակտիվության և հասարակական կառույցներին անդամակցության պարագայում էլ նկատում ենք, որ նվազում է կուսակցական սիրիահայերի ակտիվությունը՝ առաջին դեպքում հասնելով մոտ մեկ երրորդ (31%), իսկ երկրորդ դեպքում՝ մոտ մեկ չորրորդ (23%) հարաբերակցության: Տվյալներից ելնելով՝ կարող ենք փաստել, որ ՔԿ պատկանելիությունը չի ենթադրում ՀԿ-ներին անդամակցություն, առավել ևս, քաղաքացիական նախաձեռնության կամ ինչ-որ ցույցերի պարտադիր մասնակցություն:

Այսպիսով, Սիրիայի քաղաքական կյանքում հայերը համեմատաբար ոչ ակտիվ դերակատարություն են ունեցել՝ պայմանավորված նրանց գործառնության առաջնահերթություններով: Տեղափոխվելով Հայաստան և հայտնվելով այլ հասարակական-քաղաքական միջավայրում՝ նրանք կանգնած են այդ միջավայրին հարմարվելու անհրաժեշտության առջև, այլապես, քաղաքական հետաքրքրվածության պակասը/բացակայությունը, հասարակական-քաղաքական գործընթացներին չմասնակցելու միտվածությունը նրանց զրկում են ՀՀ լիիրավ քաղաքացիներ լինելու և զգալու հնարավորությունից: Նշենք, որ կուսակցական պատկանելիություն ունեցող սիրիահայերը համեմատաբար ակտիվ խումբ են համարվում՝ նախ Հայաստանի ներքաղաքական անցուդարձի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելով, ընտրություններին մասնակցելով, իսկ հեղափոխության օրերին նաև ցույցերին, քաղաքացիական նախաձեռնություններին մասնակցելով:

2.4. Կրթության դերը սիրիահայերի ինտեգրման գործընթացում

Կրթությունը վճռորոշ տեղ է զբաղեցնում սիրիահայերի կյանքում՝ ոչ միայն անհրաժեշտ հմտություններ կուտակելու, հետագայում լավ աշխատանք ու ապագա ունենալու, այլև հայ հասարակությանն ինտեգրվելու տեսանկյունից: Կրթության ոլորտում սիրիահայերի ինտեգրումը կքննարկենք Հ.Էսսերի և Ֆ.Հեկմանի առաջարկած տիպա-

բանության շրջանակներում, մասնավորապես, կառուցվածքային ինտեգրման, որը ենթադրում է սիրիահայերի ներառում հայաստանյան կրթական համակարգ, մշակութային ինտեգրում, որի ժամանակ նրանք յուրացնում են հայ հասարակության լեզուն ու սովորույթները, սոցիալական ինտեգրում, որի դեպքում խոսքը վերաբերում է այս համակարգում փոխադարձ շփումների մասին¹⁹³:

*Աղյուսակ 12.
Կրթական հաստատություններ հաճախող սիրիահայերը
(այդ պատասխանները, %)*

Կրթական հաստատություններ	Հաճախում
Պետական մանկապարտեզ	42.5
Մասնավոր մանկապարտեզ	2.0
Պետական դպրոց	34.0
Մասնավոր դպրոց	0.0
Ուսումնարան, քոլեջ	2.0
Պետական բուհ	13.0
Մասնավոր բուհ	2.0

Կրթական համակարգում ինտեգրումը սկսվում է մանկապարտեզներից, և ըստ հետազոտության արդյունքների՝ մեծ թիվ են կազմում այն ընտանիքները, որոնց երեխաները հաճախում են համապատասխան կրթական հաստատություններ, այս դեպքում՝ պետական և մասնավոր մանկապարտեզներ (համապատասխանաբար, 42.5%, 2.0%, տես աղյուսակ 12): Կարող ենք ասել, որ ֆինանսական տեսանկյունից գրեթե խնդիր չի առաջանում պետական մանկապարտեզ հաճախելիս, քանզի այդ հաստատության հետ առնչվող սիրիահայերի 94%-ը նշել է, որ դժվար չէ հոգալ երեխաների կրթական ծախսերը: Բացի պետական և մասնավոր մանկապարտեզներից, գործել են նաև տարբեր կենտրոններ՝ նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ինտեգրմանը նպաստելու համար¹⁹⁴:

¹⁹³ Esser 2004, 1126–1159; Heckmann, Bosswick 2005, 9.

¹⁹⁴ 1.Ամառային նախադպրոցական կենտրոն Սիրիայից եկած երեխաների հա-

Երբ մեծ թվով սիրիահայեր ապաստան գտան ՀՀ-ում, 2012 թ. կառավարությունը որոշակի աշխատանքներ նախաձեռնեց հանրակրթության կազմակերպման ուղղությամբ: Նկատենք, որ 2014 թ. տվյալներով՝ ընտանիքների 34%-ն ունեցել է դպրոցահասակ երեխաներ: Նրանցից շատերը, որոշելով ապագան կապել Հայաստանի հետ, մտածել են երեխաներին կրթության տալու մասին: 2012 թ. ուսումնական գործընթացի նախաշեմին կրթության կազմակերպման երեք տարբերակ է առաջարկվել ԿԳՆ կողմից.

1. Սիրիահայ երեխաները սովորեն հայկական դպրոցում, որի նպատակով Երևանի Սո. Շահումյանի անվան թիվ 1 դպրոցում բացվել են արևելահայերենի ուսուցման արագացված կուրսեր:
2. Դպրոցների որոշ դասարաններում իրականացվեն արևմտահայերենի ուսուցում: Որոշվել է, որ դասագրքերն ու կրթական ծրագրերը բերվեն Սիրիայից, իսկ երեխաներին դասավանդեն այնտեղից եկած ուսուցիչները՝ գործընթացում ներգրավելով նաև համապատասխան որակավորում ունեցող արևմտահայերենի մասնագետներ:
3. Սիրիական դասարաններ ստեղծվեն և կրթությունը շարունակվեն սիրիական ծրագրով՝ համադրելով հայկականի հետ: Նման ծրագրով պետք է սովորեին այն աշակերտները, որոնք մտադիր են հետագայում վերադառնալ Սիրիա¹⁹⁵:

Արդյունքում, Երևանի Նար-Դոսի անվան թիվ 14 հիմնական դպրոցում բացվում է սիրիահայ երեխաների համար նախատեսված «Կիլիկեան» դպրոցը: Արաբերենով դասավանդվող դպրոցում 2012–

մար, որը գործել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ և ֆինանսավորմամբ, 2. Խմբակ 5–6 տարեկան տեղացի և սիրիահայ երեխաների համար Երևանի թիվ 1 և 21 դպրոցներում, որը գործել է օրական չորս ժամ՝ առանց սննդի և հանգստյան ժամի տրամադրման. ծառայությունն իրականացրել է «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչությունը (ՄԱԿ ՓԳՀ մտահոգության առարկա հանդիսացող անձանց աջակցություն տրամադրող կազմակերպությունների ուղեցույց, 56–57):

¹⁹⁵ Աղբյուրը՝ tert.am, 2012:

2013 ուսումնական տարում սովորել են 1–9-րդ դասարանի 265 սիրիահայ երեխաներ, դասավանդել են Սիրիայից եկած ուսուցիչներ, բազմացվել և աշակերտներին տրվել են համապատասխան դասագրքեր: Դպրոցի ստեղծումը նախաձեռնել է Սիրիայում գործող «Կիլիկիա» ԲԿՂ, ֆինանսապես աջակցելու խնդիրը ստանձնել է նաև ՄԴՀ կուսակցությունը: Սակայն դպրոցը 2013թ. ուսումնական տարվանից այլևս չի գործել՝ հիմքում ունենալով ոչ միայն ֆինանսական, այլև իրավական պատճառներ, որոնք բացահայտվեցին մեր ուսումնասիրության ընթացքում: Մեջբերենք փորձագիտական հարցազրույցից մի հատված. «Նրանք (Կիլիկեան դպրոցը) չունեին սեփական կնիքը, որ կարողանային արեստիտներ տրամադրել և այլն: Դրա համար խորհուրդ տրվեց, որ մեր դպրոցի շրջանակում ինտեգրվի այդ վարժարանը: Ճիշտն ասած, մենք սկսեցինք դա հարթ կատարել, բայց, ըստ երևույթին, այն, որ ինքը չէր կոչվելու փնտրեն, դուր չեկավ հատկապես փնտրենին: Ու կարծես ինքը կազմակերպեց, որ դպրոցը փակվի» (փորձագետ, թիվ 14 դպրոցի փոխտնօրեն)¹⁹⁶: Սակայն, «Կիլիկեան» դպրոցի նախկին տնօրենի հետ հարցազրույցից էլ պարզ դարձավ, որ այն ի սկզբանե ժամանակավոր ծրագիր է եղել, իսկ ֆինանսավորումը՝ նախատեսված ընդամենը մեկ տարվա համար:

Վարժարանի փակվելուց հետո, նպատակ հետապնդելով բազային գիտելիքներ ապահովել Սիրիա վերադարձող երեխաների համար, սկզբում՝ որպես ուսումնական ծրագրի մաս, հետո՝ արտադասարանական խմբակի տեսքով չորս տարի շարունակ թիվ 14 դպրոցի տարրական դասարաններում ուսուցանվել է արաբերեն: 2013 ուսումնական տարվանից սկսած աշակերտները հեռացել են տարբեր ուղղություններով: Ըստ փորձագետի գնահատականի՝ նրանց մի մասը մեկնել է Հայաստանից, մյուս մասը՝ տեղափոխվել Երևանի տարբեր դպրոցներ (երեխաներին մեկ տարի անընդմեջ դպրոց հասցնող տրանսպորտային միջոցն այլևս չի գործել՝ ֆինանսավորման բացակայության պատճառով): Էլեկտրոնային աղբյուրներից տեղեկանում

¹⁹⁶ Հակոբյան, ԴԱՆ, 2018:

ենք, որ 2013թ. մարտ ամսվա դրությամբ Երևանի հանրակրթական դպրոցներում սովորել են 231 սիրիահայ երեխաներ¹⁹⁷:

Հանրակրթության մատչելիության ապահովմանն ու կրթության աջակցությանն ուղղված բազմաթիվ ծրագրերի իրականացման և կենտրոնների բացման հետ մեկտեղ¹⁹⁸ երեխաների կրթական ինտեգրումն ապահովելու նպատակով արտադասարանային պարապմունքներ են կազմակերպվել նաև մի շարք դպրոցներում: Մասնավորապես, փորձագետը նշում է, որ առաջին տարվանից առ այսօր, և հատկապես, երբ նոր աշակերտներ են ընդունվում դպրոց, ուսուցիչները պարապում են նրանց հետ, որպեսզի կարողանան հաղթահարել մաթեմատիկայից, ռուսերենից և այլ առարկաներից գիտելիքի ձեռքբերման, արևելահայերենի ընկալման դժվարությունները: Չնայած ուսուցիչները ոչ միշտ են ֆինանսական փոխհատուցում ստանում դրա դիմաց, սակայն, տեսնելով սիրիահայ երեխաների հաջողություններն ու կրթական համակարգում ինտեգրվելու քայլերը, գոհանում են իրենց աշխատանքի արդյունքից: Եթե սիրիահայ շրջանավարտը դպրոցն

¹⁹⁷ Աղբյուրը՝ tert.am, 2013:

¹⁹⁸ 1) «Երեխան երեխային» ծրագիրը (իրականացնող՝ «Սեյլ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչություն) նախատեսված է դպրոցականներին՝ իրենց դպրոցի շրջանակներում համախմբելու և մոբիլիզացնելու համար: Ծրագիրը միտված է հաղթահարելու և վերացնելու անհանդուրժողական վերաբերմունքը սիրիահայ երեխաների նկատմամբ իրենց հասակակիցների կողմից: 2) «Սիրիահայ երիտասարդները հանուն ժողովրդավարական ավելի լավ ապագայի» երիտասարդական մասնակցության ծրագիրը նպատակ ունի հզորացնել Երևանում բնակվող սիրիահայ երիտասարդների գիտելիքները և կարողությունները՝ ձեռնարկելու գլոբալ նախաձեռնություններ և կառուցելու ժողովրդավարական ավելի լավ ապագա: 3) Սիրիայից տեղահանված ֆիզիկական և մտավոր հաշմանդամության խնդիրներով անձանց համար նախատեսված «Արևիկ» կրթական կենտրոնը անվճար հիմունքներով աջակցում է կրթություն ստանալուն՝ խոսքի զարգացում, թվաբանություն, թատրոն-թերապիա, երգ, մարմնամարզություն և հայերենի ուսուցում: Այս և նախորդ ծրագիրն իրականացվում է «ՀԱԼԷՊ» ՀՀԿԿ-ի կրթության աջակցության շրջանակներում: 4) Արտադասարանային աշխատաժողովների կազմակերպում, կանխիկ գումարի տրամադրում ՀԿԽԸ-ի կողմից՝ սոցիալապես խոցելի սիրիահայ երեխաներին դպրոցական պարագաներ գնելու համար: 5) Գրենական պիտույքների հավաքածուների տրամադրում դպրոցականներին: Աջակցությունը տրամադրվում է «Արմենիան Լայթհաուս» հայ-ամերիկյան ԲՀ-ի և «ՍՕՍ» մանկական գյուղեր ՀՀ-ի կողմից (ՄԿ ՓԳՀ մտահոգության առարկա հանդիսացող անձանց աջակցություն տրամադրող կազմակերպությունների ուղեցույց, 53–57):

ավարտելիս թերանում է արևելահայերեն գրելու մեջ՝ ունակությունները հասցնելով բավարարի, ապա նրա բանավոր խոսքն այնքան է զարգանում, կատարելագործվում, որ «ապշեցնում» ու «հիացնում է» ուսուցչական անձնակազմին:

2012 թ. ՀՀ կառավարությունը նոր քաղաքականություն է մշակում նաև սիրիահայ ուսանողների կրթության մատչելիությունն ապահովելու նպատակով: Ինչպես տեսանք աղյուսակ 12-ի տվյալներից, սիրիահայ ընտանիքների 13%-ն առնչվում է պետական ԲՈՒՀ-երի հետ: Նկատենք նաև, որ հարյուրից երկու ընտանիքներում երիտասարդները հաճախում են մասնավոր հաստատություններ և նույնքան երիտասարդներ՝ ՄՄՈՒՀ-ներ: ՀՀ ԿԳՆ-ի կողմից հրահանգ է եղել, որպեսզի օբյեկտիվ, բայց հնարավորինս պարզեցված անցկացվի սիրիահայ դիմորդների ընդունելությունը ԲՈՒՀ¹⁹⁹: ՀՀ ԲՈՒՀ-երի նախապատրաստական բաժիններում սովորողների համար սահմանվել է ուսման վարձավճարի 50% զեղչ, իսկ ուսանողների ուսման վարձավճարի չափը 2012–2013 ուսումնական տարում սահմանվել է ՀՀ քաղաքացիների համար սահմանված վարձավճարի չափով: Բացի այդ, ՀԲԸՄ-ը, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը և ՀՀ կառավարությունը փոխհատուցել են Հայաստանի ԲՈՒՀ-երում և ՄՄՈՒՀ-ներում սովորող 280 սիրիահայ ուսանողների 2013–2014 տարեշրջանի ուսման վճարները՝ յուրաքանչյուրը մինչև 1/3-ի չափով²⁰⁰: 2016–2017 թթ. նույն ծրագրով փոխհատուցվել է 436 սիրիահայերի ուսման վարձավճարների 70%-ը, 2018–2019 թթ.՝ 294 ուսանողների վարձավճարների 50%-ը: 2019–2020 ուսումնական տարում նախատեսվել է վարձը փոխհատուցել միայն 40%-ով²⁰¹: Կրթաթոշակներ են տրամադրվել/տրամադրվում նաև «Հա-

¹⁹⁹ Աղբյուրը՝ aravot.am, 2012:

²⁰⁰ Աղբյուրը՝ a1plus.am, 2013:

²⁰¹ Հովյան, Սիրիահայերի հիմնախնդիրները Հայաստանում, Հասանելի է՝ <https://orbeli.am/hy/post/246/2019-07-10/%D5%8D%D5%AB%D6%80%D5%AB%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%20%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4> 04.09.2020:

յաստան» համահայկական հիմնադրամի, Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերության կողմից²⁰²: Որոշում է կայացվել նաև ուսանողական հանրակացարաններում առաջնահերթության կարգով համապատասխան սենյակներ ապահովել սիրիահայ ուսանողների համար²⁰³: 2018–2022 թթ. ՀՀ ռազմավարության մեջ դեռևս առկա կրթական խնդիրների լուծման համար ևս ուղենիշներ էին սահմանվել²⁰⁴:

Հետազոտության շրջանակներում բացահայտել ենք նաև սիրիահայերի՝ կրթության ոլորտում ունեցած խնդիրները, սակայն ոչ այնքան ֆինանսական, որքան կրթական ծրագրերի տարբերության, լեզվական առանձնահատկությունների և նոր միջավայրին հարմարվելու դժվարությունների առումով: Հայաստանի և Սիրիայի կրթական համակարգերը տարբեր են մի շարք առումներով: Նախ, որոշ առարկաներ նորություն են երեխաների համար, օրինակ, ռուսաց լեզուն: Դպրոցական ծրագրից դուրս կազմակերպվող դասընթացներն ամբողջությամբ չեն կարող լուծել խնդիրը, քանզի դրանք ոչ միայն կանոնավոր և համատարած չեն, այլ նաև, ըստ քանակական ցուցանիշների, քչերն են կամքի ուժ ցուցաբերում՝ պահանջված գիտելիքները յուրացնելու համար (ՀՀ կառավարության և այլ կառույցների կողմից կազմակերպած արևելահայերենի դասընթացներին հարցմանը մասնակցած սիրիահայերից մասնակցություն է ունեցել միայն հարյուրից մեկը, ռուսերենի և անգլերենի դասընթացներին՝ 1/5 մասը): Բնագիտական առարկաների պարագայում դրանց գիտական լեզուն անհասկանալի է երեխա-

²⁰² ՄԱԿ ՓԳՀ մտահոգության առարկա հանդիսացող անձանց աջակցություն տրամադրող կազմակերպությունների ուղեցույց, 53–54:

²⁰³ Աղբյուրը՝ a1plus.am, 2012:

²⁰⁴ 1. Տեղահանված անձանց լեզվամշակութային ադապտացիայի խնդիրների լուծմանն աջակցությունը, 2. Առկա աղբյուրների սահմաններում մասկապարտեզների սահմանափակ կարողությունների հզորացումը նախադպրոցական տարիքի երեխաների համար, 3. Դպրոցական տարիքի երեխաների համար միջնակարգ կրթության, իսկ դիմորդների և ուսանողների համար բարձրագույն կրթության մատչելիության ապահովումը «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018–2022 թթ. ռազմավարություն», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/679/about> 25.05.2019:

ների մեծ մասին, ինչն էլ հետագայում խոչընդոտ է դառնում սիրիահայերի համար՝ մասնագիտանալու այդ ուղղությամբ: Հումանիտար առարկաները չնայած հասկանում, սակայն դժվարությամբ են վերաշարադրում, իսկ մեծ ծավալներով դասանյութի յուրացումն արդեն լուրջ խնդիր է արևելահայերենին վատ տիրապետող սիրիահայ երեխաների և նրանց ծնողների համար: Եթե ծնողներից կամ ընտանիքի անդամներից մեկը ժամանակին կրթություն է ստացել Հայաստանում, ապա հարցը հեշտությամբ լուծվում է. «Ո՛չ մեզ մօտ՝ ես, ամուսինս կամ քոյրս, որ այստեղ եկել, սովորել է, ո՛չ էլ երեխաներս, այսինքն՝ աղջիկս էլ, փղաս էլ, ոչ մէկ դժուարութիւն չեն ունեցել լեզուական: Ո՛չ էլ թոռնիկս, որ եկաւ ու այստեղ առաջին դասարան ընդունուեց: Եւ շատ լաւ սովորում է, եւ շատ լաւ յարմարուել է: Մենք չունենք էդ հարցը, որովհետեւ, նախ, լաւ հայերէն ենք խոսում, երկրորդ՝ օտար չէ մեզ. հեռուստատեսութեամբ, գրքերով եւ այլն միշտ էլ կապ եղել ա արեւելահայերէնի հետ» (62 տ. կին, ք. Երևան)²⁰⁵:

Սիրիականից տարբեր է նաև հայաստանյան բուհական ծրագիրը, ինչն էլ մտահոգության առարկա է դառնում հատկապես կրթության որակի, արդյունավետության գնահատման համատեքստում: «Տղայիս ուսումը արաբերէն էր համալսարանում: Երրորդ կուրս վերջացուց, եկաւ հոս ալ երրորդ կուրս նստաւ: Ինք ասում էր՝ հոս, որ հիմա երրորդ կուրս անցնում ենք, առաջին կուրսի մեջ եղել է: Սուրիան հիմա շատերը կը համարեն յետամնաց երկիր, արաբական երկիր: Բայց ո՛չ. Սուրիան տարբերում է բոլոր արաբական աշխարհի երկրներից: Իր ամբողջ ուսանողական համակարգը, «սիստեման», ստանդարտները կամ ֆրանսիական են, կամ ամերիկեան, կամ գերմանական, կամ անգլիական, եւ ոչ ռուսական, երբեք ո՛չ ռուսական» (56 տ. տղամարդ, ք. Երևան)²⁰⁶:

Ըստ սիրիահայերի՝ Հայաստանում կրթության համեմատաբար բարձր մակարդակ ապահովում են արևմտյան կրթական համակարգով աշխատող բուհերը, ինչն էլ բավարարում է որակյալ կրթություն

²⁰⁵ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

²⁰⁶ Նույն տեղում:

ստանալու նրանց պահանջմունքը՝ միաժամանակ լուծելով լեզվական խնդիրը: «...Այնպեղ էլ էր անգլերէն լեզուով, եւ շար գոհ եմ: Ես Բեյրութ եղած եմ, Մոսկուայի համալսարաններէն ալ քիչ մը գաղափար ունիմ, այսպեղի Ամերիկեան համալսարանը գրեթէ բանով մը չի պակսիր միւս ամերիկեան որեւէ քաղաքի համալսարաններէն: Միայն սկիզբը, որ եկաւ, քիչ մը արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի դժուարութիւն ունեցաւ, բայց հիմա արդէն իրենց պէս արեւելահայերէնը բաւական չափով կը խօսի» (71 տ. տղամարդ, ք. Երևան)²⁰⁷: Կրթության արդյունավետության ցուցանիշ է դիտարկվում նաև գիտելիքի ստուգման հարցում ուսուցիչների, դասախոսների օբյեկտիվ մոտեցումը, որը թույլ է կամ շատ դեպքերում բացակայում է: Պատճառը ստեղծված իրավիճակում սիրիահայ աշակերտներին և ուսանողներին ինչ-որ կերպ օժանդակելու նրանց ցանկությունն ու պատրաստակամությունն է, ինչը հակառակ արդյունքի է հանգեցնում՝ արհեստական գնահատականներով «խաբելով» նրանց գիտելիք ստանալու գործընթացի մեջ: Այս առումով դիպուկ է հատկապես հարցվողներից մեկի խոսքերը. «Քիչ մը՝ որպէս սուրիացի, խղճալու, մեղքնալու դէպքեր եղեր են, բայց քիչ մըն ալ էրի ժխտական ազդեցութիւն կը թողնի՝ ամենաթողութիւն կը սրեղծէ: Հիմա ես շար ընկերներ ունիմ, որ ունին աշակերտներ՝ 9-րդ, 11-րդ, 6-րդ, ամեն դասարանէն: Ուրախ են փոքրերը: Ասում եմ՝ ինչու՞ ուրախ էք, ասում են՝ մեզի շար դաս չկայ: Մէջները թուլութիւն սպեղծել են, ընծայել են իրենց, որ իբր իրենք շար դժուարութիւն ունեցեր են լեզուն ընկալելու հարցում, ոչինչ, որ քիչ մը չեն սորվիր: Թերանան՝ իմաստ մը չունի: Բայց դա լաւ չէ, ժամանակի կորուստ է» (56 տ. տղամարդ, ք. Երևան)²⁰⁸: Նույն խնդրին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամն իր զեկույցում՝ նշելով, որ դրական խտրականության այդ դրսևորումները երկարատև հեռանկարում բացասական ազդեցություն կարող են ունենալ սիրիահայ երեխաների կրթական մակարդակի և, ընդհանուր առմամբ, ապագայի վրա²⁰⁹:

²⁰⁷ Նույն տեղում:

²⁰⁸ Նույն տեղում:

²⁰⁹ Assessment of the Situation of Asylum Seeking, Refugee and Displaced Children in

Դպրոցական և համալսարանական միջավայրն անփոխարինելի միջոց է սիրիահայ պատանիների ու երիտասարդների համար՝ ոչ միայն հայեցի կրթվելու, այլև հայաստանցիների հետ շփվելու, լեզվական առանձնահատկություններին ծանոթանալու, մի խոսքով, նոր միջավայրին ադապտացվելու գործընթացում: Ընդհանրապես, նրանց կրթական ինտեգրման հարցը շատ կարևոր է, քանզի դրա հաջող ընթացքը սիրիահայ ընտանիքների՝ Հայաստանում մշտական բնակություն հաստատելու որոշում կայացնելու կարևոր գրավականներից է: Սոցիոլոգ Պարսոնսը, օգտագործելով «ադապտացիա» և «սոցիալական միջավայր» հասկացությունները, նշում է, որ մարդ ամեն անգամ փոխազդեցության մեջ է մտնում ոչ թե ամբողջ հասարակության, այլ դրա մի մասի հետ: Ըստ հեղինակի տեսության՝ ադապտացիան մեկնաբանվում է որպես անհատի և սոցիալական միջավայրի փոխադարձ սպասումների հավասարակշռություն, հետևաբար, նրա հավասարակշիռ հասարակության հայեցակարգը կայանում է անհատի և սոցիալական միջավայրի պահանջմունքների հավասարակշռության մեջ, որը տեղի է ունենում անհատի կողմից տվյալ միջավայրում գերակշռող կարևոր սոցիալական նորմերի յուրացման գործընթացում: Եթե կա հավասարակշռություն, հասարակությունը կայուն է, իսկ եթե չկա, ապա առկա է սոցիալական կոնֆլիկտ²¹⁰: Սիրիահայերի դեպքում կարող ենք ասել, որ դպրոցում և համալսարանում տեղի է ունենում երկու տարբեր մշակույթների բախում, որը, մի կողմից, կարող է բերել այն կրողների՝ միմյանց ճանաչման և ընդունման, մյուս կողմից, օտարման, մեկուսացման ու ներքին կոնֆլիկտի: Մեր հետազոտության արդյունքները ևս վկայում են երկու երևույթների մասին, որոնք տարբեր մակարդակներով առկա են կրթական միջավայրում. *«Դպրոցում շափ լաւ են վերաբերում: Առաջին տարին մեծ աղջիկս 11-րդ էր, վերջին զանգ արեցին: Ես քանի մը պարեր սովորեցրի, ատելի*

Armenia, 2016, 38. <https://www.unicef.org/armenia/media/2571/file/Assessment%20of%20the%20situation%20of%20asylum%20seeking,%20refugee%20and%20displaced%20children%20in%20Armenia.pdf>

²¹⁰ Парсонс 1997, 15-16.

մօտ էի իրանց հետ: Էդպէս որեւէ մէկ բան չկար: Շատ էլ լաւ վերաբերմունք կար ոչ միայն իմ երեխային, որ ես պարուսոյց եմ, այլ բոլորին. 25–30 սուրիահայ կար: Ուսուցումը արեւելահայերէն էր. ես առաջին օրէն իմ երեխաներուն չտուի սուրիական դպրոց: Սկզբում, ճիշդ է, դժուարացան, բայց վերջը՝ ընտելացան: Նորմալ ա, էլի, էդպէս էլ պէտք է լինէր» (49 տ. սողամարդ, ք. Երևան)²¹¹: «Ինչ որ կը զգամ՝ շփումները քիչ կ'ըլլան տեղացիներու հետ: Ինչուն չեմ գիտեր, բայց այդպէս կը զգամ: Երեւի պէտք է հոն ըլլամ, որ գիտնամ պատճառը, բայց ընդհանրապէս՝ իբր երեւոյթ, կը զգամ, որ էդ շփումը չկայ սփիւռքի աշակերտութեան եւ տեղացիներու միջեւ» (58 տ. կին, ք. Երևան)²¹²:

Փորձելով ամփոփել առաջադրված խնդրի վերլուծությունը՝ նշենք, որ 2012 թ. ի վեր որոշակի քայլեր են իրականացվել սիրիահայերի կրթական ինտեգրմանը խթանելու համար՝ «Կիլիկեան» դպրոցի բացում, որը գործել է ընդամենը մեկ ուսումնական տարի, երեխաների ներգրավում նախադպրոցական և հանրակրթական հաստատություններ, ԲՈՒՀ ընդունվելու դյուրին քայլերի մշակում, բուհական համակարգում ուսման վարձավճարների զեղչման քաղաքականություն, արագացված դասընթացների կազմակերպում, Սիրիայում ստացած տասներկուամյա կրթության վկայականների և համալսարանական դիպլոմների փոխման աշխատանքներ: Նշված ծրագրերն իրականացվել են պետական գերատեսչությունների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների մակարդակում: Այդուհանդերձ, կարող ենք արձանագրել, որ կրթության ոլորտում առկա քաղաքականությունը ևս կրում էր իրադարձային բնույթ՝ ուղղված առաջնային խնդիրների լուծմանը:

Այսպիսով, սիրիահայերը ֆորմալ առումով ներառված են հայաստանյան կրթական համակարգի մեջ: Սակայն այս ոլորտում նրանք հարմարվելու դժվարություններ ունեն՝ հիմնականում պայմանավորված կոգնիտիվ և հաղորդակցական գործոններով: Եթե տեղացիների հետ հաղորդակցության հարցը ժամանակի ընթացքում կարգավորվում է,

²¹¹ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

²¹² Նույն տեղում:

ապա կոգնիտիվ մակարդակի խնդիրները՝ կրթական ծրագրերի տարբերությունը, լեզվական առանձնահատկությունները, շարունակում են ուղեկցել նրանց:

2.5. Սիրիահայերի միգրացիոն վարքագիծը. մնա՛լ, թե՛ գնա՛լ

Միգրացիայի վերաբերյալ բազմաթիվ տեսություններ կան, սակայն սիրիահայերի միգրացիոն վարքագծի, դրա պատճառների և գործոնների վերլուծությունը կդիտարկենք Էվերեթ Ս. Լիի մոտեցումների շրջանակում: Ըստ հեղինակի առաջ քաշած էկոնոմետրիկ մոդելի՝ գործում են միգրացիոն գործոնների տարբեր խմբեր՝ վանող, ձգող, միջանկյալ և անձնական: Նա միգրացիայի **վանող** երևույթների շարքին դասում է տնտեսական (գործազրկությունը, եկամուտների ցածր մակարդակը, բարձր հարկերը), սոցիալական և քաղաքական (աղքատությունը, խտրականությունը, խղճի և հավատի ազատության սահմանափակումը, պատերազմները) բնույթի գործոնները, անբարենպաստ բնակլիմայական պայմանները և այլն: **Ձգող** գործոններից են համարվում տնտեսական զարգացման և եկամուտների բարձր մակարդակը, անվտանգությունը, աշխատաշուկայում մուտք գործելու հնարավորությունը և այլն: Միգրացիոն գործընթացում կարևոր են նաև **միջանկյալ** գործոնները, որոնք մեծանում են հեռավորության աճին զուգահեռ և կարող են հանդես գալ որպես միգրացիոն հոսքերը սահմանափակող միջոցներ: Դրանց թվին են դասվում տրանսպորտային ծախսերը, տեղաշարժերի կարգավորման օրենքները, տեղեկացվածությունը և այլն: Ըստ նրա՝ միգրացիան ընտրովի գործընթաց է, և նույն գործոնները տարբեր մարդկանց վրա կարող են տարբեր կերպ ազդել²¹³: Ինչպես տեսանք, հեղինակն ավելի շատ կենտրոնանում է տնտեսական գործոնների վրա, և սիրիահայերի դեպքում ևս ականատես կլինենք նրանց միգրացիոն վարքագծի հիմքում ընկած տնտեսական գործոնների գերակայությանը:

²¹³ Everett 1966, 47–57.

Սիրիահայերի՝ Հայաստանից հեռանալու մտադրությունների ու ցանկությունների և սրա հիմքում ընկած գործոնների համալիր վերուծությունը ներկայացնենք համեմատական հետազոտական տվյալների միջոցով:

Աղյուսակ 13.
Սիրիահայերի՝ ՀՀ-ից մեկնելու մտադրությունը (%)

Պատասխանները	2017 թ.	2014 թ.
Ոչ	40.0	25.0
Հավանաբար ոչ	16.0	22.8
Հավանաբար այո	4.0	20.7
Այո	40.0	31.5
Ընդամենը	100.0	100.0

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տարիների ընթացքում նրանց՝ Հայաստանից հեռանալու մտադրությունների հարցում որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել (տես աղյուսակ 13): Առաջին բանը, որ կարող ենք արձանագրել, հետևյալն է՝ նրանք համեմատաբար ավելի հաստատական են իրենց մտադրություններում և որոշումներում՝ հստակ արտահայտելով սեփական դիրքորոշումը և քիչ տեղ թողնելով հավանականությանը: Այս հարցի հետ կապված երկրորդ փոփոխությունը վերաբերում է զանգվածի փոփոխությանը՝ ՀՀ-ից հեռանալու մտադրություն ունեցողները նվազել են 8.2%-ով (այստեղ նկատի ենք ունեցել հավանաբար այո և այո պատասխանողներին), բայց վերջիններս զրեթե լիովին կողմնորոշված են այս հարցում: Ընդհանուր առմամբ, Հայաստան տեղափոխվելու առաջին տարիներին սիրիահայերի կեսից ավելին՝ 52.2%-ը, մտադրություն ուներ հնարավորության դեպքում տեղափոխվել երկրից, և միայն մեկ չորրորդ մասն էր վստահաբար մտածում, որ կմնա Հայաստանում: Այստեղ որոշակի մաս է կազմում նաև հավանաբար չմեկնողների խումբը (22.8%), ինչը ևս հավանականության որոշակի աստիճանով մեծացնում էր մեկնելու տրամադրվածություն ունեցողների զանգվածը: Տարիներ անց արդեն սիրիահայերի կեսից քիչն է մտա-

դրություն հայտնում մեկնել Հայաստանից (44%-ը), և տասից չորսն արդեն վստահաբար մտածում է այստեղ կյանքը շարունակելու մասին: Այս ցուցանիշի փոփոխությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այն սիրիահայերը, որոնք 2014 թ. մտածում կամ ցանկություն էին հայտնում այլ երկիր տեղափոխվելու մասին, արդեն կատարել են իրենց քայլը՝ կյանքի այդ փուլի համար Հայաստանը համարելով ժամանակավոր ապաստան: Հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ՀՀ-ից մեկնելու մտադրություն ունեցողների զանգվածը մի քանի ցուցիչներով և համեմատական վերլուծությամբ (տե՛ս աղյուսակ 14).

- Եթե Հայաստան այցելելու առաջին տարիներին ավելի շատ տղամարդիկ էին մտածում երկրից հեռանալու մասին, ապա տարիներ անց՝ կանայք, ինչը պայմանավորված է տղամարդկանց զբաղվածության փաստով. ՀՀ-ում նրանց աշխատանքի/բիզնեսի առկայությունը երկրից չհեռանալու կարևոր գործոններից է համարվում, իսկ երկրից դուրս զբաղվածությունը (վերջին տարիներին սկսված սիրիահայ տղամարդկանց աշխատանքային միգրացիան) կանանց անհանդուրժողականությանն, հետևաբար, Հայաստանից մեկնելու մտադրությունների ձևավորման պատճառ է դառնում:
- Տարիքային առումով նկատում ենք, որ մեկնելու մտադրություն ունեցողների զանգվածը նվազում է երիտասարդներից դեպի ավագ սերունդ, ընդ որում, 2017 թ. տվյալներով՝ ավագ տարիքի մարդիկ եռակի անգամ ավելի քիչ են հակված Հայաստանից հեռանալու մտքին: Իսկ միջին սերնդի շրջանում, ընդհակառակը, փոխվել են տրամադրությունները, և մոտ 8%-ով ավելացել է հեռանալու մտադրություն ունեցողների կշիռը:
- Ամուսնացած սիրիահայերը, տարիների ընթացքում ավելի շատ հարմարվելով հայաստանյան իրականությանը, ավելի քիչ են երկրից մեկնելու մտադրություն հայտնում: Իսկ չամուսնացածները, ընդհակառակը, մեծամասամբ ցանկանում են հեռանալ ՀՀ-ից, ընդ որում, 2017 թ. տվյալներով՝ ավելի շատ:

Աղյուսակ 14.
«Հ-ից մեկնելու մտադրություն ունեցող սիրիահայերը՝
ըստ մի շարք ցուցանիշների (%)»

Ցուցիչներ		2017թ.	2014թ.
Սեռը	Արական	41.7	55.6
	Իգական	46.2	48.9
Տարիքը	18–35	60.0	66.7
	36–55	58.3	50.0
	56 և բարձր	12.5	39.1
Ամուսնական կարգավիճակը	Ամուրի	57.1	53.8
	Ամուսնացած	43.8	55.1
	Ամուսնալուծված	–	0.0
	Այրի	–	25.0
Բնակության վայրը	Երևան	44.0	52.4
	Այլ քաղաք	–	66.7
	Գյուղ	–	42.9
Աշխատանքի առկայությունը	Այո	42.9	41.7
	Ոչ	45.5	55.9
Բնակարանի տեսակը	Սեփական բնակարան	–	36.4
	Վարձակալած բնակարան	38.9	52.9
	Առանց վարձավճարի բնակարան	–	66.7
	Հանրակացարան	80.0	57.1
«Հ տեղափոխվելու տարեթիվը»	2012թ.	57.1	42.9
	2013թ.	75.0	71.4
	2014թ.	25.0	54.5
	2014թ.-ից հետո	50.0	–
«Հ քաղաքացիության առկայություն»	Ունի	–	48.4
	Չունի	–	58.6

- Հայաստանից մեկնելու մտադրություն ունեցողները մեծամասամբ մարզային քաղաքներում, այնուհետև՝ Երևանում ապրող սիրիահայերն են, իսկ գյուղերում բնակվողների կեսից ավելին չի մտածում այլ երկիր գնալու մասին:

- Նրանց համար աշխատանքի բացակայությունը հիմնական գործոններից է, որը վճռում է ՀՀ-ում մնալ-չմնալու հարցը: Այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք ներքևում, սակայն աղյուսակ 14-ի տվյալները ցույց են տալիս, որ արտագաղթելու մտքին ավելի շատ հակված են աշխատանք չունեցողները, քան՝ ունեցողները, ընդ որում, սկզբնական շրջանում նման տրամադրվածությունն ավելի ակնառու է եղել:
- Բնակարանի առկայությունը հաջորդ կարևոր գործոնն է, քանզի երկրից մեկնելու մտքին ավելի քիչ հակված են բնակարան ունեցող, իսկ ավելի շատ՝ առանց վարձավճարի բնակարաններում ապրողները: Վերջինս բխում է «մինչև էրբ ենք այս կարգավիճակում ապրելու» հարցից, իսկ նման անորոշությունն ու որևէ հեռանկարի բացակայությունը չեն կարող չտանել արտագաղթի տրամադրությունների ձևավորմանը: Այստեղ հետաքրքիր է փաստել, որ հանրակացարաններում ապրող սիրիահայերի գերակշիռ մասը հատկապես վերջին տարիներին անհեռանկարային է համարում ՀՀ-ում մնալը:
- Հայաստան ժամանելու տարեթվով ևս կարելի է բացատրել նրանց մտադրությունները: Ինչպես տեսնում ենք, երկրից մեկնելու մտադրություն ավելի շատ հայտնել են 2013թ. տեղափոխվածները: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ սիրիական կոնֆլիկտն ավելի սուր ու տարածական էր դարձել, և հայերը Սիրիայում մնալու կամ հեռանալու մասին մտածելու ժամանակ ու հնարավորություն չունեին: Իսկ նման հարկադրված ներգաղթը, բնականաբար, մի օր հանգեցնելու էր նաև արտագաղթի հաստատական մտադրությունների ձևավորմանը:
- ՀՀ քաղաքացիություն ունենալը ևս կարևոր ցուցիչ է, քանզի, ինչպես վկայում են 2014թ. հետազոտության արդյունքները, Հայաստանից հեռանալու մտքին ավելի շատ հակված են եղել ՀՀ քաղաքացիություն չունեցող, քան ունեցող սիրիահայերը:

Սիրիահայերն ունեն Հայաստանից հեռանալու իրենց պատճառները, որոնց մեծ մասը սոցիալ-տնտեսական բնույթ է կրում: Ինչպես

ՀՀ տեղափոխվելու առաջին տարիներին, այնպես էլ տարիներ անց նրանց անհանգստացնում են Հայաստանի վատ սոցիալական պայմաններն ու տնտեսության անբարենպաստ վիճակը, աշխատանքի և սեփական բնակարանի բացակայությունը, ցածր աշխատավարձն ու աշխատանքային ծանր պայմանները, սեփական բիզնեսի ստեղծման դժվարություններն ու ցածր եկամուտը, որոնք, ընդհանուր վերցրած, կարևոր ազդեցություն ունեն նաև նրանց միգրացիոն վարքագծի ձևավորման վրա: Եթե առաջին տարիներին այն ամենակարևոր գործոնն էր (72%, տե՛ս աղյուսակ 15), ապա 2017թ., ավելի խորանալով, դառնում է գերակա պատճառ բոլոր պատճառների մեջ (84.6%):

Աղյուսակ 15.
ՀՀ-ից հեռանալու պատճառները (%)

Պատճառները	2017թ.	2014թ.
Սոցիալ-տնտեսական պատճառներ	84.6	72.0
Մշակութային-հոգեբանական պատճառներ	7.7	14.0
Ընտանիքի միավորում	7.7	10.5
Իրավական խնդիրներ	0.0	3.5
Ընդամենը	100.0	100.0

Հայաստան տեղափոխվելու առաջին տարիներին սիրիահայերը նաև մշակութային և հոգեբանական մեծ շոկ են ապրել, ինչը ոչ միայն որոշակի հետք է թողել, այլև ոմանց համար՝ ՀՀ-ից հեռանալու պատճառ հանդիսացել: Վերջինս, սակայն, տարիների ընթացքում պակաս կարևոր է դառնում և զիջում իր տեղը երկիրը լքելու պատճառների մեջ: Սիրիահայերի մի մասը Հայաստան էր եկել ոչ թե ամբողջական, այլ կիսաված ընտանիքներով: Հետևաբար, ընտանիքի վերամիավորումը ևս ապագայի հարցում որոշում կայացնելու գործում որոշակի տեղ է զբաղեցնում, և մի որոշ զանգվածի համար (10.5%) այն կատարվել/կատարվելու է ոչ թե Հայաստանի ներսում, այլ նրա սահմաններից դուրս: Տարիների ընթացքում այս հարցը մասնակիորեն լուծում է ստանում՝ ավելի փոքր հաճախականությամբ (7.7%) հանդիպելով երկրից հեռանալու պատճառների մեջ:

Եթե ՀՀ-ից հեռանալու պատճառներն ավելի շատ ուացիոնալ են և սոցիալ-տնտեսական հիմքեր ունեն, ապա Հայաստանում մնալու մոտիվները մեծամասամբ էնոցիոնալ են և հոգեբանական երանգներ ունեն: Այսպես, երկրում մնալու դրդապատճառների մեջ մեծ կշիռ է ստացել այն՝ որպես հայրենիք ընկալելու և նրա նկատմամբ սիրո խոստովանության երևույթը: Եթե 2014 թ. հետազոտության արդյունքներով այն կազմում էր 43.1%, ապա 2017 թ. այն ավելի մեծ հաճախականություն է գրանցել (54.2%, տե՛ս աղյուսակ 16)՝ ցույց տալով սիրահայերի՝ հայրենիքի նկատմամբ սիրո և դրական տրամադրվածության աճը: Մեծ հաճախականություն գրանցած հաջորդ երկու պատասխանները վկայում են նրանց կողմից ստեղծված իրավիճակը համարժեք գնահատելու մասին՝ ՀՀ-ից չհեռանալու դրդապատճառները բացատրելով երկրի անվտանգ լինելու և արդեն հարմարվելու փաստով: Նրանց մի որոշ զանգված էլ խոստովանում է այլ երկիր գնալու հնարավորության բացակայության մասին:

Աղյուսակ 16. ՀՀ-ում մնալու դրդապատճառները (%)

Դրդապատճառները	2017 թ.	2014 թ.
Հայաստանում անվտանգ է	16.7	22.2
Սա է մեր հայրենիքը, սիրում եմ այն	54.2	43.1
Ունեմ աշխատանք/սեփական բիզնես	8.3	2.8
Հարմարվել եմ Հայաստանի կյանքին, լեզուն գիտեմ	20.8	22.2
Այլ երկիր գնալու հնարավորություն չունեմ	-	6.9
Ուզում եմ ՀՀ-ին օգտակար լինել	-	2.8
Ընդամենը	100.0	100.0

Ինչպես նշվեց վերևում, սիրահայերի համար աշխատանքի և սեփական բիզնեսի առկայությունը Հայաստանում մնալու կարևոր խթան է հանդիսանում: Եվ եթե առաջին տարիներին այն քիչ հաճախականությամբ է հանդիպել, ապա երեք տարի անց երեք անգամ ավելի ծանրակշիռ հանգամանք է համարվում այլ երկիր չմեկնելու որոշման կայացման հարցում (2014 թ.՝ 2.8%, 2017 թ.՝ 8.3%, տե՛ս աղյուսակ 16):

Հայաստանից հեռանալու ցանկություն հայտնած և որոշում կայացրած սիրիահայերի մի մասն ավելի վճռական է դարձել վերջին տարիներին՝ երկրից հեռանալու ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկելով: Եթե առաջին տարիներին նրանց մեջ տասից մեկն էր գտնվում գործողության փուլում (մոտ 8%-ը), ապա 2017 թ. հետազոտության արդյունքներով պարզ է դառնում, որ ոչ միայն շատացել է նրանց թիվը (մոտ 27%-ը), այլև այդ քայլերն են դարձել բազմաբնույթ՝ ձեռք բերված ՀՀ քաղաքացիությունից հրաժարվել, տարբեր երկրների դեսպանություններ դիմել, այլ երկրներում բիզնես հիմնադնել և այլն:

Եթե ՀՀ տեղափոխվելու առաջին տարիներին շատերը, որոնք դեռ հույս ունեին, որ իրավիճակը կկարգավորվի և Սիրիան կվերագտնի իր նախկին հզորությունը, ցանկանում և մտածում էին վերադառնալ այնտեղ, ապա վերջին տարիներին նրանք ավելի ռեալ են մտածում՝ մոտ չորս անգամ կրճատելով Սիրիա տեղափոխվելու հավանականությունը (2017 թ.՝ 9%, 2014 թ.՝ 37%): Այդ տարիներին նրանց համար, Սիրիայից բացի, նախընտրելի և իրատեսական էր մեկնել նաև եվրոպական երկրներ (Շվեդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Ավստրալիա, Հոլանդիա), ԱՄՆ և Կանադա, որտեղ, իրենց կարծիքով, ապաստան և տնտեսական ու սոցիալական աջակցություն կգտնեն: Վերջին շրջանում նրանց համար ընդունող երկրներից ամենահավանականը մնում է Կանադան: Անորոշությունը շարունակվում է նաև այս իմաստով. նրանք թեպետ ցանկանում են գնալ Հայաստանից, սակայն կեսից շատը դժվարանում է ասել, թե ուր: Իսկ, ընդհանուր առմամբ, թվարկված հավանական երկրների ցուցակը թույլ է տալիս ասելու, որ սիրիահայերն ընդունող երկրի հետ մշակութային ընդհանրությունները թողնում են հետին պլանում՝ առաջնայնություն տալով սոցիալ-տնտեսական բաղադրիչին: Եվ պատահական չեն նաև այն ցուցանիշները, որոնք ստացվել են «ինչ պայմանների փոփոխության դեպքում չեք մեկնի Հայաստանից» հարցադրման արդյունքում: Գործոնների մեջ ամենամեծ զանգված (46.1%) կազմել են այն պատասխանները, որոնցում աշխատանք/լավ աշխատանք ունենալն է համարվել պարտադիր պայման՝ Հայաստանում մնալու համար: Մյուս գործոնները

դասակարգվել են հետևյալ կարևորությամբ՝ աշխատանքի դիմաց բարձր վարձատրություն, սեփական բնակարանի առկայություն, սեփական բիզնես ստեղծելու հնարավորություն/ցածր հարկեր, քաղաքական համակարգի փոփոխություն, հարազատների/ընտանիքի անդամների հետ վերամիավորում, իրավական խնդիրների լուծում, մարդկանց բարեհամբույր վերաբերմունք (համապատասխանաբար, 17.1%, 13.2%, 5.3%, 5.3%, 5.3%, 2.6%, 2.6%, տե՛ս աղյուսակ 17): Այս ամենի հետ մեկտեղ, պատասխանների 2.5%-ը վկայում է այն մասին, որ անկախ որևէ իրավիճակի փոփոխությունից, սիրիահայերը վճռական են տրամադրված Հայաստանից հեռանալու հարցում:

Աղյուսակ 17.

Ի՞նչ պայմանների փոփոխություն դեպքում չեն մեկնի ՀՀ-ից (%)

Պայմանները	%
Աշխատանքի/լավ աշխատանքի առկայություն	46.1
Բարձր վարձատրություն	17.1
Սեփական բնակարանի առկայություն	13.2
Բիզնես ստեղծելու հնարավորություն/ցածր հարկեր	5.3
Քաղաքական համակարգի փոփոխություն	5.3
Ընտանիքի անդամների/հարազատների հետ վերամիավորում	5.3
Իրավական խնդիրների լուծում	2.6
Մարդկանց բարեհամբույր վերաբերմունքի առկայություն	2.6
Բոլոր դեպքերում կհեռանամ	2.5
Ընդամենը	100.0

Ըստ փորձագիտական գնահատականների՝ տարիների ընթացքում էական փոփոխություններ են տեղի ունեցել այս հարցում. սիրիահայերի այն խումբը, որը մտածում էր հեռանալու մասին, արդեն տեղափոխվել է այլ երկիր, իսկ այժմ ՀՀ-ում բնակվողները, որոնք, ըստ իրենց գնահատականների, կազմում են ՀՀ եկածների մոտ քառորդ մասը, մեր երկրում մշտական բնակվելու մտադրություն ունեցողներն են:

Մեր ուսումնասիրության շրջանակում հայաստանաբնակ հայերը ևս հայտնել են իրենց տեսակետը՝ գտնելով, որ սիրիահայ ընտա-

նիքների վերադարձը Հայաստան ներգաղթ չէ, և երկրի մի փոքր վերականգնումից հետո նրանց գերակշիռ մասը կվերադառնա Սիրիա: Չնայած մշակութային և տնտեսական կյանքում նրանց դերակատարությունը կարևորելուն՝ տեղացիների մոտավորապես 70%-ը կիսում է նման տեսակետ, իսկ նրանց մեջ մեծ խումբ են կազմում կանայք՝ տղամարդկանց համեմատ, գրեթե հավասարաչափ ավագ և միջին սերունդը, ապա՝ երիտասարդները, մարզային քաղաքների բնակիչները, երևանցիները, ապա՝ գյուղաբնակները:

ՀՀ-ից արտագաղթելու հարցը քննարկման առարկա է դառնում ոչ միայն սիրիահայերի դեպքում, այլև նրանց համար, քանզի նրանք ևս նկատելի ու ձևավորել են սեփական պատկերացումները հայաստանցիների՝ այս հարցի հետ կապված վարքագծի վերաբերյալ: Այս պարագայում նրանք ավելի մեծ զանգված են կազմում (88%)՝ կարծելով, որ տեղացի հայերն առաջին հնարավորության դեպքում կհեռանան Հայաստանից: Սիրիահայերի կարծիքով՝ տեղացիների արտագաղթելը, անշուշտ, մեծ կապ ունի երկրի ոչ արդյունավետ կառավարման և սոցիալ-տնտեսական խնդիրների հետ: Կարևոր պատճառների թվին նրանք դասում են նաև հեշտ, բայց օտար ճանապարհ ընտրելու հայաստանցիների որդեգրած «ռազմավարությունը», հայրենիքին ծառայելու նրանց ցանկության բացակայությունը: Նրանց մեջ տասից յոթը մտածում է, որ տեղացին ոչ մի ջանք չի գործադրում ՀՀ-ում մնալու և արտագաղթի ճամփան չբռնելու համար: Ինչպես քանակական, այնպես էլ որակական գնահատականներով նրանք արտահայտում են հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը. «Այստեղի երիտասարդները չեն ուզեր մնալ Հայաստանում, այստեղի համար մի բան անել: Չէ, իրենք ուզում են գնալ Ռուսաստան: Ռուսաստան ինչ կայ, չեմ հասկանում: Այստեղ է քո հայրենիքը, պէտք է մնաս եւ պայքարիս անոր համար: Ռուսաստանն արդէն հասել ա իրա հասնելիք տեղը» (կին, 22 տարեկան, ք. Երևան)²¹⁴: «Գործը անհնար է հոս: Անոր համար մենք ամեն օր կ'ըսենք՝ ինչ պիտի ըլլայ: Միայն մեզի համար չէ՝

²¹⁴ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

իբրև սուրիացի կամ սփյուռքահայ: Արդէն փեղացին կը փախնի, կ'երթայ երկրէն: Ես անոր համար ցաւ կը զգամ՝ ինչո՞ւ, ինչո՞ւ մենք պիտի էրթանք՝ իբր հայ, ուրիշին սարուկ ըլլանք, որ քիչ մը փող շահինք: Ես ինչո՞ւ չկարողանամ իմ երկրիս մեջ ապրիմ, երկիրս զարգացնեմ» (Կին, 58 տարեկան, ք. Երևան)²¹⁵:

Այսպիսով, սիրիահայերի միգրացիոն վարքագծի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայաստանյան սոցիալ-տնտեսական կյանքին հարմարվելու աստիճանը տարբեր է, քանզի տարբեր են նաև նրանց տրամադրությունները ՀՀ-ից հեռանալու հետ կապված: Հետազոտության տվյալներից կարող ենք եզրակացնել, որ, եթե տեղափոխվելու առաջին տարիներին նրանց կեսից ավելին, ապա տարիներ անց կեսից քիչն է այլ երկիր մեկնելու ցանկություն և մտադրություն հայտնել: Պատճառներից մեկը թերևս այն է, որ սիրիահայերի այն խումբը, որը սկզբնական շրջանում մտածում էր Հայաստանից հեռանալու մասին, արդեն տեղափոխվել է այլ երկիր, իսկ այսօր մեծամասամբ մնացել են ՀՀ-ում մշտական բնակվելու մտադրություն ունեցողները: Տարիների ընթացքում փոխվում է նաև միգրացիայի պատճառների հարաբերակցությունը, քանզի սիրիահայերը մասամբ կարողացել են հաղթահարել մշակութային և հոգեբանական խնդիրները: Չնայած այս ամենին, Հայաստանը լքելու հիմքում ընկած սոցիալ-տնտեսական գործոնը շարունակում է առաջնային մնալ՝ տարիների ընթացքում ավելի խորանալով:

²¹⁵ Նույն տեղում:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Հայ ընտանիքը սիրիահայերի արժեհամակարգում

Ընդհանուր առմամբ, ադապտացիայի մակարդակն ուսումնասիրելիս անհրաժեշտ է քննարկել նաև ադապտացիայի ցուցանիշների մասին հարցը: Հետազոտողները գրականության մեջ առկա բազմազան ցուցանիշները միավորում են երկու մեծ խմբում՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ կամ արտաքին և ներքին²¹⁶: Լ.Շպակը սուբյեկտիվ հատկանիշների ներքո հասկանում է ադապտացվողի՝ սոցիալ-մշակութային միջավայրում սեփական դիրքով բավարարվածությունը, նորմերի և ավանդույթների գիտակցական պահպանումը, սոցիալ-մշակութային փոխազդեցության միջոցները, ձևերն ու բովանդակությունը հարստացնելու ձգտումը և պատրաստակամությունը: Օբյեկտիվ հատկանիշներից են տվյալ միջավայրի սոցիալ-մշակութային գործընթացներում ստեղծագործական ակտիվության աճը, մշակութային գործունեության հարստացումը, դինամիկ աճը, անհատի ադապտացիայի կայունությունը տվյալ միջավայրում²¹⁷:

Սիրիահայերի դեպքում կոդիտարկենք սուբյեկտիվ հատկանիշների բացահայտման հարցը, որն արտացոլվում է անձնային մակարդակի փոփոխություններում՝ կոգնիտիվ, զգացական, արժեքային, վարքային: Նրանց տեղափոխվելը ՀՀ միայն ֆիզիկական տեղաշարժ չէր, այլ՝ կենսաձևի և մտածելակերպի փոփոխություն, որը ենթադրում է ողջ արժեքային համակարգի վերանայում: Արժեքները հասարակության

²¹⁶ Безноси́ков 1986, 189; Жмыриков 1989, 249; Георгиева 1985, 22.

²¹⁷ Березин 1988, 270.

Աղյուսակ 18.
Արժեքների կարևորությունը սիրիահայերի և ՀՀ հայերի համար (%)

Արժեքները	Ըստ սիրիահայերի	Ըստ ՀՀ հայերի
Առողջություն	26.2	17.6
Աշխատանք	26.2	16.7
Ընտանիք	25.0	18.0
Կրոն	7.1	6.1
Կրթություն	7.1	12.3
Աշխատավարձ	3.6	7.9
Ընկերներ	3.6	8.4
Կարիերա	1.2	3.8
Հանգիստ	0.0	4.7
Ճանապարհորդություն	0.0	2.5
Քաղաքականություն	0.0	1.6
Այլ	0.0	0.4
Ընդամենը	100.0	100.0

ընդհանուր պատկերացումներն են ցանկալիի, ճշմարիտի, օգտակարի մասին, ապահովում են հասարակության ինտեգրացիան և օգնում անհատին՝ կենսական կարևոր իրավիճակներում ընտրություն կատարել: Եվ սիրիահայերի, և՛ հայաստանցի հայերի համար առաջնային են համարվում ընտանիքը, առողջությունն ու աշխատանքը, չնայած որ վերջիններս կարևորության տարբեր աստիճանների վրա են գտնվում (տե՛ս աղյուսակ 18): Ընտանիքը միշտ էլ առանձնահատուկ տեղ է ունեցել հայ ժողովրդի արժեքային համակարգում, որտեղ էլ նա ապրելիս լինի: Համաշխարհայնացումը, եվրոպական արժեքների ներթափանցումը հայ հասարակություն, ինչպես նաև ներքին սոցիալ-տնտեսական խնդիրները չեն ստվերել ընտանիքի դերը հայաստանցիների կյանքում, և պատահական չէ, որ աշխատանքից և առողջությունից առաջ ավելի կարևոր են համարում ընտանիքը: Սիրիահայերի մոտ իրավիճակը մի փոքր այլ նկարագրություն է ստանում: Վերջին շրջանի իրադարձությունները՝ պատերազմը Սիրիայում, Հայաստան տեղա-

փոխությունը, վերջինիս սոցիալ-տնտեսական մարտահրավերները սիրիահայերի արժեքային կողմնորոշումների վրա որոշակի ազդեցություն են ունենում: Պատերազմից մազապուրծ եղած և հայաստանյան տնտեսական կյանք ուրք դրած հայերի համար ավելի առաջնային են դառնում առողջությունն ու աշխատանքը:

Այնուամենայնիվ, սիրիահայերի համար ընտանիքը կարևոր արժեքներից է, և նրանց արժեքանորմատիվ համակարգում ընտանեկան նորմերն առանձնահատուկ տեղ ունեն, որոնք ձևավորվում և զարգանում են քրիստոնեական արժեքների հիմքի վրա՝ որոշակի իմաստով տարբերելով նրանց հայաստանաբնակ ընտանիքներից²¹⁸: Սիրիահայերի կողմից երկու ընտանիքներին վերագրվող հատկանիշների համեմատական վերլուծության միջոցով աշխատության այս հատվածում նպատակ ունենք դուրս բերել հայկական ընտանիքի մոդելը նրանց պատկերացումներում: Սիրիահայերը, ապրելով մահմեդական երկրում և Սիրիայի հասարակության մեջ համարվելով փոքրամասնություն, ընտանիքի և ընտանեկան արժեքների վերաբերյալ այլ՝ հայաստանաբնակներից տարբեր հայացքներ են որդեգրել: Սփյուռքում ընտանիքը եղել է առաջնային ազենտներից մեկը՝ ազգային ինքնության ձևավորման, ազգային ավանդույթների և վարքի ձևերի յուրացման ու փոխանցման և, մեծ հաշվով, հայապահպանության հարցում: Հայաստանում հայապահպանության խնդիրը դուրս է գալիս հայ ընտանիքների գործառույթների շարքից՝ փոխելով նրանց դերակատարության առաջնահերթությունները: Այս պարագայում սփյուռքից ներգաղթած հայը հայրենիքում տեսնում է այլ ընտանիք, շփվելով կամ չշփվելով նրանց հետ՝ համեմատում է սեփականի հետ ու իր արժեքային համակարգի դիտանկյունից բնութագրում այն:

Աղյուսակ 19-ում տոկոսային արտահայտությամբ տրված են այն հատկանիշները, դատողությունները, որոնցով սիրիահայերը բնութագրել են սեփական համայնքի և հայաստանաբնակ ընտանիքներին: Հատկանիշները ներկայացված են զուգահեռ և հականիշ զույգերով: Նրանց համար հայ ընտանիքի մոդելը ձևավորվում է հետևյալ հար-

²¹⁸ Հակոբյան և այլք 2017, 264–292:

Աղյուսակ 19.

**Սիրիահայ և հայաստանաբնակ ընտանիքներին բնորոշ դատողություններ՝
ըստ սիրիահայերի (%)**

Ընտանիքներին բնորոշ դատողությունները					
Դրական	ՀՀ-ում ասիրող	Սիրիա- հայ	Բացասական	ՀՀ-ում ասիրող	Սիրիա- հայ
Ամուսնալուծության սովորություն չկա, ընտանեկան կապերն ամուր են, զույգերը զիջող են, սիրով, հավատարիմ	4.8	12.5	Շատ են ամուսնալուծությունները, հանդուրժող չեն իրար նկատմամբ, ազատ հարաբերությունների կողմնակից են	5.6	0.0
Քրիստոնեական կյանքով են ապրում, աստվածավախ են, ընտանեկան սրբությունը հարգող	1.6	5.8	Հավատի պակաս կա, ընտանեկան սրբություն չունեն	4.8	0.0
Ավանդապաշտ են, հայեցի, պահպանողական	0.8	6.7	Օտարամոլ են, ռուսամետ	1.6	0.0
Կնոջ և տղամարդու միջև հավասարություն, հարգանք կա	1.6	2.5	Կինը երկրորդային է ընտանիքում, կոպիտ են կնոջ նկատմամբ	4.8	1.7
Սրտամոտ են ամուսինները, հարաբերությունները պարզ են, զարգացած, կիրթ	7.2	5.0	Ընտանեկան հարաբերությունները ձևական են, կենցաղային, չզարգացած	0.8	2.5
Մեծերի նկատմամբ հարգալից են	1.6	5.0	Մեծերի նկատմամբ անհարգալից են	1.6	0.8
Ինչպիսիք են, տնտեսական հաշվարկով ապրող	3.2	0.8	Պարտքով ծախսեր անող են, ուտող-խմող	4.8	0.8

ցերի տիրույթում՝ 1) ընտանիքի ամրություն, ամուսինների հավատարմություն, 2) ընտանիքում քրիստոնեական արժեքների պահպանում, 3) ազգային ավանդույթների պահպանում, 4) գենդերային հավասարություն, 5) միջանձնային հարաբերությունների բնույթ, 6) երեխաների դաստիարակություն, 7) ընտանիքի տնտեսական վարք:

Առաջին ցուցանիշը, որն արտահայտվում է դրական և բացասական հատկանիշների մեծ հաճախականությամբ, վերաբերում է *ընտանիքի ամրությանը*. այն, որ ընտանեկան կապերն ամուր են, զույգերը համերաշխ են ու հավատարիմ, ամուսնալուծության սովորություն չկա, բացի այն, որ սիրիահայերը շատ են կարևորել, նաև ավելի բնորոշ համարել են իրենց ընտանիքներին՝ 12.5% (տե՛ս աղյուսակ 19)՝ մոտ երեք անգամ շատ հայաստանաբնակ ընտանիքների համեմատությամբ: Նկարագրված հատկանիշի բացասական զույգը, ըստ նրանց, բնորոշ է միայն հայաստանաբնակ ընտանիքներին: Խորին հարցազրույցներում ևս սիրիահայերը անդրադարձել են այս հարցին՝ կրկին իրենց ընտանիքների հետ համեմատություն անցկացնելով. «Մարդիկ ինչո՞ւ են ամուսնանում, ինչո՞ւ են երեխայ ունենում... գործ պէտք է ըլլայ, որ էդ երեխաներին լաւ պահեն: Ապրելու նպատակը էս ա: Չնայած էստեղ ուրիշ նպատակներ կան. անպայման պէտք է ընկերուհի ունենայ մարդը, պէտք է սիրած ունենայ: Մեր մօտ ըսենց բան չկայ: Կարող է կայ, իհարկէ, կայ, բոլոր տեղերում կայ, բայց մեր մօտ չեն ասում՝ ընկերուհի չունես, ուրեմն՝ տղամարդ չես: Սա ինձ համար ապուշ բան է՝ էսի ո՞չ հայկականութեան հետ կապ ունի, ո՞չ հայութեան. էսի ռուսներից մնացած բաներ են» (49 տ. տղամարդ, ք. Երևան)²¹⁹:

Երկրորդ դատողությունը վերաբերում է *ընտանիքի արժեքի իմաստավորմանն ու պահպանմանը*: Սիրիահայերի գնահատականներով՝ հայաստանաբնակ ընտանիքներում պակասում է հավատը, հետևաբար, սրանով պայմանավորված, չի կարևորվում ընտանիքի արժեքը: Իսկ իրենք, ընդհակառակը, ապրելով քրիստոնեական կյանքով, գիտակցում ու պահպանում են ընտանիքի արժեքը: Եթե վերջինս՝ դրական հատկանիշը, շատ քիչ չափով բնորոշ են համարել հայաստանաբնակ ընտանիքներին (իրենց համեմատությամբ 3.5 անգամ ավելի քիչ), ապա բացասական դատողություններով ընդհանրապես չեն բնութագրում իրենց. «Մենք սուրբ ընտանիքներ կը համարուինք,

²¹⁹ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

որով կարող է մինչև հիմա իմ աղջկա սկզբնական վրայ ծայնս բարձրացնեմ, եւ իմ աղջիկս չըսէ՝ մամմ, ես մեծ եմ արդէն, դուն մի՛ խօսիր: Մենք այդպէս կ'ապրինք» (55 տ. կին, ք. Երևան)²²⁰:

Նրանք ընդհանրապէս իրենց չեն վերագրում նաև *օտարամոլութունը*, փոխարենը շեշտում են ավանդապաշտ ու պահպանողական լինելու մասին (6.7%): Ազգային ավանդույթները չպահպանող, օտար վարք ու բարքով ապրող հայաստանաբնակների մեջ նրանք առանձնացրել են հատկապէս երիտասարդներին: Եվ սա այն խումբն է, որը երկարատև շփումների արդյունքում սիրիահայ երիտասարդության համար վատ օրինակ կարող է ծառայել/ծառայում է, որի մասին ասում են հենց իրենք՝ սիրիահայ երիտասարդները. «*Մեր մօտ ընտանիքը սրբութիւն է: Մեր պապաները միշտ մեզ վախով կ'ապրեցնէին, որ մենք այլ ազգի մեջ կ'ապրինք, միշտ պէտք է ուշադիր ըլլանք, ակումբէն զար ուրիշ տեղ չերթանք: Ակումբին մեջ ընկերային շրջանակ է միայն, ուրիշ բաներ չես տեսնի: Մենք մինչև 18-19 տարեկանը՝ տղայ կամ աղջիկ, դեռ երեխայ էինք, չենք մտածեր ուրիշ բաներու մասին: Իսկ էստեղ դպրոցից արդէն սկսում են: Մեր մօտ աղջիկը տղային եթէ ըսէ՝ ընկերութիւն ընենք, դա անկարելի բան է: Իսկ էստեղ արդէն եղբայրս լրիւ փոխուեցաւ՝ մտնում է սենեակ, աղջիկների հետ խօսում: Էստեղ աղջիկները կը ժամադրեն տղային» (27 տ. կին, ք. Երևան)²²¹:*

Ընտանիքի մոդելի կառուցվածքում սիրիահայերը անդրադարձել են նաև *ամուսինների իրավունքներին ու պարտականություններին*: Տղամարդու և կնոջ հավասարության ու հարգանքի հարցում ևս շարունակում են օրինակելի համարել իրենց, չնայած, ըստ քանակական ցուցանիշների, տարբերություններն այնքան էլ էական չեն: Այս հարցում առաջադիմական հայացքներ ունեն հատկապէս երիտասարդ տղաները. «*Ես հայավարի «խասայթները» չեմ սիրում. ոնց որ տղան իրատունք ունի, ընենց էլ աղջիկը պէտք է իրատունք ունենայ իրախօսքերի կամ իրա ընտրութիւնների մէջ: Մենք գնում ենք էս բանով, ու*

²²⁰ Նույն տեղում:

²²¹ Նույն տեղում:

դա ես համարում եմ ամենածիշղ բանը: Ոչ թէ փղայի ասածը պիտի լինի ու վերջ» (26 տ. տղամարդ, ք. Երևան)²²²: Աղյուսակում բերված տվյալներից նկատում ենք, որ այս հարցում բացասական բնութագրիչը տարածվում է նաև սիրիահայ ընտանիքների վրա, չնայած համեմատության մեջ կրկին ակնհայտ է, որ, ըստ նրանց, այն ավելի բնորոշ է հայաստանաբնակներին:

Հաջորդ բնութագրիչով սիրիահայերը բացահայտում են իրենց ընտանիքների «թերությունը»՝ պարզ և անկեղծ փոխհարաբերությունների ձևավորման հարցում օրինակելի համարելով հայաստանցիներին: Նրանք կարծում են, որ իրենց ընտանիքներում *ամուսին-կին փոխհարաբերությունները կենցաղային մակարդակի վրա են գտնվում և ավելի շատ ձևական են, մինչդեռ, հայաստանցիներն իրենց ընտանիքները կառուցում են ջերմ, պարզ ու զարգացած փոխհարաբերությունների հիմքի վրա: Խորին հարցազրույցների վերլուծության արդյունքում բացահայտում ենք ընտանիքում նման հարաբերությունների ստեղծման կարևոր դերակատարին՝ կնոջը: Մեջբերենք սիրիահայ երիտասարդի հետ հարցազրույցից մի հատված. « Ես, ճիշդն ասած, սուրիահայ աղջիկներէն մի այլ կարգի զգում եմ: Էնտեղ էլ էի էսպէս: Օկ, խօսում եմ, բայց հեռու եմ մնում իրանցից: Որով, ըսենք, ընկերութիւնը, որ ամենապարզ բանն ա, ինձ պայմաններ է դնում: Դրա համար էլ ես նպատակ դրեցի, որ հայաստանցի աղջիկ եմ ընտրելու, որով իրենք հասկացող են, ուսեալ են, զարգացած են: Եվ ըրտենց էլ եղաւ» (29 տ. տղամարդ, ք. Երևան)²²³:*

Հաջորդ դատողությունը դիտարկենք *երեխաների դաստիարակության* համատեքստում, քանզի մեծերի նկատմամբ հարգանքի դրսևորումը, առաջին հերթին, ընտանեկան դաստիարակության արդյունք է: Այս առումով դրական և բացասական հատկանիշները հայաստանաբնակ ընտանիքների վրա տարածվում են հավասար չափով,

²²² Նույն տեղում:

²²³ Նույն տեղում:

իսկ սիրիահայ ընտանիքների դեպքում դրականը մոտ վեց անգամ գերազանցում է բացասականին (տե՛ս աղյուսակ 19):

Սիրիահայերն *ընտանիքի տնտեսական վարքի* վերաբերյալ հակասական պատկերացումներ ունեն, ընդ որում, թեման կարևոր է դառնում Հայաստանում, երբ հանդիպում են իրենցից տարբեր ընտանիքների: Սրա մասին են վկայում սեփական ընտանիքների վերաբերյալ փոքր, իսկ հայաստանաբնակների դեպքում՝ շատ քիչ տարբերվող քանակական ցուցանիշները: Ամեն դեպքում, նրանք ավելի շատ բացասական, քան դրական երանգավորմամբ են խոսում հայաստանցիների առատաձեռնության և, ընդհանրապես, ընտանիքի տնտեսական կյանքի կազմակերպման մասին (դրական հատկանիշ՝ 3.2%, բացասական հատկանիշ՝ 4.8%, տե՛ս աղյուսակ 19):

Բացի վերը նշվածից՝ սիրիահայերն այլ բնութագրիչներով ևս նկարագրում են հայ ընտանիքներին, որոնք վերաբերում են ներընտանեկան հարաբերությունների մեջ կարևորվող մարդկային հատկանիշներին, կնոջ աշխատելու փաստին և այլն: Վերջինիս պարագայում մեզ իրավունք չվերապահեցինք այն գնահատել դրական կամ բացասական, սակայն այն հանգամանքը, որ սիրիահայ ընտանիքներում կանայք և տարիքով մեծերը չեն աշխատում, իսկ ֆինանսական ծախսերը հոգում է տղամարդը, շատերի կողմից ընդունված նորմ է:

Վերը նշված բնութագրիչները՝ ընդհանրացրած և խմբավորած, արտացոլված են աղյուսակ 20-ում:

*Աղյուսակ 20.
Սիրիահայ և հայաստանցի ընտանիքներին գնահատական (%)*

Հատկանիշները	Դրական	Բացասական	Չեզոք	Դժվար է պատասխանել
Սիրիահայ ընտանիքներին բնորոշ հատկանիշ	61.7	9.2	15.8	13.3
Հայաստանաբնակ ընտանիքներին բնորոշ հատկանիշ	41.6	27.2	8.0	23.2

Ինչպես տեսնում ենք, սիրիահայերի գնահատականը բավականին բարձր է սեփական խմբին բնութագրելիս. դրականը հասնում է մինչև 61.7%-ի: Հայաստանաբնակ ընտանիքներին նույնպես դրական հատկանիշներ են վերագրել (41.6%), սակայն, երբ համեմատում ենք բացասականի հետ, վերջինս գերակշռող է: Չմոռանալով կարծրատիպերի գոյության և սեփական խումբը դիմացինի համեմատ սովորաբար ավելի բարձր գնահատելու փաստի մասին, այնուամենայնիվ, անհրաժեշտ է մտածել նաև սիրիահայերի բացասական գնահատականների մասին, քանզի դրանք շարունակում են գոյություն ունենալ նաև հայաստանաբնակ ընտանիքների հետ շփման պարագայում: Սա վկայում է նաև այն մասին, որ սիրիահայերն այս առումով դեռևս ադապտացված չեն, քանզի, որպես հաջողված ադապտացիայի ցուցանիշներ, խմբային մակարդակում պետք է դրսևորվեր նրանց՝ նոր շրջապատում միջխմբային հանդուրժողականությունը, «նրանքի» դրական կերպարը:

Այսպիսով, սիրիահայերի արժեքանորմատիվ համակարգում արմատացած հայկական ընտանիքի մոդելը հետևյալ նկարագրությունն ունի՝

- Հայ ընտանիքը պետք է ստեղծվի հայկական եկեղեցու խորանի առաջ, իսկ հետագայում զարգանա քրիստոնեական ավանդույթների և արժեքների հիմքի վրա:
- Հայ ընտանիքը պետք է լինի ամբողջական և ամուր՝ ի շնորհիվ ամուսինների հավատարմության և համերաշխության: Ամուսնալուծություններն ու երկրորդ ամուսնությունները պետք է բացառվեն հայոց ամուսնական մշակույթից:
- Երեխան պետք է ծնվի ամբողջական ընտանիքում և դաստիարակվի հայկական ոգով՝ մեծերի նկատմամբ հարգալից, լսող ու խոնարհ, օտար վարք ու բարքերից հեռու: (Այս առումով հետաքրքիր է հատկապես հայրերի մոտեցումը. «Այսպես քիչ մը փողոցը, փողեքը, աղջիկները, ընտանեկան, աւելի ճիշդ, դուրսի ընտանիքներու ձեւը ուրիշ է, սփիւտած կ'ըլլաս մի քիչ

այնդացնել սանձը, որ չթուլանայ, չես իմանայ՝ ինչ ընդհանիք է եկած այդ զաւակը, ով է, ինչ է: Մեր մօտ՝ Սուրիա, միութիւններ կային, կը դրկէինք էդ միութիւնները, դաստիարակութիւններ կ'առնէին՝ ազգային, հայկական, եկեղեցական դաստիարակութիւն կը ստանային: Այստեղ չկայ էդպէս հաւաքական մթնոլորտ: Ստիպուած եմ ամեն կիրակի փոխառաւ Իջեցնեմ, որ գոնէ շրջանակ ունենայ, գոնէ ազգային մթնոլորտ ունենայ: Բանակում, ճամբար՝ ըտե՛նց բաներ» (39 տ. տղամարդ, ք. Աբովյան²²⁴):

- Հայ ընտանիքում կնոջ և ամուսնու իրավունքներն ու պարտականությունները թեպետ սահմանված են ոչ ֆորմալ, սակայն այդ «իրավահարաբերությունը» պարզ է և միանշանակ՝ ընտանիքը ֆինանսապես պետք է ապահովի տղամարդը, իսկ կինը պատասխանատու լինի կենցաղային կարևոր և երկրորդային հարցերի համար:

3.2. Ամուսնանալ սիրիահայի, թե՛ հայաստանցի հայի հետ

Վերջին տարիներին հայ հասարակությունում ազգամիջյան ամուսնությունների նկատմամբ վերաբերմունքը, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, դրական է դարձել: Այն ավելի դրական երանգ է ստանում, երբ համեմատում ենք սիրիահայերի վերաբերմունքի հետ: Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, հայաստանաբնակ հայերի մոտավորապես մեկ չորրորդ մասը (տղայի ամուսնության դեպքում՝ 24.2%, աղջկա ամուսնության դեպքում՝ 23.1%, տե՛ս աղյուսակ 21) համամիտ է այն տեսակետի հետ, որ ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի: Մինչդեռ, նման տեսակետ ունեցող սիրիահայերի զանգվածը մոտ վեց անգամ պակաս է՝ ի համեմատ հայաստանաբնակ հայերի, և նրանց միայն 4%-ն է կիսում այդ մտեցումը:

²²⁴ Նույն տեղում:

Աղյուսակ 21.
**Այլազգիների հետ ամուսնության նկատմամբ վերաբերմունքը՝
ըստ սիրիահայերի և ՀՀ հայերի (%)**

	Վերաբերմունքը	Ըստ սիրիահայերի	Ըստ ՀՀ հայերի
Տղայի ամուսնության դեպքում	Ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի	4.0	24.2
	Ամուսնությանը դեմ չեմ, եթե ընտանիքում պահպանվում է մեր ազգային մշակույթը	12.0	20.6
	Ընդհանրապես դեմ եմ	84.0	54.3
	Դժվարանում եմ պատասխանել	0.0	0.9
Աղջկա ամուսնության դեպքում	Ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի	4.0	23.1
	Ամուսնությանը դեմ չեմ, եթե ընտանիքում պահպանվում է մեր ազգային մշակույթը	12.0	15.3
	Ընդհանրապես դեմ եմ	84.0	60.4
	Դժվարանում եմ պատասխանել	0.0	1.2

Սիրիահայերի գերակշիռ մասը դեմ է ազգամիջյան ամուսնություններին (և՛ տղայի, և՛ աղջկա ամուսնության դեպքում այն կազմում է 84.0%, տես աղյուսակ 21), և միայն տասը հոգուց մեկն է կարծում, որ նման ամուսնություն կարելի է թույլ տալ, եթե ընտանիքում պահպանվի հայ ազգային մշակույթն ու ավանդույթները: Եվ սա ամենևին զարմանալի չէ, քանզի այլէթնիկ միջավայրում ապրող հայի էթնիկ ինքնագիտակցության պահպանման և ուժացման վտանգից պաշտպանելու հարցում մեծ նպաստ են ունեցել ազգապահպանման գործին ծառայող մշակութային կազմակերպությունները, եկեղեցին և որ ամենակարևորն է՝ ընտանիքը: Այս հարցին անդրադարձել է նաև Ա. Ստեփանյանը իր հոդվածներից մեկում. «Խառնամուսնությունները սիյուռքահայերի մեջ, առավել հաճախ, դիտարկելի էին եվրոպական, քան մերձավորարևելյան երկրներում, ինչն, անշուշտ, պայմանավորված է և կրոնական միջավայրի գործոնով: Եթե քրիստոնեական միջավայրում այլազգու հետ ամուսնությունը չէր քաջակերում ընտանիքը, ավագ սերունդը, ապա մահմեդական միջավայրում խառնամուսնությունը այլակրոնի

հետ չէր քաջալերում նաև հայ համայնքն ու եկեղեցին, որի որջ ներուժն ուղղված էր ոչ միայն մշակութային, այլև հոգևոր-կրոնական ինքնուրույնության պահպանմանը: Հարկ է նշել, սակայն, որ մահմեդական միջավայրում բացառություն էին կազմում քրիստոնյա արաբները: Նմանօրինակ խառնամուսնությունները նույնպես չէին խրախուսվում, սակայն պատահում էր, երբ հայ տղան էր ամուսնանում քրիստոնյա արաբուհու հետ և ոչ հակառակը»²²⁵:


Հարցի վերաբերյալ տեսակետները կտրուկ փոփոխության են ենթարկվում, երբ խոսքը վերաբերում է հայաստանաբնակ հայերի հետ ամուսնությանը: Այստեղ սիրիահայերի՝ սեփական համայնքից դուրս ամուսնությունների նկատմամբ բացասական վերաբերմունքը զիջում է իր դիրքը: Ըստ 2014թ. քանակական հետազոտության՝ հարցվողների մոտ 60%-ը (տե՛ս աղյուսակ 22) պատրաստ է որպես կին/ամուսին ընդունել հայաստանցուն, որտեղ մեծ զանգված են կազմում տղամարդիկ: Փոխարենը, կանայք ավելի շատ նախընտրում են ընկերական փոխհարաբերությունների մակարդակում շփվել տեղացի հայերի հետ: Բոլորովին պատահական չէ այս ցուցանիշը, քանզի դաշտային աշխատանքների ընթացքում շատ քիչ են հանդիպել ամուսնական/նախաամուսնական զույգեր, որ կինը լինի սիրիահայ, իսկ ամուսինը՝ տեղացի:

Աղյուսակ 22.
Սիրիահայերը ՀՀ հային ընդունում են... (%)

Հեռավորության աստիճանը	%
Որպես կին/ամուսին	59.8
Որպես ընկեր	33.7
Որպես հարևան	3.2
Որպես գործընկեր	2.2
Որպես նույն երկրի քաղաքացի	1.1
Որպես տուրիստ	0.0
Նախընտրում են չտեսնել նույն երկրում	0.0
Ընդամենը	100.0

²²⁵ Ստեփանյան 2010, 47:

Գծապատկեր 1.
Սոցիալական հեռավորության միջին թվաբանական ցուցանիշը



Ծանոթ. 1–7 բալանոց սանդղակի միջին թվաբանականը:

Համեմատելով սոցիալական հեռավորության²²⁶ մակարդակները չորս տարբեր խմբերում՝ սիրիահայություն, ՀՀ հայություն, քրիստոնյա արաբների խումբ և մահմեդական արաբների խումբ, կտեսնենք հետևյալը (տե՛ս գծապատկեր 1). սիրիահայը սեփական համայնքի ներկայացուցչին միանշանակ ընդունում է որպես ամուսին/կին: ՀՀ հայի դեպքում սոցիալական հեռավորության միջին թվաբանական ցուցանիշը 1.5 է, որը նշանակում է ամուսնական-ընկերական փոխհարաբերությունների մակարդակում շփման պատրաստակամություն: Համեմատած մահմեդական արաբի՝ քրիստոնյա արաբի պարագայում

²²⁶ Է. Բոգարդուսի սոցիալական հեռավորության սանդղակը (1–7 բալանոց սանդղակ, որտեղ 1-զուգընկեր, 2-ընկեր, 3-հարևան, 4-գործընկեր, 5-տույն երկրի քաղաքացի, 6-գրոսաշրջիկ, 7-նախընտրում են չտեսնել երկրում) ուղղված է խմբերի հեռավորությունը հասկանալուն: Այն ցույց է տալիս խմբերի միջև հոգեբանական մտերմության աստիճանը, որը նպաստում է նրանց հեշտ հաղորդակցմանը: Սոցիալական առավելագույն հեռավորությունը՝ 7 թիվը, նշանակում է, որ խմբերն ինքնավար են, հաղորդակցությունն այս դեպքում հիմնականում սիմվոլիկ, ֆորմալ բնույթ է կրում: Նվազագույն սոցիալական հեռավորությունը՝ 1 թիվը, վկայում է այն մասին, որ երկու խմբերի ներկայացուցիչները միմյանց հետ հարաբերությունները կառուցում են՝ հաշվի առնելով և ընդունելով դիմացինի բնորոշ առանձնահատկությունները, յուրօրինակությունները (տե՛ս Սոցիալական հեռավորության սանդղակ (Բոգարդուսի սանդղակ), հասանելի է՝ <http://vsetesti.ru/395/> 25.08.2017):

սիրիահայրը նախընտրում է փոխհարաբերությունների մեջ մտնել ընկեր-հարևան միջանկյալ դաշտում՝ ավելի մոտ ընկեր կատեգորիային: Ամենաթույլ կապն արտահայտվում է մահամեղական արաբի հետ շփման առումով, որը մոտենում է գործընկերային հարաբերությունների սահմանին՝ միջին ցուցանիշը 3.8:

Ընդհանրապես, սփյուռքահայերի շրջանում «հայաստանցի աղջիկ ուզելու» սովորությունը արդիական է եղել բոլոր ժամանակներում: Դեռևս առաջին հայրենադարձության տարիներին՝ հատկապես 1946–1948 թթ., ողջ Սփյուռքը, բռնկված հայրենասիրության ոգով, առաջնորդվելով «մեկ ազգ», «մեկ հայրենիք» կարգախոսով՝ միաձուլվելու, մեկտեղվելու, նաև Հայաստանում ընտանիք կազմելով՝ «բոլորովին հայ ըլլալու» երազանքն ուներ²²⁷: Այդ տարիներին, գալով Հայաստան, «նրանք, ովքեր դեռևս Սփյուռքում երազում էին հայաստանցու հետ ամուսնացնել իրենց զավակին, խուսափելով օտարի հետ ընտանիք կազմելու հեռանկարից, ստեղծված իրավիճակում, դեմ առ դեմ հանդիպելով իրենց միանգամայն անհասկանալի, օտարոտի, արհամարհական, որոշ դեպքերում՝ նաև թշնամական վերաբերմունքի, տրամագծորեն փոխում են դիրքորոշումը՝ կտրականապես մերժելով և բացարձակորեն անհնար համարելով նման կապերը: «Մենք տեղացիի աղջիկ տվողը չենք» ասելով՝ միաժամանակ տեղացիներին բնութագրում էին իբրև «կոշտ ու կոպիտ, վայրենի»: Քանի որ խորթացումը երկկողմանի էր, ապա տեղացիներն էլ իրենց հերթին էին խուսափում նման կապերից՝ հայրենադարձներին բնորոշելով իբրև «սև ջուր (սուրճ) խմողներ» կամ «հում միս (բաստուրմա) ուտողներ»²²⁸:

Մեր ուսումնասիրությունը հայաստանցի հայ-սիրիահայ ամուսնությանը հավանություն չտալու այլ պատճառներ է բացահայտել: Նախ նշենք, որ ըստ հայաստանցիների շրջանում անցկացված հետազոտության արդյունքների՝ 30.1%-ը հավակած չէ սիրիահայի հետ ընտանիք կազմելուն: Այդ զանգվածի մեջ ավելի շատ են արական, քան

²²⁷ Ստեփանյան 2001, 97:

²²⁸ Նույն տեղում, 98:

իզական սեռի ներկայացուցիչները: Տարիքային առումով էական օրինաչափություն չկա, միայն նկատելի է, որ չնչին տարբերությամբ հավանություն չսովորների զանգվածում մեծ կշիռ են կազմում ավագ սերնդի մարդիկ: Սիրիահայերի շրջանում հայաստանցիների հետ ընտանիք կազմելուն դեմ են արտահայտվել միայն երիտասարդ աղջիկները:

Վերլուծելով ստորև բերված պատճառները՝ բացահայտում ենք, որ հայաստանցի հայերի շրջանում սիրիահային սեփական ընտանիք չընդունելու հիմքերը մեծամասամբ կենցաղամշակութային են (ընդհանուր կշռում կազմում են 39.8%, տես աղյուսակ 23), որոնք հետևյալ արտահայտումներն ունեն՝ նրանք տարբեր են իրենց սովորոյթներով, ավանդույթներով, կենցաղով, տարբերվում են նաև մտածելակերպով, արժեքներով և բնավորությամբ: Հայաստանցիները մտավախություն ունեն նաև, որ ամուսնության պարագայում նրանք չեն հետևի «հայկական» ավանդույթներին, արժեքներին ու ծեսերին:

Թերևս վերը նշված պատճառներն արդեն բացահայտում են հայաստանաբնակների անհանդուրժողականության մակարդակը, սակայն նրանց մի մասի մոտ հայի ինքնության զգացողություններն ավելի են սրանում, և, օտար համարելով սիրիահայերին, դուրս են մղում սեփական խմբից հետևյալ ձևակերպումներով՝ ճիշտն այն է, որ «հայր» «հայի» հետ ապրի, տեղացի-տեղացի եմ ընդունում միայն, նրանք «արաբացած են», արդեն հայ չեն, ով Հայաստանից դուրս է, հայ չեմ համարում, «երրորդ կարգի հայ եմ» (ընդհանուր զանգվածում կազմում է 20.3%, տես աղյուսակ 23): Այստեղ հատկապես ուշադրության է արժանի նրանց՝ որպես հայ չընդունելու, ավելին, նրանց արաբացած համարելու փաստը: Նույն իրավիճակն է եղել նաև 1970-ական թթ., երբ սիրիահայերը էթնիկ յուրայինների մեջ օտարվել ու մերժվել են: Այդ պայմաններում ձևավորվում է ներգաղթած հայի նոր ինքնություն՝ հայ, բայց երկրորդ կարգի, տեղացուն ստորադասվող, առնվազն՝ նրան ոչ նման²²⁹:

²²⁹ Ստեփանյան 2010, 239:

Աղյուսակ 23.
Հայաստանցիները չեն ընդունում սիրիահայերի հետ ամուսնությունը.
ինչու՞ (%)

Պատճառները	Հաճախակա- նություն
Սովորույթ/ավանդույթներով, կենցաղով (վատ) տարբերվում են	23.7
Չեն ուզում ուղղակի/չեն սիրում սիրիահայերին	13.6
Մտածելակերպով, արժեքներով, բնավորությամբ տարբերվում են	11.9
Ճիշտն այն է, որ «հայր» «հայի» հետ ապրի, տեղացի-տեղացի են ընդունում միայն	7.6
Նրանք «արաբացած են», արդեն հայ չեն	7.6
Ով Հայաստանից դուրս է, հայ չեն համարում, «երրորդ կարգի հայ» են	5.1
Չեն պահպանի «հայկական» ավանդույթները, արժեքները, ծեսերը	4.2
Շահադիտական նպատակներով են ամուսնանում տեղի հայերը	4.2
Բռնությունը շատ է Սիրիայում, տղամարդիկ բռնապետ են, կանայք իրավունքներ չունեն	2.5
Վատ վարք ունեն	1.7
Պատերազմի պատճառով	1.7
Այլ	2.6
Դժվարանում է պատասխանել	13.6
Ընդամենը	100.0

Այսպիսով, սիրիահայերի շրջանում բավականին բարձր է այլեթնիկ ամուսնությունների նկատմամբ անհանդուրժողականության մակարդակը, ավելին, այն սրանում է հատկապես այլակրոն ազգերի համատեքստում: Երկար տարիներ, ապրելով և կենսագործունեություն ծավալելով մահմեդական աշխարհում, նրանք հայի ինքնության պահպանման գործում եկեղեցուց հետո կարևոր դերակատարությունը վերագրում են ընտանիքին, ուստի, հայկական միջավայրից զույգի ընտրությունն այդ գործընթացի հաջողության ամենակարևոր երաշխիքն է: Ի տարբերություն սիրիահայերի, որոնց մեծամասնությունը կողմ է հայաստանցիների հետ ամուսնությանը, վերջիններս ավելի

անհանդուրժողական են և սիրիահայերին դժվարությամբ են ընդունում սեփական ընտանիքներ: Գենդերային ցուցանիշն այստեղ կարևոր գործոն է համարվում, քանզի մեծամասամբ արական սեռի ներկայացուցիչներն են, որ հավանություն չեն տալիս սիրիահայերի հետ ամուսնությանը: Ընդ որում, նման վերաբերմունքը փոխադարձ է այն իմաստով, որ սիրիահայ աղջիկների մեծամասնությունը նույնպես դեմ է հայաստանցի տղաների հետ ամուսնությանը: Օտար-յուրային տարանջատման պատճառներն ավելին, քան հիմնավոր են, և հասնում են՝ ընդհուպ անձնային մակարդակ:

3.3. Ամուսնա-հարսանեկան ծեսեր.

համեմատություններ հայաստանցի հայերի հետ

Պատմական Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական մարզերում ամուսնությունը ճանաչվում և իրավական կիրարկման ձև էր ստանում հարսանեկան ծեսերի և սովորույթների բազմատարր համակարգի իրագործումից հետո միայն: Հարսանեկան ծիսաշարը ներառում էր կենցաղավարման մեջ հաջորդական երեք հիմնական փուլեր՝ խնամախոսություն, նշանդրեք և բուն հարսանիք²³⁰: Սիրիահայերը՝ Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի սերունդները, համարվում են այդ մշակույթի կրողները, իհարկե, նաև՝ փոխանցողները: Այն, թե այսօր որքանով են կարևորվում, պահպանվում և կատարվում նախահարսանեկան, բուն հարսանեկան և հետհարսանեկան ծիսակատարությունները նրանց կողմից, կբացահայտենք աշխատության հաջորդ էջերում:

Հայերի ընտանեկան ծիսակարգի կառուցվածքում խոսք առնելը և նշանդրեքը, ըստ ավանդույթի, հանդիսանում են ամուսնության անհրաժեշտ նախապայմաններ և կարևոր տեղ են գրավում մինչհարսանեկան փուլում²³¹: Այսօր այդ ավանդույթը կարևորվում է և՛ սիրիահայերի, և՛ հայաստանաբնակ հայերի մեծ մասի կողմից, ընդ որում, համեմատության մեջ նշանդրեքն ավելի կարևոր ծիսակատարություն է համարվում, քան խոսքկապը (տես աղյուսակ 24):

²³⁰ Նահապետյան 2007, 63–64:

²³¹ Վարդանյան 2014, 180:

Աղյուսակ 24.

Ամուսնական ծեսերի կարևորումը հայաստանցիների և սիրիահայերի մեջ (%)

Ամուսնական ծեսերը	Սիրիահայեր	Հայաստանցիներ
Խոսքկապ	64.0	61.8
Նշանդրեք	76.0	81.1
Քավոր	92.0	84.7
Ազաբ բաշի	4.0	77.2
Հարսնաքույր	20.0	80.2
Հարսանեկան խնջույք	40.0	81.9
Հարսանեկան ճանապարհորդություն	16.0	69.1
Եկեղեցական պսակադրություն	100.0	87.2
Հարսանիքի օրը ամուսնության գրանցում	96.0	57.9
Տեառնընդառաջ	64.0	74.1
Օժիտ	48.0	57.7

Նկատենք, որ եթե նշանդրեքն ավելի շատ կարևորվում է ՀՀ հայերի կողմից, ապա խնամախոսությունը, ընդհակառակը, շարունակում է կարևոր ծես համարվել սիրիահայերի մեջ, չնայած տարածվածության և ձևի իմաստով այն ևս որոշակի փոփոխությունների է ենթարկվել. «Նախքան ավելի ազատություն առնելը մեր երիտասարդներու, մարդիկ գնում էին՝ աղջիկը տեսնում էին մաման, պապան, վերջը տանում էին տղան: Տղան գնում էր, աղջիկը տեսնում էր: Վերջը ուզում էին աղջկան, եթէ հաւանէին: Իսկ հիմա էդպէս չէ: Հիմա աղջիկը եւ տղան մի քանի անգամ կամ նոյնիսկ վեց ամիս դուրս են գալիս միասին, գնում-գալիս են, իրանք իրար հանգստանում են եւ երբ որ մեզի հրաման տան, որ մենք արդէն պիտի ամուսնանանք, տղու տերը գալիս է աղջկա մամայի մօտ, ընտանիքի մօտ եւ ուզում է աղջկան» (55 տ. կին, ք. Երևան)²³²:

Չնայած ծեսի հետ կապված տարբերություններին՝ այսօր կան սիրիահայ երիտասարդներ, որոնց կողմից ընդունվում և կիրարկվում

²³² Հակոբյան, ԴԱՆ, 2014:

են հայաստանաբնակ հայերի մեջ տարածված նախահարսանեկան ծիսակարգի որոշ տարրեր. «*Խօսք առնել, նշանդդէք՝ փարբերութիւնները շար են, էստեղ աւելի շար ադաթներ են պահվում: Մեր նշանդդէքն աւելի շար էստեղի ադաթներով էր (հարսնացուն գիւմրեցի է), էստեղի ադաթներով չէր. ես ուզեցի ըդենց: Ասենք, նշանդդէքի ժամանակ աղջիկն ու տղեն ամենքն իրանց կողմից կոնեակ են բերում: Ըդենց բաները, օրինակ, չկար էստեղ: Էստեղ մի քիչ աւելի ճոխ էր. ես էդպէս հասկացայ» (26 տ. տղամարդ, ք. Երևան)²³³:*

Հայ ընտանիքներում քավորի առկայությունը հարսանեկան ավանդական տարրերից ամենապահպանվածն է՝ չնայած արդի ժամանակներում առկա ձևափոխությունների: «Մեր օրերում քավորի կերպարը որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Ի տարբերություն սերնդեսերունդ փոխանցված պատենական քավորի, այժմ հաճախ քավոր կարող է դառնալ ազգականներից կամ փեսացուի ընկերներից մեկը: Ավելին, նա կարող է լինել երիտասարդ և նույնիսկ չամուսնացած, որը նախկինում բացառվում էր՝ ըստ ավանդական ընդունված կանոնների»²³⁴:

Ի տարբերություն Հայաստանում պահպանված և ընդունված ավանդույթի՝ սիրիահայ համայնքում քավորի ընտրությունը կատարվում է ավելի մոտ՝ ընտանեկան և/կամ ազգակցական միջավայրից. «*Մեր մօտ միշտ այդպէս եղեր է, ընտրութիւն չկա. կնքահայրը միշտ եղեր է ամուսնու եղբայրը: Եթե եղբայր չունի՝ իր հարազատ քոյրը եւ ամուսինը, եթե ադ ալ չկա, իր հարազատ հորեղբայրը կամ քեռին» (27 տ. կին, ք. Երևան)²³⁵: Երկու խմբերում տարբեր են նաև քավորին վերագրվող պարտականությունները: Օրինակ, սիրիահայերի մեջ ոչ միայն տարածված չէ, այլ նաև նրանց մեծ մասին անծանոթ է հայկական խորովածը մատուցողին քավորի կողմից նվեր (գումար) տալու երևույթը. «*Էստեղ հարսանիքների չեն եղեր, բայց լսել եմ, որ շար փարբերութիւններ կան: Էստեղ հեփաքքիր է: Ասում են՝ խնջոյքի ժամանակ**

²³³ Նույն տեղում:

²³⁴ Վարդանյան 2014, 190:

²³⁵ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

խորոված կբերեն, կպարեն, մինչեւ որ կնքահայրը իրենց փող տայ» (22 տ. կին, ք. Երևան)²³⁶:

Նշված տարբերությունների հետ մեկտեղ, սիրիահայերի և հայաստանցիների կարծիքներում տարբեր է նաև քավորի կարևորության հարցը: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 24-ում, սիրիահայերն ավելի շատ են կարևորում քավորի առկայությունը հայկական հարսանեկան ծեսի ժամանակ, քան հայաստանաբնակները: Փաստորեն, քանակական ցուցանիշը բանասացների մեկնաբանությունների ապացույցն է:

Սակայն նույնը չենք կարող ասել հարսանիքներում հարսնաքրոջ և ազաբ բաշու դերակատարության մասին. սիրիահայերի միայն 20%-ն է հարսանեկան ծիսակատարության մեջ կարևոր համարում հարսնաքրոջ, և դրանից հինգ անգամ պակաս՝ ազաբ բաշու ներկայությունը: Նրանց հետ անցկացված խորին հարցազրույցներից պարզ է դառնում, որ սիրիահայ համայնքում հարսնաքրոջ, առավել ևս, ազաբ բաշու գաղափարը չի կիրարկվում հարսանիքներում, իսկ վերը բերված քանակական ցուցանիշները վկայում են ավանդույթի նկատմամբ նրանց մեջ ձևավորված հետաքրքրության մասին:

Հարսանեկան հանդիսությունը ավանդական մշակույթի և նրա պահպանման կայուն ցուցանիշներից մեկն է: Այսօր ժամանակակից հայերի հարսանեկան արարողությունը ներկայացնում է ավանդականի և բազմաթիվ նորամուծությունների յուրահատուկ համադրություն: Շատ ավանդույթներ, պահպանելով ազգային նկարագիրը, այսօրվա նոր պահանջներին համապատասխան ստացել են ժամանակակից իմաստավորում: Սա վերաբերում է հատկապես հարսանիքի անցկացման վայրին, հարսանեկան զգեստին, խնջույքի ճաշացուցակին, նվերներին, օժիտին և այլն²³⁷: Սիրիահայ համայնքում ևս հարսանեկան հանդիսությունը կրում է ավանդական հայկական տարրեր և ազդված է այլ մշակույթներից՝ առավելապես արաբական երկրների մշակույթից: Վերջին տարիներին սիրիահայ համայնքում հարսանեկան

²³⁶ Նույն տեղում:

²³⁷ Վարդանյան 2014, 189:

խնջույքներն ավելի շատ կազմակերպվում են հարսանյաց սրահներում, ռեստորաններում, որոնք փոխարինելու են եկել նորապսակների բնակարաններին, ինչպես որ տարածված է այժմ հայաստանաբնակների շրջանում: Սիրիայում հարսանեկան խնջույքը սկսվում է ուշ երեկոյան կամ կեսգիշերին և տևում մինչև լուսաբաց՝ պայմանավորված այն հանգամանքով, որ եկեղեցում պսակադրությունը տեղի է ունենում երեկոյան ժամը 9-ին:

Խնջույքի ճաշացանկին անդրադառնալիս նկատենք, որ, ըստ սիրիահայ բանասացների, «*հարսանիքն իր հատուկ ուրեստը չունի, նման սովորություն չի պահպանվել*»: Մյուս բոլոր տոներին պատրաստվող ուտեստները պատրաստվում են նաև հարսանիքներին՝ «տոլմա»²³⁸ «քյուֆթա»²³⁹, «չիյ քյուֆթա»²⁴⁰, «ղավուրմա» «խորոված»՝ հավի, տավարի, քյաբաբ, «թաբուլե»²⁴¹, «հումուս»²⁴², «մուհամմարա»²⁴³, «մութաբբալ»²⁴⁴, «աբու դաննուջ»²⁴⁵, «ֆեթթուջ»²⁴⁶ և այլն: Ցանկալի ուտեստներից է նաև «ոչխարի փորը»²⁴⁷: Ռեստորանների ճաշացանկի մեջ կարող

²³⁸ Տոլման պետք է պատրաստված լինի խաղողի թփով: Կարող է լինել նաև առանց մսի տեսակը՝ «յալանչի», որը թարգմանաբար նշանակում է «ստախոս»՝ հայկական պասուց տոլման՝ թփով:

²³⁹ Կան քյուֆթայի մի քանի տեսակներ, օրինակ, իչի քյուֆթան լցոնած բլրուրե կոլոլակ է, որը պատրաստում են նաև հայաստանցիները: Հարսանիքներում սիրիահայերը քյուֆթան մատուցում են տապակած վիճակում: շոգեխաշած տեսակը տոնական սեղաններին չի դրվում:

²⁴⁰ Միսը շաղախած բլրուրի հետ, մատուցում են հում վիճակում՝ զարդարելով մաղադանոսով:

²⁴¹ Դեռևս մեծ հայրենադարձության տարիներից արաբական երկրներից բերված կերակրատեսակ է (մանրացրած ձավարով, սոխ ու կանաչիով, գեյթունի ձեթով աղցան), որը տեղ է գտել նաև տեղաբնակների խոհանոցում:

²⁴² Սիսեռով կերակրատեսակ, որը յուրատեսակ համեմունքի հավելում է պահանջում:

²⁴³ Խորոված կարմիր պղպեղով և ընկույզով աղանդեր, որը գալիս է Միջին Արևելքի երկրներից:

²⁴⁴ Սմբուկով դեյիկատես. բաղադրությունը՝ խորոված սմբուկ, թահին, սխտոր:

²⁴⁵ Սմբուկով աղցան, կոչվում է նաև «պապա դաննուջ»:

²⁴⁶ Բաղադրությունը՝ հազարաթերթիկ, մանրացված լոլիկ, պղպեղ, վարունգ, սոխ, սխտոր, համեմունքներ:

²⁴⁷ Ուտեստն այդպես է կոչվում, որովհետև ամբողջական ոչխարի փորը լցոնում են աղացած մսով, բրնձով և նուշով պատրաստած խառնուրդով, ոչխարը եփում են

են լինել նաև «եվրոպական, ծովային ուտելիքներ»՝ կախված սիրիահայերի նախասիրություններից:

Սիրիահայերի հարսանիքներում երաժշտական նվագակցությունը ներառում է ոչ միայն հայկական ազգային մեղեդիներ, այլև ժամանակակից պարեր ու ռիթմեր: Ողջ խնջույքում առանձնահատուկ տեղ ու դեր ունի արաբական երաժշտությունը: Ի տարբերություն հայկական ավանդական հարսանիքների՝ սիրիահայերի հարսանիքներում բացակայում է նվագախմբի ուղեկցությամբ հարսի տուն գնալու ավանդույթը: Նորապսակները հանդիպում են եկեղեցում հայկական երաժշտության հնչյունների ներքո. «Մի հայր «Ուրախ լեր» երգ ունինք, եթե Դուք ծանօթ եք, չեմ գիտեր: Դա, երբ որ հարսն ու փեսան կը մտնեն, անպայման կ'երգեն, առանց դրան պսակ չ'ըլլար» (55 տ. կին, ք. Երևան)²⁴⁸:

Հարսանիքներին ոսկյա զարդերի հետ միասին գոյություն ունի նաև նվերի դրամական ձևը, որը վերջին տարիներին ավելի լայն տարածում է գտել: Սիրիահայերի ամուսնական ծիսակարգի մեջ է մտնում նաև հարսանեկան ճանապարհորդությունը, որը կազմակերպվում է կան՝ եվրոպական երկրներում, կան՝ Հայաստանում, կան՝ Սիրիայի շրջաններից որևէ մեկում: Հարսանիքից հետո զույգերի՝ տանից դուրս անցկացրած ժամանակը նրանք անվանում են «մեղրամիս», «մեղրալույս»:

Մշակութային և սոցիալական միջավայրի փոխվելուց հետո սիրիահայերի պատկերացումներում փոխվել են նաև հարսանեկան հանդիսությունների նկատմամբ վերաբերմունքն ու դրանք Հայաստանի պայմաններում կազմակերպելու կարևորությունը: Քանակական ցուցանիշները վկայում են, որ ավելի շատ երկրորդ պլանում է հայտնվել հարսանեկան ճանապարհորդությունը (հարսանեկան ճանապարհորդությունը կարևորել են սիրիահայերի միայն 16%-ը, տես աղյուսակ 24)՝ պայմանավորված ֆինանսական սուղ պայմաններով, ինչու ոչ՝ նոր հոգեվիճակում հայտնվելու փաստով:

և մաս առ մաս մատուցում բրնձով փլավի հետ:

²⁴⁸ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

Այսօր սիրիահայերի կողմից հարսանեկան ծիսական տարրերը պահպանելը, նրանց համայնքում ընդունված և տարածված հարսանեկան ավանդույթները շարունակելը կախված են մի քանի կարևոր գործոններից, որոնց մեջ կարելի է առանձնացնել զույգերի ենթաէթնիկ պատկանելիությունը, նյութական վիճակը և այլն: Կախված նրանից, թե որ խմբի ներկայացուցիչներ են ամուսնացող զույգերը՝ սիրիահայեր են, թե նրանցից մեկը՝ հայաստանցի հայ, փոխվում են հարսանեկան հանդիսության կարևոր տարրերը՝ առաջին հերթին ուտեստներն ու երաժշտությունը: Եթե նորապսակները սիրիահայեր են, ապա հարսանեկան հանդիսությունը կազմակերպում են իրենց հարազատ դարձած ավանդական տարրերով. «Քանի որ բոլոր հրաւիրեալներն ալ հալեպցի էին, արդէն շար նորմալ էր, որ սուրիական «սիւտեմով» պիտի ընէին: Երգերից շարը արաբերէն էր» (49 տ. տղամարդ, ք. Երևան): «Ամուսնացողները նոր էին եկել Հալեպէն: Հայկական ռեստորան էր, բայց նոյնիսկ երգիչը Սուրիայէն էր եկած, ճաշերն ալ սուրիական էին պատրուիրուած: Չէ, հայկական երաժշտութիւն չկար» (58 տարեկան կին, ք. Երևան)²⁴⁹:

Եթե նորապսակ զույգում մեկը հայաստանցի հայ է, իսկ նման զույգերում մեծամասամբ աղջիկն է հայաստանցի, ապա երաժշտության մեջ ավելի քիչ է նախապատվություն տրվում արաբականին, իսկ ուտեստները հիմնականում ընտրվում են հայկական ռեստորանի ճաշացուցակից, չնայած որ իրենց քիմքին հաճելի ուտելիքները հնարավորության սահմաններում շարունակում են զարդարել հարսանեկան սեղանները: Ամուսնացող զույգերի և նրանց ազգականների ֆինանսական հնարավորություններից կախված՝ փոխվել է նաև հարսանեկան նվերների արժեքն ու ձևը, հարսանեկան ճանապարհորդության մեկնելու տարածվածությունը. «Հիմա էստեղ ընդհանրացաւ դրամ տալ հարս ու փեսային, որովհետքեւ նախ այդ անձին ինչ ալ որ տանես, արիկա բեռ պիտի չընէ, պտտեցնէ իր հետ» (69 տ. տղամարդ, ք. Երևան)²⁵⁰:

²⁴⁹ Նույն տեղում:

²⁵⁰ Նույն տեղում:

Օժիտը հարսանեկան ծիսակատարության անբաժանելի մասն է ինչպես հայաստանցի հայերի, այնպես էլ սիրիահայերի մեջ, սակայն, ինչպես ցույց են տալիս քանակական տվյալները, այն ավելի շատ կարևորվում է հայաստանցիների կողմից (տե՛ս աղյուսակ 24): 2007–2008 թթ. հետազոտության արդյունքները թույլ են տալիս խոսելու այն մասին, որ Հայաստանում օժիտը հանդիսանում է ժամանակակից հայ ընտանիքի սոցիալական վիճակի արտացոլումը²⁵¹: Սիրիահայերի համար օժիտի մեջ կարևոր է հատկապես նախնիների նյութական մշակույթի արգասիքները՝ նորապսակ երիտասարդներին փոխանցելու ավանդույթը, որն ավելի շատ կարևորվում է ավագ սերնդի սիրիահայերի, քան երիտասարդների, և ավելի շատ կանանց, քան տղամարդկանց կողմից: «Օժիտը շարք գորատոր բան է մեր մօտ, շարք յարգելի բան է: Պէտք է աղջիկը ամուսնու փունը գնալէն ետք երկու փարի շուկայ չգնայ: Եւ մենք փալիս ենք Սուրիոյ մեջ այս բոլորը՝ ձեռագործներ, մահճակալի ծածկոցներ, ինչ որ պէտք է, որ հարսը իրեն հարս զգայ: Եւ շարքաւ բան է օժիտը. ես սիրում եմ օժիտը եւ օժիտի մասին խօսիլը: Օրինակի համար, մեր օժիտներու մեջ եղած քաղաքներու ձեռագործներէն կա՛ Ուրֆայի գործ, Մարաշի գործ, Քիլիսի գործ, Տիգրանակերտի, Վանի, Այնթապի: Ամեն մշակոյթէն մեր օժիտներու մէջ մի կտոր կայ: Այստեղու օժիտները, ես վստահ եմ, որ ձեռագործ չի կարող ըլլայ, չի պատահի, որ ունենան: Օժիտը ըսելը մեր մօտ ուրիշ բան է, մեր մօտ օժիտը ըսելը՝ ըսել է ձեռագործ, ոչ թե՛ հագուստ» (55 տ. կին, ք. Երևան)²⁵²:

Փաստորեն, եթե հայաստանաբնակ հայերի շրջանում օժիտը՝ բաժինքը, ներառում է վերմակ, ներքնակ, սպիտակեղեն, հարսի անձնական հագուստ, երկարատև օգտագործման կենցաղային առարկաներ, նաև ննջարանի, հյուրասենյակի կամ խոհանոցի կահույք, ապա սիրիահայերի համար այն ավելին է, քան իրն ու հագուստը: Չնայած արդի ժամանակներում օժիտի մաս կազմող, սակայն ոչ առօրյա

²⁵¹ Վարդանյան 2014, 198:

²⁵² Հակոբյան, ԴԱՆ, 2014:

գործածական իրերի նկատմամբ հետաքրքրությունը պակասել է երիտասարդների մոտ. «...*Բայց հիմա, որ նոր սերունդը չի ուզէ, մամաները կաշխատեն տան համար նվեր տանել, ինչ որ հարսը պիտի գործածէ: Պարտադիր չէ՝ աղջիկն ուզում է, թէ չէ, մաման տանում է*» (58 տ. Կին, ք. Երևան)²⁵³: Մեր բանասացների փոխանցմամբ՝ նախկինում հարսի տարած օժիտը նաև ցուցադրաբար ներկայացվել է հյուրերին, սակայն ժամանակի թելադրանքով և երիտասարդների ցանկությամբ այդ ավանդույթը տարածման լայն շրջանակ չունի և կամաց-կամաց դուրս է գալիս կիրառությունից: «*Էս վերջերս երիտասարդները չեն ուզում, որ օժիտը բացեն, ցուցադրեն*» (22 տ. Կին, ք. Երևան)²⁵⁴:

Ամուսնության գրանցում: Այլէթնիկ և այլ կրոնական միջավայրում սիրիահայերն ապրել են հայի ինքնությունը պահելու առաջնային գիտակցությամբ, որում կարևորագույն դեր են ունեցել կրոնն ու եկեղեցին: Հայկական եկեղեցին՝ լինի առաքելական, կաթոլիկ, թե ավետարանական, նրանց կողքին է եղել նաև կյանքի կարևոր իրադարձությունների ժամանակ: Հետևաբար, եկեղեցական պսակադրությունը սիրիահայ նորապսակների հարսանեկան ծեսի պարտադիր և կարևոր տարր է համարվում:

Հարսանիքի կարևոր մաս է համարվում նաև ամուսնությունը պաշտոնապես գրանցելու արարողությունը: Նույն օրը՝ պսակադրությունից առաջ, զույգերը ներկայանում են «Առաջնորդարան» (Սիրիայում հայկական եկեղեցիները խոշոր քաղաքներում ունեն առաջնորդարան, օրինակ, Հալեպի Ազգային առաջնորդարան)՝ ամուսնությունը գրանցելու խնդրանքով: Առաջնորդարանն ընդունում է երիտասարդների դիմումը, իսկ հետագա իրավական գործողությունների իրականացման պատասխանատվությունը՝ վերցնում իր վրա: Արդյունքում, ինչպես սիրիահայերն են ասում, տրամադրվում է «ընտանեկան տետրակ», որտեղ ներառված է նաև երիտասարդների ամուսնական կարգավիճակի պատմությունը, օրինակ, տղամարդը քանի

²⁵³ Նույն տեղում:

²⁵⁴ Նույն տեղում:

կին և երեխա ունի: Եվ պատահական չէ, որ այսօր էլ ամուսնության վավերացման ձևերից երկուսի՝ եկեղեցական պսակադրության և քաղաքացիական գրանցման հարցում սիրիահայերի դիրքորոշումները միանշանակ են և քանակական ցուցանիշներով արտահայտված են հետևյալ կերպ. նրանց բացարձակ մեծամասնությունը կարևոր է համարում զույգերի՝ եկեղեցով ամուսնությունը, իսկ 96%-ը՝ ամուսնությունը նույն օրը պաշտոնապես գրանցելը (տե՛ս աղյուսակ 24):

Սիրիահայերի համար հարսանեկան այս ավանդույթները պահպանելու կարևորությունն արտահայտվում է ոչ միայն գիտակցական և զգացական մակարդակում, այլև՝ վարքային, որի վկայությունն են նաև քանակական ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 25):

Աղյուսակ 25.
Ամուսնության գրանցման փուլերը (%)

Փուլերը	Սիրիա հայերի դեպքում	ՀՀ հայերի դեպքում
Մինչև հարսանիքը	33.3	7.1
Հարսանիքի օրը	61.1	3.1
Հարսանիքից հետո՝ մինչև առաջին երեխայի ծնունդը	5.6	61.7
Երեխայի/երեխաների ծնվելուց հետո	0.0	12.2
Չի գրանցվել	0.0	15.9
Ընդամենը	100.0	100.0

Ինչպես տեսնում ենք, սիրիահայերի գերակշիռ մասը ամուսնությունը գրանցել է հարսանիքի օրը կամ մինչև հարսանիքը՝ այս դեպքում ի նկատի ունենալով սիրիահայ համայնքում ընդունված և կիրառվող հարսանիքի օրվա հաջորդական գործողությունները: Նկատենք, որ շատ քիչ կշիռ են կազմում այն հայաստանաբնակ հայերը, ովքեր ամուսնությունը պաշտոնապես գրանցելու արարողությունն իրականացրել են հարսանիքի օրը կամ մինչև հարսանիքը: Հայաստանում ամուսնության հասարակական վավերացումն այսօր ավելի շատ ընկալվում է պարտադիր հարսանեկան արարողության, քան քՎԱԳ-ի

գրանցման միջոցով, որը հաճախ կատարվում է հարսանիքից շատ հետո և հիմնականում առանց որևէ հանդիսավորության²⁵⁵:

Սիրիահայերի համար որքան կարևոր է եկեղեցում պսակադրության փաստը, նույնքան՝ բովանդակությունը, որը, Հայաստանում տարբեր լինելով հանդերձ, անհանգստության և զայրույթի զգացումներ է առաջացնում նրանց մեջ: «Մեր մօտ պսակը, ոչ թէ մեր մօտ, այլ քրիստոնէութեան մեջ, յայտուկ արարողութիւն ունի, որը ո՛չ ես եմ գրել, ո՛չ՝ դուք. Սուրբ գիրքէն առնուած բան է: Այդ արարողութիւնը պէտք է ամենաքիչը գոնէ երեք-քառորդ ժամ տեւի: Այդ պսակը ո՞նց սկսեց, ո՞նց վերջացաւ, մենք չհասկցանք» (55 տ. կին, ք. Երևան)²⁵⁶: Իրականում, Հայաստանում պսակադրության արարողության ընթացքում գրաբարով ընթերցվում են այն մասերը, որոնց համար նախատեսված է երգեցողություն՝ մեջբերումներ Ավետարանից, մինչդեռ աղոթքների մի մասն ու քարոզը կատարվում են աշխարհաբար: Չնայած դրան՝ ամբողջ արարողակարգի բովանդակությունն ու խորհուրդը հիմնականում մնում են անհասկանալի ինչպես պսակվողների, այնպես էլ ծեսը դիտողների համար: Այսօրվա պսակադրության հատված են ներթափանցել եկեղեցական որոշ ծեսեր, որոնք նախկինում կատարվում էին այլ օրերի և հաճախ՝ եկեղեցուց դուրս, և որոնք այժմ համատեղված են մեկ ծառայության մեջ, և այս բոլոր ծեսերն իրականացվում են հնարավորինս կարճ տարբերակով²⁵⁷:

Այսպիսով, ամուսնական ծիսակատարություններից սիրիահայերն ավելի շատ կարևորում են եկեղեցում պսակադրությունը, քավորի առկայությունը, ինչպես նաև ամուսնությունը հարսանիքի օրը գրանցելու արարողությունը: Եթե առաջին երկուսը նրանք կարողանում և պահպանում են նոր սոցիալ-մշակութային միջավայրում, ապա վերջինս, ըստ Հայաստանում ընդունված սովորույթի, այլևս չի համարվում նրանց հարսանեկան ծիսակարգի պարտադիր տարր: Սրա հետ մեկտեղ, սիրիահայ համայնքում ընդունված և տարածված հարսանե-

²⁵⁵ Շագոյան 2011, 396:

²⁵⁶ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

²⁵⁷ Շագոյան 2011, 392:

կան ավանդույթները շարունակելն այսօր կախված է նաև ամուսնացող զույգերի էթնիկ պատկանելիությունից, նյութական և հոգեբանական վիճակից:

3.4. Կրոնական և տոնական վարքագիծ. նմանություններ և տարբերություններ

Սիրիահայերը բազմաթիվ խնդիրների կողքին բախվում են նաև հայի ինքնությունը կազմող կրոնական հարցերի հետ, որոնք կարևոր ազդեցություն ունեն հայաստանյան իրականությանը նրանց ինտեգրման, առավելապես՝ փոխադարձ հանդուրժողականության և համագործակցության, ազգային-կրոնական արժեհամակարգի շուրջ համախմբված հայրենակիցների հետ հայրենիքում ապրելու գործընթացի վրա: Գրականության մեջ (< Էսսեր և Ֆ. Հեկման) առանձնացվում են ինտեգրացիայի չորս ասպեկտներ՝ 1) մշակութային (ակուլտուրացիա), որի շրջանակներում ներգաղթյալները/միգրանտները յուրացնում են ընդունող հասարակության լեզուն ու նորմերը, 2) կառուցվածքային, որը ենթադրում է նոր տեղափոխվածների ներառում ընդունող հասարակության մոտեցումների և կարգավիճակների համակարգ, 3) սոցիալական, որի դեպքում խոսքը գնում է փոխադարձ շփումների մասին, 4) նույնականացնող, որը ենթադրում է ներգաղթյալների՝ հասարակության մեջ ներգրավվելու զգացմունքային ասպեկտը²⁵⁸: Ուսումնասիրելով սիրիահայերի կրոնական և տոնաձիսական վարքագիծը²⁵⁹ կբացահայտենք, թե նրանց ինտեգրումը որ ասպեկտով է առավել հաջողված:

Սիրիայում հայը երկրի սահմանադրության համաձայն համարվում է սիրիացի քաղաքացի՝ իր համայնքային-եկեղեցական պատկանելությամբ: Այդ համայնքները երեքն են՝

1. Հայաստանյայց Առաքելական եկեղեցու համայնք. ունի երկու թեմ՝ Բերիո (առաջնորդանիստը՝ Հալեպի Սրբոց Քառասնից

²⁵⁸ Esser 2004, 1126–1159; Heckmann, Bosswick 2005, 9.

²⁵⁹ Հակոբյան 2016ա, 360–373:

Մանկանց եկեղեցի), որը ենթակա է Անթրիլիասին, և Դամասկոսի (առաջնորդանիստը՝ Դամասկոսի Ս.Սարգիս եկեղեցի), որը ենթակա է Էջմիածնին:

2. Հայ Կաթողիկե համայնք²⁶⁰:
3. Հայ Ավետարանական համայնք, որն իր եկեղեցիներով կապված է Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության հետ²⁶¹:

Սիրիահայ համայնքում կա նաև չորրորդ զանգվածը, որը սիրիական լատինական համայնքի մաս է կազմում, և որի եկեղեցական ծիսական լեզուն արաբերենն է:

ՀՀ-ում գտնվող սիրիահայերի մեծ մասը (88%-ը) Առաքելական եկեղեցու հետևորդ է, և բացի հալեպահայ մեծաթիվ համայնքից, նրանք ներկայացնում են Դամասկոս, Ղամիշլի, Ռաքքա, Դեր Ջոր բնակավայրերը: Հայ Կաթողիկե եկեղեցու դավանորդները (6.5%-ը)՝ միայն Հալեպ, իսկ Ավետարանական եկեղեցունը (5.5%-ը)՝ Հալեպ և Քեսաբ համայնքներից եկած հայերն են: Որակական հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ, չնայած դավանաբանական տարբեր ուղղվածություններին, սիրիահայերն այս հարցում հանդուրժողականություն են ցուցաբերում միմյանց և հայաստանցիների նկատմամբ, և որ հատկանշական է՝ այդ բառի ոչ թե բացասական, այլ դրական ընկալմամբ, այն է՝ միմյանց կրոնադավանաբանական արժեքների ու գաղափարների ճանաչողություն, ընդունում և հարգանք միմյանց նկատմամբ: Բոլորովին պատահական չէ այն գիտակցումը, որ գլխավորը քրիստոնեական հավատքն է, դավանանքը երկրորդական նշանակություն ունի, քանզի հայության տարբեր հատվածների միջև փոխադարձ համերաշխությունն ապահովում են

²⁶⁰ Սիրիայում ունի երեք թեմ՝ Բերիո թեմ (Հալեպ), Բարձր Ձեզիրեի թեմ (Կամըշլի), Դամասկոսի պատրիարքական էքզարքություն («Հայ Կաթողիկե եկեղեցի», «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան 2002, 536):

²⁶¹ Սիրիայում հայ Ավետարանական եկեղեցիներ գործում են Քեսաբում, Էքիզ-օլուքում, Կարադուրանում, Հալեպում, Հոմսում («Հայ Սփյուռք» հանրագիտարան 2003, 522):

երկու շատ կարևոր աշխարհայացքային հիմքեր՝ 1) ազգային բարձր ինքնագիտակցությունը, 2) ընդհանուր քրիստոնեական կրոնը: Առաջինը ենթադրում է կրոնադավանանքային պատկանելիության փոխարեն ընդհանուր ազգային պատկանելիության գիտակցության գերակայություն, այսինքն՝ առաջին հերթին հայ, այլ ոչ թե առաքելական, կաթողիկե կամ ավետարանական լինելու զգացողության առաջնաշում: Երկրորդը, միևնույն կրոնին պատկանող տարբեր դավանանքային շերտերի գիտակցության մեջ ընդհանուր կրոնական պատկանելիության գիտակցության խթանումն է, այսինքն՝ առաջին հերթին քրիստոնյա, այլ ոչ թե առաքելական, կաթողիկե կամ ավետարանական լինելու զգացողություն²⁶²:

Սիրիահայ համայնքի շրջանում վերջինս լիովին գիտակցված էր, քանզի մահմեդական աշխարհում կրոնը հայի ինքնության պահպանման կարևորագույն գործոնն է եղել: *«Որ իսլամական աշխարհի մեջ ապրեցանք, մենք ճանաչուեցանք որպէս կրօնական փոքրամասնութիւն: Վաւերացումը էդպէս էր: Ուրեմն, մենք պարտաւոր էինք Սուրիոյ մէջ ըլլալ հայ, քրիստոնեայ եւ դաւանանքի ենթակայ, այսինքն՝ պէտք է որոշուած ըլլայ կամ առաքելական, կամ կաթոլիկ, կամ ավետարանական: Չի կարելի ազատ՝ ուր կ'ուզես, էրթաս, չի՛ կարելի: Պէտք է արձանագրուած ըլլայ պետականօրէն, որ մենք ունենանք մեր դաւանանքը»* (56 տ. տղամարդ, ք. Երևան)²⁶³:

Կրոնական վարքագծի ուսումնասիրության կարևոր ցուցիչներից է հավատքի հանդեպ վերաբերմունքը: Այն հարցին, թե ինչպիսի վերաբերմունք ունեն, սիրիահայերի 98%-ը նշել է, որ հավատում է: Շատ քիչ զանգված, այսինքն՝ հարյուրից մեկն է, որ անտարբեր է (1%) կամ չի հավատում (1%), ընդ որում, նրանք Առաքելական եկեղեցու հետևորդներ են: Վերևում նշեցինք, որ դավանանքային հարցում նրանք հանդուրժողական են ինչպես սեփական համայնքի, այնպես էլ հայաստանցիների նկատմամբ: Փոխարենը, վերջիններիս նկատմամբ ան-

²⁶² Սիմավորյան և այլք 2011, 58, 61:

²⁶³ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

հանդուրժողականության որոշակի մթնոլորտ է առկա նրանց հավատի պակասի/բացակայության, եկեղեցու և եկեղեցական արարողությունների նկատմամբ անտարբերության, պատարագներին այլ կրոնական ուղղության ներկայացուցիչների (արաբների, հնդիկների) առկայության, կրոնական տոների չիմացության, դրանք ըստ էության չնշելու, ինչպես նաև քրիստոնեական արժեհամակարգի կրողներ չլինելու պատճառով: «Էստեղ, ինչ-որ խօսել եմ, հանդիպել եմ, հինգից երեքը կամ չորսը ասում ա՛ ես չեմ հաւատում Աստուծոն: Հարցրել եմ՝ ինչի՞, պատասխան չկայ: Էտի, իմ կարծիքով, ընդամենի դաստիարակությունն ա, որ...» (22 տ. կին, ք. Երևան)²⁶⁴:

Սիրիահայերը հայաստանցիների՝ իրենց ոչ հարազատ կրոնական վարքագծի պատճառների մեջ կարևոր են համարում հետևյալները.

- Հայրենիքում հայի կրոնական և ազգային ինքնությունը չվտանգող միջավայրի առկայություն, ի տարբերություն սիրիահայի, ով այլէթնիկ և այլ կրոնական միջավայրում ապրում է այն պահելու առաջնային գիտակցությամբ: Հետևաբար, այս հարցում էական տարբերություններ են առկա, որոնք դրսևորվում են և՛ գիտակցական, և՛ վարքային, և՛ զգացական մակարդակներում:
- Հայաստանցիների՝ եկեղեցական կյանքով ապրելու ցանկության բացակայություն, որի հետևանքով առաջնային նշանակություն են ստանում աշխարհիկ կյանքի հարաբերությունները՝ երկրորդային պլան մղելով կրոնական արժեքները:
- Օտարամոլություն, ազգային արժեքներից հեռացում, որը, ըստ սիրիահայերի դիտարկման, ավելի բնորոշ է երիտասարդներին:
- Խորհրդային շրջանում պետական մակարդակով տարվող աթեիզմի քաղաքականության ազդեցությունն առավելապես ավագ և միջին սերնդի ներկայացուցիչների վրա:

²⁶⁴ Նույն տեղում:

- Ընտանեկան դաստիարակություն, որում երկրորդական տեղ է տրվում կրոնական դաստիարակությանը:
- Սոցիալ-տնտեսական վատ պայմաններ, որոնք, ձեռք բերելով առաջնայնություն կրոնական արժեհամակարգի նկատմամբ, ազդում են հայաստանցու վարքագծի վրա:

Չնայած այս բնութագրումներին՝ սիրիահայերն էլ տարբեր կերպ են արտահայտում իրենց հավատքը. նրանց մեջ քսանից մեկը (5%, տե՛ս աղյուսակ 26) երբեք չի գնացել եկեղեցի ՀՀ-ում, ընդ որում, նրանք հավասարապես և՛ արական ու իգական սեռի ներկայացուցիչներ են, և՛ երիտասարդ ու ավագ սերնդի անձիք:

Աղյուսակ 26.

Սիրիահայերի՝ եկեղեցի այցելելու և պահք պահելու վարքագիծը (%)

	Երբեք	Երբեմն	Մշտապես	Ընդամենը
Եկեղեցի այցելել	5.0	56.0	39.0	100.0
Պահք պահել	62.0	29.0	9.0	100.0

Մշտապես եկեղեցի այցելողների զանգվածը բավականին մեծ է՝ 39%, և այս առումով ավելի ակտիվ են արական, քան իգական սեռի ներկայացուցիչները (56% և 44% համամասնությամբ): Ակտիվություն է նկատվում նաև միջին տարիքային խմբում. մշտապես եկեղեցի այցելողների կեսից ավելին 36–55 տարեկաններն են:

Քրիստոնեական կյանքի կարևոր երևույթներից է նաև պահք պահելը²⁶⁵, և, ի տարբերություն եկեղեցի այցելության, լայն տարածում չունի սիրիահայերի շրջանում (տե՛ս աղյուսակ 26): Սակայն կան այն-

²⁶⁵ Պահքը (պասք) ուտելիքի կամ դրա առանձին տեսակների համար որոշակի ժամկետով սահմանված արգելքն է, կերակուրներից լրիվ կամ մասնակի հրաժարումը: Պահքի արտահայտած կարևոր իմաստը ինքնաքննության ու խոկումի ժամանակաշրջանն է, հատկապես Մեծ պահոց շրջանը, երբ հավատացյալները ոչ միայն կերակուրներից են հրաժարվում, այլև հեռու են մնում մարմնական հաճույքներից, ապաշխարությամբ և աղոթասացությամբ չափավոր, զուսպ կյանք վարում: Քրիստոնեության մեջ պահքը հավատի ամրապնդման միջոց է, որն ունի նաև մաքրագործական և ճգնակեցական նշանակություն: Այն քրիստոնեական եկեղեցական կյանքի կարևոր երևույթներից է («Պահք», «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան 2002, 843):

պահիք, ովքեր թե՛ Սիրիայում, թե՛ Հայաստանում հետևում են պահոց օրերին, ընդ որում՝ մեծամասամբ իգական սեռի ներկայացուցիչներ: Տարիքային չափանիշի հետ համադրության արդյունքում պարզ է դառնում, որ պահոց օրերին մշտապես հետևողները մեծամասամբ միջին տարիքի սիրիահայերն են:

Կարևոր հարցերից է նաև նրանց կրոնական վարքագծի և տոների տարածվածության փոխկապվածությունը, քանզի ավանդական տոները եկեղեցական տոնացույցի հենքը կազմող գլխավոր տոներն են և անմիջականորեն առնչվում են հավատքի հետ: Կրոնա-ավանդական տոներն արդեն շուրջ մեկ ու կես հազարամյակ գոյատևում են շնորհիվ եկեղեցու, որոնք ամրագրված են նրա կողմից մշակված տոնացույցներում: Եկեղեցին առավելապես քրիստոնեական տեսանկյունով է ներկայացնում այդ տոների տիպաբանությունը²⁶⁶:

Աղյուսակ 27-ում նշված են սիրիահայերի մեջ տարածված տոները, որոնք ազգային ավանդույթների պահպանման, հասարակական հարաբերությունների կարգավորման, ինչպես նաև անձի պահանջմունքների պահպանման գործառույթ են իրականացրել: Տոնը, լինելով կրոնական վարքագծի դրսևորման տարածված ձև, կարևոր դեր է ունեցել հավատքի ձևավորման և ամրապնդման գործում: Ինչպես տեսնում ենք, Սիրիայի հայ համայնքում երեք ամենատարածված տոներն են եղել Նոր տարին, Քրիստոսի Ծնունդը, Չատիկը, ապա՝ Ծաղկազարդն ու Խաղողօրինեքը, Համբարձումն ու Վարդավառը, Սուրբ Սարգիսն ու Խաչվերացը, Տեսաճնդառաջն ու Վարդանանցը և այլն:

Կանանց և մայրերին վերաբերող տոների առումով նկատենք, որ Սիրիայում հայերի մեջ ավելի լայն տարածում է ունեցել ՍԱՀ պետական տոն համարվող մայրերի տոնը՝ ի համեմատ ապրիլի 7-ի և մարտի 8-ի, որոնք ավելի շատ սկսել են տոնել Հայաստանում եղած ժամանակ (համապատասխանաբար, 9%-ով և 13%-ով ավելի):

Ուշադրության է արժանի նաև ՀՀ անկախության տոների տարածվածությունը նրանց մեջ: Սիրիահայ համայնքի համար առաջին հան-

²⁶⁶ Մկրտչյան 2010, 8:

Աղյուսակ 27.
Սիրիահայերի՝ փոները նշելու պրակտիկան Սիրիայում և ՀՀ-ում (%)

Տոները	Սիրիայում	ՀՀ-ում
Նոր տարի	99.0	97.0
Քրիստոսի Ծնունդ	99.0	94.0
Սուրբ Սարգիս	90.0	77.0
Տեառնընդառաջ	89.0	67.0
Ծաղկազարդ	96.0	80.0
Զատիկ	99.0	75.0
Համբարձում	91.0	51.0
Վարդավառ	91.0	59.0
Ս. Աստվածածնի վերափոխում (խաղողօրհներթ)	93.0	56.0
Խաչվերաց	90.0	53.0
Վարդանանց	86.0	43.0
Սուրբ Վալենտին	70.0	50.0
Ավետում (ապրիլի 7)	27.0	36.0
Աշխատանքի օր (մայիսի 1)	70.0	43.0
1-ին հանրապետության օր (մայիսի 28)	80.0	54.0
Անկախության տոն (սեպտեմբերի 21)	54.0	53.0
Մարտի 21 (Սիրիայում մայրերի տոն)	96.0	51.0
Կանանց միջազգային օր (մարտի 8)	33.0	46.0

րապետության տոները՝ մայիսի 28-ը, ավելի նախընտրելի է, քան սեպտեմբերի 21-ը՝ փաստելով առաջին հանրապետության կարևորությունը սիյուրքահայ համայնքների համար. «Ազգային փոներն են գերադասում, առաջնահերթությունը՝ Մայիս 28-ի անկախացումը, որովհետև, եթե մայիս 28 չլինէր, Հայաստանի Հանրապետություն չէր լինի: Այսօր նշեցինք, գնացինք, մասնակցեցինք այդ խրախճանքներուն, ոգեւորուեցանք, լուսաորուեցանք հայրենասիրական այդ մթնոլորտով: Իսանդավառութիւնն աւելի մեծ է այնպէս Մայիսի 28-ի պարագային: Այսօր նաև ավելի գերադաս է սեպտեմբերի 21-ը՝ որպէս անկախացման

յո՞ն: Ես ասում եմ վերանկախացում, որովհետև անկախությւնը մէկն էր՝ մայիս 28» (41 տ. տղամարդ, գ. Առինջ)²⁶⁷:

Ընդհանուր առմամբ, ինչպես տեսնում ենք աղյուսակ 27-ից, նկատելիորեն նվազում են թվերը բոլոր տոնների առումով: Բացի դրանից, տեղի է ունենում նաև տոնների տարածվածության փոփոխություն, որոնք սիրիահայերը բացատրել են մի շարք պատճառներով. դրանք իրենց հիմքում ունեն ոչ միայն մշակութային, այլև սոցիալ-հոգեբանական և սոցիալ-տնտեսական տարրեր.

- Հայաստանում տոնը նշելու տարբերություններ՝ ի համեմատ սիրիահայ համայնքում ընդունված ձևի: Եվ սա բոլորովին պատահական չէ, քանզի հայոց արդի տոնական համակարգի ձևավորման գործընթացում նշանակալից դեր են ունեցել Հայաստանի երեք հանրապետությունները, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես քաղաքական կառուցվածքով, էթնիկ կապերի ուղղվածությամբ, կրոնի կամ հավատքի հանդեպ վերաբերմունքով, սոցիալ-տնտեսական գործընթացների ու մշակութային կապերի ինտենսիվությամբ, այնպես էլ ավանդական մշակութային տարրերի ադապտացիայի ներուժով²⁶⁸:
- Տոնը նշելու տրամադրության բացակայություն՝ պայմանավորված Սիրիայում տիրող իրավիճակով, անհանգիստ և սպասողական հոգեվիճակով, հարազատների և ընկերների՝ Հայաստանում չգտնվելու փաստով:
- Ֆինանսական միջոցների սղություն, քանզի տոնը նշելը ենթադրում է ոչ միայն եկեղեցական արարողակարգին մասնակցություն, այլև բարեկամական և ընկերական միջավայրում խնջույքների կազմակերպում, փոխայցելություններ և այլն:
- Ժամանակի սղություն, տոնական և կիրակի օրերի համար չկանոնակարգված աշխատանքային գրաֆիկ և այլն:

²⁶⁷ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

²⁶⁸ Մկրտչյան 2010, 126:

Սիրիահայերի և հայաստանցիների շրջանում տարբեր է նշվում նաև Մեծ Եղեռնի հիշատակության օրը: Սիրիայում մասնակցություն ունեն գրեթե բոլոր հայերը (ըստ քանակական ցուցանիշների՝ 99%): Ապրիլի 15-ից սկսած սիրիահայ համայնքի հաստատությունները/միությունները Առաջնորդարանին հայտնում են իրենց կողմից կազմակերպվող միջոցառման մասին. դա կլինի թատրոն, ասմունք, դասախոսություն կամ այլ բան: Ապրիլի 23-ի երեկոյան երեք համայնքները միասին ամեն տարի մի եկեղեցու բակում հիշատակի մոմավառություն են կազմակերպում, իսկ երիտասարդական ակումբների անդամները մինչև լույս կանգնում են՝ որպես պատվո պահակներ: Հաջորդ օրը սկսվում է երթը մինչև գերեզմանատուն, որտեղ և մատուցվում է Սուրբ պատարագ: Բնականաբար, ապրիլի 24-ը պետականորեն ոչ աշխատանքային օր չի համարվում Սիրիայում, սակայն գրեթե բոլոր հայերի համար այդ օրը ոչ աշխատանքային է: Իրենց պատկանող խանութների և կազմակերպությունների մուտքի մոտ նրանք փակցնում են՝ «*Ապրիլի 24, հայերի ջարդ*» արաբերենով գրված ցուցանակը՝ ի գիտություն այլ ազգերի:

Արդեն ՀՀ-ում հիշատակության օրը նշող (խոսքը որևէ ձևով նշելու մասին է՝ լինի մոմավառությամբ մասնակցություն, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելություն, հիշատակի որևէ այլ միջոցառմանը մասնակցություն) սիրիահայերի զանգվածը նոսրանում է (84%): Չնայած այս փաստին, շատերը չեն հանդուրժում այն տարբերությունները, որոնք նկատել են այդ օրվա կազմակերպման շրջանակներում.

1. ՀՀ-ում մասնավոր ոլորտի համար աշխատանքային օր: Մասնավորապես, խոսքը վերաբերում է առևտրի կետերին, սրճարան-ռեստորաններին և ժամանցի այլ վայրերին. «*Երբ ես գործի էի ընդունուել սրճարանում, իմ առաջին նախապայմանը էր էր՝ Ապրիլի 24-ին ես չեմ աշխատում: Ինչ պայմաններ լինի, ինչ իրավիճակ լինի, նախապայմանս եթէ ընդունում էք, ընդունե՞ք: Գործարարը շատ լաւ տրամադրութեամբ մօտեցաւ առաջարկին, եւ երկրորդ փարին է՝ Ծիծեռնակաբերդ եմ գնում» (41 տ. տղամարդ, գ. Առինջ)²⁶⁹:*

²⁶⁹ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

2. Տարբերություններ զգացական մակարդակում՝ որպես կոտորածի զոհերի ժառանգներ և դրա հետևանքով աշխարհով մեկ սփռված հայերի մի զանգված²⁷⁰:
3. Բացի զգացական տարբերություններից, նրանց համար ընդունելի չէ նաև հայաստանցի հայերի արտաքինը՝ հագուստ, դիմահարդարում և այլն, որով մասնակցում են հիշատակության օրվա միջոցառումներին:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները վկայում են սիրիահայերի և հայաստանցիների կրոնական արժեհամակարգի որոշակի տարբերությունների մասին: Չնայած Հայաստան տեղափոխված սիրիահայերի վարքագծում էլ փոփոխություններ են տեղի ունեցել՝ և եկեղեցի այցելելու հաճախականության, և կրոնա-ավանդական տոներին մասնակցության տեսանկյունից, այնուամենայնիվ, նրանց համար հավատքի հարցը ներքին հոգևոր հարց է, իսկ տարբերություններն ազդեցություն չեն թողնում հայաստանցիների հետ անմիջական փոխազդեցությունների վրա: Նրանք մշակութային առումով չեն ինտեգրվում՝ ասել է, թե չեն յուրացնում Հայաստանում տարածված կրոնական պրակտիկաները, չեն նույնականացնում իրենց հայաստանաբնակ հայերի հետ, չնայած որ ներառված են այս համակարգում՝ հաճախելով տարբեր եկեղեցիներ:

²⁷⁰ Մեջբերենք խորին հարցազրույցներից մի հատված. «Էդ արարողությանը մի օր առաջ որ գնացինք՝ մոմերով, չգիտեմ ինչերով, իմ համար մի քիչ ձեակերպություն էր: Որ նայում եք՝ էսքան հազար հոգի կա, բայց սրանից քանիսն են հասկանում կամ զգում՝ էդ զգացումն ինչ ա: Նայում եք ջահել արջիկ-տղեքը մեկը մյուսի հետ... ուրեմն, ուրիշ հասկացողություն կա: Նույն ձեակերպությունն է, որ մենք էնտեղ եկեղեցի ենք գնում: Ճիշտ, նույն էդ բանն ա՝ դու գնում ես եկեղեցի, բայց անունով ես գնում...» (32 տ. տղամարդ, Երևան), նույն տեղում:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

4.1. Ինչ է նշանակում «просто», «конечно».

սիրիահայերի լեզվական վարքագիծը Հայաստանում

Ընդհանրապես, անհատների մուտքը նոր մշակույթ, որպես կանոն, ուղեկցվում է խորը հոգեբանական երևույթով՝ «մշակութային շոկով»: Տերմինը գիտական շրջանառության մեջ է դրել ամերիկացի հետազոտող Կ. Օբերգը: Ըստ նրա՝ այն համարվում է լարվածության և անհանգստության արդյունք, որն առաջ է գալիս այլ մշակույթների հետ շփման ժամանակ՝ խախտելով սովորական դարձած մշակութային և հասարակական կանոնները: Այն վերապրելու ժամանակը կախված է տարբեր հանգամանքներից և գործոններից, օրինակ, այլ մշակույթի ներկայացուցիչների հետ ունեցած փոխազդեցության փորձից, սեփական մշակույթը՝ ընդունող մշակույթից տարբեր լինելու աստիճանից, խորությունից և այլն²⁷¹: Սիրիահայերի դեպքում այս երևույթը մեղմ է արտահայտվում, քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե տարբեր էթնիկ հանրույթներին, այլև նույն էթնիկ խմբի երկու հատվածներին, որոնք ունեն ծագման ընդհանրություն, նախնիների մասին միասնական պատկերացումներ, սակայն ապրել են տարբեր մշակութային և հասարակական համակարգերում: Պ. Ադլերն ընդգծում է, որ չնայած մշակութային շոկն ասոցացվում է բացասական հետևանքների հետ, այնուամենայնիվ, դրա արդյունքները կարող են նաև դրական լինել, օրինակ, նոր արժեքների, նորմերի և վարքի կանոնների յուրացում²⁷²: Ելնելով դրանից՝ առաջին փուլում ազդեցիկ արտաքին գործոն է համարվում հասարակության հանդուրժողականությունը նոր եկողնե-

²⁷¹ Oberg 1960, 177-182.

²⁷² Adler 1975, 13-23.

րի նկատմամբ: Մ. Վինկելմանը գտնում է, որ «մշակութային շոկի» մասին գիտելիքները կարող են նպաստել ադապտացիայի հետ կապված խնդիրների լուծմանը՝ ապահովելով այս կամ այն ոչ կոնֆլիկտային ռազմավարությունը²⁷³:

Ջ. Բերրին «մշակութային շոկ» տերմինի փոխարեն առաջարկել է կիրառել «ակուլտուրացիայի սթրես»: Նրա կարծիքով ևս, շոկ բառն ասոցացվում է միայն բացասական փորձի հետ, իսկ միջմշակութային կապի արդյունքում հնարավոր է նաև դրական փորձ՝ հիմնախնդիրների գնահատում և դրանց հաղթահարում: Ջ. Բերրին իր առաջարկած հայեցակարգում²⁷⁴ ցույց է տվել ակուլտուրացիայի բարդությունն ու կոնֆլիկտայնությունը: Նա ակուլտուրացիան սահմանում է որպես մշակութային և հոգեբանական գործընթացների փոխազդեցության արդյունք: Ըստ նրա՝ այն հիմնվում է երկու միաչափ գործող գործոնների վրա, որոնք էլ սահմանում են չորս հիմնական ռազմավարությունները.

- Մշակույթի պահպանումը. ինչ աստիճանով է ընդունվում մշակութային ինքնությունը պահպանելու կարևորությունը:
 - Միջմշակութային շփումներում մասնակցությունը. ինչ աստիճանով պետք է մտնել այլ մշակույթի կամ մնալ սեփականի մեջ: Ելնելով գործոններից՝ Ջ. Բերրին սահմանել է ակուլտուրացիայի չորս ռազմավարություններ.
1. Ձուլում/ասիմիլյացիա, երբ խումբը և նրա անդամները կորցնում են սեփական մշակույթը և պահպանում կապը մյուս մշակույթի հետ:
 2. Զատում/սեպարացիա, երբ խումբը և նրա անդամները, պահպանելով սեփական մշակույթը, հրաժարվում են մյուս մշակույթի հետ շփումից:
 3. Լուսանցքայնացում/մարգինալացում, երբ խումբը և նրա անդամները կորցնում են սեփական մշակույթը, սակայն միևնույն ժամանակ կապեր չեն հաստատում այլ մշակույթի հետ:

²⁷³ Winkelman 1994, 121–126.

²⁷⁴ Berry 1997, 34.

4. Ինտեգրում, երբ փոխազդող խմբերից յուրաքանչյուրը պահպանում է իր մշակույթը և միաժամանակ սերտ կապեր հաստատում մյուսի հետ²⁷⁵:

Ըստ այս տեսության՝ հաջողված ադապտացիան ծուլում չէ օտար մշակույթի հետ: Միջմշակութային ադապտացիան իրենից ներկայացնում է մուտք նոր մշակույթի մեջ, դրա նորմերի, արժեքների, վարքի ձևերի աստիճանաբար յուրացում: Ըստ այդմ, ադապտացիայի հաջողությունը ենթադրում է հասնել սոցիալական և հոգեբանական ինտեգրացիայի բարձր մակարդակի՝ առանց կորցնելու սեփական հարստությունը: Այս գլխում նպատակ ունենք ներկայացնել, թե լեզվական շփումների և, ընդհանրապես, հաղորդակցության առումով ինչ փուլում է գտնվում մշակութային ադապտացիան և ինչ նպաստող ու խոչընդոտող գործոններ կան:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ սիրիահայ ընտանիքներում հիմնական խոսակցական լեզուն համարվում է արևմտահայերենը (տես աղյուսակ 28), սակայն որոշակի փոխակերպումներ են նկատվում Հայաստան գալուց հետո. 5.4% ընտանիքներում խոսում են նաև արևելահայերեն:

Աղյուսակ 28.

Սիրիահայերի հիմնական խոսակցական լեզուն՝ Սիրիայում և ՀՀ-ում (%)

	Հիմնական խոսակցական լեզուն				
	Արևմտահայերեն	Արևելահայերեն	Արաբերեն	Անգլերեն	Ընդամենը
Ընտանիքում՝ ՀՀ-ում	90.3	5.4	4.3	0.0	100.0
Ընտանիքում՝ Սիրիայում	95.7	0.0	4.3	0.0	100.0
Ընկերների հետ՝ ՀՀ-ում	92.4	5.4	2.2	0.0	100.0
Ընկերների հետ՝ Սիրիայում	92.4	0.0	7.6	0.0	100.0
Գործընկերների հետ՝ ՀՀ-ում	46.0	54.0	0.0	0.0	100.0
Գործընկերների հետ՝ Սիրիայում	45.2	0.0	51.6	3.2	100.0

²⁷⁵ Berry 1997, 9–12.

Հարցը համադրելով ծննդավայրի հետ կապի մեջ՝ նկատում ենք, որ լեզվական վարքի փոխակերպումներ հիմնականում տեղի են ունեցել այն ընտանիքներում, որտեղ ապրում են Հալեպում և Ղամիշլիում ծնված հայեր: Եվ որ զարմանալի չէ՝ արևելահայերեն գործածող զանգվածի մեջ 1.6%-ը կազմում են այն ընտանիքները, որտեղ ապրում են ՀՀ-ում ծնվածներ: Նրանք Սիրիա ամուսնացած այն աղջիկներն են, որոնք ժամանակի ընթացքում հարմարվել են լեզվական փոփոխություններին և ընդօրինակել ամուսնու ընտանիքի վարքային կանոնները, ինչպես նաև վերջին տարիներին Հայաստանում ձևավորված նոր ամուսնական զույգերն են, որոնց համար արևմտահայերենը դառնում է երկրորդ խոսակցական լեզու:

4.3% կազմում են այն արաբախոս ընտանիքները, որոնց համար Հայաստանում ապրելու հանգամանքը ոչ մի կերպ չի անդրադառնում մշակութային վարքի փոխակերպումների վրա: Ընդ որում, նրանք հիմնականում Դամասկոսից, Ղամիշլիից եկած սիրիահայերն են: Փոքր մաս կազմում են նաև Հալեպից եկած ընտանիքները:

Ընկերների հետ շփման դեպքում նկատվում է հետաքրքիր օրինաչափություն. որոշների համար Սիրիայի ընկերական շրջապատը կարծես անփոփոխ տեղափոխվել է Հայաստան, և շփումներն այդ միջավայրում ընթանում են առավելապես իրենց հարազատ լեզվի օգնությամբ, չնայած որ բավականին լավ խոսում են նաև արևելահայերեն. *«Հարազատներիս, մտերիմներիս հետ արեւմտահայերէնով ենք խօսում, որովհետեւ մի քիչ ծիծաղելի կը լինի իրենց հետ արեւելահայերէն խօսելը, քանի որ բոլորը չէ, որ լաւ տիրապետում են, նոյնիսկ կան մարդիկ, որ լաւ չեն հասկանում, չեն ըմբռնում, այսինք՝ ոճին ծանօթ չեն: Դրա համար էլ մենք մեր մեջ, մեր շրջանակի մեջ արեւմտահայերէնով ենք շփում»* (62 տ. կին, ք. Երևան)²⁷⁶: Սակայն ՀՀ-ում ապրած կյանքը նրանց նոր ընկերներ է տվել, որոնք էլ իրենց ուրույն դերն են ունեցել սիրիահայերի լեզվական ադապտացիայի հարցում՝ ոչ միայն սովորեցնելով արևելահայերենը, այլ նաև պատճառ հանդիսանալով հիմնականում շփվելու այդ լեզվով:

²⁷⁶ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

Հայաստանում ընկերների հետ արաբերեն շփվող 2.2% սիրիահայերի թիվը բոլորովին պատահական չէ՝ չմոռանալով արաբախոս այն ընտանիքներին, որոնց մասին նշեցինք վերևում: Այս առումով կարևոր ենք համարում մի դիտարկում, որն ուղեկցում էր դաշտային աշխատանքների ողջ ընթացքում, երբ, որպես հետազոտող, մասնակցելով սիրիահայ համայնքի ներկայացուցիչների միջոցառումներին, հաճախակի հանդիպում ես արաբերենով շփվող հայերի: Ի դեպ, խորին հարցազրույցների ժամանակ ևս բացահայտ խոսում էին թեև ոչ համատարած, սակայն արմատացած այդ երևույթի մասին. «Արաբերեն էլ շատ-շատ լաւ գիտենք. այն կը գործածենք՝ իբր գաղտնի լեզու» (55 տ. կին, ք. Երևան): «Քիչ մը, երբ որ տեղ կ'երթանք ու չենք ուզէ ըսածներս արտայայտիլ, արաբերեն կը խօսինք» (71 տ. տղամարդ, ք. Երևան)²⁷⁷:

Հայաստանում գործընկերների հետ շփման ժամանակ արդեն արևելահայերենն է դառնում գերակա (54%), քանզի շատ սիրիահայեր ջանում են հասկանալի լինել դիմացինի համար: Այս զանգվածի մեջ կեսից ավելին նրանք են, որոնց գործատուն հայաստանցի հայ է: Սիրիայում մոտ 52%-ը գործընկերների հետ շփվել է արաբերենով, փոքր զանգված՝ նաև անգլերենով: Բացի անգլերենից, սիրիահայերը տիրապետում են նաև այլ լեզուների՝ արաբերեն, քրդերեն, թուրքերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն: Սիրիահայերի՝ օտար լեզուների իմացության մակարդակը որոշ չափով կապված է ստացած կրթության հետ: Մասնավորապես, անգլերենի դեպքում ինչքան բարձր է կրթության մակարդակը, այնքան բարձր է նաև լեզվի իմացության մակարդակը (անգլերեն լեզվին լավ և գերազանց տիրապետում են բարձրագույն/թերի բարձրագույն, այնուհետև՝ միջնակարգ, ապա՝ թերի միջնակարգ կրթություն ունեցող սիրիահայերը, համապատասխանաբար, 68.8%, 32.0% 16.7%): Իսկ թուրքերենի դեպքում, ընդհակառակը, ինչքան ցածր է կրթության մակարդակը, այնքան բարձր է իմացության մակարդակը (բարձրագույն, միջնակարգ, թերի միջնա-

²⁷⁷ Նույն տեղում:

կարգ, համապատասխանաբար, 37.5%, 40.0% և 54.8%), որը կարելի է բացատրել թերևս այն հանգամանքով, որ թուրքերեն լեզվին մեծամասամբ տիրապետում են ավագ սերնդի ներկայացուցիչները, որոնց մեծ մասն այն ժամանակ չէր ավարտում դպրոցը, ավելին՝ չէր հավակնում բարձրագույն կրթություն ստանալ: Տարիքային առումով ուշադրության է արժանի նաև այն ցուցանիշը, որ 18–25 տարեկան երիտասարդների մեջ ավելի շատ են թուրքերենին չտիրապետողները, քան տիրապետողները: Սակայն նույնը չի կարելի ասել Սիրիայում նրանց հիմնական բնակության վայրի առումով. դամասկոսահայերի 81.5%-ը և Քեսաբից, Ղամիշլիից, Ռաքքայից, Դեր Ջորից եկած սիրիահայերը չեն տիրապետում թուրքերենին:

Չնայած արևմտահայերենը մայրենի լեզու է համարվում նրանց համար, և հայկական դպրոցներում ուսուցման լեզուն տարիներ շարունակ նաև դա է եղել, սակայն կան այնպիսիք, ովքեր վատ են տիրապետում լեզվին: Նրանք հիմնականում դամասկոսահայերն են: Սիրիայի մայրաքաղաքում հայերն ավելի շատ ապրել են ոչ թե համայնքային, այլ՝ քաղաքային կյանքով, ինչն էլ հեռու է պահել նրանց արմատներին ավելի մոտ գտնվելու և մշակույթը պահպանելու, այս դեպքում, նախնիների լեզուն պահպանելու կարևոր գործից: Իսկ, ընդհանուր առմամբ, արևմտահայերենի լավ և գերազանց իմացությունը նույն մակարդակի վրա է գտնվում (43.5% և 43.5%), և գրեթե հավասար է արաբերենին լավ և գերազանց տիրապետելու ցուցանիշին (43.5% և 44.5%):

Փաստորեն, արևմտահայերենը լայնորեն գործածվել է արաբական աշխարհում և շարունակվում է նաև Հայաստանում: Արևելախայերենի պարագայում, ընդհակառակը, նրանք բախվում են լեզուն հասկանալու, խոսելու խնդրի հետ: Աղյուսակ 29-ի տվյալները բացահայտում են, թե արևելահայերեն լեզվահմացության ինչ մակարդակ է առկա սիրիահայերի շրջանում Հայաստան գալուց հետո:

Աղյուսակ 29.

Սիրիահայերի՝ արևելահայերենին տիրապետելու մակարդակը (%)

Տիրապետելու մակարդակը	Արևելահայերենի իմացությունը			
	Կարողալ	Գրել	Խոսել	Հասկանալ
Չեն կարող	7.6	37.0	7.6	0.0
Վատ	17.4	15.2	30.4	9.8
Միջին	28.3	22.8	41.3	44.6
Լավ	22.8	17.4	15.2	30.4
Գերազանց	23.9	7.6	5.4	15.2
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0

Արևելահայերեն **կարդալու** միջին ցուցանիշը 3.4 է (5 բալանոց սանդղակի պարագայում), այսինքն՝ միջինից բարձր մակարդակ է նկատվում: Սիրիահայերի մոտ 24%-ը կարողալու իրենց մակարդակը գնահատել են գերազանց: Նրանց մոտավորապես կեսը կազմում է 26–45 տարիքային խումբը: Այս զանգվածի մեծ մասը կանայք են և 2012 թ. տեղափոխվածները (համապատասխանաբար, 72.5% և 77.0%): Բավականին մեծ խումբ են կազմում նաև իրենց կարդալու ունակությունը լավ և միջին գնահատող սիրիահայերը (տես աղյուսակ 29):

Այլ պատկեր է նկատվում արևելահայերեն **գրելու** առումով, քանզի միջին թվաբանական ցուցանիշը (2.4) վկայում է կարողության միջինից ցածր մակարդակի մասին: Ստացվում է, որ նրանց կեսից ավելին՝ մոտ 52%-ը (տես աղյուսակ 29), կամ ընդհանրապես չի տիրապետում կամ վատ է տիրապետում արևելահայերեն գրին, որի մեջ մեծ զանգված են կազմում միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ունեցողները:

Շատ սիրիահայեր ոչ միայն չեն կարողանում գրել արևելահայերեն, այլև սխալ են համարում ուղղագրությունը, որի արդյունքում իրենց ինքնության մաս կազմող անուն-ազգանունները՝ գրված հայաստանյան պետական և հասարակական կառույցների աշխատակիցների կողմից, աղավաղված են համարում. « *Գրելու մէջ ինձի համար սխալ ուղղագրութիւն կայ, ես Սիրադարեան էի, այսպէղ Սիրաթարյան եղա. սաի սխալ էր ինձի համար* » (27 տ. տղամարդ, ք. Երևան)²⁷⁸: Ըստ

²⁷⁸ Նույն տեղում:

բանասացների՝ Սիրիայում հայկական դպրոցներում եղել են արևելահայերենի դասընթացներ, սակայն սահմանափակ է եղել ժամաքանակը, «որպեսզի չշփոթեն», «որպեսզի արեւմտահայերենը չաղավաղի»: **Խոսելու** առումով միջին թվաբանական ցուցանիշը մեծանում է՝ հասնելով 2.8-ի: Նշենք, որ վատ տիրապետողների մոտ կեսը ավելի ուշ (2014թ.) է տեղափոխվել Հայաստան:

Խորին հարցազրույցների վերլուծության արդյունքում բացահայտել ենք, որ շատ սիրիահայերի խանգարում է.

- Արևելահայերենում և արևմտահայերենում գործածվող հնչյունների արտասանության տարբերությունը՝ բ-պ-փ, ձ-ծ-ց, գ-կ-ք, դ-տ-թ, որի արդյունքում առօրյա խոսակցական բառերը ստանում են այլ հնչողություն՝ դուռ-թուռ, կապիկ-գաբիկ, և օտար համարվում Հայաստանում ապրողների համար՝ սահմանափակելով շփումները. «Որ մտնում ենք գնումի կամ որեւէ մեկ տեղ մը, շուարած մեզի նայում են, թէ ինչ կը խօսին ասոնք: Ադոր համար ես շար չեմ կրնար շփուիլ դուրսը մէկուն հետ: Մինչեւ որ արդէն հասկնամ կամ հասկցնիմ, ես արդէն ինֆարկտ կ'անցնիմ» (39 տ. տղամարդ, ք. Աբովյան)²⁷⁹:
- Բառերի տարբերությունը, որը մտած է սիրիահայերի լեզվամտածողության մեջ, և ժամանակ է պահանջվում Հայաստանում գործածվող բառապաշարին ևս տիրապետելու համար՝ աճապարել-շտապել, ստեպղին-գազար, սմբուկ-բադրիջան, վայրկյան-րոպե, երկվայրկյան-վայրկյան, պահարան-ծրար (նամակի) և այլն:

Սակայն, կան նաև այնպիսիք, ում համար արևմտահայերենը մշակութային ինքնության կարևոր տարրերից է, և դրա պահպանումը՝ սկզբունքային հարց. «Ես լաւ գիտեմ էստեղի հայերէնը, որովհետեւ եօթ տարի էստեղ եմ մնացել, մինչեւ ւարտեցի, գնացի: Բայց կը նախընտրիմ ինձի պէս խօսիլ, ինչ որ ես կը խօսիմ հիմա, որովհետեւ

²⁷⁹ Նույն տեղում:

սարկա իմ փարիկներուս լեզուն է, որ իրենք բերին Թուրքիայէն, եւ իմ մայրը ինձի այդպէս մեծցուց: Չեմ ուզեր ես այստեղի պէս խօսիլ» (55 տ. կին, ք. Երևան)²⁸⁰: Մինչդեռ շատ երիտասարդներ աշխատում են երևանցիների հետ արևելահայերեն խոսել: «*Ճիշդն ասած, ես սիրում եմ ձեր արեւելահայերէնը: Երկուսն էլ սովորում եմ, փորձում եմ խօսել: Որ մի 2-3 փարի մնամ, արդէն հաստատաբար ձեր պէս կարող եմ խօսալ*» (22 տ. կին, ք. Երևան)²⁸¹:

Միջին և ավելի բարձր մակարդակով արևելահայերեն **հասկանում են** սիրիահայերի գերակշիռ մասը (տես աղյուսակ 29). միջին ցուցանիշը՝ 3.5: Վատ տիրապետողները մեծամասամբ միջնակարգ և ցածր կրթություն ունեցողներն են, և կեսից ավելին՝ 2014թ. ՀՀ տեղափոխվածները: Թեպետ քանակական ցուցանիշը բարձր է, սակայն որակական բնութագրումներն այլ բան են ասում հարցի մասին: Խորին հարցազրույցների վերլուծության արդյունքում բացահայտվել է այն կարևոր պատճառը, որն անհանգստացնում է գրեթե բոլոր սիրիահայերին. Հայաստանյան բառապաշարի անբաժան մաս կազմող ռուսերեն բառերը խորթ են հայի ինքնությանը: «*Արեւելահայերէնը հասկնալու համար դժուարութիւն ունինք, քանի որ դրա մեջ կէս բառերը ռուսերէն են: Հայերէն խօսեցեք մեր հետ, մենք հայ ենք, կրնանք հասկնալ*» — պահանջում է դեռևս 2012թ. ընտանիքով Հայաստան տեղափոխված սիրիահայ տիկինը: «*Իմ աղջիկը ինձի կը հարցնէ՝ մամմ, ինչ է նշանակում «просто», «конечно»: Ես իրան բացատրեցի՝ ես ադոնք գիտեմ, բայց չեմ ուզեր այդպէս խօսիլ, ես ինձի պէս կ'ուզեմ խօսիլ*» (58 տ. կին, ք. Երևան)²⁸²:

Սակայն քիչ չեն այն սիրիահայերը, ովքեր բավականին լավ են հասկանում արևելահայերենը, նույնիսկ, ռուսերենը: Պատճառները տարբեր են՝ դպրոցական տարիներից արևելահայերեն գրականության ընթերցանություն, հայկական հեռուստաալիքների կանոնավոր դիտում դեռևս Սիրիայում ապրելու տարիներին, ՀՀ բուհերում կրթու-

²⁸⁰ Նույն տեղում:

²⁸¹ Նույն տեղում:

²⁸² Նույն տեղում:

թյուն ստանալու փաստ, նաև երկարատև շփումներ հայաստանցի ընկերների և գործընկերների հետ, որը վկայում է ադապտացիայի որոշակի մակարդակի մասին. «Հասկանում եմ լրիւ էդ ռուսերէն բառերը, որ հասարակական լեզուի մեջ ընդհանրացած են, լրիւ սովորել ենք» (32 տ. տղամարդ, ք. Երևան): «Երբ այսպէղ գործի նոր ընդունուած էի, անընդհապ կոնֆլիկտներ էին լինում, ասում էին՝ արեւելահայերէն խօսա, ես ալ ասում էի՝ հայերէն խօսա, ես «պրորբլեմ» չունիմ, կը հասկնամ: Մի քիչ ես ռուսերէն սովորեցի, մի քիչ ալ իրանք սկսան հայերէն ասելի օգտագործել: Որովհետեւ նախադասութեան մեջ երեք հապ ռուսերէն, հինգ հապ հայերէն կը գործածէին: Ես էլ անընդհապ ասում էի՝ հայերէնը, հայերէնը» (41 տ. տղամարդ, գ. Առինջ)²⁸³:

Այսպիսով, ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները, կարող ենք խոսել ադապտացիայի որոշակի մակարդակի մասին²⁸⁴, երբ Հայաստան ներգաղթած սիրիահայերը, պահպանելով իրենց լեզվային առանձնահատկությունները, միևնույն ժամանակ ընդունում և հասկանում են իրենց ընդունող հասարակության մշակույթի կարևոր տարր հանդիսացող արևելահայերենը: Այս առումով նպաստող գործոնները բազմաթիվ են, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն դերն է կատարում.

- Արևելահայերեն գրականություն ընթերցելը,
- Դեռևս Սիրիայից հայկական հեռուստատեսությանը կանոնավոր հետևելը,
- Նախկինում ունեցած գործնական և բարեկամական կապերը ՀՀ-ում,
- Նոր ձևավորված աշխատանքային շփումները Հայաստանում,

²⁸³ Նույն տեղում:

²⁸⁴ S. Կոնչանինը ադապտացիան դիտարկում է անձի կայացման ամբողջական գործընթաց՝ կապելով հասարակական, աշխատանքային, քաղաքական և մշակույթային կյանքում մարդու ներգրավված լինելու շրջանի հետ: Ըստ նրա՝ ադապտացիայի նույնիսկ ամենաբարձր մակարդակը չի նշանակում ադապտացիայի ավարտ. այն անընդմեջ, ամբողջ կյանքում շարունակվող գործընթաց է: Հետևաբար, նպատակահարմար է խոսել ոչ թե հարմարվողականության, այլ հարմարվելու մակարդակի մասին (Кончанин 1970, 108–116).

- Սիրիահայերի ամուսնությունները հայաստանցի հայերի հետ,
- Նոր հաստատված ընկերական, բարեկամական հարաբերությունները:

Սակայն, հատկապես ավագ սերնդի մեջ մշակութային ժառանգությունը՝ արևմտահայերենը, պահպանելու ձգտումն առաջնային է ցանկացած ադապտացիայի գաղափարի նկատմամբ, և պատահական չէ անհանդուրժողականության այն դրսևորումը, որն առկա է նրանց մեջ հայկական լեզվամտածողության և բառապաշարի մեջ մտած ռուսերեն բառերի հանդիպելիս: Սիրիահայերի՝ հատկապես դամասկոսահայության շրջանում չնայած քիչ տարածված, սակայն արմատացած երևույթ է համարվում արաբերենի գործածումը, որի հիմնական պատճառը, թերևս, արաբական աշխարհում ոչ համայնքային կյանքով ապրելն է:

4.2. Սիրիահայերի շփումները. համայնքից մինչև նոր հարևաններ

Միջմշակութային հաղորդակցություն տերմինը գիտական շրջանառության մեջ են դրել Գ.Տրեյգերը և Է.Խոլը՝ սահմանելով այն որպես իդեալական նպատակ, որին պետք է ձգտի յուրաքանչյուր մարդ՝ հնարավորինս լավ և արդյունավետ հարմարվելով շրջապատող միջավայրին²⁸⁵: Ընդհանրապես, արդյունավետ միջմշակութային հաղորդակցությանը խանգարում են մի շարք գործոններ՝ 1) մարդիկ կարծում են՝ բոլորը նման են իրենց, 2) լեզվական տարբերություններ, 3) ոչ խոսքայինի սխալ մեկնաբանություն, 4) նախապաշարմունքներ և կարծրատիպեր, որոնք ազդում են մարդկանց ընկալումների և հարաբերությունների վրա, 5) գնահատելու ձգտում. արժեքային համակարգի տարբերությունները կարող են բացասական գնահատականների տեղիք տալ, որոնք արգելք կհանդիսանան արդյունավետ հաղորդակցման համար²⁸⁶:

²⁸⁵ Trager, Hall 1954, 157–249.

²⁸⁶ Barna 1994, 337–343.

Նոր միջավայր տեղափոխված սիրիահայերի համար առավել ևս կարևոր է արդյունավետ հաղորդակցությունը, քանզի ինչքան շատ լինեն շփումները տեղի բնակիչների հետ, այնքան հայաստանյան իրականությանն ու մշակույթին հարմարվելու գործընթացն արագ կընթանա: Իսկ միայն կամ ավելի շատ շփումները սեփական համայնքի ներկայացուցիչների հետ կվկայեն հակառակ երևույթի մասին: Սիրիահայերի հաղորդակցության ընթացքում շատ խոչընդոտող գործոններ կարող են լինել: Լ. Կորելն իր տեսության մեջ առանձնացնում է մի շարք չափանիշներ, որոնք, բացահայտելով սոցիալ-մշակութային ադապտացիայի էությունը, կարող են մեկնաբանել բազմաթիվ հարցեր՝ կապված նոր միջավայրում սիրիահայերի փոխհարաբերություններում հանդիպող հիմնախնդիրների հետ: Օրինակ, ըստ ձևի, նա առանձնացնում է հետևյալ տեսակները՝ 1) Ասիմիլյացիա՝ գործընթաց, որտեղ ադապտացիայի գործընթացում հարմարվողը կամովին ընդունում է նոր միջավայրի առաջարկներն ու պայմանները: 2) Հարմարեցում՝ պրոբլեմային իրավիճակներում հարմարվողականության ձևավորման գործընթաց, որում հարմարվողը նպատակադրված գնում է փոխհամաձայնության: 3) Ադապտացիայի հակահարված՝ սուբյեկտի միջավայրի վերաձևավորում, ըստ որի՝ հարմարվողը կարող է շրջապատող միջավայրից ավելի ուժեղ գտնվել: 4) Ապաադապտացիա՝ ադապտացիայի բացակայություն կամ վերացում, որը հակադրվում է ադապտացիային: 5) Համընդհանուր ադապտացիա՝ փոխադարձ հարմարեցում փոփոխվող միջավայրին: Վերջինս ամենակարևոր հասկացություններից է, քանի որ արտացոլում է փոխազդեցության գործընթացը նոր սոցիալական միջավայրում, չնայած գրեթե չի հանդիպում գործնականում²⁸⁷:

Այս բաժնում սիրիահայերի հաղորդակցության առանձնահատկությունները կներկայացնենք ըստ սուբյեկտների՝ ներհամայնքային և միջհամայնքային (սիրիահայեր և հայաստանցի հայեր): Հաղորդակցման առավել մտերմիկ ձևը փոխայցելություններն են, որի ընթացքում

²⁸⁷ Корель 1996, 36.

Աղյուսակ 30.
Սիրիահայերի փոխայցելությունները (%)

Նախընտրելի անձիք	Սեռը		Ընդամենը
	Արական	Իգական	
Ամուսնու/կնոջ ծնողներ Սիրիայից եկած	0.0	2.1	2.1
Ամուսնու/կնոջ քույր/եղբայր Սիրիայից եկած	4.9	9.2	14.1
Ամուսնու/կնոջ հորեղբայր/մորեղբայր, հորաքույր/մորաքույր Սիրիայից եկած	2.8	5.7	8.5
Այլ ազգականներ Սիրիայից եկած	4.9	4.9	9.8
Սիրիայից եկած ընկերներ/ծանոթներ	14.8	14.1	28.9
Ընդամենը՝ ներհամայնքային	27.4	36.0	63.4
Ամուսնու/կնոջ ծնողներ ՀՀ-ում բնակվող	2.1	0.7	2.8
Տեղացի հարևաններ	0.7	2.1	2.8
Տեղացի ընկերներ/ծանոթներ	4.2	2.1	6.3
Տեղացի ազգականներ	5.6	5.7	11.3
Այլ	0.7	1.4	2.1
Ընդամենը՝ միջհամայնքային	13.3	12.0	25.3
Չեն այցելում ոչ մեկի	6.3	4.9	11.3
Ընդամենը	47.0	53.0	100.0

մեծ հնարավորություններ են ստեղծվում մշակույթի առանձին տարրերը՝ տոնածիսական համակարգը, սնունդը, ընտանեկան ավանդույթներն ու սովորությունները, արժեքները ճանաչելու, ընդունելու և կիսելու համար: Աղյուսակ 30-ի տվյալները վկայում են, որ սիրիահայերի մեծ մասը՝ 63.4%-ը, հյուրընկալվում է Սիրիայից եկած իր հարազատներին, ազգականներին և ընկերներին: Ընդ որում, իգական սեռի ներկայացուցիչների մեջ այն առավել տարածված է, քանզի նրանք ավելի քիչ են զբաղված աշխատանքային գործունեության մեջ, քան տղամարդիկ, հետևաբար, ավելի շատ ազատ ժամանակ ունեն համայնքի ներսում փոխայցելությունների համար: Տեղի հայերին հյուր-

ընկալվելու պարագայում ունենք հետևյալ պատկերը՝ ընդհանուր առմամբ, սիրիահայերի 1/4 մասն է նախընտրում այցելությունները ՀՀ-ում բնակվող իրենց ազգականներին և ընկերներին, որի մեջ, ընդհակառակը, ավելի մեծ մաս կազմում են տղամարդիկ:

Մարզերում բնակվող սիրիահայերի շրջանում գրեթե հավասար է շփման նախընտրությունը տեղի հայերի և սեփական համայնքի ներկայացուցիչների հետ (մարզերում սիրիահայերը 11.9% են կազմում, որից 0.9%-ը չի շփվում ոչ մեկի հետ, 5%-ը շփվում է տեղի հայերի, իսկ 6%-ը՝ սիրիահայերի հետ): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ մարզերում նրանց մեծ մասը տեղացի ազգական ունի, և այնտեղ է բնակվում հենց վերջիններիս խորհրդատվության շնորհիվ: Բացի սրանից, պատճառ է հանդիսանում նաև Երևանում բնակվող իրենց ազգականներին և ընկերներին այցելելու համար բավարար ֆինանսական միջոցների բացակայությունը և հեռավորությունը: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ սիրիահայերի 11.3%-ը Հայաստանում չի հյուրընկալվում ոչ մեկի՝ պայմանավորված մի քանի գործոններով, որոնց կանդրադառնանք ներքևում: Բացի այցելություններից, սիրիահայերը ներհամայնքային շփման իրենց պահանջունքը բավարարում են նաև այլ ձևերով, որոնք դուրս են բերվել խորին հարցազրույցների վերլուծության միջոցով: Ներկայացնենք դրանք *ըստ ձևայնացման փարբեր աստիճանների*՝ ընդհուպ մինչև շփման բացակայություն.

- Սիրիահայ ընկերների, ծանոթների հետ սովորություն դարձած հանդիպումներ սովորություն դարձած վայրում՝ սրճարաններում՝ «1–2 ժամ իրար տեսնելու, որպիսությունը հարցնելու», «էնտեղի համն ու հոտը առնելու համար»:
- Ծանոթ-անծանոթների հետ պատահական հանդիպումներ փողոցում՝ կարոտով և սրտացավությամբ լի երկկողմանի հարց ու պատասխաններով:
- ՄՆ կամ այլ կազմակերպությունների կողմից ձեռնարկված միջոցառումներում ու հավաքներում ծանոթների և ընկերների հետ հանդիպումներ:

- Սիրիահայ ընտանիքներին վերաբերող տեղեկատվության տարածում մտերիմների և ծանոթների կողմից հեռախոսազանգերի միջոցով:
- Ոչ հաճախակի հանդիպումներ՝ պայմանավորված բնակության վայրի հեռավորությամբ, ֆինանսական միջոցների սղությամբ և այլն:
- Մեկուսացում, օտարում՝ իրենց հարազատների ՀՀ-ում չբնակվելու պատճառով:

Սիրիահայերի չչփվելու պրակտիկան կիրառվում է նաև տեղի հայերի, մասնավորապես, իրենց հարևանությամբ բնակվողների նկատմամբ՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պատճառներով.

- Առօրյա հոգսերով ծանրաբեռնված օրեր, որոնք երկկողմանի են և սահմանափակում են շփման հնարավորությունը:
- Ժամանակի բացակայություն՝ առանց հանգստյան և երկար աշխատանքային օրերի պատճառով:
- Տեղաբնակների կողմից անտարբերություն սիրիահայերի նկատմամբ:
- Տեղի հայերի սոցիալական ցածր կարգավիճակ՝ ի համեմատ իրենց դիրքի:
- Սիրիահայերի շրջանում հաղորդակցվելու ցանկության բացակայություն. *«Ես իմ կյանքիս վարժված եմ, ու ամեն մարդ ինքն իր կյանքին վարժված է: Ես չեմ փափագում ուրիշի բաներն իմ կյանքի մեջ վերցնել»* (55 տ. կին, ք. Երևան)²⁸⁸:
- Հարևանների հետ շփվելու «չձևավորված» մշակույթ Երևանում ապրող հայերի շրջանում: Խորին հարցազրույցներից մեկի ժամանակ հնչեց հետևյալ միտքը՝ *«...Այսպեղ սովորություն մը կայ, որ բարեւ չեն փայխս դրացիները: Ես եթէ մէկը փեսնեմ՝*

²⁸⁸ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

վերելակը կամ վարը, «բարեւ ձեզ» կ'ըսեմ, իրանք այ կ'ամ-
ջընան՝ «բարեւ» կ'ըսեն: Մեզ մօտ մուսուլմանը նոյնիսկ, երբ
ինչ-որ մէկը տեսնէ, «սալամ ալեյկում» կ'ըսէ, այսինքն՝ «բարեւ
ձեզ» կ'ըսէ: Էստրեղ քիչ մը անտարբերութիւն կայ: Արդե՞ծք ինչն
է պատճառը, ասիկա ես մեկ հատ հարցնեմ՝ արդե՞ծք տնտես-
սական պայմաններն են ասիկա: Պատկերացրո՛ւ՝ հարեւանդ
կը տեսնէ, բարեւ չի տայ՝ ջահիլը, միջառասակը, ծերը, էսպէս
անտարբեր նայելով... Կ'ապշիս: Մեր մօտ էս բանը չկայ» (71
տ. տղամարդ, ք. Երևան)²⁸⁹:

- Ավանդոյթների և սովորությունների տարբերություն, որը ևս
իր մեկնաբանությունն ունի. «Այն սովորոյթները, որ արդէն
հայաստանեան սովորոյթներ են, մեզի համար խորթ են: Օրի-
նակ, մեզի համար հիմա մեծ պաս է, իրանց համար բան մը չի
նշանակում: Առօրեայ կեանքի, ապրելակերպի այս տարբերու-
թիւնները կան, որոնք մեզի համար, պարզ ըսեմ քեզի, ընդու-
նելի չեն: ...Այս է, որ սիրիահայուն հայաստանցու հետ շատ
հարազատութիւն չփութլու խորթութիւն կու գայ» (56 տ. տղա-
մարդ, Երևան)²⁹⁰:

Միջանձնային շփման այս դրսևորումներին զուգահեռ՝ ապագան
Հայաստանի հետ կապող սիրիահայերի մեջ նկատվում է մեծ պատ-
րաստակամություն և տարբեր խմբերի հետ շփման փորձ, որը բա-
ցատրվում է դրա անհրաժեշտությամբ և կարևորությամբ: Արդյունքում
նրանք տեղեկատվություն են հավաքում, հարստացնում իրենց գիտե-
լիքները հայկական միջավայրի մասին՝ ընդունելով և հանդուրժողա-
կան դիրքորոշում ձևավորելով հայաստանցիների նկատմամբ: Մաս-
նավորապես, պետք է առանձնացնել **հարևանների** հետ շփումը՝ տո-
նական (Սուրբ Ծնունդ, Նոր-Տարի, Չատիկ) և ոչ տոնական օրերին
փոխադարձ այցելություններով, որն ունի շատ կարևոր նշանակություն
սիրիահայերի, ինչու ոչ՝ նաև տեղի հայերի համար. 1) ծանոթացում

²⁸⁹ Նույն տեղում:

²⁹⁰ Նույն տեղում:

ավանդույթներին, 2) ծանոթացում ՀՀ տոնածիսական համակարգին, 3) ուտեստների պատրաստման փորձի փոխանակում (չնայած, սիրիահայերից ոմանք, գերագնահատելով արաբական խոհանոցին տիրապետելու իրենց կարողությունը, միակողմանի են համարում այդ երևույթը), 4) արևելահայերեն լեզուն սովորելու հնարավորությունների ստեղծում, 5) սոցիալական ինստիտուտների հետ առնչվելու պարագայում փաստաթղթերի և օրենքների իրազեկման հարցերում օգնություն, 6) նյութական օժանդակություն հարևանությամբ ապրող տանտերերի կողմից:

Վերը բերվածը նշանակում է մշակութային տարրերի փոխանակում, տարածում (դիֆուզիոնիզմի տեսություն)²⁹¹: Սիրիահայերը, ապրելով և աշխատելով այլ միջավայրում, ստեղծել են սեփական ժառանգությունը, ինչպես նաև, ինտենսիվ շփվելով տեղի բնակչության հետ, կրել են մշակութային որոշակի ազդեցություն արաբական աշխարհից, և գալով Հայաստան՝ նրանք արտահանում են այդ մշակութային արժեքները: Այս ընթացքում տեղի են ունենում ակուլտուրացիոն գործընթացներ՝ տարբեր մշակույթների փոխազդեցություն: Ակուլտուրացիայի հիմնական ձեռքբերումը տարբեր մշակույթների ինտեգրումն է, որի ժամանակ ինտեգրվող խումբը, այս դեպքում՝ սիրիահայերը, պատրաստ են ընդունել իրենց համար նոր մշակութային արժեքներ, իսկ գերիշխող խումբը, այս դեպքում՝ հայաստանաբնակ հայերը, պատրաստ են ընդունել սիրիահայերին՝ հարգելով նրանց իրավունքները, արժեքները: Ըստ մշակութային մարդաբաններ Ռ. Ռեդֆիլդի, Ռ. Լինտոնի, Մ. Հերսկովիցի սահմանման՝ ակուլտուրացիան երևան է գալիս այն ժամանակ, երբ տարբեր մշակույթների պատկանող խմբերի ներկայացուցիչները անմիջական և երկարատև փոխհարաբերությունների մեջ են մտնում, ինչի հետևանքով փոփոխություններ են տեղի ունենում մեկ կամ երկու խմբերի մշակութային մոդելներում²⁹²:

Սիրիահայերի համար միջմշակութային հաղորդակցության յուրա-

²⁹¹ Шостак 2005, 142–164.

²⁹² Redfield 1936, 149–152.

հատուկ տեսակ է նաև **գործընկերների և ընկերների** հետ երկարատև, ամենօրյա շփումը, որը մեծ դեր ունի տեղի հայերի արժեքային համակարգին ծանոթանալու գործընթացում: «Շփումներից հասկանում եմ իրանց, իրանց մտայնությունը, մտածելակերպը եւ յարմարում եմ: Երկու տարբեր հայ ենք, իմ համար միայն լեզուն ա նոյնը: Բացի էդ, ասենք, կարող ա երոպացի մի երկրի մեջ մի ազգ լինի, որ մեր մտայնութեանը ասելի մօտ ա՝ սուրիահայերուն, քան տեղացի հայերուն: Էստեղ մեզի միայն լեզուն եւ հողն ա, մարդը չէ: Մենք տարբեր բաներու ասելի մեծ արժէք կու տանք, էստեղ էդ բաներուն արժէք չեն տայ: Ուրիշ բանի արժէք կու տան, որ էստեղ մենք չենք տայ: Հոս եղաւ արդէն երկու տարբեր ազգ» (32 տ. տղամարդ, ք. Երևան)²⁹³:

Սեփական շփման փորձի, սոցիալական ցանցի ազդեցության և տարածված կարծրատիպերի հիման վրա սիրիահայերը ձևավորել են տեղի հայերի մասին իրենց պատկերացումները: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 31-ից, հատկանիշների մեջ բավական մեծ կշիռ են ստացել բացասական երանգ ունեցողները, որոնցով սիրիահայերը բնութագրել են տեղի հայերին: Եթե փորձենք զուգահեռներ անցկացնել նրանց հետ չշփվելու՝ վերևում բերված պատճառների հետ, կնկատենք, որ հիմնականում համընկնում են: Ինչպես վերևում, այնպես էլ այստեղ պարզ է դառնում, որ սիրիահայերի համար կարևոր նշանակություն ունեն քրիստոնեական արժեքներն ու ավանդույթները, որոնց կրող չեն համարում հայաստանցիների մի մասին:

Ոչ պակաս շեշտադրմամբ և՛ քանակական (6.6%), և՛ որակական տվյալների մեջ նշվում է նաև հայերի խաբեբա և անվստահելի լինելու մասին: «Քրիստոնեության միջուկը չգիտեն, չգիտեն, որ պէտք չէ իրենք մեղք գործեն: Եթէ քրիստոնեայ է, պէտք չէ մեղք գործի՝ լինի փոքր ստախոսութիւն, լինի սխալ բան, պէտք չէ անի: Մանաւանդ Հայաստանում արդէն սովորական բան է, խաբեն, ստեն: Եթէ չես խաբում, չես ստում, ուրեմն մարդ չես: Բայց ճիշդը էդ չի: Եթէ դու կարողանում ես, որ չստես, կարողանում ես չխաբես, կարողանում ես

²⁹³ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

Աղյուսակ 31.
Հայաստանաբնակ հայերին բնորոշ հատկանիշներ.
սիրհահայերի գնահատականը (%)

Դրական հատկանիշներ	%	Բացասական հատկանիշներ	%
Քաղաքավարի, բարեկիրթ	4.8	Անքաղաքավարի, կոպիտ, չոր	9.0
Ընկերասեր, մարդասեր, շփվող	7.2	Չշփվող, փակ	2.4
Քաղցրախոս, սիրալիր, բարեհամբույր, սրտաբաց, ջերմ	6.0	Կովարար, դժգոհ, մեծամիտ	5.4
Ազգասեր, հայրենասեր, մշակույթը պահպանող	1.8	Ոչ ազգասեր, օտարամոլ, ոչ պահպանողական	4.2
Հարգալից, հանդուրժողական, յուրային են վերաբերվում	13.3	Երկրորդային, օտար են վերաբերվում, անտարբեր են	2.4
Ազնիվ, շիտակ, պարզ, բարի, խղճով	9.0	Խաբեբա, ստախոս, գող, անվստահելի, շահամոլ	6.6
Օգնելու պատրաստակամ	12.7	Օգնելու ոչ պատրաստակամ	1.2
Աշխատասեր, նեղությանը դիմակայող	1.8	Ծույլ	0.6
Ընդամենը (+)	56.6	Ընդամենը (-)	31.8
Տխուր, տանջված		1.8	
Հյուրընկալ, հյուրասեր		6.0	
Գեղեցիկ		1.8	
Խելացի, կրթված		0.6	
Դժվարանում են պատասխանել		1.4	
Ընդամենը		100.0	

մեղք չգործես, էդ ա ճշմարտությունը» (50 տ. տղամարդ, գ. Առինջ)²⁹⁴:

Հականիշ համարվող զույգի մեջ նույն արդյունքն է ստացվել նաև այս պարագայում՝ հայաստանաբնակ հայը, նրանց բնութագրմամբ, ավելի շուտ ոչ թե բարեկիրթ է, քաղաքավարի, այլ հակառակը՝ անքաղաքավարի, կոպիտ և չոր (բացասական հատկանիշը գրեթե երկու անգամ ավել է դրականի համեմատ, համապատասխանաբար 9.0% և 4.8%, տես աղյուսակ 31):

²⁹⁴ Նույն տեղում:

Թեպետ բացասական համարվող հատկանիշները քիչ չեն (մոտ 32%) և մեծամասամբ հիմնված են շփման փորձի վրա, այնուամենայնիվ, դրական հատկանիշները գերակշռող են ոչ միայն հականիշ զույգերում, այլև ընդհանուր առմամբ: Բացասական հատկանիշների համեմատությամբ՝ առավել մեծ տոկոս են կազմել տեղի հայերի հետևյալ դրական որակները՝ հանդուրժողականություն, ընկերասիրություն, ազնվություն ու բարություն, մեծահոգություն ու օգնելու պատրաստակամություն (համապատասխանաբար, 13.3%, 7.2%, 9.0%, 12.7%, տե՛ս աղյուսակ 31): Նրանց կողմից գնահատվել է նաև տեղի հայերի հյուրասիրությունն ու հյուրընկալությունը, գեղեցիկ և խելացի լինելը:

Այսպիսով, Հայաստան տեղափոխված սիրիահայերը, հայտնվելով այլ միջավայրում, բախվում են նաև տեղի հայերի հետ հաղորդակցվելու դժվարությունների հետ: Սկզբնական շրջանում գրեթե բոլորի մոտ տիրում է շոկային վիճակ, իսկ հաջորդող փուլերի ընթացքում նրանց շփումը սկսում է տարբեր դրսևորումներ ստանալ՝ պայմանավորված տարբեր գործոններով: Չնայած ավելի տարածված են սիրիահայերի՝ սեփական համայնքի անդամների հետ շփումները, սակայն քիչ չեն շփումները նաև տեղի բնակիչների հետ, ինչը նպաստում է ակուլտուրացիոն գործընթացների ինտենսիվացմանը և հայաստանյան միջավայրին նրանց ինտեգրմանը:

4.3. Ինչպե՛ս են սիրիահայերը կազմակերպում ժամանցը Հայաստանում

Սիրիայում հայերի գործնական կյանքն ավելի շատ ծավալվել է արաբների միջավայրում: Թեև առօրյա և գործնական կյանքում նրանց հետ հարաբերություններում խնդիրներ չեն ունեցել, սակայն հիմնականում գերադասել են շփվել հայրենակիցների հետ: Կուսակցությունների և եկեղեցու հովանավորության ներքո, ինչպես նաև դրանցից անկախ բազմաթիվ միություններ են գործել Սիրիայում, որոնցից մի քանիսը երկրի տարբեր շրջաններում ունեցել են իրենց մասնաճյուղերը: «Անոնք ունին մարդասիրական, ընկերային, մշակութային, գրական, մարզական գործունեություն, կը պահեն մարզական խումբեր, արուես-

տի, երգ-երաժշտութեան դպրոցներ, երգչախումբեր, պարախումբեր, սկաուտական խումբեր, որոնք կը կառավարուին մասնաճիւղերու կազմած յանձնախմբային կազմերով: ...Կարելի է ըսել, որ սուրիահայ գաղութի բոլոր ընտանիքները իրենց բոլոր կամ մի քանի անդամներով ներգրաւուած են ոստայնին մէջ»²⁹⁵:

Կարող ենք ասել, որ սիրիահայերն իրենց ժամանակի մեծ մասն անցկացրել են հայկական միջավայրում՝ այցելելով տարաբնույթ մշակութային, կրթական և մարզական օջախներ: Այս համայնքում ամուր հիմքերի վրա են նաև ազգակցական, ընկերական, հարևանական կապերը, որոնք ամրապնդվել են հաճախակի տունայցելություններով, հյուրասիրություններով և այլն: Հատկապես Հալեպում, հայերը, կենտրոնացած լինելով հայկական թաղամասերում, ապրել են համայնքային կյանքով՝ ձևավորելով իրենց առօրյա և ժամանցային պրակտիկաները:

Ժամանցը գրականության մեջ սահմանվում է որպես անձի, խմբի և հասարակության սոցիալական ժամանակի մի մաս, որը կիրառվում է մարդու ֆիզիկական և հոգևոր առողջության պահպանման ու վերականգնման համար: Ժամանցն իր էությամբ նաև լրացուցիչ տարածություն է ստեղծում անձի զարգացման համար և օգնում է նրան լուծելու կենսականորեն կարևոր հիմնախնդիրները, որոնք առաջ են գալիս նոր սոցիալ-մշակութային միջավայրում: Ամերիկացի գիտնական Ջ. Կեյլին մշակել է ժամանցի ինտեգրատիվ մոդելը՝ ընդհանրացնելով մինչև այդ գոյություն ունեցող հայեցակարգերը: Նա առանձնացրել է երկու տեսական մոտեցում. 1) ժամանցի սոցիալական մոդելն ուսումնասիրում է ժամանցային տարբեր միջոցառումներին սոցիալական խմբերի մասնակցության ձևերը: Այն վերլուծում է մարդկանց ժամանցային գործունեությունն ամբողջության մեջ և նրանց վարքային բնութագրերը: 2) Էքզիստենցիալ մոդելը հետազոտության ժամանակ հաշվի է առնում տարբեր սոցիալական գործոնների ազդեցությունը կյանքի ոճի և արժեքային կողմնորոշումների վրա, որոնք պայմանավորում

²⁹⁵ Կարապետյան և այլք 2015, 31–32:

են անհատների զարգացումը: Այս երկու ուղղությունները միավորում են ժամանցի կապը մշակութային և ինստիտուցիոնալ գործոնների հետ, որտեղ հետազոտական հիմնական խնդիրը դառնում է հետևյալը՝ նպաստում է արդյո՞ք ժամանցը սոցիալական կապերի զարգացմանն ու անձի կատարելագործմանը²⁹⁶:

Անձի զարգացման և ադապտացիայի միջև կապի²⁹⁷ մասին են գրել հումանիտար հոգեբանության ներկայացուցիչներ Ա. Մասլոուն և Կ. Ռոջերսը: Վերջինս գրում է, որ յուրաքանչյուր մարդ ունակ է անձնական ինքնակատարելագործման և ձգտում է դրան: Համաձայն նրա «Ես»-կոնցեպցիայի՝ մարդու՝ կյանքից և ինքն իրենից բավարարվածության աստիճանը կախված է այն բանից, թե ինչպես են իրար հետ համաձայնության գալիս իրական «Ես»-ն ու իդեալական «Ես»-ը: Նա ադապտացիան համարում է ինքնաիրացման կարևորագույն պայման²⁹⁸: Ըստ Ա. Մասլոուի՝ անձի զարգացումը հիմնական պահանջ-մունքների բավարարումն է: Առանձնացնելով պահանջմունքների յոթ մակարդակ՝ ֆիզիոլոգիական, ինքնապահպանման, սիրո, պատկանելիության, հարգանքի, ինքնաարտահայտման և ինքնաիրացման²⁹⁹, նա վերջինիս բավարարումը համարում է լիարժեք ադապտացիայի գրավական:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 32-ի տվյալներից, սիրիահայերի ժամանցը բազմազան է և ընդգրկում է տարբեր ոլորտներ և ուղղություններ: Հայաստանում նրանց ժամանցային ձևերի բազմազանության մեջ ամենաշատ տարածվածն **ընկրանիքի և ընկերների** հետ ժամանակ անցկացնելն է (տանը՝ ընտանիքի անդամների հետ, զբոսանք ընտա-

²⁹⁶ Акимова 2003, 39.

²⁹⁷ Ադապտացիայի գործառնությունների նկարագրություններում ևս հանդիպում ենք նման նկարագրությունների: Այսպես, ըստ Մ. Շաբանովայի, ադապտացիայի գործառնությունը կայանում է նրանում, որ անհատը զարգանալու հնարավորություն է ստանում, իսկ մակրոմիջավայրը հանդես է գալիս այլ՝ ավելի զարգացած փուլում (Шабанова 1995, 82): Ըստ Պ. Կուզնեցովի՝ ադապտացիայի նպատակն անձի զարգացումն է, ինչն օստոգենետիկ իմաստով նշանակում է պահանջ-մունքների աճ և մեծացում, իսկ ֆիլոգենետիկ իմաստով՝ մշակույթի, կազմակերպության մակարդակի բարձրացում, (Кузнецов 1991, 11):

²⁹⁸ Хьелл, Зиглер 2014, 533-568.

²⁹⁹ Maslow 1954, 54.

Աղյուսակ 32.
Սիրիահայերի ժամանցի կազմակերպման ձևերը Հայաստանում (%)

Ինչպես եք անցկացնում ազատ ժամանակը	Հաճախականություն
Տանը՝ ընտանիքիս անդամների հետ	21.9
Զբոսնում եմ ընտանիքով, այցելում եմք տեսարժան վայրեր	20.5
Հյուր եմ գնում Սիրիայից եկած բարեկամներիս, ընկերներիս	12.3
Զբոսնում եմ ընկերներիս/գործընկերներիս հետ	11.0
Համացանց եմ մտնում, սոցցանցերից եմ օգտվում	9.6
Այցելում եմ սրճարաններ, ռեստորաններ	6.8
Հեռուստացույց եմ դիտում	4.8
Երաժշտություն եմ լսում, գիրք եմ կարդում	4.1
Հյուր եմ գնում ՀՀ-ում ապրող բարեկամներիս, ընկերներիս	3.4
Զբոսնում եմ հարազատներիս, բարեկամներիս հետ	1.4
Այլ ձևերով (սպորտ, լուսանկարչություն, ասեղնագործություն)	4.2
Ընդամենը	100.0

նիքով, հյուր գնալ սիրիահայ բարեկամներին, ընկերներին, զբոսանք ընկերների հետ, համապատասխանաբար, 21.9%, 20.5%, 12.3%, 11.0%, տե՛ս աղյուսակ 32): Փաստացի, նրանց գերակշիռ մասը՝ 65.7%-ը, իր ազատ ժամանակն անցկացնում է սեփական համայնքի ներսում, մասնավորապես, ընտանեկան և ազգակցական շրջանակներում կամ ակտիվ (զբոսանք), կամ պասիվ (տանը, հյուրընկալություն) ձևով: Այստեղ կարող ենք առանձնացնել ընկերներ տարբերակը, քանի որ չի բացառվում, որ վերջիններիս մեջ կլինեն նաև հայաստանցի հայեր: Զբոսանքի ժամանակ ևս չի բացառվում վերբալ հաղորդակցությունը վերջիններիս հետ, իսկ նրանց դիտարկելու, «ճանաչելու» և գնահատելու հնարավորությունը տրվում է նաև զբոսանքի ժամանակ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ շփումներից զատ: Ինչպես տեսնում ենք, սիրիահայերի մեջ ժամանցը և վստահելի մարդկանց հետ հաղորդակցությունը մեկտեղվում են՝ դառնալով ակնհայտ կարևոր ու նպատակաուղղված գործունեություն նոր սոցիալ-մշակութային միջավայրում:

Զբոսանքի վայրի ընտրությունը թերևս պայմանավորված է նրանց համար հարազատ դարձած և սիրելի վայրերի առկայությամբ՝ Հանրապետության հրապարակ, Օպերա/Կարապի լճի շրջակայք, Կասկադ և Հաղթանակի զբոսայգի/Մայր Հայաստան, որոնք դարձել են Երևանի խորհրդանիշներ նրանց պատկերացումներում:

Սիրիահայերի ժամանցի կազմակերպման մեջ որոշակի դեր ունեն նաև **մեդիա տեխնոլոգիաները**՝ համացանց/սոցցանցեր և հեռուստատեսություն (համապատասխանաբար, 9.6%, 4.8%), որոնք 1/7-րդ մասն են կազմում ընդհանուրի մեջ: Նրանց կողմից հայկական մշակույթի սպառումը տեղի է ունենում նաև ՉԼՄ-ների, մասնավորապես, հեռուստատեսության միջոցով, ուստի, անփոխարինելի է վերջիններիս դերը նրանց մշակութային ադապտացիայի գործընթացում (ՉԼՄ-ների մասին մանրամասն տե՛ս հաջորդ ենթագլխում): Համացանցի նախապատվությունը պայմանավորված է նախ և առաջ ֆիզիկական հասանելիությամբ և արաբալեզու մամուլի ու ժամանցային նյութերի առկայությամբ, ինչն էլ բավարարում է «սիրիահայկական» կյանքով ապրելու նրանց պահանջմունքը:

Սիրիահայերի շրջանում **ինտելեկտուալ ժամանցի** կազմակերպումը համեմատաբար փոքր հաճախականություն է գրանցել (երաժշտություն լսել, գիրք կարդալ՝ 4.1%, լուսանկարչություն և այլ՝ 4.2%), ինչը, սակայն, անձի ինքնազարգացման և ինքնաճանաչման լայն հնարավորություններ կարող էր ապահովել: Կինոթատրոններ և համերգներ հաճախելու մշակույթը ևս շատ քիչ է տարածված նրանց շրջանում: ՀՀ-ում ապրելու տարիներին միայն 8.7%-ն է երբևէ գնացել ֆիլմեր դիտելու: Պատճառը ոչ միայն և ոչ այնքան ֆինանսական դժվարություններն են, որքան ցուցադրվող ֆիլմերի լեզուն՝ ռուսերենը, ընկալելու խնդիրները: Ավագ սերնդի ներկայացուցիչները կարևոր են համարում նաև հոգեբանական վիճակը, որը կապված է անորոշ ապագայի հետ. *«Մենք Սուրիա բոլոր թափերականները եղած ենք: Բայց հիմա էդ տրամադրությունը չունինք, էդ պատրաստակամությունը չունինք, այսինքն՝ հոգեպէս, ֆիզիկապէս շատ յոգնած ենք: Տրամադրուած ենք միայն մեր սուրիական լուրերով եւ հարցերով: Որոշ չափով ֆինանսականն ալ խնդիր ա, բայց հիմնականը չէ»* (58 տ. կին, ք. Երևան): «Մի

անգամ գնացել եմ կինո, բայց էլ չեմ գնա, որովհետև ոռուսերէն էր» (32 տ. տղամարդ, ք. Երևան)³⁰⁰:

Թատրոնների և համերգների պարագայում լեզվական և ֆինանսական խնդիրները երկրորդային նշանակության են դառնում՝ որոշ չափով մեծացնելով նրանց մասնակցությունը մշակութային միջոցառումներին (թատրոն հաճախել են հարցվողների 22.8%-ը, իսկ համերգներ՝ 44.6%-ը): Հատկապես համերգների դեպքում ֆինանսական խնդիրն ակտուալ չէ, քանզի նրանց մեծ մասը հաճախում է բացօթյա, բարեգործական համերգների: Չնայած ինչքան էլ կարևորում են ինտելեկտուալ ժամանցն ու փորձում անմասն չմնալ, ամեն դեպքում, հայաստանցիների համեմատ՝ այն այդքան տարածված չէ սիրիահայերի շրջանում. «*Կը տեսնեմ, որ ժողովուրդը բաւական սեր ունի թատրոնի, արուստի, երաժշտութեան: Մեր մօտ այս բաները քիչ մը ավելի նվազ են»* (71 տ. տղամարդ, ք. Երևան)³⁰¹:

Սիրիահայերի մեջ զարգացած է նաև **սրճարաններ/ռեստորաններ այցելելու** մշակույթը (6.8%): Վայրի ընտրությունը պայմանավորված մի քանի գործոններով, որոնց մեջ կարևոր է, նախ, «սիրիահայկական» միջավայրի առկայությունը, այնուհետև՝ սրճարանների/ռեստորանների սեփականատերերի կամ աշխատողների սիրիահայ լինելը, ինչպես նաև՝ դրանցից օգտվելու մատչելիությունը:

Ժամանցի յուրօրինակ ձև է նաև **եկեղեցի այցելելը**: Սիրիահայերն այնտեղ չեն գնում միայն պատարագներին մասնակցելու, այլև՝ իրենց հայրենակիցներին հանդիպելու, հյուրասիրությունից օգտվելու: Վերջինս կազմակերպվում է Հայ Ավետարանական եկեղեցու կողմից, և ըստ մեր դիտարկումների ու փորձագետների գնահատականի, այնտեղ այցելում են նաև Առաքելական և Կաթոլիկ եկեղեցու հետևորդներ: «*Այստեղ իրարից ոգևորվելու, իրար ոգի փալու հրաշալի մթնոլորտ է, ուր նաև հայաստանցիներ կան»* (փորձագիտական հարցազրույց Հայ Ավետարանական եկեղեցու հովվի հետ)³⁰²:

³⁰⁰ Հակոբյան, ԴԱՆ, 2014:


³⁰¹ Նույն տեղում:

³⁰² Հակոբյան, ԴԱՆ, 2018:

Ելնելով մեր հետազոտական խնդրից՝ այն է, թե ինչքանով են նրանք իրենց ազատ ժամանակի հնարավորությունն օգտագործում այլ սոցիալ-մշակութային միջավայրում նոր սոցիալական կապերի ստեղծման և զարգացման, նոր միջավայրին հարմարվելու նպատակով, սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների հետ փոխկապվածության վերլուծությունը ներկայացնենք՝ ըստ ժամանցի կազմակերպման միջավայրի. 1) սեփական համայնքի ներսում, 2) սեփական համայնքից դուրս: Քանի որ ժամանցի նշված ձևերից ոչ բոլորն են հնարավորություն տալիս միանշանակ տարանջատելու սիրիահայ և ոչ սիրիահայ միջավայրերի սահմանը, մենք կդիտարկենք համեմատաբար հստակ տարբերակները՝ ցույց տալով սիրիահայ համայնքի շրջանակը (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2.

Սիրիահայերի՝ համայնքի ներսում ժամանցի կազմակերպման ձևերը՝ ըստ սեռապարիքային կազմի և զբաղվածության (%)



Գծապատկերում բերված տվյալներն ակնհայտ կերպով բացահայտում են այն խմբերը, որոնց մեջ գերակայում են սեփական համայնքի ներսում ժամանցի կազմակերպման ձևերը: Դրանք են՝

1. Հայաստանում գտնվող սիրիահայերի տնտեսապես ոչ ակտիվ զանգվածը,
2. Իգական սեռի ներկայացուցիչները,
3. Միջին սերնդի սիրիահայերը:

Ինչպես տեսնում ենք, առանձնացված երեք խմբերում էլ ժամանցի ձևերից ավելի մեծ կշիռ ունի ամենապասիվ ժամանցը՝ ընտանիքի անդամների հետ տանը ժամանակ անցկացնելու պրակտիկան՝ տնտեսապես ոչ ակտիվ խմբի դեպքում՝ 84.4%, սիրիահայուհիների մոտ՝ 71.9%, իսկ միջին տարիքային խմբում՝ 59.4%: Ընտանիքի անդամների շրջանակներում ժամանցի պրակտիկան, դուրս գալով տան պատերից և պասիվից փոխակերպվելով ակտիվի՝ զբոսանքի, առաջին հերթին տարածվում է տնտեսապես ոչ ակտիվ զանգվածի, այնուհետև՝ միջին տարիքի, ապա՝ իգական սեռի ներկայացուցիչների շրջանում (զբոսանք ընտանիքով, այցելություն տեսարժան վայրեր՝ ըստ վերը նշված խմբերի համապատասխանաբար, 60.0%, 46.6%, 36.7%, տե՛ս գծապատկեր 2):

Առավելապես սիրիահայ կանանց շնորհիվ և տունայցելությունների ձևով (61.1%) ընդլայնվում է ժամանցի կազմակերպման միջավայրը՝ դրանում ներառելով նաև Սիրիայից եկած հարազատներին, ընկերներին: Տունայցելություններն այնուհետև նախընտրում են տնտեսապես ոչ ակտիվ խմբի, ապա՝ միջին տարիքի սիրիահայերը (համապատասխանաբար, 55.6% և 38.9%, տե՛ս գծապատկեր 2):

Սեփական *համայնքից դուրս* ժամանցի կազմակերպումը, թեև փոքր հաճախականությանը՝ 3.4% (տե՛ս աղյուսակ 32), ունի իր հստակ արտահայտված ձևը՝ փոխայցելություններ ՀՀ-ում ապրող հարազատներին/ընկերներին, և ըստ սեռի, տարիքի ու զբաղվածության նկարագիրը: Ոչ այնքան ընդգծված տարբերությամբ, սակայն այստեղ էլ առանձնացվել են այն խմբերը, որոնց մեջ գերակշռում է համայնքից դուրս ժամանցի կազմակերպումը. 1) տնտեսապես/սոցիալապես ակտիվ զանգված, որը ներառում է աշխատողներին և ուսանողներին, 2) երիտասարդ և ավագ սերնդի ներկայացուցիչներ՝ հավասարապես, 3) սիրիահայ տղամարդիկ:

Ներառելով ժամանցի բոլոր ձևերը՝ շարունակենք վերլուծությունը և ներկայացնենք ըստ սեռատարիքային, զբաղվածության և բնակավայրի ցուցանիշներով տարանջատված խմբերից յուրաքանչյուրին առավել բնորոշ ժամանցային պրակտիկան:

- Երիտասարդներն ավելի շատ նախընտրում են սեփական համայնքի ներսում փոխայցելությունները, միջին տարիքային խումբը՝ համացանցի, իսկ ավագ սերունդը՝ հեռուստատեսության հավատարիմ սպառողներ են:
- Կանայք հեռուստացույց դիտողների բացարձակ մեծամասնությունն են կազմում, իսկ սրճարաններ և ռեստորաններ այցելելու մշակույթը մեծ մասամբ պատկանում է սիրիահայ տղամարդկանց:
- Տնտեսապես ոչ ակտիվ զանգվածի մեջ ժամանցի տարածված ձևը դեռևս մնում է հեռուստացույց դիտելը, իսկ տնտեսապես/սոցիալապես ակտիվ սիրիահայերը աստիճանաբար մեծացնում են սեփական սոցիալական ցանցը՝ այցելելով հայաստանից հարազատներին և ընկերներին:
- Երևանում և մարզերում ժամանցի կազմակերպման պրակտիկաներն էապես տարբերվում են: Ի տարբերություն երևանաբնակների, մարզերում բնակվողների շրջանում բացակայում են ինտելեկտուալ ժամանցի ձևերն ու սրճարաններ այցելելը, ընկերների, հարազատների հետ զբոսները, ինչը մեծապես պայմանավորված է մարզերում ժամանցային վայրերի սահմանափակությամբ: Հետևաբար, նրանց ժամանցը սահմանափակվում է առավելապես հեռուստացույց դիտելով, ընտանիքի անդամների հետ ժամանակ անցկացնելով, երբեմն նաև ազգակիցների տուն այցելություններով:

Ինչպես տեսնում ենք, համայնքային կյանքին բնորոշ ժամանցային պրակտիկաները սիրիահայերի հետ միասին տեղափոխվում են Հայաստան, ծավալվում նույն խնդիրներ ու հետաքրքրություններ ունեցող մարդկանց շրջանակներում: Նրանց համար ժամանցը կարծես դառ-

նում է նպատակային գործունեություն՝ սակայն ոչ թե նոր միջավայրում նոր սոցիալական կապերի ստեղծմանն ու զարգացմանը, այլ հին կապերի վերագնահատմանն ու ամրապնդմանն ուղղված: Ասվածն առավելապես բնութագրական է Հայաստանում բնակվող սիրիահայերի տնտեսապես/սոցիալապես ոչ ակտիվ զանգվածին, միջին տարիքի և իգական սեռի ներկայացուցիչներին: Թեպետ փոքր ծավալով, սակայն առկա է նաև սեփական համայնքից դուրս ազատ ժամանակի կազմակերպման պրակտիկա՝ մասնավորապես, որոշակի գործունեություն ծավալող տղամարդկանց մեջ:

Ժամանցի միջոցով սեփական անձի զարգացմանն ուղղված գործողությունն առավելապես արտահայտվում է նոր միջավայրում տեսարժան վայրեր այցելելով՝ հարստացնելով նյութական մշակույթի մասին գիտելիքների պաշարը՝ մի կողմ թողնելով հոգևորը: Սիրիայում գործող բազմաթիվ միություններն այսօր չեն փոխարինվել Հայաստանում գոյություն ունեցող տարաբնույթ մշակութային ու հասարակական կազմակերպություններով, որոնք կնպաստեին նրանց արագ ինտեգրմանը:

4.4. Սիրիահայերը և ՋԼՄ-ների նախընտրությունը

Սիրիահայերի համար հայաստանյան սոցիալ-մշակութային կյանքին հարմարվելու գործում կարևոր դեր ունեն ՋԼՄ-ները: Երկար տարիներ հայաստանյան լրատվությունը արբանյակային հեռարձակմամբ տարածվել է ամբողջ աշխարհով՝ հանդես գալով որպես հայկական սփյուռքի հայախոս հատվածի սպառման աղբյուր: Սիրիահայ համայնքը ևս անմասն չի մնացել այս առումով:

Բնականաբար, Հայաստանում ապրող հայր և արտերկրում ապրող հայր նույն մտածողությունն ու խնդիրները չունեն: Դժվար չէ ենթադրել, որ Սիրիայում ապրող հայր ևս հայկական հեռուստաթերթից առաջին հերթին ակնկալել է ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների մասին լրատվություն, նաև ազգային մշակութային հաղորդաշարեր, ապա այնպիսի հաղորդումներ, որոնք կնպաստեին նրանց հայերենն ընկալելու, սովորելու և կիրառելու հմտությունների զարգացմա-

նր: Այլ հարց է, թե ՀՀ-ում հեռարձակվող ծրագրերը, նույնությամբ տրվելով արբանյակով, ինչքանով են բավարարել սփյուռքում ապրող հայերի պահանջունքները: Ամեն դեպքում, հայկական ՋԼՄ-ները կարևոր դեր են ունեցել սիրիահայության ինքնապահպանման և հայրենիքի հետ կապերի ամրապնդման գործում: Սակայն նույն հայկական լրատվական միջոցներն այսօր այլ դերակատարություն ունեն նրանց համար:

Գիտական գրականության մեջ ՋԼՄ-ները դասվում են սոցիալական կոմունիկացիաների թվին՝ իրենցից ներկայացնելով յուրահատուկ, ինստիտուցիոնալացված տեսակ, որոնք կազմակերպում են զանգվածային տեղեկատվության արտադրությունն ու տարածումը: ՋԼՄ-ները մի շարք գործառույթներ են իրականացնում, որոնցից հիմնականները՝ հաղորդակցական և տեղեկատվական, բնորոշ են նրանց ըստ սահմանման և համարվում են անբաժանելի հատկություն, առանց որոնց անհնար է այլ գործառույթների կատարումը³⁰³: Ամերիկացի հետազոտող Գ.Լասուելը առանձնացրել է չորս հիմնական գործառույթներ՝ 1) տեղեկատվության հավաքում և տարածում, 2) տեղեկատվության խմբագրում, 3) հասարակական կարծիքի ձևավորում, 4) մշակույթի տարածում: ՋԼՄ-ների կատարած գործառույթներն անհրաժեշտ է դիտարկել սոցիալական կառուցվածքի տարբեր մակարդակներում: Յու. Լևադան առանձնացրել է այդպիսի երեք մակարդակ՝ 1) անձ, 2) սոցիալական խումբ, 3) սոցիալական ինստիտուտ: ՋԼՄ-ներն իրականացնում են սոցիալական խմբում *անձի* ինքնահաստատման, սոցիալականացման, ներդաշնակ և հավասարակշիռ գոյության, սոցիալական դերերին ենթարկվելու գործառույթները, որոնք ակտուալացվում և անձին կապում են այդ համակարգին: Անձի համար նաև արժեքակարգավորման և հոգեբանական կարգավորման գործառույթ են իրականացնում: Առաջինն իրականացվում է ոչ միայն իրականության մասին գիտելիքի փոխանցման, այլև դրա նկատմամբ վերաբերմունքի ձևավորման շնորհիվ³⁰⁴: Երկրորդի էությունը նրանում է, որ լրատվա-

³⁰³ Фомичева 2007, 42, 53.

³⁰⁴ Նույն տեղում, 61:

միջոցներն որոշակի զգացմունքային-հոգեբանական մթնոլորտ են ստեղծում՝ ազդելով անձի տրամադրության և զգացմունքների վրա³⁰⁵: *Սոցիալական խմբի* շրջանակներում ՋԼՄ-ները նպաստում են խմբի ինտեգրացիային, այսինքն՝ նրա ներառմանը ավելի լայն սոցիալական կառուցվածքներում: *Ինստրիպուտների* մակարդակում ՋԼՄ-ները այն հիմքն են հանդիսանում, ըստ որի՝ սոցիալական նորմերը դառնում են հասանելի անձանց համար, և ստեղծում ակտիվ մոբիլիզացնող միջավայր՝ զգացմունքային, ռացիոնալ և գնահատող տարրերով³⁰⁶:

ՋԼՄ-ների միջոցով նոր սոցիալ-մշակութային միջավայրին հարմարվելու արդյունավետության վրա ազդում են գործոններ, որոնք բաժանվում են երկու խմբի՝ սուբյեկտիվ և միջավայրային: Առաջինների թվին են դասվում ժողովրդագրական (տարիք, սեռ), ֆիզիոլոգիական և հոգեբանական բնութագրիչները, իսկ միջավայրային գործոնների թվին՝ կենսագործունեության պայմանները, գործունեության ռեժիմը և բնույթը, սոցիալ-մշակութային միջավայրի յուրահատկությունը: Ադապտացիայի գործընթացը կարող է տեղի ունենալ և՛ ակտիվ, և՛ պասիվ: Պասիվ ձևն իրականացվում է ինքնաբերաբար, ենթագիտակցական մակարդակի վրա, իսկ ակտիվ ձևի դեպքում մարդ նպատակաուղղված ձգտում է փոխել իր գիտակցությունը, գործողությունները, կենսաձևը, դիրքը, որպեսզի հարմարվի նոր սոցիալ-մշակութային միջավայրին³⁰⁷:

Քանի որ ժամանակակից ՋԼՄ-ների համակարգում հեռուստատեսությունն առանցքային տեղ է զբաղեցնում, ամենամատչելին է և ամենամեծ լսարան ունեցողը, թեման կքննարկենք հետևյալ հարցերի շրջանակում՝ 1) սիրիահայ հեռուստալսարանի բացահայտում՝ ըստ ալիքների նախընտրության, 2) հեռուստալսարանի սեռատարիքային կազմի նկարագրություն, 3) հեռուստածրագրերի նախընտրություն՝ ըստ ալիքների, 4) սիրիահայերի մասին հեռուստատեսային հաղորդումներ, լրատվություն³⁰⁸:

³⁰⁵ Նույն տեղում, 111:

³⁰⁶ Функции и роли средств массовой коммуникации. Հասանելի է՝ https://studme.org/38999/sotsiologiya/funksii_rol_i_sredstv_massovoy_kommunikatsii, 14.05.2017:

³⁰⁷ Реан и др. 2006, 68–69.

³⁰⁸ Ըստ զբաղվածության հեռուստալսարանի բացահայտումը տե՛ս Հակոբյան

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ նրանց շրջանում ամենամեծ դիտողականությունն ունեն հայկական հեռուստաալիքները՝ 71%-ը հետևում է հայկական հեռուստաալիքներին՝ մի կողմից ակտիվ դերակատար հանդիսանալով սեփական սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացում, մյուս կողմից, հաղորդակցության պասիվ սուբյեկտ դառնալով հայկական իրականությանն ու մշակույթին: Հայկականների մեջ բարձր դիտողականություն ունեն հատկապես «Արմենիա», «Շանթ» և «Հ1», այնուհետև՝ «Կենտրոն», «Հ2» և «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունները:

Հայաստանում արաբական հեռուստաալիքներին հետևողները ևս որոշ զանգված են կազմում ընդհանուր հեռուստալսարանի մեջ՝ 15.3%-ը, ինչպես նաև շատ քիչ զանգված՝ 1.5% թուրքական և 2.7% այլ հեռուստաալիքների սպառող է համարվում: Այստեղ ուշադրության է արժանի նաև այն ցուցանիշը, որը վկայում է ընդհանրապես հեռուստացույց չդիտելու/չունենալու մասին՝ 9.5%: Հեռուստացույց չդիտողների մեծ մասը նախապատվություն է տալիս համացանցին՝ հետևյալ հիմնական պատճառներով.

1. Ֆիզիկական հասանելիություն՝ պայմանավորված նրանց աշխատանքի բնույթով:
2. Արբանյակային հեռուստաալիքների բացակայություն, ինչի պատճառով շատ սիրիահայեր, որոնք ցանկանում են արաբական հեռուստաալիքներով հետևել առավելապես Սիրիային վերաբերող նորություններին, հնարավորություն չեն ունենում:
3. Արաբալեզու էլեկտրոնային մամուլի առկայություն, ինչը համացանցն ավելի գերադասելի է դարձնում այլ լրատվամիջոցների նկատմամբ:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ այս երկու լրատվամիջոցներն իրար չեն բացառում, փոխարենը լրացնում ու ավելացնում են տեղեկատվության հավաստիության ստուգման հնարավորություն-

ները. «Որն է շիտակը, որն է ճիշդը Կրնայ ըլլալ՝ մի օր ինտերնետը սխալ մի բան գրէ, ճիշդը «տելեվիզորէն» տեսնես, կրնայ ըլլալ, որ թերթը շիտակ գրէ, «տելեվիզորը»՝ սխալ» (39 տ. տղամարդ, ք. Աբովյան)³⁰⁹:

Հայկական հեռուստաալիքներ դիտելու առումով կանանց և տղամարդկանց շրջանում էական օրինաչափություն չի բացահայտվել, սակայն նույնը չենք կարող ասել արաբական և թուրքական հեռուստաալիքների պարագայում. արաբական հեռուստաալիքներին հետևողները մեծամասամբ սիրիահայ կանայք են, իսկ թուրքականին՝ տղամարդիկ (համապատասխանաբար, 72.4% 66.7%): Նաև փաստենք, որ լսարանի համեմատաբար պասիվ զանգվածը կազմում են տղամարդիկ՝ կանանց, և երիտասարդները՝ միջին ու ավագ սերնդի համեմատ:

Շարունակելով վերլուծությունը տարիքային չափանիշի հետ կապի մեջ՝ նկատենք, որ հայկական հեռուստաալիքներ դիտողների մեջ համեմատաբար պասիվ զանգված են համարվում տարեց մարդիկ, ապա՝ երիտասարդները, իսկ միջին տարիքային խումբն այն մեծ զանգվածն է, որը կան նպատակաուղղված, կան ենթագիտակցորեն գործողություններ է իրականացնում հայաստանյան սոցիալ-մշակութային կյանքին հարմարվելու ուղղությամբ: Այլ հեռուստաալիքների սպառողների մեջ երիտասարդները կան փոքր զանգված են կազմում, կան բացակայում են (արաբականի դեպքում 20.7%, թուրքականի դեպքում՝ 0.0%):

Սիրիահայերի կողմից նախընտրելի հեռուստահաղորդումների հիմնական թեմատիկայի և ուղղվածության վերլուծության արդյունքում էլ բացահայտվում է ՋԼՄ-ների կատարած գործառույթները նրանց համար, ինչպես նաև որոշակի հիմքեր տալիս՝ նկարագրելու սոցիալ-մշակութային ադապտացիայի առկա վիճակը:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 33-ի տվյալներից, նրանք իրենց ուշադրությունը հիմնականում սևեռում են **փրեդեկատրվական, վերլուծական հաղորդումների** վրա՝ դրանով բավարարելով Սիրիայի վերա-

³⁰⁹ Հակոբյան, ԴԱՆ, 2014:

Աղյուսակ 33.
Սիրիահայերի՝ հեռուստահաղորդումների նախընտրությունը (%)

Հեռուստահաղորդումներ	Բոլոր հեռուստաալիքներով	Հայկական հեռուստաալիքներով	Արաբական հեռուստաալիքներով
Լուրեր, քաղաքական մեկնաբանություններ	25.7	29.8	32.1
Մշակութային, երաժշտական հաղորդումներ	20.9	23.5	14.3
Մարզական հաղորդումներ	8.0	8.8	3.6
Գեղարվեստական ֆիլմեր	7.4	7.0	5.4
Հումորային, զվարճալի	6.7	8.8	8.9
Հայկական սերիալներ	6.7	8.4	0.0
Գիտատեղեկատվական, ինտելեկտուալ հաղորդումներ	4.3	5.6	3.6
Շոուներ/թոք շոուներ	3.1	4.2	3.6
Արաբական սերիալներ	3.1	0.0	16.1
Այլ (այլ սերիալներ, կրոնական, խոհարարական հաղորդումներ)	3.1	3.9	12.4
Չկան նախընտրելի հաղորդումներ	11.0	–	–
Ընդամենը	100.0	100.0	100.0

բերյալ տեղեկատվության ստացման իրենց պահանջմունքը: Եվ պատահական չէ, որ արաբականով հեռարձակվող լուրերի նկատմամբ պահանջը մեծ է սիրիահայերի մոտ՝ ի համեմատ հայկականով հեռարձակվողի (համապատասխանաբար, 32.1%, 29.8%), քանի որ, ըստ նրանց, արաբալեզու ալիքները տրամադրում են ամենաթարմ լուրերը, և այն Սիրիայի իրականության մեջ մնալու համար կարևոր պայման է հանդիսանում. «Ամեն օր լսում եմ Հալէպի մասին լուրերը: Մեր հոգեկանը երբեք հանգիստ չէ, մարմնապես հոս ենք, հոգով՝ հոն» (37 տ. տղամարդ, ք. Երևան)³¹⁰:

³¹⁰ Նույն տեղում:

Սակայն միանշանակ չէ հեռուստատեսության հանդեպ վստահության հարցը: Սիրիահայերը, հաշվի առնելով ՋԼՄ-ների քաղաքական ուղղվածության փաստը, այն չեն համարում տեղեկատվության հավաստի աղբյուր. «Վերջերս էս լրատուական տարափը, որ կայ ընդհանրապէս աշխարհում եւ, մասնատրապէս, էստեղ՝ ոչ ճիշդ տեղեկատուութիւն, ոչ լիարժէք գիտելիքներ, անտեղեկ լրագրողներ, ովքեր ինչ պատահի, հաղորդում են, ոչ մի լաւ բանի չի փանում: Կան արաբական յարուկ լրատուական կայաններ, որոնք նման են գործակալների, եւ նրանք հաղորդում են այն, ինչ ուզում են մեծ ուժերը: Դրա համար էլ ես չեմ վստահում» (62 տ. կին, ք. Երևան)³¹¹: Կան սիրիահայեր, որոնք փորձում են նաև համեմատական անցկացնել հայկական ՋԼՄ-ների հետ՝ փաստելով, որ չնայած հայկական լրատվամիջոցների վրա ճնշումներ կան, այնուամենայնիվ, ՀՀ-ում լրատվական դաշտը ազատ է քաղաքական ազդեցությունից՝ ի համեմատ Սիրիայում տիրող իրավիճակի. «Այնտեղ այսօրվա Հայաստանի իրավիճակը չէ: Թեկուզ շատ լսում եմ, որ լրատվամիջոցների վրա ճնշումներ կան, բայց ես, որովհետեւ լավ ասրել եմ սուրիական տարբերակը, ասում եմ՝ շատ հանգիստ ենք էստեղ» (41 տ. տղամարդ, գ. Առինջ)³¹²: Փաստորեն, հետևելով լուրերին, իրադարձություններին, ինչպես նաև վերլուծություններ անելով հեռուստատեսության որակի և ազատության հարցերի շուրջ, նրանք որոշ իմաստով մասնակցություն են ունենում Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքին:

Հեռուստահաղորդումների մեջ մեծ դիտողականություն ունեն նաև **մշակութային, երաժշտական հաղորդումները** (բոլոր հեռուստաալիքներով՝ 20.9%, իսկ հայկականներով՝ 23.5%, տե՛ս աղյուսակ 33): Խորին հարցազրույցների վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հայկական-արաբական երաժշտության նախընտրության հարցում միջավայրի փոխվելուց հետո էական փոփոխություններ չեն եղել, և նրանց կարելի է բաժանել երեք խմբի՝ հայկական երգ-երաժշտության սպառողներ, արաբական երգ-երաժշտության սպառողներ և խառը լսարան:

³¹¹ Նույն տեղում:

³¹² Նույն տեղում:

Սիրիահայերի կողմից սպառվող հաղորդումների մեջ որոշակի կշիռ ունեն նաև հայկական և արաբական արտադրության **հեռուստատեսերիալները** (համապատասխանաբար, 6.7% և 3.1%), ընդ որում, արաբական հեռուստաալիքներով ցուցադրվողները երկրորդ ամենապահանջված հեռուստաարտադրանքն են լուրերից հետո: Հայկական եթերը լի է բազմապիսի հայկական ու արտասահմանյան հեռուստատեսերիալներով, որոնք հասարակության համար կարևոր ինստիտուտների մասին (ընտանիք, կրթություն, տնտեսություն, եկեղեցի և այլն) իրենց պատկերացումներն են քարոզում՝ հաստատելով կամ վերաարժևորելով հասարակության մեջ արդեն իսկ առկա արժեքները: Եվ, բնականաբար, սերիալները խորը ազդեցություն են ունենում ոչ միայն հայաստանցիների, այլև սիրիահայերի արժեհամակարգի ձևավորման ու փոխակերպման վրա:

Հայկական հեռուստաալիքներով ցուցադրվող **մարզական և ժամանցային հաղորդումները** հետաքրքրության հավասար դաշտում են գտնվում նրանց համար (մարզական՝ 8.8% և հումորային/զվարճալի՝ 8.8%, տես աղյուսակ 33), որոնց միջոցով ոչ միայն հարստացնում են արևելահայերեն լեզվի իմացության գիտելիքները, այլև առօրյա-խոսակցական արտահայտությունների պաշարը՝ նպաստելով հայաստանաբնակ հայերի հետ հեշտ հաղորդակցմանը: Ընդհանրապես, հայ մշակույթի սպառումը տեղի է ունենում նաև ՉԼՄ-ների՝ մասնավորապես հեռուստատեսության շնորհիվ, ուստի անփոխարինելի է վերջինիս դերը նրանց մշակութային ադապտացիայի գործընթացում:

Բացի հայաստանյան մշակույթի սպառողներ լինելուց, նրանք նաև սիրիահայ մշակույթի ակտիվ տարածողներ են՝ ի շնորհիվ հայկական հեռուստաալիքների ընձեռած հնարավորությունների, որի արդյունքում նրանք կամ որպես հեռուստահաղորդման սյուժեի հերոսներ, կամ որպես հյուրեր (հիմնականում հասարակական ու մշակութային գործիչներ) այդ մշակույթը կրողներին բնորոշ հպարտության զգացումներ են առաջացնում էկրանից այն կողմ գտնվողների մոտ: Իսկ, ընդհանրապես, սիրիահայերի մասին նմանատիպ հաղորդումները, ինչպես նաև տնտեսության, մշակույթի և այլ ոլորտներում նրանց առնչվող իրադարձությունների լուսաբանումը ՀՀ-ում ապաստան

գտած սիրիահայ, նաև հայաստանցի հեռուստալսարանի համար ապահովում են հետևյալ գործառույթների իրականացումը.

- Սիրիահայերի կրթական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային և այլ հիմնախնդիրների բացահայտում, տարածում, ակտուալացում:
- Առևտրի, տնտեսության, գիտության և այլ ոլորտներում նրանց արձանագրած հաջողությունների, նորարարությունների մասին տեղեկատվության տրամադրում:
- Հայաստանաբնակ հայերին սիրիահայ մշակույթի հետ ծանոթացում (մասնավորապես, արևմտահայերեն լեզու, ուսեստներ, ավանդույթներ, սովորություններ, նյութական ու հոգևոր արժեքներ և այլն):
- Սոցիալ-մշակութային ադապտացիայի առկա մակարդակի նկարագրում՝ խթանելով և նոր աղբյուրներ առաջարկելով հետագա ընթացքի համար:

Այսպիսով, բացահայտելով այն դերը, որ ՋԼՄ-ներն ունեն սիրիահայերի կյանքում, կարող ենք ասել, որ երբ խոսքը վերաբերում է ժամանցին, մշակութային հաղորդումներին, նրանք նախընտրում են հայկական հեռուստաալիքները, իսկ երբ լուրերին՝ արաբական ալիքները: Հեռուստահաղորդումներին հետևելու բազմազանությունը արտացոլում է նրանց ինքնությունը. մի կողմից, խորը կապվածություն հայկական մշակույթի հետ, մյուս կողմից, նախ պատկանելիություն արաբական հասարակությանը, ապա՝ ներքին պարտավորվածություն նրանց հանդեպ: Հեռուստատեսության դերը սիրիահայերի ներգաղթի առաջին տարիներին երկակի է՝ նոր քաղաքացիական պատկանելիության ձևավորում՝ նախկին ինքնության պահպանման պայմաններում: Սակայն այդ երկակիությունը ներքին հակասություն չի առաջացնում: Հայկական լրատվամիջոցները, մի կողմից, ամրապնդում են հայախոս սիրիահայերի մշակութային գիտելիքները, մյուս կողմից, նպաստում ինտեգրացիային՝ նոր ինքնագիտակցության ձևավորման հիման վրա ներքաշելով հայ հասարակության արդի հիմնախնդիրների մեջ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մենագրությունը նվիրված է 2011 թ. Սիրիայում սկսված պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի խնդիրների ուսումնասիրությանը: Սիրիայում հայ համայնքն ապրել է այլ սոցիալ-տնտեսական հարաբերությունների և քաղաքական համակարգում, այլ կրոնական ու մշակութային միջավայրում, սակայն պատերազմի հետևանքով նրանց մի մասը, տեղափոխվելով թեպետ հայկական, բայց նոր և անծանոթ սոցիալ-մշակութային միջավայր, կանգնեց վերջինիս հարմարվելու խնդրի և անհրաժեշտության առջև: Հայաստանյան միջավայրում նրանց հարմարվելու գործընթացը դժվարացնող գործոնները բազմաթիվ են՝ փաստաթղթային, կեցության, սոցիալ-կենցաղային և նյութական խնդիրներ, լեզվական, կրթական և աշխատանքային դժվարություններ, տեղի մշակութային նորմերի և ավանդույթների չիմացություն, արժեհամակարգի տարբերություններ, հայաստանցի հայերի հետ հաղորդակցության բարդություններ և այլն, որոնցից յուրաքանչյուրն իր դերակատարությունն ունի Հայաստանում ինտեգրվելու և հետագա կենսագործունեությունը շարունակելու որոշման կայացման հարցում:

Գրքում անդրադարձ է կատարվում Սիրիայում հայ համայնքի ձևավորման և զարգացման պատմությանը, սիրիահայերի՝ XX դարի հայրենադարձությանը Խորհրդային Հայաստան, և զուգահեռներ անցկացվում 2012 թ. դեպի ՀՀ կատարած ներհոսքի հետ՝ վերլուծելով նրանց տեղափոխվելու դրդապատճառներն ու մոտիվները, Հայաստանի՝ որպես հայրենիքի գործոնի կարևորությունն այս հարցում: Աշխատությունում քննության առարկա են դառնում սիրիահայ ընտանիքների կենցաղային, նյութական և զբաղվածության խնդիրները, միգրացիոն վարքագիծը, դրա փոփոխման միտումներն ու պատճառ-

ները, նրանց՝ ՀՀ-ի հասարակական և քաղաքական կյանքին և կրթական համակարգին հարմարվելու առանձնահատկություններն ու խոչընդոտող գործոնները: Գրքում վերլուծության են ենթարկվում սիրիահայերի մշակութային ադապտացիայի խնդիրները, կրոնական և տոնական վարքագծի, ամուսնա-հարսանեկան ծեսերի առանձնահատկությունները, ընտանեկան արժեհամակարգի ընդհանրություններն ու տարբերությունները հայաստանաբնակ հայերի համեմատությամբ, լեզվական վարքի փոխակերպումները, նրանց հաղորդակցության մշակույթը, առօրյայի և ժամանցի կազմակերպումը սեփական համայնքում և համայնքից դուրս:

Ուսումնասիրության ժամանակաշրջանն ընդգրկում է 2012–2018 թթ.: Էմպիրիկ նյութը հավաքվել է հեղինակի անցկացրած հետազոտությունների արդյունքում՝ որակական և քանակական մեթոդների համադրությամբ: Քանակական հետազոտությունն անցկացվել է կիսաձևայնացված հարցազրույցների մեթոդով՝ 184 հարցազրույց սիրիահայերի հետ Երևանում, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի մարզերում (2014 թ.) և 384 հարցազրույց (որից 7 տոկոսը՝ սիրիահայերի հետ) տեղացի և սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևան քաղաքում, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերում (2016–2017 թթ.): Որակական հետազոտությունն անցկացվել է խորին ու փորձագիտական հարցազրույցների և փաստաթղթերի վերլուծության մեթոդներով՝ 36 խորին հարցազրույց սիրիահայերի հետ (2014 թ.), 15 փորձագիտական հարցազրույց պետական հաստատությունների, հասարակական և կրոնական կառույցների ներկայացուցիչների հետ (2018 թ.) և փաստաթղթերի որակական վերլուծություն՝ 3 առցանց պարբերականներում (aravot.am, tert.am, a1plus.am) 2012–2014 թթ. հրապարակված նյութերի ուսումնասիրություն: Հավաքվել են նաև վիճակագրական տվյալներ 2018 թ. դրությամբ ԱՀ-ում բնակվող 24 սիրիահայ ընտանիքների բնակության վայրի, նրանց սոցիալ-ժողովրդագրական կազմի վերաբերյալ:

Տարիների ընթացքում մի քանի մեթոդներով հավաքագրված նյութը սիրիահայերի ադապտացիայի խնդիրների բազմակողմանի

վերլուծության և հիմնական եզրահանգումներ անելու հնարավորություն տվեց մեզ:

2011 թ. Սիրիայում սկսված պատերազմի պատճառով հայ համայնքը ցրվեց աշխարհով մեկ, մեծամասամբ՝ եվրոպական երկրներ, Կանադա, Լիբանան և Հայաստան: Եթե առաջինների դեպքում ընտրությունը պայմանավորված էր տվյալ երկրներ մուտք գործելու հնարավորություն ունենալով, սոցիալական ցանցի առկայությամբ, լավ աշխատանքի և բարեկեցիկ կյանքի հեռանկարով, փախստականի կարգավիճակի միջոցով ապագան կառուցելու մտադրությամբ և այլ ռացիոնալ հիմնավորումներով, ապա սիրիահայերի զգալի մասը Հայաստան տեղափոխվելու որոշումը կայացրեց հուզական մակարդակում՝ առաջնային համարելով հայրենիքի գաղափարը:

Սիրիահայերի զանգվածային ներհուսքը ՀՀ սկիզբ դրեց նոր խնդիրների, որոնց հաղթահարմանը գործնականորեն պատրաստ չէր Հայաստանը: Այնուամենայնիվ, նրանց ընդունելու, առաջին օգնություն ցույց տալու, հայ հասարակությանն ինտեգրելու նպատակով բազմաթիվ ծրագրեր նախաձեռնվեցին և իրականացվեցին պետական հաստատությունների, տեղական մասնավոր ընկերությունների, միջազգային, հասարակական և բարեգործական կազմակերպությունների կողմից: Չնայած կատարված աշխատանքին, պետության կողմից վարվող քաղաքականությունը կրում էր իրադարձային բնույթ՝ առաջացած սոցիալական, տնտեսական, իրավական հարցերին տալով տեղային արձագանք: Մինչդեռ Հայաստանին՝ որպես մեծ սփյուռք ունեցող պետության, անհրաժեշտ է կուռ մշակված քաղաքականություն, որի միջոցով հնարավոր կլինի անհրաժեշտության դեպքում ընդունելու աշխարհասփյուռ հայերին և կարգավորելու նրանց արդյունավետ ինտեգրումը հայաստանյան հասարակությանը՝ շեշտադրելով նաև նրանց մշակույթի և ինքնության պահպանման հարցերը:

Համաձայն պաշտոնական տվյալների՝ 2012 թվականից սկսած 22000 սիրիահայեր են մուտք գործել ՀՀ, սակայն նրանց միայն մոտ քառորդ մասը հաստատվեց երկրում: Ըստ փորձագիտական գնահատականների՝ նրանք Հայաստանում մշտական բնակվելու մտադրու-

թյուն ունեցող սիրիահայերն են: Մեր ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ սիրիահայերի համար ՀՀ-ից հեռանալու պատճառները բազմաթիվ էին, սակայն նախ և առաջ չպետք է անտեսել այն հանգամանքը, որ նրանցից ոմանք ի սկզբանե Հայաստանը համարել են տարանցիկ երկիր՝ օգտագործելով այն հիմնականում Արևմտյան Եվրոպայի երկրներ, Կանադա և ԱՄՆ տեղափոխվելու նպատակով: Բացի այս զանգվածից, իհարկե, կան սիրիահայեր, ովքեր Հայաստանից հեռացան երկրում առկա վանող գործոնների պատճառով, որոնք հիմնականում սոցիալ-տնտեսական բնույթ ունեն՝ գործազրկություն, ցածր աշխատավարձ, սեփական բիզնես ստեղծելու դժվարություններ, բարձր հարկեր, բնակարանի բացակայություն, կենցաղային խնդիրներ և այլն: Նրանց միգրացիոն վարքագծի վրա որոշակի ազդեցություն ունեցան նաև մշակութային, հոգեբանական գործոնները:

Մեր անցկացրած կրկնվող քանակական հետազոտությունների (2014 թ. և 2017 թ.) արդյունքները ցույց են տալիս ինչպես նրանց միգրացիոն վարքագծի փոփոխությունները, այնպես էլ միգրացիայի պատճառները: Եթե 2014 թ. հետազոտության տվյալներով նրանց կեսից ավելին, ապա 3 տարի անց կեսից քիչ մարդ է այլ երկիր մեկնելու ցանկություն և մտադրություն հայտնել, չնայած վերջիններս ավելի վճռական են դառնում այդ որոշման մեջ՝ Հայաստանից հեռանալու ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկելով՝ ձեռք բերված ՀՀ քաղաքացիությունից հրաժարվել, տարբեր երկրների դեսպանություններ դիմել, այլ երկրներում բիզնես հիմնադրել և այլն: Եթե ՀՀ տեղափոխվելու առաջին տարիներին շատերը, հուսալով, որ Սիրիան կվերագտնի իր նախկին հզորությունը, ցանկանում էին հետ վերադառնալ, ապա 3 տարի անց նրանք ավելի ռեալ էին մտածում՝ մոտ չորս անգամ կրճատելով Սիրիա տեղափոխվելու հավանականությունը: Բացահայտելով միգրացիայի պատճառների հարաբերակցության փոփոխությունը՝ արձանագրենք, որ Հայաստանը լքելու հիմքում ընկած սոցիալ-տնտեսական գործոնը մնում է առաջնային, սակայն 3 տարի անց ավելի է խորանում, իսկ մշակութային և հոգեբանական բնույթի գործոններն աստիճանաբար հաղթահարվում են ադապտացիայի փուլերի և տարիների ընթացքում:

2012 թ. սկսած ՀՀ տեղափոխվեց հալեպահայերի մեծ զանգված: Դամասկոսահայերը և Սիրիայի հայաշատ այլ բնակավայրերից տեղափոխված հայերն ընդհանուրի միայն փոքր մասն էին կազմում: Քեսաբահայերի զանգվածային ներհուսքը տեղի ունեցավ 2014 թ.: Ի դեմս սիրիահայերի՝ Հայաստան տեղափոխվեց մարդկային մեծ ներուժ: Նրանց մեկ չորրորդը բարձրագույն կրթություն ունի, իսկ կեսից ավելին տիրապետում է այս կամ այն մասնագիտությանը, որն իր նպաստը բերեց հայաստանյան աշխատաշուկայի աշխուժացմանն ու նորացմանը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստան տեղափոխված սիրիահայերը, կրելով քաղաքաբնակներին բնորոշ կենսակերպն ու պրակտիկաները, նախընտրեցին բնակվել Երևանում՝ առավելապես Կենտրոն և Արաբկիր համայնքներում: Տարիների ընթացքում, ելնելով ֆինանսական դժվարություններից, աստիճանաբար տեղափոխվեցին դեպի ծայրամասային թաղամասեր: Սիրիահայ ընտանիքների մեջ տասից մեկը որոշում կայացրեց ապրել մարզում, ընդ որում՝ մայրաքաղաքին մոտ բնակավայրերում: Նրանց գերակշիռ մասը այսօր էլ բնակվում է վարձով: Ի սկզբանե, այս գործոնը կարևորներից էր, որն ուղղակի ազդեցություն ունեցավ նրանց՝ Հայաստանում կյանքը շարունակելու որոշման վրա: Մեծ մասշտաբի և այն էլ պետական մակարդակով բնակարանաշինություն տեղի չունեցավ: Մասնավոր և հասարակական նախաձեռնությունների շնորհիվ Երևանում կառուցվեց 4 բազմաբնակարան շենք, ինչը որոշ չափով հնարավորություն տվեց նրանց կենցաղի յուրահատկությունները պահպանելու և համայնքային կուռ ձևով ապրելու համար:

Հաջորդ գործոնը, որը սիրիահայերի՝ հայաստանյան սոցիալ-տնտեսական կյանքին հարմարվելու գործընթացում կարևոր դեր ունի, աշխատանքի առկայությունն է, ինչը, սակայն, շատ դժվարությամբ տրվեց նրանց՝ հաշվի առնելով բազմաթիվ խոչընդոտները՝ կրթության և մասնագիտության անհամապատասխանությունը հայաստանյան աշխատաշուկայի պահանջներին, սեփական ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու անբարենպաստ միջավայրը, ցածր եկա-

մուտն ու վարձատրությունը, լեզուների, մասնավորապես, արևելահայերեն և աշխատանքի ընդունվելու համար պահանջվող ռուսերեն լեզուների վատ իմացությունը/չիմացությունը, նրանց համար անսովոր աշխատանքային գրաֆիկը և այլն: Սիրիահայ գործարարների մեծ մասը ևս Հայաստանում չկարողացավ շարունակել նույն գործը, ինչ Սիրիայում՝ չնայած սկզբնական շրջանում տրված վարկային արտոնություններին: Տարածված ոլորտները, որտեղ նրանք սկսեցին ծավալել իրենց ձեռնարկատիրական գործունեությունը, արծաթագործությունը, առևտուրն ու սպասարկման ոլորտն էր: Նրանց մի մասին հաջողվեց խանութներ, սրճարան-ռեստորաններ և արագ սննդի կետեր հիմնել՝ ստեղծելով յուրօրինակ ժամանցի վայր ինչպես սիրիահայերի, այնպես էլ հայաստանցիների համար: Նրանք կարողացան ոչ միայն շրջանառության մեջ դնել սիրիական խոհանոցը, այլև նոր մշակույթ հաղորդել սպասարկման ոլորտին: Կանայք ևս սկսեցին զբաղվել ձեռագործությամբ և խոհարարությամբ՝ բայց ոչ որպես սիրելի զբաղմունք, ինչպես Սիրիայում էր, այլ որպես լրացուցիչ, երբեմն նաև եկամտի հիմնական աղբյուր իրենց ընտանիքների համար:

Մեր վերլուծությունը ցույց տվեց, որ Սիրիայի քաղաքական կյանքում հայերը ոչ այնքան ակտիվ մասնակցություն են ունեցել, սակայն Հայաստանում նրանք անցան նոր քաղաքական մշակույթին հարմարվելու փուլերով: Հատկապես կուսակցական պատկանելիություն ունեցող սիրիահայերը ձևավորվեցին և հանդես եկան որպես քաղաքականապես ակտիվ խումբ՝ նախ Հայաստանի ներքաղաքական անցուդարձի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելով, ընտրություններին մասնակցելով, ապա 2018 թ. հեղափոխության օրերին նաև իրենց անկուսակցական ընկերների հետ ցույցերին/երթերին մասնակցելով: Սիրիահայ համայնքում գործող բազմաթիվ միություններին անդամակցությունը դադարեցնելով՝ նոր միջավայրում սիրիահայերի հասարակական գործունեությունը ևս ենթարկվեց էական փոփոխությունների: Եթե Սիրիայում նրանք բավականին ակտիվ են եղել այդ առումով, հատկապես կանայք, ապա Հայաստանում նրանց թիվը զգալիորեն կրճատվում է, ավելին, կանայք չորս անգամ փոքր թիվ են կազմում

հասարակական կառույցներին անդամակցող տղամարդկանց համեմատ: Իսկ երեխաների հասարակական և մշակութային ակտիվությունը ծնողները փորձեցին ապահովել տարատեսակ խմբակներին (սպորտային, մշակութային, սկաուտական) և ամառային ճամբարներին նրանց մասնակցության միջոցով:

Սիրիահայերը ֆորմալ առումով ներառվեցին հայաստանյան կրթական համակարգում՝ արտահերթ ընդունվեցին մանկապարտեզներ, դպրոցներ, արտոնյալ պայմաններով՝ բարձրագույն և միջին մասնագիտական հաստատություններ, սակայն այստեղ ևս հարմարվելու բազմաթիվ խնդիրներ ունեցան՝ պայմանավորված հատկապես կոգնիտիվ և հաղորդակցական գործոններով: Եթե տեղացիների հետ հաղորդակցության հարցը կամաց-կամաց կարգավորվեց, ապա կոգնիտիվ մակարդակի խնդիրները՝ կրթական ծրագրերի տարբերությունը, լեզվական առանձնահատկությունները, երկար ժամանակ շարունակեցին ուղեկցել նրանց:

Անդրադառնալով սիրիահայերի մշակութային ադապտացիայի խնդրի վերլուծությանը՝ ամփոփ ներկայացնենք այս գործընթացի որոշ առանձնահատկություններ: Ապրելով Հայաստանում՝ սիրիահայերի լեզվական վարքագծում էական փոփոխություններ տեղի չունեցան, բանավոր խոսքում նրանք գրեթե լիովին պահպանում են արևմտահայերենի իմաստային և ոճական նրբերանգները: Հատկապես ավագ սերնդի շրջանում արևմտահայերեն լեզուն գործածելն ինքնության հարց է, նույնիսկ շատերը խիստ անհանդուրժողական են հայերենում գործածվող ռուսերեն բառերի նկատմամբ, չնայած նրանց մեջ էլ տարածված է արաբերենի կիրառությունը՝ որպես «գաղտնի» լեզու: Սիրիահայերը սկսեցին ավելի լավ հասկանալ արևելահայերենը, որին նպաստեցին բազմաթիվ գործոններ՝ հայկական հեռուստատեսություն դիտելը, Հայաստանում նոր ձևավորված գործնական շփումները, բարեկամական և հարևանական փոխհարաբերությունները, սիրիահայերի ամուսնությունները հայաստանցիների հետ և այլն:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ սիրիահայերի և հայաստանցի հայերի կրոնական արժեհամակարգում ակնհայտ

տարբերություններ կան: Այս համատեքստում վերջիններիս մոտ առկա է անհանդուրժողականության որոշակի մթնոլորտ, որը պայմանավորված է հայաստանցիների հավատի պակասի/բացակայության, եկեղեցու և եկեղեցական արարողությունների նկատմամբ անտարբերության, կրոնական տոների չիմացության, դրանք ըստ էության չնշելու, նաև քրիստոնեական արժեհամակարգի կրողներ չլինելու հանգամանքներով: Կարող ենք ասել, որ Հայաստանում սիրիահայերի կրոնական վարքագծում ևս փոփոխություններ տեղի ունեցան և եկեղեցի այցելելու հաճախականության, և կրոնա-ավանդական տոներին մասնակցության տեսանկյունից, ինչը տնտեսական, մշակութային և հոգեբանական գործոնների հետևանք է:

Հետազոտության արդյունքներից ելնելով՝ կարող ենք արձանագրել, որ սիրիահայերի արժեքանորմատիվ համակարգում առաջնային տեղ ունի ընտանիքը, քանզի նրանք հայի ինքնության պահպանման գործում եկեղեցուց հետո կարևոր դերակատարությունը վերագրում են ընտանիքին: Ըստ նրանց՝ հայկական միջավայրից զույգի ընտրությունը լավ ընտանիք կազմելու ամենակարևոր գրավականն է: Բացի սեփական համայնքից ամուսնու/կնոջ ընտրություն կատարելը, սիրիահայերի մեծամասնությունը կողմ է նաև հայաստանցիների հետ ամուսնությանը, ինչը նույն չափով չի կարելի ասել վերջիններիս մասին: Գենդերային ցուցանիշն այստեղ էական գործոն է, քանզի հիմնականում հայաստանցի տղամարդիկ հավանություն չեն տալիս սիրիահայ աղջիկների հետ ամուսնությանը: Ընդ որում, այս վերաբերմունքը փոխադարձ է, քանզի մեծ մասամբ սիրիահայ աղջիկներն են դեմ հայաստանցի տղաների հետ ամուսնությանը: Սիրիահայերի շրջանում ընտանիքի ձևավորման և պահպանման հիմքերը դրված են քրիստոնեական ավանդույթների վրա: Ամուսնական ծիսակատարությունների մեջ նրանց գերակշիռ մասը պարտադիր է համարում եկեղեցական պսակադրությունը, շատ են կարևորում նաև հարսանիքը և ամուսնությունը նույն օրը գրանցելու արարողությունը: Եթե առաջին երկուսը կարողանում են պահպանել նոր սոցիալ-մշակութային միջավայրում, ապա վերջինս, ըստ Հայաստանում ընդունված սովորության, այլևս չի

համարվում նրանց ամուսնական ծիսակարգի պարտադիր տարր:

Նրանց արժեքային համակարգում ամրագրված է, որ հայ ընտանիքը պետք է լինի ամբողջական. ամուսնալուծությունները պետք է բացառվեն հայոց ամուսնական մշակույթից: Հետևաբար, չեն ընդունում, ըստ իրենց, «Հայաստանում լայն տարածում ունեցող ամուսնալուծության» երևույթը: Սիրիահայերի մեծ մասը չի ընդունում նաև միայնակ մոր ինստիտուտը և բացասական է վերաբերվում երիտասարդ զույգերի ազատ հարաբերություններին: Ըստ սիրիահայերի՝ հայկական ընտանիքներում տան գլխավորը՝ տղամարդը, ընտանիքին պետք է ապահովի ֆինանսապես, իսկ կինը պատասխանատու լինի կենցաղային կարևոր և երկրորդային հարցերի համար: Նրանց այս մտածելակերպը Հայաստանում տեղի է տալիս՝ հանդուրժողականության և հարգանքի մթնոլորտ ձևավորելով աշխատող և ընտանիքին ֆինանսապես նեցուկ կանանց շուրջ:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ նոր միջավայրում էական փոփոխությունների է ենթարկվում սիրիահայերի հաղորդակցության մշակույթը: Եթե Սիրիայում համայնքի ներսում փոխայցելություններն ամենօրյա էին, մտերմիկ և կազմում էին տոնական ծիսակատարությունների պարտադիր բաղադրիչը, ապա Հայաստանում այն դառնում է պասիվ ու սահմանափակ՝ պայմանավորված հաճախակի հանդիպելու ֆիզիկական և ֆինանսական դժվարություններով, աշխատանքային ծանրաբեռնվածությամբ և այլ գործոններով: Կենցաղային սովորությունների և ավանդույթների տարբերությունը, մի կողմից, տանում է հայաստանցիների հետ հաղորդակցվելու սահմանափակմանը, մյուս կողմից՝ համայնքի ներսում նոր կապերի ձևավորմանն ու ամրապնդմանը: Հաղորդակցության այն մշակույթը, որը բնորոշ է այս համայնքին, տեղացիների հետ հարաբերություններում շատ քիչ դրսևորվեց, ինչը, սակայն, կնպաստեր ակուլտուրացիոն գործընթացների ինտենսիվացմանը և հայաստանյան միջավայրին նրանց ինտեգրմանը:

Սիրիահայերը, գալով Հայաստան, ներմուծեցին համայնքային կյանքին բնորոշ ժամանցային պրակտիկաներ: Նոր միջավայրում

Ժամանցը նրանց համար դառնում է նպատակային գործունեություն՝ սակայն ոչ թե նոր սոցիալական կապերի ստեղծմանն ու զարգացմանը, այլ հին կապերի վերագնահատմանն ու ամրապնդմանն ուղղված: Ժամանցի միջոցով իրենց զարգացմանն ուղղված գործողությունն առավելապես արտահայտվում է նոր միջավայրում տեսարժան վայրեր այցելելով՝ հարստացնելով հայկական նյութական մշակույթի մասին գիտելիքների պաշարը: Սիրիայում գործող բազմաթիվ միություններն այսօր չեն փոխարինվում Հայաստանում գոյություն ունեցող տարաբնույթ մշակութային կազմակերպություններով, որոնք կնպաստեին նրանց արագ ինտեգրմանը: Սիրիահայերի ադապտացիայի գործընթացում առանցքային դեր ունեն նաև հայկական հեռուստաընկերությունները, սակայն, երբ խոսքը վերաբերում է մշակութային և ժամանցային հաղորդումներին, նրանք նախընտրում են հայկական հեռուստաալիքները, իսկ երբ լուրերին՝ արաբական հեռուստաալիքները: Հեռուստահաղորդումներին հետևելու բազմազանությունը արտացոլում է նրանց ինքնությունը՝ մի կողմից, խորը կապվածություն հայկական մշակույթին, մյուս կողմից, նախ պատկանելիություն արաբական հասարակությանը, ապա՝ ներքին պարտավորվածություն նրանց հանդեպ: Այսպիսով, հեռուստատեսության դերը երկակի է՝ նոր քաղաքացիական պատկանելիության ձևավորում՝ նախկին ինքնության պահպանման պայմաններում, սակայն այդ երկակիությունը ներքին հակասություն չի առաջացնում: Հայկական լրատվամիջոցները, մի կողմից, ամրապնդում են սիրիահայերի մշակութային գիտելիքները, մյուս կողմից՝ նպաստում ինտեգրմանը:

РЕЗЮМЕ

Монография посвящена изучению проблем социально-культурной адаптации сирийских армян, переехавших в Армению вследствие войны, начавшейся в Сирии в 2011 году. В Сирии армянская община жила в другой системе социально-экономических и политических отношений, другой религиозной и культурной среде, однако из-за начавшейся войны часть сирийских армян, переехав в Армению, оказалась в армянской, но совершенно новой и незнакомой для себя социально-экономической среде и встала перед проблемой и необходимостью адаптации к ней. Этот процесс затрудняли многочисленные факторы: проблемы с документами, проживанием, социально-бытовые и материальные проблемы, языковые, образовательные, трудовые сложности, незнание местных культурных норм и обычаев, различие системы ценностей, сложности общения с местными армянами и пр., каждый из которых играл свою роль при принятии решения об интеграции в Армению и дальнейшей жизнедеятельности в ней.

В работе представлена история формирования и развития армянской общины в Сирии и репатриации сирийских армян в Советскую Армению в XX в., проводятся параллели с их переселением в Республику Армения в 2012 г., анализируются побудительные причины и мотивы их переезда, важность при этом Армении как фактора Родины. В работе исследованы бытовые, материальные проблемы, проблемы занятости семей сирийских армян, их миграционное поведение, тенденции и причины его изменения, особенности их адаптации к общественной и политической жизни и образовательной системе Республики Армения и затрудняющие их факторы. Всестороннему анализу подвергнуты проблемы культурной адаптации, особенности религиозного и праздничного поведения, брачных и свадебных обрядов, общность и раз-

личия семейной системы ценностей сирийских армян в сравнении с местными армянами, трансформация их языкового поведения, культура коммуникации, будничной жизни и досуга внутри своей общины и вне ее.

Исследование охватывает период 2012–2018 гг. Эмпирический материал был собран в результате исследований автора с сопоставлением качественных и количественных методов. Исследование с применением количественного метода проводилось методом полуструктурированных интервью: 184 интервью с сирийскими армянами в Ереване, Арагацотнском, Араратском, Армавирском, Котайкском, Ширакском марзах (областях) (2014) и 384 интервью (7 % из которых с сирийскими армянами) среди семей местных армян и сирийских армян в Ереване, Ширакском, Лорийском, Гегаркуникском, Сюникском, Армавирском, Арагацотнском марзах (областях) (2016–2017 гг.). Исследование с применением качественного метода проводилось с помощью углубленных и экспертных интервью и анализа документов: 36 углубленных интервью с сирийскими армянами (2014), 15 экспертных интервью с представителями государственных учреждений, общественных и религиозных структур (2018) и качественного анализа материалов 3-х сетевых периодических изданий (aravot.am, tert.am, a1plus.am) за 2012–2014 гг. Были собраны также статистические данные о месте жительства в Республике Арцах 24 семей сирийских армян и их социально-демографическом составе по состоянию на 2018 г.

Собранный различными методами многолетний материал о проблемах адаптации сирийских армян позволил провести их всесторонний анализ и сделать основные выводы исследования.

Вследствие начавшейся в Сирии в 2011 г. войны армянская община рассеялась по всему миру, в основном по европейским странам, оказалась также в Канаде, Ливане и Армении. Если в большинстве из них выбор был обусловлен возможностью въезда в данные страны, наличием в них социальной сети, перспективой хорошей работы и благополучной жизни, намерением создать свое будущее приобретением

статуса беженца и иными рациональными мотивами, то значительная часть сирийских армян приняли решение приехать в Армению на эмоциональном уровне, считая первостепенной идею Родины.

Массовый поток сирийских армян в Республику Армения положил начало новым проблемам, для преодоления которых Армения практически не была готова. Тем не менее, для их приема, оказания первой помощи, их интеграции в армянское общество были инициированы и осуществлены многочисленные программы государственными учреждениями, местными частными обществами, международными, общественными и благотворительными организациями. Несмотря на проделанную работу, проводимая государством политика носила ситуативный характер как локальная реакция на возникающие социальные, экономические, правовые вопросы. Между тем, Армении как стране, имеющей значительную диаспору, необходима четко разработанная политика, позволяющая при необходимости принимать рассеянных по всему миру армян и регулировать их эффективную интеграцию в армянское общество с учетом сохранения их культуры и самобытности.

Согласно официальным данным, начиная с 2012г. в Республику Армения переехали 22000 сирийских армян, однако приблизительно только одна четвертая часть из них обустроилась в стране. Согласно экспертным оценкам, это – сирийские армяне, намеревающиеся постоянно проживать в Армении. Результаты нашего исследования свидетельствуют, что для сирийских армян имелись многочисленные причины покинуть Республику Армения, прежде всего, следует учитывать, что часть из них изначально рассматривали Армению как транзитную страну, используя ее в основном для переезда в страны Западной Европы, Канаду и США. Кроме этой группы, часть сирийских армян покинула Армению из-за имеющихся в стране выталкивающих их факторов, в основном социально-экономического характера; безработица, низкая заработная плата, трудности создания собственного бизнеса, высокие налоги, отсутствие жилья, бытовые проблемы и пр. На их миграционное поведение определенное влияние оказали также культурные и психологические факторы.

Результаты проведенных нами повторных количественных исследований (2014 и 2017) показывают как изменения их миграционного поведения, так и причины миграции. Если по данным исследования 2014 г. более половины из них, то через 3 года, в 2017 г., уже менее половины выразили желание и намерение выехать в другую страну, становясь более решительными в таком решении. Они предпринимали реальные шаги по выезду из Армении, отказываясь от приобретенного гражданства Республики Армения, обращаясь в посольства разных стран, основывая бизнес в других странах и пр. Если в первые годы переезда в Армению многие сирийские армяне, надеясь на возрождение Сирии, желали вернуться, то спустя 3 года они стали более реалистичными, почти в четыре раза сократив вероятность возвращения в Сирию. Выявив изменения в соотношении причин миграции, можно утверждать, что в 2014 г. первостепенным основанием для выезда из Армении остается социально-экономический фактор, однако спустя 3 года он все больше углубляется, а культурные и психологические факторы с течением времени постепенно преодолеваются в процессе адаптации.

Начиная с 2012 г., в Республику Армения переехало значительное число армян из Алеппо. Армяне из Дамаска и других поселений Сирии с многочисленным армянским населением составляли лишь незначительную часть их общего числа. Массовый исход армян из Кесаба имел место в 2014 г. В лице сирийских армян в Армению переместился значительный человеческий потенциал. Четверть из них имеет высшее образование, а более половины владеют той или иной специальностью, что способствовало оживлению и обновлению армянского рынка труда.

Результаты исследования свидетельствуют, что переехавшие в Армению сирийские армяне, обладая присущим горожанам стилем жизни и поведением, предпочли поселиться в Ереване, преимущественно в административных районах Центр и Арабкир. С годами ввиду финансовых трудностей они постепенно переместились в ок-

раинные кварталы. Из семей сирийских армян только одна из десяти приняла решение переехать на проживание в марзы (области), при этом в населенные пункты, находящиеся ближе к столице. Их подавляющая часть и сегодня проживает по найму. Первоначально этот фактор являлся одним из важнейших, имея непосредственное воздействие на их решение продолжать жизнь в Армении. Жилищное строительство в крупных масштабах, тем более на государственном уровне, не велось. Благодаря частной и общественной инициативе в Ереване были построены 4 многоквартирных дома, что в какой-то мере позволило сохранить особенности их быта и создать условия для компактной общинной жизни.

Другой фактор, играющий важную роль в процессе адаптации сирийских армян к социально-экономической жизни Армении, – наличие работы, что, однако, давалось им с большим трудом, учитывая многочисленные препятствия: несоответствие образования и специальности требованиям рынка труда в Армении, неблагоприятная среда для занятия собственной предпринимательской деятельностью, низкие доходы и оплата труда, плохое знание (незнание) языков, в частности восточно-армянского и требуемого для приема на работу русского языка, необычный для них график работы и пр. Большая часть предпринимателей – сирийских армян не смогла продолжить в Армении то же дело, что в Сирии, несмотря на предоставленные в начальном периоде кредитные льготы. Распространенными сферами, в которых они начали разворачивать свою предпринимательскую деятельность, являлись ювелирное дело (серебрodelие), торговля и сфера обслуживания. Части из них удалось основать магазины, кафе-рестораны и точки быстрого питания – создать самобытные места досуга как для сирийских армян, так и для местных армян. Они смогли не только ввести в оборот сирийскую кухню, но и сообщить новую культуру сфере обслуживания. Женщины также стали заниматься рукоделием и кулинарией, но не в качестве любимого занятия, как в Сирии, а в качестве дополнительного, зачастую также основного источника дохода для своих семей.

Анализ материалов свидетельствует, что в Сирии армяне не принимали достаточно активного участия в политической жизни страны, однако в Армении они прошли этапы приспособления к новой для них политической культуре. Особенно организовались имеющие партийную принадлежность сирийские армяне, которые выступили в качестве активной политической группы, прежде всего проявив интерес к внутриполитическим событиям в Армении, участвуя в выборах, а в 2018 г. со своими беспартийными товарищами также участвуя в демонстрациях и шествиях в дни революции. После прекращения членства в действующих в общине многочисленных ассоциациях общественная деятельность сирийских армян в новой среде подверглась существенным изменениям. Если в Сирии они были достаточно активны в этом аспекте, особенно женщины, то в Армении их число значительно сократилось, более того, женщины в четыре раза по своей численности уступают мужчинам по членству в общественных структурах. А общественную и культурную активность детей родители попытались обеспечить их участием в различных кружках (спортивных, культурных, скаутских) и летних лагерях.

Сирийские армян формально были включены в образовательную систему Армении: вне очереди были приняты в детские сады, школы, на льготных условиях приняты в высшие и средние специальные учебные заведения, однако и здесь они имели многочисленные проблемы в адаптации, что было обусловлено в особенности когнитивным и коммуникационным факторами. Если вопрос коммуникации с местными армянами постепенно был урегулирован, то проблемы когнитивного уровня – различие образовательных программ, языковые особенности – еще долгое время продолжали сопровождать их.

Обращаясь к анализу культурной адаптации сирийских армян, кратко представим некоторые особенности этого процесса. В Армении в языковом поведении сирийских армян существенных изменений не произошло, в устной речи они почти полностью сохраняют смысловые и стилевые нюансы западно-армянского языка. Использование запад-

но-армянского языка, в особенности среди старшего поколения, является выражением их идентичности, многие из них даже проявляют серьезную нетерпимость в отношении применения в армянском языке русских слов, несмотря на то, что у них распространено применение арабского языка в качестве «тайного». Сирийские армяне начали лучше понимать восточно-армянский язык, чему способствовали многие факторы: просмотр передач армянского телевидения, сформированные в Армении новые деловые связи, родственные и соседские отношения, браки сирийских армян с местными армянами и пр.

Результаты исследования свидетельствуют, что в системе религиозных ценностей сирийских армян и местных армян имеются очевидные различия, связанные с различной степенью их приверженности к вере, религиозного поведения и исполнения церковных ритуалов. Можно говорить о том, что в Армении в религиозном поведении сирийских армян, более стойко придерживающихся христианских ценностей, произошли определенные изменения с точки зрения периодичности посещения церкви и участия в религиозно-традиционных праздниках, что обусловлено экономическими, культурными, психологическими факторами.

Анализ материалов свидетельствуют, что в ценностно-нормативной системе сирийских армян приоритетное место занимает семья, так как в сохранении армянской идентичности наиболее важную роль после церкви они отводят семье. По их мнению, выбор партнера из армянской среды является главным залогом создания хорошей семьи. Кроме выбора супруга/супруги из собственной общины, большинство сирийских армян являются сторонниками вступления в брак также с местными армянами, что в той же мере нельзя сказать о последних. Гендерный показатель здесь является существенным фактором, так как в основном местные армянские мужчины не одобряют браки с девушками из сирийских армян. При этом, такое отношение взаимно, так как девушки из сирийских армян в своем большинстве против вступления в брак с местными армянскими мужчинами. В среде

сирийских армян основы создания и сохранения семьи опираются на христианские традиции. В свадебных церемониях их подавляющее число считает обязательным церковное венчание, большое значение придается также проведению свадьбы и регистрации брака в то же день. Если в новой социально-культурной среде они сохраняют традицию свадьбы с венчанием, то, согласно принятому в Армении обычаю откладывать регистрацию брака на более позднее время, она более не является для них обязательным элементом свадебной церемонии.

Согласно системе ценностей сирийских армян, армянская семья должна полноценной: разводы должны быть исключены из армянской брачной культуры. Поэтому, они не воспринимают такое явление как “разводы, имеющие широкое распространение в Армении”. Большинство сирийских армян не принимает также институт матери одиночки и отрицательно относится к свободным отношениям молодежи. По мнению сирийских армян, в армянских семьях главным в доме является мужчина, который должен обеспечивать семью финансово, а женщина должна быть ответственна за важные бытовые и внутрисемейные вопросы. Этот их менталитет уступает место в Армении, формируя атмосферу терпимости и уважения к работающим женщинам и женщинам, финансово поддерживающим семью.

Результаты исследования показывают, что в новой среде существенным изменениям подвергается культура общения сирийских армян. Если в Сирии взаимные посещения внутри общины были ежедневными, теплыми, близкими и составляли обязательный компонент праздничных церемоний, то в Армении они становятся пассивными и ограниченными, что обусловлено физическими и финансовыми трудностями для частых встреч, загруженностью работой и другими факторами. Различия бытовых обычаев и традиций, с одной стороны, ведут к ограничению коммуникации с местными армянами, с другой стороны – к формированию и укреплению новых связей внутри общины. Культура общения, характерная для этой общины, в отношениях с местными армянами проявилась незначительно, что, способствовало

бы более интенсивной аккультурации и ее интеграции в армянскую среду.

Приехавшие в Армению сирийские армяне внедрили практику досуга, присущую общинной жизни. В новой среде досуг стал для них целенаправленной деятельностью, однако направленной не на создание и развитие новых социальных связей, а на переоценку и укрепление старых связей. Организации досуга, направленная на их развитие, более всего проявляется посещением достопримечательностей в новой среде, что обогащает запас их знаний об армянской материальной культуре. Действовавшие в Сирии многочисленные ассоциации сегодня не заменяются существующими в Армении разнообразными культурными организациями, которые способствовали бы их быстрой интеграции. В процессе адаптации сирийских армян ключевую роль играют также армянские телекомпании, однако, когда речь касается передач о культуре и досуге, они предпочитают армянские телеканалы, а в случае новостей – арабские телеканалы. Разнообразие просмотра телепередач отражает их идентичность: с одной стороны, глубокую связь с армянской культурой, с другой – принадлежность к арабскому обществу и приверженность к ним. Таким образом, телевидение выполняет двоякую функцию формирования новой гражданской принадлежности в условиях сохранения прежней идентичности, однако такая двойственность не приводит к возникновению внутреннего противоречия. Армянские средства массовой информации, с одной стороны, укрепляют культурные знания сирийских армян, с другой стороны, способствуют их интеграции.

SUMMARY

The monograph focuses on the socio-cultural adaptation challenges faced by Syrian Armenians who relocated to Armenia due to the war in Syria. The Armenian community in Syria had lived under a different political system, socio-economic conditions, and in a distinct religious and cultural environment. The war forced some of them to move to although Armenian, however, a new and unfamiliar socio-cultural setting, where they encountered the need to adapt. Multiple factors hinder their adaptation to the local environment, including bureaucracy, livelihood issues, social and material problems, language barriers, educational and job-related challenges, a lack of understanding of local cultural norms and traditions, differences in value systems, and communication barriers with local Armenians. Each of these factors influences the adaptation process and the decision to settle in the country.

